ՀԱՄԱՌՕՏ

# ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

1(03)
Հ
A 2234

## ՀԱՄԱՌՈՏ

# ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Մ. ՌՈԶԵՆՏԱԼԻ ԵՎ Պ. ՅՈՒԴԻՆԻ
խմբագրությամբ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1940

# КРАТКИЙ
# ФИЛОСОФСКИЙ СЛОВАРЬ

Государственное издательство политической литературы
Ереван • 1940

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

*«ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» հրատարակությունը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» հրատարակության կապակցությամբ հսկայական հետաքրքրություն առաջացրին դեպի հեղափոխական բոլշևիկյան թեորիայի ուսումնասիրությունը: Խորհրդային ինտելիգենցիայի լայն շրջաններ աշխատում են մարքսիզմի–լենինիզմի թեորիայի տիրապետության վրա: Առանձնապես մեծ է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմն ուսումնասիրելու ձգտումը:*

*«Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը կոմունիզմի թեորիական հիմքն են կազմում, մարքսիստական կուսակցության թեորիական հիմունքները, իսկ այդ հիմունքները գիտենալը և, նշանակում է, նրանց յուրացումը հանդիսանում է մեր կուսակցության յուրաքանչյուր ակտիվ գործչի պարտականությունը»* (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց):

Այս «Համառոտ փիլիսոփայական բառարանը» իրեն խնդիր է դնում՝ ոգնություն ցույց տալ բոլշևիկյան կուսակցության թեորիական հիմունքները— մարքսիստական–լենինյան փիլիսոփայությունն ուսումնասիրողներին։ Բառարանը չի պարունակում փիլիսոփայական հասկացողությունների, տերմինների և այլն վորևէ չափով լրիվ ցուցակ։ Նրա խնդիրն ավելի համեստ է․ բացատրել հիմնական և ամենից շատ գործածական, մարքսիզմի–լենինիզմի կլասիկների յերկերում հաճախ պատահող փիլիսոփայական հասկացողությունները։

Հրատարակչությունը խնդրում է ընթերցողներին՝ ուղարկել իրենց կարծիքներն ու առաջարկները, վորոնք հաշվի կառնվեն բառարանի յերկրորդ հրատարակության ժամանակ։

★

# Ա

**Աբստրակցիա գծանկարն** — *յերևույթների այս կամ այն խմբի վոչ-եյական, յերկրորդական հատկանիշներից վերանալը և նրանց հատուկ ամենից ավելի եյական առանձնահատկությունները մտքով ջոկելն ու ընդհանրացնելը։ Այսպես, «այնպիսի բառեր, ինչպես են «մատերիա» և «շարժում», դրանք պարզապես* կրճատումներ *են, վորոնց մեջ մենք, նրանց ընդհանուր հատկությունների համաձայն, ամփոփում ենք զգայապես ընկալելի տարբեր իրերը»* (Էնգելս)։ *Գիտական աբստրակցիան մեզ ավելի լրիվ և խոր պատկերացում է տալիս իրականության մասին, քան անմիջական զգայությունները։ Օրինակ, անմիջականորեն դիտելու ժամանակ այնպես է թվում, թե ապրանքների գները կապիտալիստական շուկայում վերջին հաշվով վորոշվում են պահանջով և առաջարկով։ Իրոք նրանք պայմանավորվում են ապրանքների արտադրության վրա ծախսված հասարակական-անհրաժեշտ աշխատանքի քանակով, կամ, այլ կերպ ասած՝ արժեքով։ Արժեքի հասկացողությունը, վոր Մարքսը յեզրակացրել է գիտական աբստրակցիայի հետևանքով, խոր և ճիշտ կեր-*

պով արտացոլում ՝ե ապրանքային արտադրության ռեալ հասարակական հարաբերությունները։ «...Տընտեսական ձևերի անալիզի ժամանակ չի կարելի օգտըվել ո՛չ միկրոսկոպով, ո՛չ էլ քիմիական ռեակտիվներով։ Թե՛ մեկին, թե՛ մյուսին պետք ե փոխարինի աբստրակցիայի ուժը» (Մարքս)։

**Ագնոստիցիզմ**—(*հունարեն՝ «ա»—ան, «գնոսիս»—գիտություն)—փիլիսոփայական ուսմունք, որը պընդում ե, թե մարդկային բանականությունը սահմանափակ ե, թե իրերի իսկական բնությունը մարդկային իմացությանն անմատչելի յե։ Այս տեսակետին եյին Յումը և Կանտը, ինչպես նաև բազմաթիվ իդեալիստ-փիլիսոփաներ (Կոնտ, Սպենսեր, Մախ և ուրիշն.)։ Ըստ ագնոստիկների ուսմունքի՝ մեզ տեսանելի աշխարհը, որի հետ գործ ունենք մեր իմացության մեջ, օբյեկտիվ ռեալություն չե, այլ լոկ մեր զգայարանների և բանականության գործունեության արդյունք։ Փորձը և պրակտիկան հերքում են ագնոստիցիզմը։ Գիտությունը օրեցօր ավելի ու ավելի խորն ու բազմակողմանիորեն ե ճանաչում բնության յերեվույթները։ Մեր իմացության համար գոյություն չունեն սահմաններ։ Անիմանալի իրեր չկան։ Տարբերություն կա միմիայն* արդեն *ճանաչածի և* դեռ *չճանաչածի միջև։*

**Ադեկվատ** — *հավասար, համապատասխան, համընկնող։ Ադեկվատ իմացությունը այնպիսի իմացություն*

է, որը ճշգրտորեն արտացոլում է առարկայի կամ յերևույթի բոլոր ամենից ավելի եյական հատկանիշները։

**Ազատություն յեվ անհրաժեշտություն։** — *Մետաֆիզիկները սովորաբար հակադրում են ազատությունն ու անհրաժեշտությունը։ Նրանցից վոմանք պնդում են, թե կամքը բացարձակապես ազատ է, այսինքն՝ նա վոչնչով պայմանավորված չէ։ Մյուսները պնդում են, թե ազատ կամք չկա, թե կա միայն բացարձակ անհրաժեշտություն։ Կա՛մ կամքի ազատություն, կա՛մ անհրաժեշտություն — պնդում են մետաֆիզիկները։ Մարքսիզմ-լենինիզմը ժխտում է հարցի այդ վոչ-դիալեկտիկական դրումը և այն լուծում է դիալեկտիկորեն։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի տեսակետից ազատությունը վո՛չ թե բնության որենքներից յերևակայալ անկախության մեջ է, այլ այդ որենքների իմացության մեջ, պրակտիկ գործունեության համար նրանցից ոգտվելու հնարավորության մեջ։ «...Քանի մենք չգիտենք բնության որենքը, նա, գոյություն ունենալով ու գործելով մեր իմացությունից անկախ, նրանից դուրս, մեզ դարձնում է «կույր անհրաժեշտության» ստրուկներ։ Հենց վոր մենք ճանաչեցինք այդ որենքը, վոր գործում է (ինչպես հազարավոր անգամներ կրկնել է Մարքսը) մեր կամքից և մեր գիտակցությունից* անկախ,— *մենք բնության տերերն ենք»* (Լենին)։ *Կամքի ազատությունը վոչ այլ*

*ինչ է, յեթե վոչ գործն իմանալով վճիռներ ընդունելու ընդունակությունը: «Հետևաբար, ազատությունը հենց մեզ վրա և արտաքին բնության վրա իշխելն է, իշխում, վոր հիմնված է բնության անհրաժեշտությունների իմացության վրա»* (Էնգելս): *Հետևաբար, ազատությունը գիտակցված անհրաժեշտություն է: Առանց անհրաժեշտությունն ըմբռնելու չի կարող իսկական ազատություն լինել: «Մարդիկ, վորոնք, վերջապես, տեր են դարձել իրենց սեփական հասարակական կեցության, դրա հետևանքով դառնում են բնության տերեր, հենց իրենց տերեր—ազատ են դառնում»* (Էնգելս):

**Աթեիզմ** *(անաստվածություն)—կրոնի, հրաշքների ու հանդերձյալ կյանքի և այլն հավատի գիտականորեն հիմնավորված ժխտումը: Աթեիզմը ծագել է հին Հունաստանում: Մատերիալիստներ Դեմոկրիտը, Եպիկուրը ժխտում եյին գերբնականը և ուսուցանում, վոր աշխարհում վոչինչ չկա, բացի ատոմներից բաղկացած մատերիայից:* XVI—XVII *դարերում, ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի ժամանակաշրջանում, Կոպերնիկոսի, Ջորդանո Բրունոյի, Գալիլեյի գիտական հայտնագործումները խորտակիչ հարված հասցրին կրոնական ողջ պատկերացումներին՝ աշխարհի և նրա կազմության մասին:* XVIII *դ. մատերիալիզմի խոշորագույն ներկայացուցիչները (Դիդրո, Հելվեցիոս, Հոլբախ, Լամետրի և ուրիշ.) անխնա կերպով մերկաց-*

նում էյին կրոնի և յեկեղեցու շառլատանությունը, վորոնք շահագործում էյին ժողովրդական մասսաների տգիտությունը։ Բայց դասակարգային տիրապետության և շահագործման հետ կրոնի ունեցած կապի գիտական, խոր ըմբռնումն առաջին անգամ միայն մարքսիզմը տվեց։ Մարքսիզմը ցույց տվեց, վոր կրոնը շահագործողների կողմից աշխատավորներին հոգեպես ստրկացնելու գործիք է։ Հեղափոխական շարժման և քաղաքական գիտակցականության աճման հետ միասին բանվոր դասակարգի և աշխատավորների առաջավոր խավերը դեռևս կապիտալիզմի պայմաններում իրենց կապերը խզում են կրոնական նախապաշարմունքների հետ։ Կրոնի վերջնական վոչնչացումը հնարավոր է միմիայն կապիտալիզմի և շահագործման վոչնչացման հետ միասին։ Ստալինյան Սահմանադրությունը (հոդ. 124) աշխատավորներին վերապահում է խղճի լիակատար ազատություն, կրոնական պաշտամունքներ կատարելու ազատություն և հակակրոնական պրոպագանդայի ազատություն։ Գիտական, մատերիալիստական աշխարհայացքի պրոպագանդան և աշխատավորներին կրոնի վնասակարությունը համբերությամբ պարզաբանելը քաղաքական և կուլտուրական աշխատանքի շատ կարևոր խնդիրն է։ Սոցիալիզմի հաջողությունների, կուլտուրայի և գիտության ծաղկման հետևանքով ԽՍՀՄ-ի միլիոնավոր և միլիոնավոր աշխատավորներն ընդմիշտ խզել են իրենց կապերը կրոնի հետ։

**Անալիզ յեվ սինթեզ։** — *1) Անալիզ* (*հունարեն՝ վերլուծում, տարրալուծում*) — *առարկայի կամ յերևույթի անդամատումը իր բաղկացուցիչ պարզ մասերին։* 2) *Սինթեզ* (*հունարեն՝ կազմում, համադրում*)—*առարկայի կամ յերևույթի մասերն իբրև մի ամբողջություն միացնելը, առարկան միասնության մեջ դիտելը, պարզից դեպի բարդը բարձրանալը։ Մետաֆիզիկան անալիզն ու սինթեզը հակադրում է միմյանց։ Մատերիալիստական դիալեկտիկան, ընդհակառակը, ուսուցանում է անալիզի և սինթեզի միասնության մասին։ «...Մտածողությունը նույն չափով կազմված է գիտակցության օբյեկտներն իրենց տարրերին վերլուծելուց, վորքան և ցեղակից տարրերին միասնության մեջ միավորելուց։ Առանց անալիզի սինթեզ չի լինում»* (Ենգելս)։ *Այդ պատճառով ճանաչողության պրոցեսում անհրաժեշտ է գործադրել ինչպես անալիզի մեթոդը, այնպես էլ սինթեզի մեթոդը, վորոնք իբրև ստորադաս մոմենտներ մտցվում են մատերիալիստական դիալեկտիկայի մեթոդի մեջ։ Օրինակ, անալիզի յենթարկելով մարդկային որգանիզմի կառուցվածքը, գիտնականները մի առ մի, մանրամասնորեն ուսումնասիրում են յուրաքանչյուր որգանն առանձին վերցրած։ Բայց յուրաքանչյուր որգանի նշանակությունը, դերը և ֆունկցիաները լրիվ և խորը կերպով հասկանալու համար բավական չե լոկ անատոմիական անալիզը։ Անհրաժեշտ է որգանիզմը վերցնել իբրև ամբող-*

ջություն, իբրև կենդանի և գործող օրգանիզմ և ուսումնասիրել նրա բաղկացուցիչ մասերը միասնության մեջ, ամբողջի մեջ։

Անիմիզմ (*լատիններեն «անիմա»—հոգի բառից*)— *բնության երևույթներին հոգի վերագրելը, ընդունումն այն բանի, թե բնության յուրաքանչյուր առարկայի հետևը թաքնված է մի անտեսանելի, աննյութական հոգի, վորը ղեկավարում է առարկան։ «...Անձնավորման* (олицетворение) *այս ձգտումն ամենուրեք առեղծեց աստվածներ»* (Ենգելս)։ *Անիմիզմն առաջ յեկավ մարդկային պատմության արշալույսին, յերբ մարդիկ չէին կարողանում ճիշտ բացատրել բնության օրենքները։ Նախնադարյան անիմիզմը կրոնի և փիլիսոփայական իդեալիզմի հիմք հանդիսացավ։*

Անհատը պատմության մեջ։ — *Բուրժուական թեորիաները հաճախ պատմությունը վերածում են կա՛մ մեծ անձնավորությունների (թագավորների, զորավարների և այլն) գիտակցական գործունեության, պատմության մեջ վոչ մի օրինաչափություն չտեսնելով, կա՛մ մարդկանց գործունեությունը հավասարեցնում են զերոյի և մարդուն դիտում են վորպես կույր անհրաժեշտության, աստվածային կամքի, անիմանալի ճակատագրի գործիք։ Առաջին դեպքում պատմությունը դիտվում է վորպես մի բնագավառ, վորտեղ ամեն ինչ կատարվում է «քննադատորեն մտածող» ինտելիգենտների կամ «հերոսների» կամայականության, ցան-*

կությունների, իշխանների համաձայն։ Այդպես է, որինակ, «հերոսների» և պասսիվ «ամբոխի» նարոդնիկական թեորիան։ Երկրորդ դեպքում պատմությունը ճակատագրական բնույթ է ընդունում. նրա մեջ ամեն ինչ նախասահմանված է և կատարվում է մարդկանց գործունեությունից անկախ։ Անխուսափելիորեն պատմության այսպիսի ըմբռնման է հասցնում մասնավորապես վուլգար տնտեսական մատերիալիստների տեսակետը, ինչպես այդ տեղի ուներ «էկոնոմիստների», մենշևիկների և ուրիշների մոտ։ Հեղափոխական կուսակցության ակտիվ գործունեության նշանակության նվազեցումը, ինքնահոսի վրա հույս դնելը, առաջավոր թեորիայի, իդեաների մեծ դերի ժխտումը,—այս է պատմության վուլգար-տնտեսական ըմբռնման եյությունը։ Վո՛չ մեկ և վո՛չ մյուս տեսակետից հնարավոր չէ դեպքերի նախատեսումը և, հետևաբար, գիտական քաղաքականությունը։ Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, վոր մարդիկ իրենք են կերտում իրենց պատմությունը, բայց միշտ պատմականորեն վորոշ նյութական պայմաններում։ Աչքի ընկնող անհատի ազդեցությունը դեպքերի ընթացքի վրա այնքան ավելի մեծ է, վորքան նա ավելի լավ է հասկանում ոբյեկտիվ որինաչափությունները ու զարգացման ուղղությունը։ «...Պատմական անհրաժեշտության իդեան բնավ չի խախտում անհատի դերը պատմության մեջ» (ԼԵՆԻՆ)։ Պատմության ընթացքը վորոշվում է հասարակության

*նյութական կյանքի պայմաններով: Բայց հասարակության տնտեսական զարգացման պահանջմունքները, առաջավոր դասակարգի պահանջները հասկացած անհատը կարող է իրադարձությունների գլուխ կանգնել և, մարդկանց իր շուրջը համախմբելով, այդ իրադարձությունները առաջ շարժել: Այս է անհատի, նրա հեղինակության, հասարակական կյանքում նրա ունեցած դերի խոշոր նշանակության հիմքը: Պատմության մեջ անհատի դերի հարցը մարքսիզմ-լենինիզմը լուծում է մասսաների դերի հարցի հետ սերտորեն կապակցված: «Մարքսիզմի անկյունաքարը* մասսան *է, որի ազատագրումը, նրա կարծիքով, անհատի ազատագրության գլխավոր պայմանն է, այսինքն՝ մարքսիզմի կարծիքով, անհատի ազատագրումն անկարելի է այնքան ժամանակ, քանի դեռ չի ազատագրվել մասսան, ուստի և նրա լոզունգն է՝ «Ամեն ինչ մասսայի համար»»* (Ստալին)*: Պրոլետարական հեղափոխությունը և սոցիալիզմի հաղթությունն աշխատավորների միլիոնավոր մասսաներին ազատագրեցին ճնշումից ու շահագործումից և չտեսնված հնարավորություններ ստեղծեցին մարդկային անձնավորության բարգավաճման համար:*

**Անհրաժեշտություն յեվ պատահականություն։** — *Անհրաժեշտություն ասելով դիալեկտիկական մատերիալիզմը հասկանում է օբյեկտիվ օրինաչափությունը բնության մեջ, այսինքն՝ յերևույթների այնպիսի զար-*

գացումը, վորն անխուսափելիորեն բղխում է նախորդող յերևույթներից, դեպքերի զարգացման ամբողջ ներքին ընթացքից։ Իդեալիստական փիլիսոփայությունը կա՛մ բոլորովին ժխտում է անհրաժեշտությունը բնության մեջ, կա՛մ այն բխեցնում է աննյութական ուժերից—աստվածային սահմանումներից, իդեայից։ Դիալեկտիկական մատերիալիզմը ընդունում է անհրաժեշտության ոբյեկտիվությունը, նրա որինաչափ բնույթը։ Դրա հետ միասին դիալեկտիկական մատերիալիզմը չի ժխտում նաև պատահականությունը։ Պատահականությունը նույնպես գոյություն ունի ոբյեկտիվորեն, բայց այն անհրաժեշտորեն չի բղխում յերևույթների որինաչափ զարգացումից, թեև ունի էլ իր պատճառը։ Այսպես, սերմից անհրաժեշտությամբ բույս է բուսնում, յեթե սերմն ընկնում է բարենպաստ պայմանների մեջ։ Բայց հնարավոր են դեպքեր, յերբ բույսը չի հասունանում։ Որինակ, կարկուտը կարող է ծեծել նրա ընձյուղները։ Բույսի աճման վերաբերմամբ կարկուտը պատահականություն է. յեթե այն չլիներ, բույսը կարող էր հասունանալ։ Պատահականությունն այն է, վոր կարող է լինել և կարող է չլինել։ Մետաֆիզիկան պատահականությունը կտրում է անհրաժեշտությունից. յերևույթները նրա համար կա՛մ միայն պատահական են, կա՛մ անհրաժեշտ են։ Մեխանիստները բոլորովին ժխտում են պատահականությունը։ Դիալեկտիկական մատերիալիզմը ընդունում

*է, որ անհրաժեշտությունն ու պատահականությունը փոխադարձաբար կապակցված են, որ պատահականությունը միմիայն անհրաժեշտության լրացումն ու արտահայտման ձևն է։ Զարգացման պրոցեսում նրանք փոխվում են մեկը մյուսին։ Այսպես, անհատների աննկատելի, պատահական տարբերությունները առանձին օրգանական տեսակների ներսում կարող են բուն տեսակը փոփոխելու աստիճան ուժեղանալ։ Պատահական փոփոխությունները այդ ժամանակ անհրաժեշտ են դառնում։ Հասարակության մեջ նույնպես գոյություն ունի անհրաժեշտությունն ու պատահականությունը։ «...Որտեղ մակերեսի վրա տեղի յեն ունենում պատահականության խաղ, այնտեղ ինքը՝ այդ պատահականությունը գուրս է գալիս միշտ ներքին, գաղտնի օրենքների յենթակա։ Ամբողջ բանն այն է, որ հայտնագործվեն այդ օրենքները»* (Էնգելս)։ *Օրինակ, կապիտալիստական շուկայում ապրանքների գները տատանվում են, որը մի շարք պատահական պատճառներից է կախված։ Բայց գների պատահական տատանումների միջով անհրաժեշտությամբ իր ազդեցությունն է դրսևորում աշխատանքային արժեքի օրենքը։ Այդպիսով, «պատահականությունը ներկայացնում է մի ձև, որի հետևում թաքնված է անհրաժեշտությունը»* (Էնգելս)։

**Անտագոնիզմ, անտագոնիստական հակասություններ** *— անհաշտելի հակասություններ, որ կարելի յե միայն բռնությամբ լուծել։ Այդպես, օրինակ, բուր-*

ժուազիայի և բանվոր դասակարգի միջև յեղած հակասությունները լուծվում են սոցիալիստական հեղափոխությամբ: «Պրոլետարիատի և բուրժուազիայի միջև յեղած անտագոնիզմը կմնա վորպես դասակարգային պայքար, վորը, հասցվելով իր լարվածության բարձրագույն աստիճանին, լիակատար հեղափոխություն է հանդիսանում» (Մարքս): ԽՍՀՄ-ում անցման շրջանում մի կողմից՝ բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության, և մյուս կողմից՝ կուլակության միջև յեղած անտագոնիստական հակասությունները լուծվեցին բռնի կերպով—համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելով: Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության միջև յեղած հակասություններն անտագոնիզմի բնույթ չեն կրում: Այդ հակասությունները ԽՍՀՄ-ում լուծված են մանր գյուղացիական տնտեսությունների սոցիալիստական վերափոխման միջոցով: Բայց այդ դասակարգերի միջև նյական տարբերություն դեռ գոյություն ունի: Նրանց միջև յեղած տնտեսական և քաղաքական տարբերությունները՝ ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության զարգացմանը զուգընթաց՝ ավելի ու ավելի ջնջվում և հետզհետե անհետանում են:

«Անտի-Դյուրինգ» — մարքսիստական փիլիսոփայության կլասիկ յերկի—Ֆ. Ենգելսի «Գիտության հեղաշրջումը պարոն Ոյգեն Դյուրինգի կողմից» գրքի

կրճատված անունը։ «Անտի-Դյուրինգի» մեջ «քննարկված են փիլիսոփայության, բնագիտության և հասարակական գիտությունների բնագավառի ամենամեծ հարցերը... Այդ մի զարմանալի բովանդակալից և ուսանելի գիրք է» (ԼԵՆԻՆ)։ Գիրքն ուղղված էր գերմանական փիլիսոփա, մարքսիզմի թշնամի Դյուրինգի դեմ։ Դյուրինգը, որը իր «Թեորիայի» մեջ զուգորդել էր վուլգար մատերիալիզմը, իդեալիզմը և մանր-բուրժուական սոցիալիզմը, բերկրանքով ընդունվեց օպորտունիստների, հատկապես Բեռնշտայնի կողմից։ Էնգելսը սկսած 1877 թվից մի շարք հոդվածներ գրեց, որոնց մեջ քննադատում էր Դյուրինգի հայացքները։ Այդ հոդվածները 1878 թվին լույս տեսան առանձին գրքով։ Մարքսն աչքի անցկացրեց ամբողջ գիրքը, իսկ II մասի X գլուխն ինքը գրեց։ «Անտի-Դյուրինգը» հսկայական դեր խաղաց միջազգային կոմունիստական շարժման զարգացման մեջ։ Քննադատելով Դյուրինգին՝ Էնգելսը միևնույն ժամանակ սիստեմի յե վերածում մարքսիզմի հիմնական դրույթները, Մարքսի հետ միասին ունեցած գրեթե քառասնամյա գիտական աշխատանքի և հեղափոխական պայքարի հանրագումարն է տալիս։ «Անտի-Դյուրինգը» բաղկացած է յերեք բաժնից. «Փիլիսոփայություն», «Քաղաքատնտեսություն», «Սոցիալիզմ»։ Ներածության մեջ Էնգելսը վերլուծում է մարդկային մտածողության զարգացման ուղիները և ցայտունորեն, դրսևորում է դիալեկտիկայի և մետա-

ֆիզիկայի միջև յեղած տարբերությունը: Նա ապացուցում է, վոր «Ճշգրիտ պատկերացում տիեզերքի մասին, նրա զարգացման և մարդու զարգացման մասին, ինչպես նաև այդ զարգացման արտացոլման մասին մարդկանց գլուխներում—կարող է ձեռք բերվել միմիայն դիալեկտիկայի միջոցով»: «Փիլիսոփայություն» բաժնում, քննադատելով Դյուրինգի փիլիսոփայությունը, Էնգելսը հսկայական բնագիտական և պատմական նյութով ապացուցում է մարքսիստական փիլիսոփայության իրավացիությունն ու կենսունակությունը: «Քաղաքատնտեսություն» բաժնում Էնգելսը սեղմ ձևով վերարտադրում է Մարքսի տնտեսական ուսմունքը: Էնգելսը ցույց է տալիս կապիտալիստական հասարակության դասակարգային հակասությունների անհաշտելիությունը: «Սոցիալիզմ» բաժնում Էնգելսը տալիս է սոցիալիզմի գիտական հիմնավորումը, ուտոպիական սոցիալիզմի քննադատությունը և լուսաբանում է պատմության մատերիալիստական ըմբռնման հիմնական դրույթները: Հենց այստեղ էլ տրվում է պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրների հիմնավորումը:

**Անտիթեզիս** — *տե՛ս* Թեզիս, անտիթեզիս, սինթեզիս:

**Անտիկ փիլիսոփայություն** — *հին Հունաստանի և Հռոմի դարաշրջանի փիլիսոփայությունը. Նրա զարգացման սկիզբը* VI *դարն է մեր թվականությունից առաջ: Վերջը—մեր թվականության* V *դարը: Անտիկ*

*փիլիսոփայությունը հսկայական նշանակություն ունի փիլիսոփայության պատմության մեջ, վորովհետև նրա բազմազան ձևերում «սաղմնային ձևով, ծագման վիճակում կան աշխարհհայացքի գրեթե բոլոր հետագա տիպերը»* (Ենգելս)։ *Այդպես, նրա մեջ արդեն յերևան է յեկել պայքարը իդեալիզմի (Պլատոն) և մատերիալիզմի (Դեմոկրիտ և ուրիշն.) միջև։ Հին հունական փիլիսոփաները «բնածին տարերային դիալեկտիկներ»* (Ենգելս) *եյին. բնությունը նրանց համար փոփոխման, ծագման ու վոչնչացման մի հոսանք եր։ Դիալեկտիկայի տարրերը կապված նաև մատերիալիստական աշխարհհայացքի հետ առանձնապես ցայտուն արտահայտված են Հերակլիտի մոտ, վորը ուսուցանում եր, թե աշխարհը, վոր վո՛չ աստվածներից և վո՛չ ել մարդկանցից վորևե մեկն է ստեղծել, մի «հավիտենապես կենդանի հուր» է, վոր աշխարհում «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ շարունակ փոփոխվում»։ Սակայն անտիկ փիլիսոփաների դիալեկտիկական հայացքը բնության վերաբերմամբ, ճիշտ լինելով ամբողջությամբ վերցրած, այնուամենայնիվ անբավարար եր՝ մանրամասնությունները, աշխարհի առանձին յերևույթները բացատրելու համար, առանձին առարկաները խորապես ուսումնասիրելու համար։ Անտիկ փիլիսոփաները դեռ չեյին հասել բնության անալիզին ըստ մասերի, իսկ ամբողջ բնության իսկական գիտական ճանաչումը հնարավոր է այն ժամանակ միայն,*

յերբ ճանաչված են նրա (բնության։ Հայ․ խմբ․) առանձին կողմերը։ Անտիկ փիլիսոփայության զարգացման մեջ կարելի յե յերեք ժամանակաշրջան սահմանել․ 1) Ստրկատիրական հասարակություն կազմվելու ժամանակաշրջանի փիլիսոփայություն (VI դ․ մինչև մեր թվականությունը)․ այս ժամանակաշրջանին են վերաբերում Միլետի դպրոցը, Պյութագորը, Հերակլիտը, Ելեացիները։ 2) Ծաղկման և կրիզիսի ժամանակվա փիլիսոփայություն (V դար և IV դ․ առաջին յերեք քառորդները մեր թվականությունից առաջ)․ այս ժամանակաշրջանի ականավորագույն փիլիսոփաներն եյին Դեմոկրիտը, Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը։ 3) Հելլենիզմի դարաշրջանի փիլիսոփայություն․ այս ժամանակաշրջանում են հանդես յեկել Եպիկուրը, նոր-պլատոնականները (Պլոտին), սկեպտիկները, ստոիկները։ Հունական մտքի ազդեցության տակ մոտավորապես II դ․ կեսերին մեր թվականությունից առաջ ծագում է նաև հռոմեական փիլիսոփայությունը (Լուկրեցիոս, Սենեկա, Ցիցերոն, Մարկոս Ավրելիոս)։ Անտիկ փիլիսոփայության կործանումը կապված է ստրկատիրական հասարակության կործանման հետ։ Անտիկ փիլիսոփայությունը հսկայական ազդեցություն գործեց գիտության և փիլիսոփայության հետագա զարգացման վրա։

**Աշխարհագրական մատերիալիզմ** — *ուղղություն բուրժուական հասարակագիտության մեջ, որը աշ-*

խարհագրական միջավայրին վորոշող նշանակություն է վերագրում հասարակական զարգացման մեջ։ Ժողովուրդների միջև յեղած տարբերությունը, նրանց հասարակակարգի միջև յեղած տարբերությունն աշխարհագրական մատերիալիզմը ջանում է բացատրել այն աշխարհագրական պայմանների տարբերությամբ, վորոնց մեջ ապրում են այդ ժողովուրդները։ Աշխարհագրական մատերիալիզմի ներկայացուցիչներ եյին, որինակ, աշխարհագրագետ Ե. Ռեկլյուն և նրա ռուս հետևորդ Լ. Ի. Մեչնիկովը։ Վերջինս ամբողջ մարդկային կուլտուրայի, քաղաքակրթության զարգացումը կախման մեջ եր դնում ժողովուրդների և պետությունների կյանքի համար գետերի և ծովերի ունեցած նշանակությունից։ Այդ պատճառով նա մարդկային կուլտուրայի ամբողջ պատմությունը բաժանում եր գետային, ծովային և ովկիանոսային կուլտուրաների պատմության։ Աշխարհագրական մատերիալիզմը չի կարող գիտականորեն բացատրել հասարակական զարգացման իսկական պատճառը։ Աշխարհագրական միջավայրը, վոր համարյա անփոփոխ է մնում տասնյակ հազարավոր տարիների ընթացքում, չի կարող հասարակության զարգացման գլխավոր պատճառը լինել, վորն արմատական փոփոխություններ է կրում զգալիորեն ավելի փոքր ժամկետներում (հարյուրավոր տարիների, իսկ յերբեմն ել նույնիսկ տասնյակ տարիների ընթացքում մեծագույն փոփոխություններ են

տեղի ունենում)։ Հասարակական զարգացման վորոշող պատճառն արտաքին բնության մեջ չէ, աշխարհագրական միջավայրի մեջ չէ, այլ նյութական բարիքների արտադրության յեղանակների փոփոխության մեջ։ Վորքան ավելի յեն զարգացած հասարակության արտադրողական ուժերն, այնքան ավելի փոքր է հասարակության կախումը աշխարհագրական միջավայրից։

**Աշխարհագրական միջավայր** — հասարակությանը շրջապատող բնությունը, հասարակության կյանքի արտաքին բնական պայմանները՝ կլիման, հողը, յերկրի ընդերքի հարստությունները և այլն։ Աշխարհագրական միջավայրը հասարակության նյութական կյանքի անհրաժեշտ ու մշտական պայմաններից մեկն է։ Ներգործելով բնության վրա արտադրության գործիքների ոգնությամբ և ոգտագործելով նրա ուժերը (ջուրը, կրակը, հողմը և այլն), մարդն արտադրում է իր գոյության համար անհրաժեշտ կենսամիջոցները, նյութական բարիքները։ Աշխարհագրական միջավայրն ազդում է հասարակության զարգացման վրա։ Նա կարող է արագացնել հասարակության զարգացումը, որինակ, այս կամ այն յերկրի բարենպաստ աշխարհագրական դիրք ունենալու, նրանում բնական հարստություններ լինելու դեպքում կամ, ընդհակառակը, դժվարացնել այդ զարգացումը, բայց աշխարհագրական միջավայրն ամենևին վորոշող դեր չի

կատարում։ Ինքն աշխարհագրական միջավայրի ազդեցությունը հասարակության վրա՝ կախված է նյութական արտադրության զարգացման մակարդակից և միատեսակ չէ հասարակության արտադրողական ուժերի տարբեր մակարդակների դեպքում։ Օրինակ, գետերը, ծովերը հասարակության զարգացման առաջին աստիճաններում մարդկանց անջատում էին միմյանցից, բայց նավաշինության և ծովագնացության զարգացմամբ նրանք հաղորդակցության ճանապարհների փոխվեցին և դարձան միացման, կապի միջոցներ ժողովուրդների միջև։ Մի ժամանակ բազմաթիվ օգտակար հանածոներ (քարածուխ, նավթ, հանքեր և այլն) նշանակություն չունեին հասարակության համար. իսկ արդի արդյունաբերության և տեխնիկայի պայմաններում նրանք հսկայական դեր են խաղում նյութական բարիքների արտադրության մեջ։

**Աշխարհի գեոցենտրիկ և հելիոցենտրիկ սիստեմները։** — Մինչև XVI դարը իշխում էր հույն գիտնական Պտղոմեոսի՝ աշխարհի գեոցենտրիկ սիստեմը, որի համաձայն՝ երկիրն անշարժ է և հանդիսանում է տիեզերքի կենտրոնը, իսկ նրա շուրջը պտտվում են արևը, լուսինը, մոլորակները և աստղերը, ամբողջ աշխարհը։ Այդ պատճառով կարծում էին — և այդ մոլորությունը պաշտպանվում էր եկեղեցու կողմից, — թե իբր բնության մեջ ամեն ինչ կատարվում է երկրի համար, մարդկանց շահերի համար։ Կոպեռնիկոսը

(XVI դ.) *ապացուցեց այդ թեորիայի սնանկությունը և առաջարկեց աշխարհի հելիոցենտրիկ սիստեմը, ըստ որի՝ տիեզերքի կենտրոնում գտնվում է արևը, իսկ մոլորակները (նրանց թվում նաև յերկիրը) պտտվում են նրա շուրջը։ Այդ սիստեմն ընդունված է ներկայումս այն ուղղումով, որ արևը գտնվում է միմիայն արեգակնային համակարգության կենտրոնում, որն ինքն էլ շարժվում է տիեզերական տարածության մեջ։*

**Ապօստերիօրի** — *տե՛ս* Ապրիօրի:

**Ապրիօրի** — *նախապես տրված, մինչև զգայական փորձը, մինչև փաստերը։ Այստեղից՝ «ապրիօրի ըմբռնում» այն պնդումն է նշանակում, որ հիմնվում է միմիայն նախնական վերացական դատողությունների վրա և չի հենվում փորձի ու պրակտիկայի վրա։ Սրան որպես հակադրություն՝ ա պ օ ս տ ե ր ի օ ր ի նշանակում է—փորձից հետո, փորձից, փաստերից։ Դիալեկտիկական մատերիալիզմը ժխտում է այն իմացությունը, որ հիմնված չէ զգայական փորձի և պրակտիկայի վրա։*

**Աստվածորոնողություն կամ աստվածաշինարարություն** — *կրոնա-փիլիսոփայական հոսանք, որ առաջացավ Ռուսաստանի բուրժուական և մանր-բուրժուական ինտելիգենցիայի մեջ* 1905—1907 *թ. թ. հեղափոխության պարտությունից հետո։ «Մարքսիզմից հեռացած ինտելիգենտների մի մասն այնտեղ հասավ, որ սկսեց քարոզել նոր կրոն ստեղծելու անհրաժեշ-*

տությունը (այսպես կոչված «աստվածորոնողները» և «աստվածաշինարարները» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց): Աստվածորոնողներն ու աստվածաշինարարները փորձում էին մի տեսակ նոր, «սոցիալիստական» կրոն ստեղծել և այդպիսով միացնել կրոնը մարքսիզմի հետ: «...Ամեն մի աստվածաշինարարություն,—գրում է Լենինը,—բութ մեշչանականության, փխրուն քաղքենիության, «հուսահատված ու հոգնած» փիլիստերների ու մանր բուրժուաների երազկոտ «ինքնաթքակոծման» հիացական ինքնահայեցողություն է հենց»: Լենինը մատնանշում էր, որ Լունաչարսկու և մյուսների աստվածաշինարարությունն ուղղակի բղխում էր մախիստական փիլիսոփայությունից:

**Ավենարիուս** *Ռիխարդ* (1843—1896) — գերմանական փիլիսոփա, սուբյեկտիվ իդեալիստ, էմպիրիոկրիտիցիզմի (տե՛ս) հիմնադիրներից մեկը: Ըստ Ավենարիուսի՝ մտածողությունն ու կեցությունը («յեսը» և «միջավայրը») գտնվում են մշտական, պարտադիր կապակցության («սկզբունքային կոորդինացիայի») մեջ այն իմաստով, որ չկա մտածողություն առանց կեցության և կեցություն՝ առանց մտածողության: Այդ կապակցության հիմքն Ավենարիուսը համարում էր գիտակցությունը: Ըստ Ավենարիուսի՝ աշխարհը չի կարող գոյություն ունենալ առանց մտածող սուբյեկտի: Այդ պատճառով՝ «Ավենարիուսի և Ընկ. սկըզ–

քունքային կոորդինացիան սուբյեկտիվ իդեալիզմ է» (Լենին)։ Այդ (կոորդինացիան։ Հայ. խմբ.) հակասում է գիտությանը, որն ապացուցում է, որ գիտակցությունը մատերիայի յերկարատև պատմական զարգացման արդյունքն է և որ յեղել է մի ժամանակ, յերբ յերկրի վրա չի յեղել մարդն իր գիտակցությամբ։ Աշխատելով դուրս պրծնել այն անհեթեթություններից, վորոնց նրան հասցնում եր «սկզբունքային կոորդինացիայի» ուսմունքը, Ավենարիուսն առաջ մղեց «պոտենցիալ կենտրոնական անդամի» թեորիան։ Այդ թեորիայի համաձայն՝ մենք մեզ «մտածում ենք», այսինքն՝ մեզ պատկերացնում ենք գոյություն ունեցած այն ժամանակ, յերբ մարդը գոյություն չուներ, բայց յերկրագունդն արդեն կար։ Ռեակցիոն բուրժուազիայի իդեոլոգ Ավենարիուսի ուսմունքը մեծ ազդեցություն գործեց ռուսական մախիստների՝ Բոգդանովի, Բազարովի և ուրիշների վրա։ Ավենարիուսի փիլիսոփայությունը լիակատար ջախջախման է յենթարկվել Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքում։ Ավենարիուսի գլխավոր աշխատությունն է «Критика чистого опыта», 1888—1890 թվականներին։

**Ատոմ** — Ատոմի հասկացողությունը գիտության մեջ առաջին անգամ մտցրել են Դեմոկրիտն ու Եպիկուրը, վորոնք ատոմը համարում եյին մատերիայի ամենափոքրիկ, այլևս անբաժանելի մասնիկը։ Այդ

ձևով ատոմն այնուհետև հանդես եկավ Գասսենդիի և Հոլբախի փիլիսոփայության մեջ, ինչպես նաև Նյուտոնի ֆիզիկայի մեջ։ Այդ նույն մետաֆիզիկական հասկացողությամբ ատոմը քիմիայի և ֆիզիկայի մեջ մտավ XIX դարի սկզբից։ Ֆիզիկայի և քիմիայի զարգացումը XIX դարում փորձնական կերպով հաստատեց ատոմների գոյությունը։ Հաստատվեց, որ յուրաքանչյուր քիմիական տարրի մոլեկուլը բաղկացած է այդ տարրի որոշ թվով ատոմներից։ XIX և XX դարերի սահմանագլխին գիտությունը հրաժարվեց ատոմի վերաբերյալ նախկին հայացքից, ըստ որի ատոմը նյութի այլևս անբաժանելի մասնիկն է։ Պարզվեց, որ ատոմը բաժանելի է, փոփոխական, քայքայելի, բարդ կառուցվածք և էլեկտրոմագնիսային բնություն ունի։ Ատոմը բաղկացած է կորիզից և էլեկտրոններից։ Կորիզն իր հերթին բարդ կառուցվածք ունի և կարող է մասերի բաժանվել։ Լենինը սրա մեջ տեսնում էր դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքի հաստատումը մատերիայի միասնականության մասին, բնության մեջ բացարձակ վերջնական սահմանների բացակայության, նաև բնության ճանաչման սահմանների բացակայության մասին։ Լենինը, քննադատելով ատոմի մետաֆիզիկական ըմբռնումն, ասում էր, որ դիալեկտիկական մատերիալիզմն ընդունում է ատոմի անսպառելիությունը և պնդում է, որ «էլեկտրոնը նույնպես անսպառելի է, ինչպես և ատոմը»։

**Ատրիբուտ** — *առարկայի էական, անբաժանելի հատկությունը: Օրինակ, շարժումը մատերիայի ատրիբուտն է:*

**Արիստոտել** *(384—322 մինչև մեր թվակ.)* — *«Հին աշխարհի ամենամեծ մտածողը»* (Մարքս), *հանճարեղ գիտնական-էնցիկլոպեդիստ, բնագետ, անտիկ աշխարհի մեծագույն դիալեկտիկներից մեկը, լոգիկան ստեղծողը: Արիստոտելը Պլատոնի աշակերտն էր, սակայն նա մերժեց Պլատոնի՝ իդեաների իդեալիստական թեորիան, որի համաձայն իդեաները գոյություն ունեն իրերից առաջ և նրանցից անկախ, իսկ իրերը իդեաների անկատար պատճեններն են միայն: Իդեան (ըստ Արիստոտելի՝ ձևը) ապրում է հենց իրի մեջ: Արիստոտելը տատանվում է իդեալիզմի և մատերիալիզմի միջև: Յուրաքանչյուր յեզակի իր, ըստ Արիստոտելի, բաղկացած է մատերիայից և աննյութական ձևից, որոնք անխզելիորեն կապված են միմյանց հետ: Մատերիան պասսիվ է, նա իրի հնարավորությունն է. իսկ ձևն ակտիվ է, նա մի ուժ է, որը իրի հնարավորությունն իրականության է վերածում: Աշխարհն, ըստ Արիստոտելի, հավիտենական է, միասնական. տիեզերքը գնդի ձև ունի՝ կենտրոն ունենալով երկիրը, որի հետևում շարժվում են «վոլորտները»* (сферы) *նրանց ամրացված լուսատուներով: Նրանց հետևում գտնվում է աստված—աշխարհի «անշարժ նախաշարժիչը» և միևնույն ժամանակ նրա վերջնական նպատակը: Իմա-*

ցության թեորիայի մեջ Արիստոտելն ընդհուպ մոտենում էր մատերիալիզմին, ի տարբերություն Պլատոնից՝ պաշտպանելով գիտելիքների ծագումն զգայություններից։ Արիստոտելի ուսմունքն իշխում էր միջին դարերում, բայց «տերտերականությունն սպանեց Արիստոտելի մեջ կենդանի յեղածը և հավերժացրեց մեռածը» (Լենին)։ Արիստոտելի կարևորագույն յերկերն են՝ «Метафизнка», «Этика», «Политика», «Физика», «О душе», «Категории», «Аналитика I», «Аналитика II»։

**Արվեստ** *(գրականություն, ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն, յերաժշտություն, թատրոն, կինո)*—հասարակական գիտակցության ձևերից մեկը։ Արվեստի բնորոշ առանձնահատկությունն է իրականության ճանաչողությունը, վերարտադրությունը զգացական պատկերների ձևով։ Արվեստը, ինչպես և ամեն մի իդեոլոգիա, վերջին հաշվով վորոշվում է հասարակության կյանքի նյութական պայմաններով։ Դասակարգային հասարակության մեջ արվեստը ծառայում է իբրև տարբեր դասակարգերի շահերի արտահայտություն և իդեոլոգիական զենք՝ դասակարգային պայքարում։ Արվեստի զարգացումը դասակարգային անտագոնիստական հասարակության մեջ տեղի յե ունենում չափազանց հակասականորեն և անհամաչափ։ Բուրժուական հասարակությունը, վոր արտադրության զարգացման մա-

կարգակով ավելի բարձր է, քան թե, օրինակ, անտիկ հասարակությունը, դրա հետ մեկտեղ շատ ավելի քիչ է նպաստում արվեստի զարգացմանը, քան վերջինը: «Կապիտալիստական արտադրությունը, — գրում էր Մարքսը — թշնամի յէ հոգևոր արտադրության միքանի ճյուղերին, ինչպես են արվեստն ու պոեզիան»: Այդ պատճառով էլ կապիտալիզմի ժամանակ արվեստը կարող է զարգանալ միմիայն շարունակ այս կամ այն ձևով հակասության մեջ մտնելով իշխող դասակարգերի հետ: Ռեակցիոն դասակարգերի միջավայրից ելած խոշորագույն գեղարվեստագետների մեծամասնությունը, այն գեղարվեստագետների, վորոնք ձգտում են իրականությունն ազնվորեն և ճշմարտացի արտացոլել, իրենց ստեղծագործության մեջ հակասության մեջ են մտնում իրենց դասակարգի իդեաների և շահերի հետ (Պուշկին, Գոգոլ, Տոլստոյ և ուրիշն.): Նրանց մի մասն անցնում է առաջավոր և ճնշված դասակարգերի դիրքերը: Հեղափոխական պրոլետարիատի պատմական արենա դուրս գալով՝ բուրժուական արվեստն ավելի ու ավելի կեղծ ու յերկերեսանի յէ դառնում: Բուրժուական արվեստը վերջնական այլասերման է յենթարկվում իմպերիալիզմի պայմաններում: Բուրժուական ռեակցիոն իդեոլոգիայի դեմ մղվող պայքարում՝ դեռ հին հասարակակարգի ընդերքում զարգանում է պրոլետարական արվեստը (Գորկի): Արվեստը ծաղկման է հասնում պրոլետարիատի դիկ-

տատուրայի պայմաններում, սոցիալիզմի դարաշրջանում։ Պրոլետարիատի արվեստը բացահայտ դասակարգային և կուսակցական արվեստ է, այն ստեղծվում է կոմունիստական հասարակության համար մղվող պայքարում։ Այն միևնույն ժամանակ իսկական ժողովրդական արվեստ է, վորովհետև ստեղծվում է ժողովրդի կողմից, ծառայում է ժողովրդական գործին և սնվում է նրա մտքերով, զգացմունքներով։ Արվեստի պատմական զարգացման մեջ նոր աստիճան հանդիսանալով՝ սոցիալիստական արվեստը կարող է զարգանալ միմիայն քննադատորեն յուրացնելով և ոգտագործելով այն բոլոր արժեքավորը, վոր ստեղծել է մարդկային կուլտուրան իր բազմադարյան զարգացման ընթացքում։ Խորհրդային արվեստի հիմնական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է։ Այդ մեթոդը թույլ է տալիս արվեստի մեջ խորապես և ճշմարտացի արտացոլել սոցիալական կյանքը, այն ըմբռնել պրոլետարիատի սոցիալիստական խնդիրների տեսակետից և արվեստն ոգտագործել իբրև աշխատավորների կոմունիստական դաստիարակության հզոր միջոց։

**Արտադրական հարաբերությունների տիպերը։**—Պատմությունը հաշվում է արտադրական հարաբերությունների 5 տիպեր։ Նախնադարյան-համայնական հասարակակարգում մարդն անզոր եր բնության դեմ մղվող պայքարում։ Կոպիտ քարե գործիքները, աղեղն ու նետերը մարդկանց ստիպում

եյին աշխատել միասին, կոլեկտիվ կերպով։ Այստեղից՝ արտադրության միջոցների և պրոդուկտների ընդհանուր սեփականությունը։ Բացակայում եյին դասակարգերն ու շահագործումը։ Մետաղե գործիքներին անցնելով, յերկաթե կացինների, յերկաթախոփ արորների յերևան գալով՝ քոչվոր ցեղերն անցնում եյին նստակեցության և սկսում եյին զբաղվել հողագործությամբ, անասնապահությամբ ու արհեստներով։ Աշխատանքի արտադրողականության աճումը հասցրեց նրան, վոր յերևան յեկավ մասնավոր սեփականությունը, փոխանակությունը և հարստությունների կուտակումը քիչ մարդկանց ձեռքում։ Յերևան յեկան դասակարգեր—ստրուկներ և ստրկատերեր։ Ստրկատիրական հասարակակարգում ստրկատերը արտադրության միջոցների և հենց ստրուկի սեփականատերն եր։ Շահագործումից ազատ աշխատանքը, վոր կատարում եյին նախնադարյան համայնքի անդամները, փոխարինվեց շահագործվող ստրուկների աշխատանքով։ Ֆեոդալական հասարակության արտադրական հարաբերությունների հիմքը ֆեոդալ-կալվածատիրոջ սեփականությունն եր արտադրության միջոցների վերաբերմամբ և վոչ-լրիվ սեփականությունն արտադրության մեջ աշխատողների, ճորտ գյուղացիների վերաբերմամբ։ Ֆեոդալական խոշոր հողային սեփականության կողքին գոյություն ուներ գյուղացիների և արհեստավոր-

ների սեփականությունն արտադրության գործիքների վերաբերմամբ։ Դա մի սեփականություն եր, վոր հիմնված եր արհեստավորի և նրա անձնական աշխատանքի վրա։ Ֆեոդալը ստրկից գերադասում եր ճորտին, վոր ավելի յեր շահագրգռված աշխատանքով։ Ճորտը ֆեոդալին վճարում եր նատուրայով (բերքի մի մասը, զանազան պարհակներ և այլն) կամ փողով, յերբ դրամական տնտեսությունը սաստիկ զարգացավ (դրամական բահրա)։ Արտադրողական ուժերի զարգացումը, առևտրի աճումը ֆեոդալիզմի ընդերքում հասցրին կապիտալիստական մանուֆակտուրայի, խոշոր արհեստանոցի ծագմանը, վորտեղ կապիտալիստի համար աշխատում եյին տասնյակ և հարյուրավոր բանվոր-արհեստավորներ։ Մեքենաների ներմուծումն արհեստավորական-մանուֆակտուրային արտադրությունը փոխարկեց խոշոր արդյունաբերության և արմատական փոփոխություններ առաջացրեց արտադրական հարաբերությունների մեջ։ Խոշոր ֆեոդալական հողային սեփականության և մանր սեփականության տիրապետությանը փոխարինելու յեկավ խոշոր արդյունաբերական և առևտրական կապիտալիստական սեփականության տիրապետությունը։ Կապիտալիստների դասակարգ, վոր արտադրության միջոցների տերն ե և վարձու բանվորներ, վորոնք զրկված են արտադրության միջոցներից ու շահագործվում են կապիտալիստների կողմից,—սրանք են բուր-

ժուական հասարակության հիմնական դասակարգերը։ Կապիտալիզմի զարգացմամբ ավելի ու ավելի յեն սրվում նրա հակասությունները։ Խոշոր արդյունաբերության մեջ արտադրության հասարակական բնույթը հակասության մեջ է մտնում հասարակական արտադրության արդյունքների յուրացման ձևի հետ։ Մասնավոր կապիտալիստական սեփականության տիրապետության հետ կապված կոնկուրենցիան, արտադրության անարխիան, պլանային սկզբունքի բացակայությունը տնտեսության զարգացման մեջ՝ հասցնում են գերարտադրության ճգնաժամերի, վորոնք քայքայում են արտադրողական ուժերը և բանվոր դասակարգին դատապարտում են գործազրկության, սովի և աղքատության։ Կապիտալիզմի հակասությունները առանձին սրությամբ են հասնում նրա զարգացման վերջին ստադիայում—իմպերիալիզմի դարաշրջանում։ Պրոլետարական հեղափոխությունը վոչնչացնում է բուրժուական արտադրական հարաբերությունները և հաստատում է սոցիալիստական արտադրական հարաբերություններ, և միմիայն դրանք են, վոր համապատասխանում են կապիտալիզմի ընդերքում զարգացած հզոր արտադրողական ուժերին։ Սոցիալիստական հասարակարգում, վոր այժմ իրագործված է միմիայն ԽՍՀՄ-ում, արտադրական հարաբերությունների հիմքը հանդիսանում է արտադրության միջոցների հանրային սեփա-

կանությունը—պետական և կոոպերատիվ–կոլտնտեսային սեփականությունը: Շահագործող դասակարգերն ու շահագործումը վոչնչացված են: Պրոդուկտները բաշխվում են ըստ աշխատանքի, «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի համաձայն: Տե՛ս Սոցիալիզմ և կոմունիզմ:

**Արտադրության գործիքներ**—արտադրողական ուժերի կարևորագույն տարրը—գործիքներ, մեքենաներ, գյուղատնտեսական գործիքներ և այլն, վորոնց ոգնությամբ մարդը ներգործում է բնության վրա նյութական բարիքներ արտադրելու նպատակով: Աշխատանքի գործիքների ստեղծումն ու գործադրությունը մարդու՝ կենդանական թագավորությունից ջոկվելու վճռական պայմանն էր: Շատ հազարամյակների ընթացքում կատարվել է աշխատանքի գործիքների զարգացումն ու կատարելագործումը, և դրա հետ միասին աճել է բնության վրա մարդու իշխելու աստիճանը: Տեխնիկան հսկայական դեր է խաղում մարդկային հասարակության զարգացման մեջ: Արտադրողական ուժերի և ամենից առաջ արտադրության գործիքների փոփոխությունն ու զարգացումը հասցնում է նյութական բարիքների արտադրության հասարակական յեղանակների փոփոխության և այնպիսի փոփոխությունների, վորոնք տեղի յեն ունենում ամբողջ հասարակակարգի մեջ: Արտադրության գործիքների նշանակությունը հասարակության կյանքի համար Մարքսը հե-

տևյալ կերպ եր գնահատում. «Տնտեսական դարաշըրջանները տարբերվում են վո՛չ թե նրանով, թե ինչ է արտադրվում, այլ նրանով, թե ինչպես է արտադրվում, աշխատանքի ինչպիսի գործիքներով: Աշխատանքի միջոցները վո՛չ միայն մարդկային աշխատանքային ուժի զարգացման չափանիշն են, այլ և ցուցանիշ են այն հասարակական հարաբերությունների, վորոնց ժամանակ կատարվում է աշխատանքը»:

**Արտացոլման թեորիա** — «... Դիալեկտիկական մատերիալիզմի իմացության թեորիայի հիմքում դրված է արտաքին աշխարհի ընդունումը և նրա արտացոլումը մարդկային գլխում» (ԼԵՆԻՆ): Մարդկային զգայություններն ու հասկացողությունները ոբյեկտիվ աշխարհի իրերի և պրոցեսների պատճենները, արտանկարները, պատկերումներն են: Աշխարհը ճանաչելու առաջին, ելակետային աղբյուրները զգայություններն են: Իմացությունն սկսվում է զգայություններից: «...Զգայությունը գիտակցության իսկապես անմիջական կապն է արտաքին աշխարհի հետ, արտաքին գրգիռի էներգիայի՝ գիտակցության փաստի փոխարկվելն է» (ԼԵՆԻՆ): Զգայությունները մարդու կողմից բնությունը ճանաչելու լոկ առաջին աստիճանն են: Ճանաչողության յերկրորդ աստիճանը յերևույթների ընդհանրացումն է, գաղափարների, կատեգորիաների ստեղծումը, ոբյեկտիվ աշխարհի եյական գծերն արտացոլող օրենքների հայտնաբեր-

ծումը։ Գիտական հասկացողությունների մեջ աշխարհն ավելի խորն է արտացոլվում, քան անմիջականորեն զգայությունների մեջ, վորովհետև գիտության ողնությամբ ճանաչվում են առարկաների և յերևույթների զարգացման օրենքները։ Մարդն իրեն շրջապատող աշխարհը ճանաչում է իր պրակտիկ գործունեության, բնության վրա ակտիվ ներգործություն ունենալու պրոցեսում։ «...Մեզնից դուրս գոյություն ունեն իրերը։ Մեր ըմբռնումները ու պատկերացումները նրանց պատկերներն են։ Այդ պատկերների ստուգումը, իսկականների անջատումը կեղծերից կատարվում է պրակտիկայի միջոցով» (Լենին)։ Մեր զգայարանքների պրակտիկ ստուգումը իմացության պրոցեսի յերրորդ աստիճանն է, օբյեկտիվ աշխարհի օրենքների արտացոլման պրոցեսը մարդկային գլխում։ Իրականության արտացոլումը մարդկանց գիտակցությունում դասակարգային հասարակության մեջ կրում է դասակարգային բնույթ։ Հասարակական իդեաների, հասարակական թեորիաների, քաղաքական հայացքների ծագման աղբյուրը պետք է փնտրել վերջին հաշվով հասարակության նյութական կյանքի պայմաններում, հասարակական կեցության մեջ, վորի արտացոլումն են այդ իդեաները, թեորիաները, հայացքները։

**Արտաքին աշխարհ**—մարդուց դուրս և նրանից անկախ գոյություն ունեցող նյութական առարկաների, յերևույթների միակցությունն իրենց փոխադարձ կա-

պակցության մեջ։ Մատերիալիստի համար արտաքին աշխարհը մարդկային իմացության միակ աղբյուրն է։ Իսկ իդեալիստի համար արտաքին աշխարհը կա՛մ գերաշխարհային հոգևոր եյակի (օբյեկտիվ իդեալիզմ) ստեղծագործության արդյունքն է, կա՛մ առանձին անհատի գիտակցության արդյունքը (սուբյեկտիվ իդեալիզմ)։

*

# Բ

**Բազիս և վերնաշենք։** —Արտադրության եղանակը, այսինքն՝ արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները կազմում են հասարակության տնտեսական բազիսը (հիմքը), որի վրա բարձրանում է վերնաշենքերի սիստեմը—քաղաքական հասարակակարգը և հիմնարկները, ինչպես նաև հասարակական գիտակցության ձևերը—բարոյախոսությունը, գիտությունը, կրոնը, փիլիսոփայությունը և այլն։ Բազիսի փոխվելով ավելի կամ պակաս արագությամբ փոխվում են նաև բոլոր վերնաշենքերը։ Քաղաքական և իդեոլոգիական պայքարում արտացոլվում են հասարակության կյանքի տնտեսական պայմանները։ Բայց վերնաշենքերը, որոնք անմիջականորեն կամ անուղղակի կերպով որոշվում են տնտեսական բազիսով, չեն հանդիսանում, ինչպես կարծում են վուլգար տնտեսագետները, էկոնոմիկայի պասսիվ հետևանքը, և էկոնոմիկան ամենևին միակ ակտիվ ուժը չէ հասարակության զարգացման մեջ։ Վերնաշենքերն իրենց ազդեցությունն են գործում բազիսի վրա և իրենց հերթին արագացնում կամ դանդաղեցնում են

հասարակության զարգացումը։ Այդպես, բուրժուազիան օգտագործում է իր պետությունը պրոլետարական հեղափոխության դեմ պայքարելու համար, այդպիսով կասեցնելով հասարակության հեղափոխական զարգացումը։ Հետևաբար, քաղաքական վերնաշենքն այստեղ ակտիվ ռեակցիոն դեր է կատարում։ Պրոլետարիատը, նվաճելով քաղաքական իշխանությունը, վոչնչացնում է բուրժուական մասնավոր սեփականությունը, վորն արգելակում է արտադրողական ուժերի զարգացումը, մանր գյուղացիական տնտեսությունը փոխադրում է կոլեկտիվ, սոցիալիստական տնտեսության ռելսերի վրա։ Մասնավոր սեփականության փոխարեն հաստատվում է արտադրության միջոցների սոցիալիստական հանրային սեփականություն։ Դրանով պրոլետարական պետությունն անսահման հնարավորություններ է ստեղծում արտադրողական ուժերի զարգացման համար։ Սա հասարակության, նրա էկոնոմիկայի և արտադրողական ուժերի զարգացման մեջ քաղաքական վերնաշենքի կատարած ակտիվ, հեղափոխական դերի մի ցայտուն օրինակ է։ Մեր յերկրում բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության ամրապնդումն ու մարքսիստական-լենինյան թեորիային տիրապետելը դեպի կոմունիզմի բարձրագույն փուլն արդեն սկսված աստիճանական անցման հաջողության կարևորագույն պայմաններն են հանդիսանում։

**Բարոյականություն** — *տես* Մորալ, բարոյականություն:

**Բացառման բացառում** — *օրինաչափություն, պատմու-թյան և մտածողության զարգացման խիստ ընդհա-նուր և այդ իսկ պատճառով խիստ լայն գործող ու կարևոր օրենք. մի օրենք, վորը... յերևան է գալիս կենդանական և բուսական թագավորության մեջ, գեոլոգիայի, մաթեմատիկայի, պատմության, փիլի-սոփայության մեջ»* (Էնգելս): *Բացառման բացառման օրենքը դիալեկտիկայի հիմնական օրենքներից մեկն է: Յուրաքանչյուր յերևույթ, լինելով ներքուստ հակա-սական, իր մեջ պարունակում է իր սեփական բացա-ռումը: Նրա մեջ պայքարում է նոր ծնվողը մեռնողի, նորը հնի դեմ: Սակայն հնի բացառումը չի նշանակում ամբողջ հնի անտեսելը, անհիմն բացառում, պարզապես մի կողմ նետում, ինչպես այդ մեկնաբանում են մետա-ֆիզիկները: «Դիալեկտիկայի մեջ բացասել չի նշանա-կում պարզապես «վոչ» ասել, կամ իրը հայտարարել գոյություն չունեցող, կամ այն ցանկացած յեղանա-կով վոչնչացնել»* (Էնգելս): *Դիալեկտիկան «պահան-ջում է մտածանչել... բացասականի կապը դրականի հետ, այդ դրականը պահել բացասականի մեջ»* (Լե-նին): *Կոմունիզմն իբրև բարձրագույն հասարակական-տնտեսական ֆորմացիա անկարելի կլիներ առանց արտադրողական ուժերի զարգացման այն բարձր մա-կարդակի, վորն ստեղծվել է հասարակության ամբողջ*

նախընթաց պատմությամբ։ Կոմունիզմը կապիտալիզմի բացասումն է, բայց նա պահպանում է դրական այն ամենը, ինչ վոր ստեղծել է մարդկությունը կապիտալիզմի լծի տակ։ Այդ պատճառով՝ զարգացման պրոցեսը պետք է հասկանալ վո՛չ թե վորպես շրջանաձև շարժում, այլ վորպես առաջընթաց շարժում, իբրև վերընթաց գծով շարժում, իբրև անցում հնից նորին, իբրև զարգացում պարզից դեպի բարդը, ստորինից դեպի բարձրագույնը։ Բնության և մարդկային հասարակության համար բնորոշ է առաջադիմական զարգացումը։ Լենինը մատնանշել է, վոր զարգացման բարձրագույն աստիճանում մենք հանդիպում ենք ստորին աստիճանի մի քանի գծերի, հատկությունների կրկնությանը և կ ա ր ծ ե ց յ ա լ վերադարձի դեպի հինը։ Դա անցածի պարզ կրկնությունը չէ, այլ նոր, բարձրագույն աստիճան։ Նախնադարյան-համայնական հասարակակարգը բացասվում է դասակարգային շահագործող հասարակությամբ։ Կոմունիզմն իբրև նոր հասարակական-տնտեսական ֆորմացիա, իր հերթին, բացասում է դասակարգային հասարակությունը։ Պարզ է, վոր արդի կոմունիզմը վերադարձ չէ դեպի նախնադարյան-համայնական հասարակակարգը, նա իրենից ներկայացնում է անչափ ավելի բարձր աստիճան հասարակության զարգացման մեջ։ Դասակարգային հասարակությունը հանդես է գալիս իբրև նախնադարյան հասարակության բացասում։ Կոմու-

նիստական հարաբերությունն, իր հերթին, հանդիսանում է դասակարգային շահագործողական հասարակակարգի բացասում, այսինքն՝ բացասման բացասում։

**Բացարձակ ճշմարտություն (абсолютная истина)** —Մետաֆիզիկան բացարձակ ճշմարտություն ասելով հասկանում է մարդկային գիտության անփոփոխությունը։ Դիտելով բոլոր առարկաներն ու երևույթները որպես անփոփոխ և միանգամ ընդմիշտ տրված՝ մետաֆիզիկան ամեն մի ճշմարտություն էլ ընդունում է որպես իմացության միանգամ ընդմիշտ տըրված և պատրաստի արդյունք։ Դիալեկտիկական մատերիալիզմը ժխտում է այդպիսի բացարձակ ճշմարտությունները։ Իմացությունը շարժման մի պատմական պրոցես է անգիտությունից դեպի գիտություն, բնության առանձին երևույթները, առանձին կողմերը գիտենալուց դեպի նրա ավելի խոր և լրիվ ճանաչողությունը, դեպի նրա զարգացման շարունակ նորանոր օրենքների հայտնագործումը։ Իմացության յուրաքանչյուր աստիճան սահմանափակված է գիտության մակարդակով, հասարակության կյանքի պատմական պայմաններով, որոնք մեր գիտելիքները բնության մասին անխուսափելիորեն հարաբերական, այսինքն՝ ոչ լրիվ են դարձնում։ Բայց մեր իմացության կողմից հայտնագործված ճշմարտությունները, լինելով հարաբերական, միևնույն ժամանակ իրենց

մեջ պարունակում են նաև բացարձակ ճշմարտության մի մասնիկ, վորովՀետև նրանք թեև վոչ-լրիվ, բայց ճիշտ են արտացոլում արտաքին օբյեկտիվ աշխարհը։ Այդ պատճառով վոչ-լրիվ, Հարաբերական ճշմարտությունների միջոցով՝ կատարյալ իմացությունը մեր մոտեցնում է բացարձակ ճշմարտությանը, այսինքն՝ օբյեկտիվ աշխարհի լրիվ ու բազմակողմանի իմացությանը։ Սակայն օբյեկտիվ աշխարհի ամբողջ իմացությունն անհնարելի է։ Այդ Հնարավոր կլիներ միմիայն այն դեպքում, յեթե նյութական աշխարհը դադարեր զարգանալուց, յեթե նա կանգ առներ իր շարժման մեջ և սպառեր իրեն։ Բայց այդ յերբեք չի լինի։ Աշխարհը գտնվում է Հավիտենական փոփոխության և նորացման վիճակում։ Հետևապես, իմացությունն էլ, վորն արտաքին աշխարհի մասին արտացոլումն է, նույնպես անսպառելի է և չի կարող յերբեք վերջանալ, ինչպես վոր անսպառելի և անվերջ է աշխարհը։

Բելտով — Գ. Վ. Պլեխանովի *(տես)* գրական կեղծանունը։

Բերկլի Ջորջ *(1684—1753)* — անգլիական յեպիսկոպոս, փիլիսոփա, սուբյեկտիվ իդեալիստ։ Կատաղի պայքար էր մղում մատերիալիզմի դեմ վորպես աթեիզմի փիլիսոփայական Հիմունքի։ Ըստ Բերկլիի՝ իրերի բոլոր Հատկությունները լոկ մարդկային զգայություններ են։ Այստեղից Բերկլին այն յեզրակա-

ցությունն էր անում, թե մեզ շրջապատող նյութական իրերը զգայությունների միակցություններ են միայն։ Առարկան գոյություն ունի, վորչափով այն ընկալվում է։ Գոյություն ունենալ,—ասում էր Բերկլին,—նշանակում է ընկալվել։ «Այդպիսի նախադրյալից ելնելով՝ չի կարելի հանգել ուրիշ մարդկանց գոյության, բացի հենց իրենից. դա զուտ սոլիպսիզմ է» (Լենին)։ Զգուշանալով ազատվել սոլիպսիզմի անհեթեթություններից՝ Բերկլին թույլ էր տալիս անհետևողականություն—անցում օբյեկտիվ իդեալիզմի դիրքերին և ընդունում էր աստծու օբյեկտիվ գոյությունը։ Բերկլիի փիլիսոփայության մեջ աստծուն մեծ տեղ է հատկացվում. նա մարդու հոգու մեջ մտցնում է զգայությունները, հենց դրանով «ստեղծագործելով» բնությունը։ Բերկլիի ռեակցիոն ուսմունքն իր հետագա զարգացումը գտավ մախիզմի մեջ։ «Մատերիալիզմի և էմպիրիոկրիտիցիզմի» մեջ Լենինը ջախջախիչ քննադատության յենթարկեց Բերկլիի ու նրա հետևորդների հայացքները։ Բերկլիի հիմնական աշխատություններն են՝ «Трактат о началах человеческого знания» 1710 г., և «Три разговора» 1713 г.։

**ԲԵՐՆՇՏԱՅՆ** *Էդվարդ (1850—1932)*— ռևիզիոնիզմի և քաղաքական օպորտունիզմի գերմանական իդեոլոգը, ռեֆորմիստական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդներից մեկը։ Իր գրքերում Բերնշտայնը լիակատար վերանայման յենթարկեց մարքսիզմի հիմնական

գրույթները։ Նա հանդես յեկավ ընդդեմ Մարքսի դասակարգային պայքարի թեորիայի, ընդդեմ Մարքսի ուսմունքի՝ կապիտալիզմի անխուսափելի կործանման, սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին։ Հրաժարվելով պրոլետարիատի վերջնական նպատակից — սոցիալիզմից՝ Բեռնշտայնն առաջ քաշեց «շարժումն ամեն ինչ է, վերջնական նպատակը՝ ոչինչ» օպորտունիստական ֆորմուլան։ Փիլիսոփայության մեջ Բեռնշտայնը հանդես յեկավ ընդդեմ մատերիալիստական դիալեկտիկայի, անվանելով այն «դավաճանական տարր» Մարքսի ուսմունքի մեջ։ Բեռնշտայնն ինքը փիլիսոփայության բնագավառում մարքսիզմն իդեալիզմի, կանտականության (տե՛ս Կանտ) հետ միացնելու համար մարտնչողներից մեկն էր։ Լենինը մի շարք աշխատություններում (օրինակ՝ «Մարքսիզմ և ռեվիզիոնիզմ», «Ի՞նչ անել», «Պետություն և հեղափոխություն» և այլն) տվել է Բեռնշտայնի ռեվիզիոնիստական թեորիաների ջախջախիչ քննադատությունը։

«Բնության դիալեկտիկան» — Էնգելսի աշխատությունը, առաջին անգամ հրատարակվել է ԽՍՀՄ-ում 1925 թվին։ Այն կազմվել է բնագիտության փիլիսոփայության վերաբերյալ մի շարք նյութերից, որ Էնգելսը գրել է 1873-ից մինչև 1883 թ. ժամանակաշրջանում։ Էնգելսը գտնում էր, որ դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայությունը պետք է հիմնվի

բնական գիտությունները և մաթեմատիկան բազմակողմանիորեն գիտենալու վրա։ «Բնության դիալեկտիկայի» մեջ պարունակվում է բնագիտության և մաթեմատիկայի պատմության խոր փիլիսոփայական հետազոտությունը, տրվում է բնագիտության կարևորագույն հարցերի վերլուծումը՝ մատերիալիստական դիալեկտիկայի տեսակետից։ Նրա մեջ տրված է մեխանիստական մատերիալիզմի քննադատությունը, ինչպես նաև մի շարք բուրժուական գիտնական-բնագետների իդեալիստական թեորիաների և նրանց մետաֆիզիկական մեթոդի քննադատությունը։

Բոգդանով *Ա. Ա. (1873—1928)* — պրոֆեսիայով բժիշկ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ էր. մի ժամանակ հարում էր բոլշևիկներին։ Դեռ մինչև 1905 թ. հեղափոխությունն սկսեց հանդես գալ ռեվիզիոնիստական հայացքներով փիլիսոփայության բնագավառում։ 1905—1907 թ.թ. հեղափոխությունից հետո կարուկ կերպով տարաձայնվեց բոլշևիկների հետ ինչպես բանվոր դասակարգի քաղաքական պայքարի խնդիրներն ըմբռնելու, այնպես և թեորիայի բնագավառում։ «Վպերյոդականներ» և «օտզովիստներ» հակաբոլշևիկյան խմբերի կազմակերպիչն էր, որոնց մասին Լենինն ասում էր, թե նրանք իրենցից ներկայացնում են «աստառը շուռ տված մենշևիկներ, նոր տեսակի լիկվիդատորներ»։ Հենց այդ ժամանակ էլ, ռեակցիայի շրջանում, կազմակերպեց

հակաբոլշևիկյան կուսակցական դպրոցը Կապրի կղզում։ Բազարովի, Լունաչարսկու, մենշևիկներ Յուշկևիչի և Վալենտինովի հետ միասին Բոգդանովը հանդես յեկավ մարքսիզմի փիլիսոփայական-թեորետիկան հիմունքների ուղղված «քննադատությամբ»։ Բոգդանովը զարգացնում էր մախիստական փիլիսոփայության մի տարանձին տարատեսակը—էմպիրիոմոնիզմը (տե՛ս)։ Բոգդանովի փիլիսոփայական թեորիաների քննադատությունը տվել է Լենինը իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքում։ Բոգդանովի ամենագլխավոր յերկերն են «Эмпириомонизм» 1904—1906 թվականներին, «Философия живого опыта» 1923 թ., «Тектология» 1922 թ.։

Բովանդակություն յեվ ձեվ — տե՛ս Ձեվ և բովանդակություն։

Բուրժուական օբյեկտիվիզմ — տե՛ս Օբյեկտիվիզմ բուրժուական։

# Գ

**Գերմանական կլասիկ փիլիսոփայություն** — XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայությունը։ Այդ փիլիսոփայության հիմնադիրն էր **Կանտը** (*տե՛ս*), նրա շարունակողները՝ Ֆիխտեն ու Շելլինգը. **Հեգելի** (*տե՛ս*) սիստեմը հանդիսացավ «Կանտի ժամանակներից սկսված փիլիսոփայական շարժման եզրափակիչ կետը» (**Էնգելս**)։ Գերմանական կլասիկ փիլիսոփայությունն արտացոլում էր Եվրոպայի XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի հեղափոխական շարժումների ազդեցությունը, սակայն այդ ազդեցությունը նրա մեջ բեկվեց այն ժամանակվա Գերմանիայի հետամնաց սոցիալ-տնտեսական պայմանների պրիզմայի միջով։ Գերմանական բուրժուազիայի թուլությունը, անհետևողականությունը, կախումը ֆեոդալներից արտահայտվեցին նաև նրա փիլիսոփաների վրա, առաջ բերելով Կանտի, Ֆիխտեյի, Շելլինգի, Հեգելի մոտ թշնամություն դեպի մատերիալիզմը, կապվածություն կրոնի հետ, միստիկական-իդեալիստական մտածելակերպ։ Գերմանական կլասիկ փիլիսոփայությունը ունեցավ մի շարք ծառայու-

*թյուններ, որոնց մեջ ամենահիմնականն էր դիալեկտիկայի հիմնավորումը: «Հեգելի դիալեկտիկան, երբև զարգացման ամենաբազմակողմանի, բովանդակությամբ հարուստ և խորը ուսմունք՝ Մարքսն ու Էնգելսը համարում էին գերմանական կլասիկ փիլիսոփայության ամենամեծ նվաճումը»* (ԼԵՆԻՆ): *Գերմանական կլասիկ փիլիսոփայությունը, սկսած Կանտից և վերջացրած Հեգելով, իդեալիզմ էր դավանում: Սակայն նա ավարտվեց Ֆոյերբախի մատերիալիզմով: Մարքսն ու Էնգելսը վերամշակեցին մարդկության կուտակած գիտելիքների ամբողջ պաշարը, Հեգելի դիալեկտիկայից վերցրին միմիայն նրա «ռացիոնալ հատիկը», այսինքն՝ զարգացման և ընդհանուր կապակցության իդեան, դեն նետեցին իդեալիստական կեղևը և ավելի ևս զարգացրին դիալեկտիկան, նրան արդիական գիտական սնունդ տալով: Մարքսն ու Էնգելսն օգտագործեցին նաև Ֆոյերբախի մատերիալիզմի հիմնական կորիզը, դեն շպրտելով նրա կրոնաբարոյական արտաքին շերտերը: Այսպիսով, գերմանական կլասիկ փիլիսոփայությունը մարքսիզմի աղբյուրներից մեկը հանդիսացավ: Գերմանական կլասիկ փիլիսոփայության փայլուն վերլուծումը տրված է Էնգելսի «Լուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը» գրքում:*

**Գիտական կոմունիզմ** — *ուսմունք կոմունիզմի մասին, վոր ստեղծել են Մարքսն ու Էնգելսը պատմա-*

թյան իրենց հայտնագործած մատերիալիստական ըմբռնման և կապիտալիստական հասարակության օրենքների խոր ուսումնասիրության հիման վրա։ Ի հակադրություն ուտոպիական սոցիալիզմի (*տե՛ս*)՝ *Մարքսն ու Էնգելսն ապացուցեցին, որ սոցիալիզմը կապիտալիստական հասարակության զարգացման և պրոլետարիատի դասակարգային պայքարի անհրաժեշտ արդյունքն է։ Նրանք գիտականորեն ապացուցեցին, որ բուրժուական հասարակության զարգացումը և դասակարգային պայքարը նրա մեջ անխուսափելիորեն հասցնելու յեն կապիտալիզմի վոչնչացմանը. պրոլետարիատի հաղթությանը, որ պրոլետարիատը սոցիալիզմի հաղթությունը ձեռք կբերի վո՛չ թե խաղաղ, այլ բռնի, հեղափոխական ճանապարհով, պրոլետարական հեղափոխության միջոցով, որ անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմը լինելու յե պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջան, որպիսի դիկտատուրան պետք է ճնշի շահագործողների դիմադրությունը և նոր, անդասակարգ կոմունիստական հասարակություն ստեղծի։ Այսպես սոցիալիստական հասարակության վերաբերյալ ուտոպիական գաղափարից ու յերազանքից սոցիալիզմը ներդաշնակ գիտական և հեղափոխական թեորիա դարձավ։ «Այն անհաղթահարելի հրապուրիչ ուժը, որ դեպի այդ թեորիան է գրավում բոլոր յերկրների սոցիալիստներին, հենց այն է, որ նա խիստ ու բարձրագույն գիտականությու-*

*նը (հասարակական գիտության վերջին խոսքը հանդիսացող) մեթոդում և հեղափոխականության հետ»* (ԼԵՆԻՆ): *Սոցիալիզմի ուսմունքն անխզելիորեն կապված է դիալեկտիկական մատերիալիզմի հետ: Դիալեկտիկական մատերիալիզմը սոցիալիզմն ուտոպիայից գիտության փոխարկելու թեորիական զենքն էր: «Մարքսիզմը միմիայն սոցիալիզմի թեորիան չէ, այլ մի ամբողջական աշխարհայացք է, փիլիսոփայական մի սիստեմ, որից տրամաբանորեն բխում է Մարքսի պրոլետարական սոցիալիզմը»* (Ստալին):

**Գիտության և փիլիսոփայության կուսակցականությունը** — *Դիալեկտիկական մատերիալիզմն ուսուցանում է, որ փիլիսոփայությունը, այնպես ինչպես և ամեն մի գիտություն, դասակարգային է, կուսակցական: «Նորագույն փիլիսոփայությունը նույնպես կուսակցական է, ինչպես և յերկու հազար տարի սրանից առաջ»* (ԼԵՆԻՆ): *Փիլիսոփայության մեջ տեղի ունեցող կարծիքների պայքարի հետևում միշտ թաքնված է դասակարգերի և կուսակցությունների պայքարը հասարակության մեջ: Լենինը մատնանշում էր, որ իդեալիստ-մախիստների բառային խուսափումների հետևում «չի կարելի չտեսնել կուսակցությունների պայքարը փիլիսոփայության մեջ, մի պայքար, որը վերջին հաշվով արտահայտում է ժամանակակից հասարակության թշնամի դասակարգերի տենդենցներն ու իդեոլոգիան»: Դասակարգային հասարակության*

մեջ արտադասակարգային, անկուսակցական փիլիսո-փայություն չի կարող լինել: Փիլիսոփայությունն ու գիտությունը մինչև այս կամ այն դասակարգի ձեռքում դասակարգային պայքարի հոգևոր զենք էին հանդիսանում: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները ընդգծում էին դիալեկտիկական մատերիալիզմի հեղափոխական բնույթը, մատնանշում էին, որ փիլիսոփայությունը միմիայն այն ժամանակ խորապես գիտական և դասակարգային-կուսակցական կլինի, երբ իր զենքը կդարձնի կապիտալիստական հասարակակարգի դեմ, ստրկության ու անհավասարության բոլոր տեսակների դեմ: Թեորիայի և պրակտիկայի միասնականությունն անխզելիորեն կապված է փիլիսոփայության կուսակցականության վերաբերյալ մարքսիստական-լենինյան ուսմունքի հետ: Բոլշևիկների մոտ խոսքը երբեք չի հակասում գործին, և այդ բոլշևիկյան կուսակցականության բարձրագույն սկզբունքն է:

**Գիտություն** — իդեոլոգիական վերնաշենքերից մեկը, հասարակական գիտակցության վորոշ ձև: «...Գիտության նպատակն է տալ աշխարհի ճիշտ... պատկերը» (Լենին): Գիտությունը ձգտում է աշխարհը պատկերել վոչ թե նրա առանձին մասերի կարծեցյալ քաոսային բազմազանության մեջ,—այլ նա աշխատում է գտնել երևույթների որենքները, նրա նպատակն է բացատրել երևույթները: Գիտելիքների բա-

լոր բնագավառներում գիտությունը մեծ ցույց է տալիս հիմնական օրենքների գրանցումը յերևույթների կարծեցյալ քաոսի մեջ: Գիտությունը զարգանում է առաջ է շարժվում հասարակության զարգացման հետ միասին. Նրա պրոգրեսի եյությունն այն է, վոր նա հետզհետե ավելի լավ և ավելի խորն է արտացոլում իրականությունը: Գիտության ուղղությունն այս կամ այն պատմական ժամանակաշրջանում վորոշվում է տիրապետող հասարակական հարաբերություններով: Դասակարգային հասարակության մեջ գիտությունն ունի դասակարգային, կուսակցական բնույթ: Վորքան ավելի առաջադիմական և իշխող սոցիալական հասարակակարգը, այնքան ավելի նպաստավոր են պայմանները գիտության զարգացման համար: Բուրժուազիան իր գոյության սկզբի ժամանակներում նպաստում էր գիտության զարգացմանը: Իշխանության հասնելով, ջանալով ամրապնդել իր տիրապետությունը պրոլետարիատի դեմ մղվող պայքարում, նա դառնում է ռեակցիոն դասակարգ, վոր կասեցնում է հասարական զարգացումը, գիտության պրոգրեսը: Կապիտալիստական հասարակության մեջ միայն առաջադիմական դասակարգը պրոլետարիատն է: Նրա իդեոլոգիան մարքսիզմ-լենինիզմի ուսմունքն է: «Մարքսի ուսմունքն ամենազոր է, վորովհետև այն ճիշտ է: Նա լիակատար է և ներդաշնակ, մարդկանց տալով ամ-

բողջական աշխարհայեցողություն, որ չի կարող հաշտվել ո՛չ մի սնահավատության, ո՛չ մի ռեակցիայի, բուրժուական ճնշման ո՛չ մի պաշտպանության հետ» (ԼԵՆԻՆ)։ Միմիայն Խորհրդային Միության մեջ, որտեղ տապալված է կապիտալի իշխանությունը, գիտությունը լիակատար ազատություն է վայելում։ Այստեղ գիտությունը հնարավորություն ունի խորտակելու իր ազատ զարգացումը խանգարող բոլոր արգելքներն ու նախապաշարմունքները, այստեղ նա իսկապես ժողովրդին է ծառայում։ Ընկեր Ստալինը հետևյալ խոսքերով է բնորոշել գիտության խնդիրները Խորհրդային Միության մեջ. «Գիտության ծաղկման համար, այն գիտության, որը չի ցանկապատվում ժողովրդից..., այլ պատրաստ է ծառայելու ժողովրդին, պատրաստ է ժողովրդին տալու գիտության բոլոր նվաճումները, որը սպասարկում է ժողովրդին ո՛չ թե հարկադրանքով, այլ հոժարակամ, սիրով»։

**Գնոսեոլոգիա** — *(հունարեն «գնոսիս» — իմացություն և «լոգոս» — ուսմունք)* — իմացության թեորիա, *փիլիսոփայական ուսմունք մարդու այն ընդունակության մասին, որի շնորհիվ նա ճանաչում է իրականությունը և հասու է լինում ճշմարտությանը, ուսմունք իմացության աղբյուրների (զգայողություն, բանականություն) և այն ձևերի մասին, որոնցով նա*

*տեղի չեն ունենում (ըմբռնում, պատկերացում, հաս-կացողություն, դատողություն, յեզրակացություն և այլն)։ Ամեն տեսակ գնոսեոլոգիայի ելակետը հանդիսանում է այն հարցի մատերիալիստական կամ իդեալիստական լուծումը, թե ինչպես է հարաբերում մեզ շրջապատող աշխարհի վերաբերյալ մեր իմացությունը բուն իսկ աշխարհին։ Մատերիալիստական գնոսեոլոգիան ելակետ է ընդունում այն, որ մեզնից դուրս և մեզնից անկախ գոյություն ունեն առարկաներ, իրեր, մարմիններ, որ մեր զգայությունները արտաքին աշխարհի պատկերներն են։ Իդեալիստական փիլիսոփայությունը պնդում է, թե մարդու իմացությունը կա՛մ իդեայի արտացոլումն է հանդիսանում (Պլատոն, Հեգել), կա՛մ համընկնում է բուն իսկ կեցության հետ, որը գոյություն ունի միմիայն մարդու ըմբռնումների մեջ (Բերկլիի և մախականների սուբյեկտիվ իդեալիզմը), կա՛մ սկզբունքորեն ժխտում է աշխարհի իմացության հնարավորությունը (Յումի և Կանտի ագնոստիցիզմը)։ Մարքսիստական փիլիսոփայության մեջ գնոսեոլոգիայի առանձին գիտություն չկա. իմացության մասին գիտական թեորիան հենց մատերիալիստական դիալեկտիկան է, որ դրսևորում է բնության, հասարակության և մտածողության ընդհանուր օրենքները։ Նա «բովանդակում է իր մեջ այն, ինչ որ այժմ անվանում են իմացության թեորիա, գնոսեոլոգիա»* (ԼՆԾիԱ)։

**Գույքային հարաբերություններ** — սեփականության (*տե՛ս*) *հարաբերություններ*, *արտադրական հարաբերությունների իրավաբանական արտահայտությունը* (*տե՛ս* մարդկանց արտադրական հարաբերությունները)։

# Դ

**Դասակարգային պայքար** — պայքար շահագործողների և շահագործվողների միջև, դասակարգերի շահերի անհաշտելիության դրսևորումը։ Բոլոր հասարակությունների պատմությունը, բացի նախնադարյան-համայնականից, դասակարգերի պայքարի պատմություն է յեղել։ Դասակարգային պայքարը պատմական զարգացման շարժիչ ուժն է դասակարգային հասարակության մեջ։ Բուրժուական հեղափոխությունը վոչնչացրեց ֆեոդալական հասարակարգը, պրոլետարական հեղափոխությունը յերկրագնդի 1/6 մասում վոչնչացրեց և ամբողջ աշխարհում կվոչնչացնի կապիտալիստական հասարակարգը։ Դասակարգային պայքարը ներթափանցում է եկոնոմիկան, քաղաքականությունը, իդեոլոգիան։ Դասակարգային պայքարի ձևերը տարբեր են։ Պրոլետարիատի դասակարգային պայքարի հիմնական ձևերն են տնտեսական, քաղաքական և թեորիական պայքարը։ Նրանցից առաջնակարգ նշանակություն ունի պրոլետարիատի քաղաքական պայքարը, այսինքն՝ պայքարը քաղաքա-

կան իշխանության և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար։ Քաղաքական պայքարը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը բանվոր դասակարգին և ամբողջ հասարակությանը շահագործումից ազատագրելու վճռական պայմանն է։ Պայքարի տնտեսական և թեորիական ձևերը ստորադասվում են քաղաքական պայքարի խնդիրներին։ Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումով դասակարգային պայքարը չի ավարտվում, այլ նոր ձևեր է ընդունում։ Շահագործող դասակարգերը վոչնչացվում են պրոլետարիատի մղած դասակարգային անողոք պայքարում։ Մեր յերկրում շահագործող դասակարգերը վոչնչացված են, բայց նրանց մնացորդները դեռ վերջնականապես ջախջախված չեն։ Գոյություն ունի կապիտալիստական շրջապատում։ Այդ պատճառով էլ ջախջախված դասակարգերի մնացորդները ԽՍՀՄ-ում մենակ չեն։ Նրանք անմիջական օժանդակություն են ստանում ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս գտնվող մեր թշնամիներից։ Սխալ կլիներ կարծել, թե դասակարգային պայքարի սֆերան սահմանափակված է ԽՍՀՄ-ի սահմաններով։ Յեթե դասակարգային պայքարի մի ծայրը գործում է ԽՍՀՄ-ի շրջանակներում, ապա նրա մյուս ծայրը ձգվում է դեպի մեզ շրջապատող բուրժուական պետությունների սահմանները» (Ստալին)։ Դրանով է վորոշվում բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետությունը, նրա տնտե-

տական, քաղաքական և ռազմական հզորությունը բոլոր միջոցներով ամրապնդելու խնդիրը։

**Դասակարգեր** (*հասարակական*)։ — «Դասակարգեր են կոչվում մարդկանց մեծ խմբերը, վորոնք տարբերվում են հասարակական արտադրության պատմականորեն վորոշ սիստեմում նրանց ունեցած տեղով, նրանց հարաբերությամբ (վոր մեծ մասամբ ամրապնդված ու ձևակերպված է լինում օրենքների մեջ) դեպի արտադրության միջոցները, աշխատանքի հասարակական կազմակերպության մեջ նրանց խաղացած դերով և, հետևաբար, հասարակական հարստության այն բաժնի ստացման յեղանակներով ու չափերով, վոր գտնվում է նրանց տրամադրության տակ։ Դասակարգերը մարդկանց այնպիսի խմբեր են, վորոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը՝ շնորհիվ հասարակական վորոշ տնտեսաձևում նրանց ունեցած տեղի տարբերության» (ԼԵՆԻՆ)։ Դասակարգերի ծագումը պատմականորեն կապված է աշխատանքի հասարակական բաժանման ծագման ու զարգացման և արտադրության միջոցների մասնավոր սեփականության յերևան գալու հետ։ Ստրկատերերը և ստրուկները—ահա ստրկատիրական հասարակության հիմնական դասակարգերը։ Կալվածատերերը, վորոնք սեփականել են հողը և նրանց յենթարկված ու նրանց կողմից շահագործվող ճորտ գյուղացիները—ահա ֆեոդալական հասարակության հիմնական դասակարգերը։ Կապիտա-

*լիտներ, վորոնք ֆաբրիկաների ու գործարանների սեփականատերեր են, և պրոլետարներ, վորոնք աշխատում են կապիտալիստական ֆաբրիկաներում և գործարաններում,—ահա կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերը։ Շահագործվող դասակարգերն իրենց աշխատանքով ստեղծում են ամբողջ հասարակական հարստությունը, վորի առյուծի բաժինը յուրացնում են շահագործողները։ Իսկ աշխատավորն ստանում է իր աշխատանքով ստեղծված հարստության մի չնչին բաժինը։ Դասակարգերի միջև յեղած հակասությունները անխուսափելիորեն հասցնում են դասակարգային պայքարի՝ շահագործվողների և շահագործողների միջև։ Դասակարգային հասարակության ու դասակարգային պայքարի պատմության մեջ հատուկ տեղ է պատկանում պրոլետարիատին։ Ստրուկների պայքարը ստրկատերերի դեմ, ճորտերի պայքարը ֆեոդալական-կալվածատիրական կարգերի դեմ հասցրին միմիայն շահագործման մի ձևը մյուսով փոխարինելուն։ Պրոլետարական հեղափոխությունը, վոչնչացնելով կապիտալիստական հասարակակարգը և սոցիալիստական հասարակակարգ ստեղծելով, վերացնում է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, հասցնում է դասակարգերի վոչնչացման և ընդմիշտ թաղում է մարդու շահագործումը մարդու կողմից։*

**Դասակարգերը ԽՍՀՄ-ում։** — *Սոցիալիզմի հաղ-*

թությունն արմատապես փոխեց դասակարգային կառուցվածքը մեր երկրում։ Քաղաքացիական պատերազմի տարիներին լիկվիդացիայի ենթարկվեց կալվածատերերի դասակարգը, էքսպրոպրիացիայի ենթարկվեց խոշոր բուրժուազիան։ Բայց դասակարգերը միանգամից վոչնչացնել չի կարելի։ Երկրում դեռ մնում էին տարբեր տնտեսաձևեր։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությամբ փոխվեց դասակարգերի փոխհարաբերությունը երկրում։ Պրոլետարիատն ու գյուղացիությունը դարձան հիմնական դասակարգերը։ Բայց բացի նրանցից գոյություն ունեին քաղաքային կապիտալիստական բուրժուազիան և կուլակությունը գյուղում։ Քաղաքականապես վոչնչացնելով կապիտալիզմը 1917 թվին, բանվոր դասակարգը, դաշնակցած գյուղացիության հետ, իր առաջ խնդիր դրեց՝ վերջնականապես ջախջախել կապիտալիզմը նաև տնտեսապես, վոչնչացնել կապիտալիզմը սնող տնտեսական արմատները։ Երկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը, կուլակության՝ վորպես դասակարգի վերացումը հասցրին սոցիալիզմի հաղթությանը։ Շահագործող դասակարգերը լիկվիդացիայի են ենթարկված։ Բանվոր դասակարգը դադարել է պրոլետարիատ լինելուց այս բառի նախկին իմաստով, դառնալով նոր, շահագործումից ազատագրված դասակարգ, վոր վոչնչացրել է տնտեսության կապիտալիստական սիստեմը, հաստատել է արտադրության

*գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականություն և խորհրդային հասարակությունը տանում է կոմունիզմի ուղիով»* (Ստալին)։ *Գյուղացիությունը ԽՍՀՄ-ում նույնպես արմատապես փոխվել է։ Պրիմիտիվ ու հետամնաց տեխնիկա ունեցող միլիոնավոր մանրատված, մանր և միջին տնտեսությունների փոխարեն այժմ ԽՍՀՄ-ում աճել է միանգամայն նոր մի գյուղացիություն. այլևս չկան կալվածատերեր ու կուլակներ, վաճառականներ ու վաշխառուներ, որոնք կարողանային շահագործել գյուղացիությանը։ Գյուղացիական տնտեսությունների հսկայական մեծամասնությունը մտել է կոլտնտեսությունները, որոնց հիմքում դրված է ո՛չ թե արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, այլ կոլեկտիվ սեփականությունը, որը ծագել է կոլեկտիվ աշխատանքի հիման վրա։ Դա գյուղացիության մի նոր տիպ է, որ ազատագրված է ամեն տեսակ շահագործումից։ Այդպիսի գյուղացիություն նույնպես դեռ չի իմացել մարդկության պատմությունը»* (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ *Մինչհեղափոխական ինտելիգենցիան կազմված էր առավելապես ազնվականներից և բուրժուազիայից։ Մեր խորհրդային ինտելիգենցիան իր մասսայով դուրս է եկել աշխատավորների միջից։ Խորհրդային ինտելիգենցիայի 80—90%-ը յերեկվա բանվորներն ու գյուղացիներն են և բանվորների ու գյուղացիների զավակները։ Դրանք կուսակ-*

*ցական, կոմյերիտական, խորհրդային, տնտեսական, կոոպերատիվ, առևտրական, արհմիութենական, գյուղատնտեսական, լուսավորական, զինվորական աշխատողների կադրերն են, վորոնց ողնությամբ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը կառավարում են Խորհրդային յերկիրը։ Հին ինտելիգենցիան փորձում եր դասակարգերից վեր կանգնել, իրականում ծառայելով կապիտալիզմին։ Խորհրդային ինտելիգենցիան իսկական ժողովրդական ինտելիգենցիա յե։ Նա Խորհրդային հասարակության իրավահավասար անդամն է, նա ծառայում է սոցիալիզմին։ Անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիզմին անցնելու պրոցեսում ամբողջովին կջնջվեն բանվորների, գյուղացիների և ինտելիգենտների միջև յեղած բոլոր սահմաններն ու տարբերությունները։ «...Մեր հասարակությունն այժմ կազմված է յերկու միմյանց բարեկամ դասակարգերից՝ բանվորներից ու գյուղացիներից, վորոնք միացած են ընդհանուր գործով, կոմունիզմի կառուցման գործով... ԽՍՀՄ-ում աշխատավորների յերկու դասակարգերի միջև յեղած սահմաններն ավելի ու ավելի յեն ջնջվում, ինչպես վոր հետզհետե ջնջվում և անհետանում են սահմանները նաև այդ դասակարգերի ու ինտելիգենցիայի միջև, վորն զբաղված է մտավոր աշխատանքով հօգուտ խորհրդային հասարակության»* (Մոլոտով)։

**Դասակարգերի պայքար** — *տես* Դասակարգային պայքար:

**Դասակարգն «ինքն իր մեջ» յեվ դասակարգն «իր համար»։** — *Մարքսն ու Էնգելսը «Կոմունիստական մանիֆեստում» խոսում են պրոլետարիատի զարգացման մասին «ինքն իր մեջ» դասակարգից դեպի «իր համար» դասակարգը։ «Ինքն իր մեջ» և «իր համար» հասկացողությունները տալիս են պրոլետարիատի՝ վորպես ինքնուրույն քաղաքական ուժի հասունության, նրա ինքնագիտակցության աճման տարբեր աստիճանները։ Հարկավոր յեղավ մի ամբողջ պատմական եպոք, վորպեսզի պրոլետարիատը կարողանար գիտակցել իր շահերը՝ իբրև կապիտալին անհաշտելի կերպով հակադիր շահեր։ Այնպիսի որինակները պատմությունից, ինչպես լուդդիտական շարժումն եր Անգլիայում, յերբ բանվորները, դաժան շահագործումից գայրացած, կոտրատում եյին մեքենաները, չկարողանալով մեքենաները տարբերել նրանց կապիտալիստական գործադրությունից՝ վորպես շահագործման գործիք, ցույց են տալիս, վոր պրոլետարիատը միանգամից չէ դասակարգայնորեն գիտակից դարձել։ «Սկզբում պայքարը մղում են առանձին բանվորները, հետո մեկ ֆաբրիկայի բանվորները, ապա աշխատանքի մեկ ճյուղի բանվորները մեկ վայրում ընդդեմ առանձին բուրժուայի, վորն անմիջականորեն շահագործում է նրանց»* (Մարքս)։ *Այդ աստիճանի ժամանակ բանվոր-*

ները դեռ չեն պայքարում կապիտալիստների դեմ վորպես դասակարգի։ Պրոլետարիատը դեռ չի հասել իր համադասակարգային խնդիրներն ըմբռնելու բարձրությանը, նա դեռ ներկայանում է իբրև դասակարգ «ինքն իր մեջ»։ «Այդ աստիճանի ժամանակ բանվորները կազմում են ամբողջ յերկրում ցրված և կոնկուրենցիայով ջլատված մի մասսա» (Մարքս)։ Պրոլետարիատի անցումն իր դասակարգային ինքնագիտակցության հետևյալ, ավելի բարձր աստիճանին՝ տեղի յե ունենում հենց կապիտալի զարգացման հիման վրա։ Ֆաբրիկաների, գործարանների աճմանը զուգընթաց աճում է պրոլետարիատը քանակապես, աճում է նրա կազմակերպվածությունը, համախմբվածությունը, դասակարգային պայքարի փորձը։ Առանձին կապիտալիստի, իրենց անմիջական տիրոջ, դեմ պայքարելուց բանվորներն անցնում են պայքարի՝ ընդդեմ կապիտալիստների ամբողջ դասակարգի և ընդդեմ նրա պետության։ Պրոլետարիատի ինքնագիտակցության աճումը տեղի յե ունենում կապիտալիստների դեմ մղած գործնական պայքարի պրոցեսում և իր բարձրագույն արտահայտությունն է գտնում պրոլետարիատի քաղաքական կուսակցության—կոմունիստական կուսակցության, մասսաների մարտական ավանգարդի կազմակերպման մեջ։ Պրոլետարիատը գիտակցում է իր պատմական միսիան և դառնում է դասակարգ «իր համար»։

**Դարվին** *Չարլզ (1809—1882)*—*հռչակավոր անգլիացի գիտնական, արդի էվոլյուցիոն ուսմունքի (տե՛ս* Դարվինիզմ) *հիմնադիրը։ «Դարվինը վերջ տվեց կենդանիների և բույսերի տեսակներն իբրև միմյանց հետ չկապված, պատահական, «աստծու ստեղծած» և անփոփոխ բան համարելու հայացքին»* (Լենին)։ *Դարվինի ուսմունքը փայլուն կերպով պաշտպանում ու զարգացնում էր ռուս հռչակավոր գիտնական Կ. Ա. Տիմիրյազևը։*

**Դարվինիզմ**—*Չ. Դարվինի էվոլյուցիոն ուսմունքը բույսերի և կենդանիների (մարդն էլ ներառյալ) ծագման մասին։ Դարվինն ապացուցեց, որ կենդանիներն ու բույսերը շարունակ փոփոխվում են՝ տալով նոր ձևեր։ Նոր ձևերի յերևան գալը, ինչպես նաև հների անհետանալը, առաջանում է ո՛չ թե աստծու ստեղծագործական ակտով, ինչպես ուսուցանում է կրոնը, այլ հանդիսանում է բնական-պատմական զարգացման հետևանք։ Դարվինից առաջ էլ կային կենդանիների և բույսերի աշխարհի վերաբերմամբ էվոլյուցիոն հայացքների կողմնակիցներ, օրինակ, Լամարկը, բայց առաջինը Դարվինն էր միայն, որ գիտականորեն հիմնավորեց էվոլյուցիայի թեորիան։ Նրանից հետո բնության մեջ կատարվող էվոլյուցիայի վերաբերյալ հայացքի դեմ հանդես էին գալիս միայն տգետ կամ գիտության թշնամի մարդիկ։ Բրածո կենդանիների և բույսերի հետազոտությունը հաստատում է, որ ավե-*

լի հին օրգանիզմներն ավելի պարզ են կառուցված, քան հետնորդայինները, այսինքն՝ օրգանական աշխարհի զարգացումը կատարվել է ավելի պակաս բարդ ձևերից դեպի ավելի բարդերը։ Օրգանիզմների ազգակցությունը հաստատվում է նաև նրանց կազմվածքով։ Մարդու ձեռքը, չղջիկի թևը, փոկի լաստը կառուցված են միևնույն ձևով, բաղկացած են միևնույն կարգով դասավորված ոսկորներից։ Օրգանիզմների ազգակցությունը հաստատվում է նրանց սաղմերի համեմատությամբ։ Զարգացման ժամանակ միմյանցից խիստ տարբերվող օրգանիզմները իրար շատ նման են սաղմնային վիճակում։ Դարվինը տեսակների ծագումը բացատրում էր գոյության կռվով և բնական ընտրությամբ։ Բույսերի և կենդանիների մոտ հաճախ լինում են դայլիս. պատահական փոփոխություններ, շեղումներ։ Այն փոփոխությունները, վորոնք գոյության կռվում կենդանու կամ բույսի համար օգտակար դուրս յեկան, ամրանում են։ Կուտակվելով և ժառանգաբար անցնելով՝ նրանք պայմանավորում են կենդանական և բուսական նոր ձևերի առաջացումը։ Դա բնական ընտրությունն է, վորովհետև դիմանում և բազմանում են ամենից ավելի հարմարեցվածները։ Դարվինն այդ ընտրությունը համեմատեց արհեստական ընտրության հետ, վոր կատարում է մարդը գյուղատնտեսության մեջ։ Մարդն ընտրում է բույսերն ու կենդանիները ըստ նրանց օգ-

*տակարության հատկանիշների։ Փոփոխականությունը, ժառանգականությունը և բնական ընտրությունը տալիս են օրգանիզմների նպատակահարմար կառուցվածքի մատերիալիստական բացատրությունը։ Դարվինը վորպես հակակշիռ կրոնական պատկերացումների՝ անհերքելի գիտական ապացույցներ բերեց այն մասին, վոր մարդը ծագել է մարդանման կապիկներից։ Բայց, մնալով զուտ բիոլոգիական հողի վրա, Դարվինը չկարողացավ լիովին լուծել մարդու ծագման հարցը։ Էնգելսը «Աշխատանքի դերը կապիկի մարդացման պրոցեսի մեջ» հոդվածում ցույց տվեց, վոր կենդանական աշխարհից մարդու ջոկվելու մեջ վճռական դեր է խաղացել աշխատանքի գործիքների կիրառումը։ Այդ բանը հասցրել է մարդու ֆիզիկական բնության փոփոխությանը, նրա ձեռքի և ուղեղի զարգացմանը, վորն ստեղծել է մարդու խիստ զանազանությունը մյուս կենդանիներից։ Հենց այդ փաստն էլ այն հետևանքն ունեցավ, վոր մարդու՝ իբրև հասարակական էակի զարգացման մեջ վորոշող սկզբունք դարձավ վո՛չ թե աշխարհագրական միջավայրը և գոյության արտաքին պայմանները, այլ նյութական արտադրությունը։ Ինքը Դարվինը սխալ փորձեր է արել՝ բնական ընտրության իր թեորիան փոխադրելու մարդկային հասարակության վրա։ Այդպիսի փոխադրման ռեակցիոն բնույթն իր արտահայտությունը գտավ այսպես կոչված* սոցիալ-դարվինիզմի *մեջ (տե՛ս)։*

Դեդուկցիա — *տե՛ս* Ինդուկցիա և դեդուկցիա:

Դեիզմ *(լատիներեն «դեուս»—աստված բառից)— ուսմունք, որը ընդունում է աստծու գոյությունը միմիայն իբրև աշխարհի անանձ նախապատճառ. մնացած բաներում, այս ուսմունքի տեսակետից, աշխարհը յենթակա յե միայն բնության օրենքների ներգործությանը: Ֆեոդալական-կլերիկալական աշխարհայացքի տիրապետության պայմաններում դեիզմը շատ դեպքերում* աթեիզմի *(տե՛ս) քողարկված ձևն եր: «Դեիզմն ավելին չե, բայց յեթե կրոնից գլուխ ազատելու հարմար և հեշտ մի միջոց,—գոնե մատերիալիստի համար»* (Մարքս)*: Դեիզմի ներկայացուցիչներն եյին՝ Ֆրանսիայում—Վոլտերը, Ռուսսոն, Անգլիայում—Լոկկը, Տոլանդը, Շեֆտսբերին:*

Դեմոկրիտ *(մոտ 460—370 մեր թվակ. առաջ)— հին հունական ամենամեծ փիլիսոփա-մատերիալիստը: Լենինը Դեմոկրիտին համարում է մատերիալիզմի ամենացայտուն արտահայտիչը հին աշխարհում, հակադրելով նրա գիծը Պլատոնի իդեալիստական գծին: Դեմոկրիտը ատոմիստական թեորիայի հիմնադիրն է: Ըստ Դեմոկրիտի՝ գոյություն ունեն իրերի յերկու նախասկիզբ—ատոմները և դատարկությունը: Ատոմները, այսինքն՝ մատերիայի անբաժանելի մասնիկները, հավիտենական են, անփոփոխ և գտնվում են շարժման մեջ: Նրանք միմյանցից տարբերվում են լոկ ձևով, մեծությամբ, դիրքով և կարգով: Ուրիշ հատ-*

կությունները, ինչպես՝ գույն, ձայն, համ և այլն, հատուկ չեն ատոմներին։ Դեմոկրիտի այս հայացքի մեջ կան մեխանիստական ուսմունքի սաղմեր **իրերի առաջնային և յերկրորդային հատկությունների մասին** (տե՛ս)։ Ատոմների միացությունից կազմվում են մարմինները։ Հոգին նույնպես կազմված է ատոմներից։ Անթիվ բազմությամբ ատոմներ մշտապես շարժվում են անսահման դատարկության մեջ. ընկնելով՝ ատոմները բախվում են միմյանց հետ, կազմելով ատոմների մրրիկներ (вихри). ատոմների մրրկային շարժումից կազմվում է «ծնվող ու մեռնող» աշխարհների մի անսահման բազմություն, վորոնք աստվածների կողմից չեն ստեղծված, այլ ծագում ու վոչընչանում են բնական ճանապարհով։ Դեմոկրիտի շարունակողներն եյին հույն փիլիսոփա Եպիկուրը (III դ. մեր թվակ. առաջ) և հռոմայեցի փիլիսոփա Լուկրեցիոսը (I դ. մեր թվակ. առաջ)։

**Դետերմինիզմ յեվ ինդետերմինիզմ — Դետերմինիզմ**—ուսմունք բոլոր դեպքերի և յերևույթների անհրաժեշտ կապակցության և նրանց պատճառական պայմանավորվածության մասին։ Օրինակ, արտադրության կապիտալիստական յեղանակի անարխիան անխուսափելի կերպով տնտեսական ճգնաժամերի յե հասցնում, դասակարգային պայքարի զարգացումն անխուսափելիորեն դեպի սոցիալական հեղափոխություն է տանում և այլն։ Ինդետերմինիզմը դետերմինիզմին

հակադրում են ինդետերմինիզմը, որը պնդում է, թե երբեմն բնական ընթացքն աշխարհում յենթակա չէ օրինաչափության, պատճառականության, թե կա ազատ կամք, որը ոչ մի բանից կախված չէ։ Իրականում մարդու կամքը, վարմունքները դետերմինացված են, այսինքն՝ պայմանավորված են, առաջ են գալիս որոշ պատճառներից։ Դիալեկտիկական մատերիալիզմը, ընդունելով բնության բոլոր յերևույթների պայմանավորվածությունը, միևնույն ժամանակ ժխտում է մետաֆիզիկական բացարձակ դետերմինիզմը, այն ուսմունքը, որը պնդում է, թե անհրաժեշտության ընդունումը տանում է դեպի ամեն մի պատահականության լիակատար ժխտում բնության և հասարակության մեջ և ավելորդ է դարձնում մարդու ամեն մի ակտիվ գործունեություն։ Հասցնելով իր տրամաբանական ավարտման՝ այդպիսի դետերմինիզմը փոխարկվում է փատալիզմի (տե՛ս)—ճակատագրին հավատալու և քվիետիզմի—մարդու լիակատար անգործունեության քարոզի։ Մարքսիզմը, ընդունելով անհրաժեշտությունը բնության և պատմության մեջ, բնավ չի ժխտում պատահականությունը, որը հանդիսանում է որոշակի պատճառական կապակցությունների արտահայտման ձև։ Մարքսիզմը չի ժխտում նաև մարդկային կամքի հարաբերական ազատությունը (տե՛ս Ազատություն և անհրաժեշտություն) և պահանջում է մարդու ակտիվ, գործուն

մասնակցությունը իրադարձությունների ընթացքի մեջ։

Դիալեկտիկա (հունարեն «դիալեկտոս» բառից, որ նշանակում է զրուցել, բանավեճ մղել)։—Հին աշխարհում մի քանի փիլիսոփաներ դիալեկտիկա ասելով հասկանում էին այն արվեստը, որով կարելի էր ճշմարտության հասնել հակառակորդի դատողությունների հակասությունները դրսևորելու և այդ հակասությունները հաղթահարելու միջոցով։ Հետագայում դիալեկտիկան դարձավ ընդհանուր կապակցության և զարգացման ուսմունք։ Դիալեկտիկան բոլոր երևույթները դիտում է իբրև մշտապես շարժվող ու փոփոխվող, իսկ բնության զարգացումը—որպես բնության մեջ յեղած հակասությունների զարգացման ու պայքարի հետևանք։ Հին հունական փիլիսոփաները բոլորն էլ ի ծնե դիալեկտիկներ էին։ Հռչակավոր հին փիլիսոփա-մատերիալիստ Հերակլիտն ուսուցանում էր, թե ամեն ինչ գոյություն ունի և միևնույն ժամանակ գոյություն չունի, որովհետև ամեն ինչ հոսում է և շարունակ փոփոխվում, ծագում է և անհետանում։ Հին Հունաստանի մյուս ամենաականավոր փիլիսոփան—Արիստոտելը հետազոտել է դիալեկտիկական մտածողության էական ձևերը։ Բայց հունական փիլիսոփայության մեջ դիալեկտիկան հանդես է գալիս դեռ նախնադարյան պարզությամբ։ Հին հույների դիալեկտիկան նաիվ դիալեկտիկա էր։ Երևույթնե-

րի ընդհանուր կապակցությունը նրանք չեյին ապացուցում իր մանրամասնություններով. դիտելով բնությունը վորպես մի ամբողջություն՝ նրանք չհասան բնության առանձին յերևույթների և առարկաների վերլուծմանը, առանց վորի չի կարող պարզ լինել նաև աշխարհի ընդհանուր պատկերը։ Հետագայում մի շարք դարերի ընթացքում տիրապետություն ձեռք բերեց մետաֆիզիկական աշխարհայացքը, վոր հակադիր է դիալեկտիկային։ Միմիայն XVIII դարի յերկրորդ կեսից մետաֆիզիկական աշխարհայացքն սկսում է ճեղքվածքներ տալ։ Այդ աշխարհայեցողության մեջ առաջին ճեղքը բաց արեց դերմանական փիլիսոփա Կանտը, վորը հանդես յեկավ արեգակնային համակարգության պատմական կազմավորման թեորիայով։ Նորագույն գերմանական փիլիսոփայությունն իր ավարտումը գտավ Հեգելի մեջ։ «Այդ փիլիսոփայության ամենամեծ ծառայությունն եր վերադարձը դեպի դիալեկտիկան, վորպես մտածողության բարձրագույն ձև» (Ենգելս)։ Հեգելի դիալեկտիկան առաջինն եր, վոր ամբողջ բնական, պատմական և հոգևոր աշխարհը ներկայացրեց պրոցեսի ձևով, այսինքն՝ անընդհատ շարժման, փոփոխության, զարգացման և փոխակերպման մեջ։ Այս դեպքում պրոցեսի ներքին հակասությունները հանդես եյին գալիս վորպես ինքնաշարժման, ինքնազարգացման աղբյուր։ Բայց Հեգելն իդեալիստ եր։ Գոյություն ունեցող ամեն ինչի հիմքն ու եյու-

թյունը Հեգելը տեսնում էր «աբսոլյուտ իդեայի» ինք-
նազարգացման մեջ։ Ըստ Հեգելի այնպես էր ստաց-
վում, որ մտածողությունը իրականության ստեղծա-
գործողն է։ «Այստեղից բխում է ամբողջապես բըռ-
նաստեղծ ու հաճախ սոսկալի այս կոնստրուկցիան՝
աշխարհը—ուզի նա այդ թե չուզի—պետք է համա-
ձայնեցվի տրամաբանական սիստեմի հետ» (Էնգելս)։
Դիալեկտիկան միմիայն այն ժամանակ գիտություն
դարձավ, երբ Մարքսն ու Էնգելսը դիալեկտիկան
ազատեցին հեգելյան իդեալիստական կեղևից և ավելի
ևս զարգացրին զարգացման վերաբերյալ ուսմունքը՝
ստեղծելով մատերիալիստական դիալեկտիկան։ Մարքսն
ու Էնգելսը Հեգելի դիալեկտիկայի մեջ օգտագործեցին
նրա «ռացիոնալ հատիկը», մատերիալիստորեն
վերամշակեցին Հեգելի մեթոդը՝ զարգացման հիմունք
ընդունելով ո՛չ թե իդեան, այլ նյութական իրակա-
նությունը։ Սրա հետևանքով մարքսիստական դիալեկ-
տիկական մեթոդն իր հիմքում ուղղակի հակադիր է
Հեգելի դիալեկտիկային։ Մարքսիստական դիալեկտի-
կան մի ուսմունք է զարգացման մասին, այն վերցրած
իր ամենալրիվ, խոր և միակողմանիությունից ազատ
ձևով։ Մարքսի ու Էնգելսի ստեղծած և Լենինի ու
Ստալինի ավելի ևս զարգացրած դիալեկտիկան մի գի-
տություն է՝ բնության, մարդկային հասարակության
և մտածողության մեջ տեղ՛ ունեցող զարգացման

*ընդհանուր օրենքների մասին* (*տե՛ս* Մարքսիստական դիալեկտիկական մեթոդ)։

**Դիալեկտիկական մատերիալիզմ** — *փիլիսոփայական գիտություն բնության, մարդկային հասարակության և մտածողության ամենից ավելի ընդհանուր օրենքների մասին,—մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացքը, որ ստեղծել են Մարքսն ու Ենգելսը և ավելի են զարգացրել Լենինն ու Ստալինը*։ «*Նա դիալեկտիկական մատերիալիզմ է կոչվում այն պատճառով, որ նրա մոտեցումը բնության երևույթներին, բնության երևույթների ուսումնասիրման նրա մեթոդը, այդ երևույթների ճանաչողության նրա մեթոդը* դիալեկտիկական *է, իսկ բնության երևույթների նրա մեկնաբանությունը, բնության երևույթների նրա ըմբռնումը, նրա թեորիան* մատերիալիստական է» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ *Տարածելով դիալեկտիկական մատերիալիզմը՝ Մարքսն ու Ենգելսն այն տարածեցին նաև հասարակական երևույթների ճանաչողության վրա*։ Պատմական մատերիալիզմը *գիտական մտքի ամենամեծ նվաճումը հանդիսացավ*։ *Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը կազմում են կոմունիզմի թեորիական հիմքը, մարքսիստական կուսակցության թեորիական հիմունքը*։ *Մարքսիզմը համբողջական աշխարհայացք է, փիլիսոփայական մի սիստեմ, որից օրգանապես բխում է Մարքսի պրոլետա-*

բական սոցիալիզմը» (Ստալին)։ Այս առաջավոր փիլիսոփայական աշխարհայացքը մշակելիս Մարքսն ու Ենգելսը հենվում եյին մարդկային մտքի բոլոր արժեքավոր նվաճումների վրա։ Մարքսի ու Ենգելսի փիլիսոփայական նախորդների, և ամենից առաջ Հեգելի ու Ֆոյերբախի ստեղծած բոլոր լավագույնը քննադատորեն վերանայեցին Մարքսն ու Ենգելսը։ Հեգելի դիալեկտիկայից նրանք վերցրին միմիայն նրա «ռացիոնալ հատիկը» և, դեն գցելով հեգելյան իդեալիստական կեղևը, ավելի ևս զարգացրին դիալեկտիկան, տալով նրան արդիական գիտական կերպարանք։ «...Դիմելով կյանքին՝ նրանք տեսան, վոր վո՛չ թե վոգու զարգացումն է բացատրում բնության զարգացումը, այլ ընդհակառակը—վոգին պետք է բացատրվի բնությունից, մատերիայից (ԼԵՆԻՆ)։ Ֆոյերբախի մատերիալիզմն անհետևողական եր, մետաֆիզիկական, հակապատմական։ Մարքսն ու Ենգելսը Ֆոյերբախի մատերիալիզմից վերցրին նրա «հիմնական հատիկը» և, դեն գցելով նրա փիլիսոփայության մեջ յեղած իդեալիստական և կրոնա—բարոյական կեղևը, ավելի ևս զարգացրին մատերիալիզմը՝ ստեղծելով մատերիալիզմի գիտական—փիլիսոփայական թեորիան։ Դիալեկտիկական մատերիալիզմն ամենաառաջավոր և միակ գիտական աշխարհայացքն է։ Մարքսը, Ենգելսը, իսկ այնուհետև Լենինն ու Ստալինը դիալեկտիկական մատերիալիզմի դրույթները կիրառեցին բանվոր դասա-

կարգի քաղաքականության և տակտիկայի վերաբերմամբ, մարքսիստական կուսակցության պրակտիկ գործունեության վերաբերմամբ։ «Ինչպես վոր փիլիսոփայությունը պրոլետարիատի մեջ գտնում է իր նյութական զենքը, այնպես էլ պրոլետարիատը փիլիսոփայության մեջ գտնում է իր հոգևոր զենքը» (Մարքս)։ Լենինի ասելով՝ միմիայն Մարքսի դիալեկտիկական մատերիալիզմը պրոլետարիատին յելք ցույց տվեց այն հոգևոր ստրկությունից, վորի մեջ մինչև հիմա խղճուկ գոյություն եյին քարշ տալիս բոլոր ճնշված դասակարգերը։ Մարքսից ու Էնգելսից հետո ամենամեծ թեորետիկ Լենինը, իսկ Լենինից հետո Ստալինը և Լենինի մյուս աշակերտները միակ մարքսիստներն եյին, վորոնք առաջ տարան մարքսիզմը և նրա գիտական-թեորիական հիմունքը—դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը։ Լենինն իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» հանճարեղ գրքում, վորը բոլշևիկյան կուսակցության թեորիական նախապատրաստումը հանդիսացավ, վճռական պայքար մղելով ռեվիզիոնիստների և վերասերականների դեմ՝ կուսակցության համար հսկայական թեորիական հարստություն պաշտպանեց, դիալեկտիկական մատերիալիզմն հիմնավորեց իբրև բոլշևիզմի կուսակցական փիլիսոփայություն։ Ստալինի «Լենինիզմի հիմունքների մասին» (տե՛ս) հանճարեղ աշխատությունը և նրա մյուս աշխատությունները, «Համկ(բ)Կ

պատմության համառոտ դասընթացը», վոր ստեղծվել է Ստալինի անձնական ամենամոտիկ մասնակցությամբ, ավելի ևս զարգացնում ու հարստացնում են դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը։ Դիալեկտիկական մատերիալիզմը աշխարհի վերափոխման հեղափոխական թեորիան է, հեղափոխական գործողության ուղեցույցը։ Նա «մարդկության, իսկ առանձնապես բանվոր դասակարգին տվեց իմացության մեծ զենքեր» (Լենին)։ *Տե՛ս* Մարքսիստական դիալեկտիկական մեթոդ, Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմ, Պատմական մատերիալիզմ։

**Դիալեկտիկական մեթոդ** — *տե՛ս* Մարքսիստական դիալեկտիկական մեթոդ։

**«Դիալեկտիկայի հարցի շուրջը»** («К вопросу о диалектике») — *Լենինի աշխատությունը, վոր մտել է նրա «Փիլիսոփայական տետրակների» և յերկերի լրիվ ժողովածուի* XIII *հատորի մեջ։ Առաջին անգամ տպագըրվել է* 1925 *թվին* «Большевик» *ժուռնալի* № 5—6-*ում*։ *Լենինը սեղմ ձևով տվել է մատերիալիստական դիալեկտիկայի հիմնական հարցերի խոր վերլուծությունը։ Այս աշխատության մեջ Լենինը վերլուծում է դիալեկտիկայի և մետաֆիզիկայի միջև յեղած հակադրությունը, ցույց է տալիս զարգացման յերկու հիմնական կոնցեպցիաների—զարգացման դիալեկտիկական թեորիայի և մետաֆիզիկականի տարբերությունը։ Լենինն այս ուրվագծում տալիս է իդեալիզմի թեորիական-*

իմացական օրգանների հանճարեղ վերլուծությունը։ Առանձնապես արժեքավոր են Լենինի դիտողությունները հակադրությունների միասնության և պայքարի, ինչպես նաև ինքնաշարժման մասին։

*Դիալեկտիկայի օրենքները* — *տես* Հակադրությունների միասնությունն ու պայքարը, Քանակի անցումը որակի, Բացասման բացասում։

*Դիդրո Դենի (1713—1784)* — XVIII *դարի ֆրանսիական խոշորագույն փիլիսոփա-մատերիալիստ, ականավոր գրող։ Դանակ շինող արհեստավորի որդի։ Հիմնադիրը և խմբագիրը «Էնցիկլոպեդիայի», որի մեջ անց էին կացվում* XVIII *դարի ֆրանսիական հեղափոխական բուրժուազիայի գաղափարները։ Իր ռադիկալ հայացքների պատճառով ռեպրեսիաների է ենթարկվել։ Դիդրոն մատերիալիստ է, աթեիստ։ Նա ընդունում է մատերիայի օբյեկտիվ գոյությունը, որին հավիտենապես հատուկ է շարժումը։ Մատերիան կազմված է մոլեկուլներից։ Յուրաքանչյուր մոլեկուլի հատուկ է շարժման ներքին մի աղբյուր—«ներքին ուժ», որի արտաքին արտահայտությունը հանդիսանում է մեխանիկական տեղափոխությունը տարածության մեջ։ Զգայունությունը մատերիայի հատկությունն է։ Բայց Դիդրոյի կարծիքով այդ հատկությունը ծագում է ո՛չ թե մատերիայի զարգացման որոշ աստիճանում, ինչպես այդ պնդում է դիալեկտիկական մատերիալիզմը, այլ ամբողջ մատերիան*

զգայականություն ունի («քարն էլ է զգում»)։ Ներգործելով մեր զգայարանների վրա՝ մատերիան առաջ է բերում զգայություններ, ըմբռնումներ—մեր գիտության աղբյուրը։ Դիդրոն հասարակակարգը կախման մեջ էր դնում հասարակության քաղաքական կազմակերպությունից, վորը ծագում է գոյություն ունեցող որենսդրությունից և, վերջին հաշվով, հասարակության մեջ տիրապետող իդեաններից։ Դիդրոն ունի աշխարհի դիալեկտիկական ըմբռնման մի շարք տարրեր, մասնավորապես կենդանի եյակների զարգացման հարցի վերաբերյալ։ Նրա գլխավոր յերկերն են՝ «Мысли об объяснении природы» 1754 г., «Разговор Даламбера с Дидро» 1769 г., «Племянник Рамо» 1762 г.

**Դիկտատուրա պրոլետարիատի** — *տես* Պրոլետարիատի դիկտատուրա։

**Դիսկրետություն** — *ընդհատություն (տես* Ընդհատություն և անընդհատություն)։

**Դյուրինգ** *Ոյգեն (1833—1921) — մեխանիկայի գերմանացի պրոֆեսոր, փիլիսոփա և տնտեսագետ։ Փիլիսոփայության մեջ—անհետևողական մեխանիստական մատերիալիստ, վոր շեղվեց ու անցավ իդեալիզմի դիրքերը։ Հանդես էր գալիս ընդդեմ Հեգելի և Մարքսի ու Ենգելսի մատերիալիստական դիալեկտիկայի, պաշտպանելով մետաֆիզիկական աշխարհայացքը։ Ենգելսը նրա փիլիսոփայական և քաղաքական-տնտեսագիտական հայացքները ջախջախիչ քննադա-*

տության յենթարկեց հատուկ կերպով գրված «Անտի-Դյուրինգ» գրքում (տե՛ս)։

**Դոգմա, դոգմատիզմ** — Դոգմա — չապացուցված դրույթ, որն ընդունվում է կուրորեն, հավատալով։ Դոգմատիզմը բնորոշ է բոլոր կրոնների համար, այն բոլոր թեորիական սխեմների համար, վորոնք պաշտպանում են իրենց դարն անցրածը, հինը, ռեակցիոնը և պայքարում են նորի, զարգացողի դեմ։ Առանձնապես դոգմատիկական են ռեակցիոն սոցիալական թեորիաները, վորոնք հենարան չեն գտնում զարգացող իրականության մեջ։ Ինքն ըստ ինքյան ճիշտ դրույթը, յեթե կիրառվի վոչ-դիալեկտիկորեն, առանց հաշվի առնելու կոնկրետ, փոփոխվող իրադրությունը, կարող է դոգմայի վերածվել։ Այս իմաստով Մարքսն ու Էնգելսը միշտ ասում էյին, վոր «մեր ուսմունքը դոգմա չէ, այլ ուղեցույց՝ գործողության համար»։ Լենինը, Ստալինը վճռականորեն պայքարում էյին մարքսիզմի դոգմատիկական գռեհկացման դեմ, վոր ձեռնարկում էյին ամեն տեսակի ոպորտունիստները՝ մարքսիզմից նրա հեղափոխական բովանդակությունը արտաքսելու համար։ Իսկական հեղափոխական մարքսիզմը ս տ ե ղ ծ ա գ ո ր ծ ա կ ա ն մարքսիզմ է, վոր անընդհատ հարստացնում է թեորիան հասարակական զարգացման, մասսաների հեղափոխական պրակտիկայի նոր տվյալներով։

**Դուալիզմ** (լատիներեն «դուո»—յերկու բառից)—

*Փիլիսոփայական ուղղություն, որն, ի հակադրություն* մոնիզմի *(տե՛ս), կեցության սկիզբը համարում է ո՛չ թե մեկ, այլ երկու տարբեր սուբստանցներ։ Օրինակ, Դեկարտը գտնում էր, որ մարդը կազմված է երկու անկախ սուբստանցներից—մարմնական և հոգևոր, հոգուց և մարմնից։ Դուալիզմը ջանում է հաշտեցնել և զուգակցել մատերիալիզմն իդեալիզմի հետ։ Դիալեկտիկական մատերիալիզմը կանգնած է մոնիզմի տեսակետի վրա և ժխտում է դուալիզմը։ Ընդունելով շարժվող նյութը որպես բնության ամեն մի երևույթի նախապատճառ, նա (դիալեկտիկական մատերիալիզմը։* Հայ․ խմբ․*) գիտակցությունը համարում է երկրորդային, մատերիայից ածանցված։*

**Դրական փիլիսոփայություն** — *նույնն է, ինչ որ* Պոզիտիվիզմը *(տե՛ս)։*

★

# Է

**Էկլեկտիկա, էկլեկտիզմ** — *այլատեսակ հոսանքների, հայացքների, համոզմունքների, թեորիաների անսկզբունք մեխանիկական միացում: Էկլեկտիկները ջանում են մատերիալիզմը զուգակցել իդեալիզմի հետ: Այս կամ այն չափով էկլեկտիզմի արտահայտություն կարելի յե հանդիպել ամեն մի անհետևողական փիլիսոփայության մեջ: Էկլեկտիզմի օրինակ կարող են ծառայել* II *Ինտերնացիոնալի թեորետիկների հայացքները, վորոնք ջանում են անսկզբունքայնորեն «միացնել» մարքսիզմը իդեալիստական հոսանքների, օրինակ, կանտականության, մախիզմի հետ և այլն:*

**Էկոնոմիկա յեվ պոլիտիկա (Քաղաքականություն)** — *Մարքսիզմի կողմից դիտվում են իրենց փոխազդեցության և զարգացման մեջ իբրև անխզելի ամբողջություն: «Չի կարելի քաղաքականությունն անջատել տնտեսությունից: Մենք չենք կարող հեռանալ տնտեսությունից այնպես, ինչպես վոր չենք կարող հեռանալ քաղաքականությունից: Ուսումնասիրության հարմարության համար մարդիկ սովորաբար տնտեսության հարցերը մեթոդոլոգիապես անջատում են քաղաքակա-*

նության հարցերից: Բայց այդ արվում է միմիայն մեթոդոլոգիապես, արհեստականորեն, միմիայն ուսումնասիրության հարմարության համար: Կյանքում, ընդհակառակը, պրակտիկայում քաղաքականությունն ու տնտեսությունն անբաժանելի յեն: Նրանք գոյություն ունեն միասին և գործում են միասին» (Ստալին): Յուրաքանչյուր հասարակակարգ վորոշվում է նյութական բարիքների արտադրության միմիայն նրան հատուկ վորոշ յեղանակով (տե՛ս): Արտադրության յեղանակն ընդգրկում է ինչպես հասարակության արտադրողական ուժերը, այնպես նաև մարդկանց արտադրական հարաբերությունները, ամբողջությամբ առած կազմելով հասարակության տնտեսական կառուցվածքը — եկոնոմիկան: Հասարակության տնտեսակարգը պայմանավորում է քաղաքական և իդեոլոգիական վերնաշենքերը: «...Քաղաքականությունը եկոնոմիկայի համակենտրոնացված արտահայտությունն է... Քաղաքականությունը չի կարող առաջնություն չունենալ եկոնոմիկայի վերաբերմամբ» (Լենին): Քաղաքականության և քաղաքական պայքարի մեջ իր բարձրագույն արտահայտությունն է գտնում դասակարգերի հակադրությունը, շահագործվողների և շահագործողների, ճնշվածների և ճնշողների շահերի անհաշտելիությունը: Քաղաքականության, քաղաքական պայքարի կենտրոնական հարցն իշխանության հարցն է: Քաղաքականության բնա-

գավառին են վերաբերում պետական կառավարման և կառուցվածքի, դասակարգային պայքարի ղեկավարության, մեկ դասակարգի կողմից մյուսին ղեկավարելու (օրինակ, պրոլետարիատի կողմից գյուղացիության ղեկավարելը) բոլոր հարցերը և այլն։ Քաղաքականության բնագավառի մեջ է մտնում նաև ժողովուրդների և պետությունների միջև յեղած փոխհարաբերությունների բնագավառը—արտաքին քաղաքականությունը, վորը վորոշվում է իշխող դասակարգի շահերով։ Կոմունիստական կուսակցության և կառավարության քաղաքականությունը ԽՍՀՄ-ում հիմնըված է մեր յերկրի զարգացման ուղղության գիտական կանխատեսման վրա։ Այդ զարգացումը տեղի յե ունենում վո՛չ թե տարերայնորեն և ինքնահոսով, այլ պլանաչափ կերպով նրան ուղղություն է տրվում պետական ժողովրդատնտեսական պլանով՝ կոմունիստական շինարարության շահերից յելնելով և կենսագործվում է անողոք պայքարում ընդդեմ սոցիալիստական հասարակությանը դասակարգայնորեն թշնամի բոլոր տարրերի։

**Էմպիրիզմ** (հունարեն «էմպիրիա» — փորձ բառից)—փիլիսոփայական ուսմունք, վորը զգայական փորձը մեր գիտելիքների միակ աղբյուրն է համարում։ Գոյություն ունի ինչպես իդեալիստական, այնպես նաև մատերիալիստական էմպիրիզմ։ Իդեալիստական էմպիրիզմը (Բերկլի, Յում, Մախ, Ավենա-

*բիուս, Բողդանով) փորձը սահմանափակում է զգայությունների կամ պատկերացումների միակցությամբ, ժխտելով այն փաստը, որ փորձի հիմքում դրված է նյութական բնությունը: Մատերիալիստական էմպիրիզմը (Բեկոն, Հոբբս, Լոկկ,* XVIII *դ. ֆրանսիական մատերիալիստներ) գտնում է, որ զգայական փորձի հիմքում դրված են նյութական բնության առարկաները: Դիալեկտիկական մատերիալիզմը մերժում է իդեալիստական էմպիրիզմը և ճիշտ է համարում մատերիալիստական էմպիրիզմի ելակետային դիրքերը: Սակայն դիալեկտիկական մատերիալիզմը մերժում է միակողմանի էմպիրիզմի ծայրահեղությունները, որոնցով աչքի յեր ընկնում մինչմարքսյան մատերիալիզմը, որը թերագնահատում եր ընդհանուր թեորիաների և գիտական աբստրակցիաների դերը: Ընդունելով, որ ամբողջ իմացության հիմքում գտնվում է զգայական փորձը, դիալեկտիկական մատերիալիզմը միևնույն ժամանակ ընդգծում է թեորիաների, իդեաների, հասկացողությունների մեծ դերը:*

**Էմպիրիոկրիտիցիզմ** *(«քննադատական փորձի» փիլիսոփայություն) կամ մ ա խ ի զ մ—ռեակցիոն սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայական ուղղություն, որ ծագել է* XIX *դարի յերկրորդ կեսին Գերմանիայում և Ավստրիայում: Էմպիրիոկրիտիցիզմի հիմնադիրներն եյին* Ավենարիուսը *(տե՛ս) և* Մախը

(տե՛ս)։ Նրանք պնդում էին, վոր բոլոր յերևույթների հիմքում գտնվում են «աշխարհի էլեմենտները» կամ, վոր միևնույնն է, «փորձի էլեմենտները»։ Յուրաքանչյուր իր «էլեմենտների կոմպլեքս» է։ «Էլեմենտ» բառիկով Ավենարիուսն ու Մախը քողում էին այն փաստը, վոր նրանք յերևույթների հիմքում դնում էին գիտակցությունը, վորովհետև նրանց «էլեմենտը» նույնական է գիտակցությունների հետ։ Հենց դրանով էմպիրիոկրիտիցիզմն ամբողջությամբ ընդունում է Բերկլիի (տե՛ս) սուբյեկտիվ իդեալիզմի հիմնական նախադրյալը։ Զարգացնելով սուբյեկտիվ-իդեալիստական հայացքը բնության վերաբերմամբ՝ Ավենարիուսն ու Մախը ապացուցում էին, թե օբյեկտը (աշխարհը) անկարելի յե առանց սուբյեկտի (գիտակցության, գիտակցությունների), թե բնության օրենքներն օբյեկտիվ նշանակություն չունեն՝ հանդիսանալով գիտակցության ձևեր, թե օբյեկտիվ ճշմարտությունը (տե՛ս) անհնարին է։ Մախի ազդեցությամբ էմպիրիոկրիտիցիզմը վորոշ չափով տարածվեց բնագետների—ֆիզիկոսների մեջ։ Ֆիզիկայի նորագույն հայտնագործումները (ատոմի տարրաբաժանումը (расщепление) էլեկտրոնների և պրոտոնների, ատոմի էլեկտրո-մագնիսային բնույթի հայտնագործումը), վորոնք հաստատեցին դիալեկտիկական մատերիալիզմի ճիշտ լինելը, դիալեկտիկական մտածողության անընդունակ բուրժուական ֆիզիկոսների կարծիքով՝ վկա-

*յում էյին «մատերիայի անհետացման» մասին, «ճըշմարտությունը ճանաչելու անկարելիության» մասին, իդեալիզմի տեսակետին անցնելու անհրաժեշտության մասին և այլն: Լենինն իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ բացահայտեց էմպիրիոկրիտիցիզմի արմատները և այդ փիլիսոփայությունը մերկացրեց վորպես ռեակցիոն իդեալիզմ և սքողված տերտերականություն: Լենինը ջախջախեց բազմաթիվ մախիստական դպրոցները, վորոնք ծագել էյին Ռուսաստանում ստոլիպինյան ռեակցիայի դարաշրջանում (Բոգդանով, Յուշկևիչ և ուրիշները): Ներկայումս էմպիրիոկրիտիցիզմի ազդեցությունը կապիտալիստական յերկրներում նկատելի կերպով ընկել է, սակայն մինչև այժմ էլ դեռ մի շարք բուրժուական ֆիզիկոսներ գտնվում են նրա ազդեցության տակ:*

**Էմպիրիոմոնիզմ** — *էմպիրիոկրիտիցիզմի կամ մախիզմի տարատեսակը Ռուսաստանում: Էմպիրիոմոնիզմի իդեալիստական փիլիսոփայության հիմնադիրը Ա. Ա. Բոգդանովն էր: Նա ջանում էր միասնական (մոնիստական) փորձի հիման վրա (այստեղից էլ՝ «էմպիրիոմոնիզմ» անունը) ապացուցել մտածողության և կեցության նույնականությունը: Էմպիրիոմոնիզմի իդեալիստական սիստեմն ստեղծեց Բոգդանովը՝ Ավենարիուսի և Մախի մոտ բնության արարչի դերում հանդես յեկող անհատական գիտակցությունը փոխա-*

*բննելով կոլեկտիվ գիտակցությամբ, այն ողղման միջոցով, թե ֆիզիկական աշխարհը «կոլեկտիվ մարդկության» «սոցիալապես-կազմակերպված» փորձն է։ Քննադատելով Բոգդանովին՝ Լենինը գրում էր. «Կարծել, թե փիլիսոփայական իդեալիզմն անհետանում է անհատի գիտակցությունը մարդկության գիտակցությամբ կամ մեկ մարդու փորձը սոցիալապես-կազմակերպված փորձով փոխարինելուց, այդ միևնույնն է, թե կարծել, որ երբ կապիտալիզմն անհետանում է մեկ կապիտալիստին ակցիոներական ընկերությամբ փոխարինելուց»։ Ելնելով ամբողջ գոյություն ունեցածի հիմքը հասարակական գիտակցությունն ընդունելուց՝ Բոգդանովը առհասարակ ամբողջ բնությունը հայտարարում էր գիտակցության արդյունք։ Բոգդանովի էմպիրիոմոնիզմի փիլիսոփայությունը, այնպես, ինչպես և նրա հիմքը՝ մախիզմը, սուբյեկտիվ իդեալիզմի փիլիսոփայություն է։ Էմպիրիոմոնիզմը տերտերականության պաշտպանություն էր։ Լենինը բացահայտեց էմպիրիոմոնիզմի կապը* աստվածորոնման և աստվածաշինարարության (*տե՛ս*) *հետ։*

**Էմպիրիոսիմվոլիզմ** — *սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայություն, մախիզմի տարատեսակը։ Ֆրանսիայում նրա հիմնադիրը համարվում է Ա. Պուանկարեն, Ռուսաստանում ռեակցիայի տարիներին այն պրոպագանդա էր անում մենշևիկ Պ. Յուշկևիչը։ Ժխտելով արտաքին աշխարհի օբյեկտիվությունը և*

արտացոլման մատերիալիստական թեորիան, էմպիրիոկրիտիցիզմը պատկերացումներն ու հասկացողությունններն ընդունում է ո՛չ թե որպես նյութական աշխարհի պատկերներ, այլ միայն որպես սիմվոլներ, մեր զգայությունների պայմանական նշաններ։

**Էություն և երևույթ։** — Էությունն արտահայտում է ներքին կապակցությունները բնության մեջ. նա երևան է գալիս երևույթների մեջ։ Օրինակ, արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր-կապիտալիստական ձևի միջև եղած հակասությունը, որ հատուկ է կապիտալիզմին, մի էություն է, որն իր բազմազան արտահայտություններն է գտնում աշխատանքի և կապիտալի միջև տեղի ունեցող պայքարում, տնտեսական ճգնաժամերում, գործազրկության մեջ, պատերազմներում և այլն։ Էությունն ու երևույթը միասնություն են կազմում։ «...Էությունը երևան է գալիս։ Երևույթը էական է» (Լենին)։ Բայց էությունն ու երևույթը անմիջականորեն չեն համընկնում։ Այսպես, օրինակ, առևտրական կապիտալիստի շահույթն ապրանքի արժեքի պարզ վերադիր է թվում։ Իրականում շահույթի աղբյուրը հանդիսանում է հավելյալ արժեք ստեղծող բանվորների շահագործումը։ Այսպիսով, էությունն անմիջականորեն հանդես չի գալիս երևույթի մեջ, այն հարկավոր է հայտնագործել, ճանաչել։ «...Եթե իրերի երևան գալու ձևը և

էությունն անմիջականորեն համընկնեին, ապա ամեն մի գիտություն ավելորդ կլիներ» (Մարքս)։

**Եպիկուր** *(342—270 մինչև մեր թվարկ.)* — փիլիսոփա-մատերիալիստ, «մեծագույն հունական լուսավորիչ» (Մարքս), Դեմոկրիտի շարունակողը։ Ըստ Եպիկուրի՝ աշխարհը բաղկացած է ատոմներից և դատարկությունից, որի մեջ ատոմներից կազմվում են անսահման քանակությամբ աշխարհներ։ Աստվածները մասնակցություն չունեն աշխարհների կյանքում, նրանք անվրդով ապրում են դրանց ծակոտիներում։ Հաստատելով ատոմիզմի հիմնական սկզբունքները՝ Եպիկուրը էական փոփոխություններ է մտցնում Դեմոկրիտի ուսմունքի մեջ։ Ըստ Եպիկուրի՝ ատոմները ուղղագիծ շարժվելով՝ կարող են «շեղումներ» կատարել։ Այդ շեղումները տեղի չեն ունենում ինքնակամ, պատահականորեն։ Մտցնելով պատահականության հասկացողությունը՝ Եպիկուրը ձգտում էր վերացնել ֆատալիզմը, որը բխում էր Դեմոկրիտի ուսմունքից։ Պաշտպանելով սենսուալիզմը (*տե՛ս*) իմացաբանության մեջ՝ Եպիկուրն էթիկայի մեջ էլ կանգնած էր զգայական հաճույքները խելացիորեն օգտագործելու հողի վրա։ Այդ բանը մատերիալիզմի զանազան թշնամիներին առիթ տվեց արատավորելու եպիկուրականությունը որպես մի փիլիսոփայություն, որն իբր թե խրախուսում է անառակությունը։ Ըստ Եպիկուրի՝ իմաստունի խնդիրն է հոգու «ատարաքսիա» (անվրդով ան-

գործունեություն) ձեռք բերել. այդ ձեռք է բերվում իմացության և աստվածների ու մահվան յերկյուղից ազատվելու միջոցով։ Եպիկուրն ինքը և առանձնապես նրա հետևորդ Լուկրեցիուսը մեծ ազդեցություն գործեցին XVII—XVIII դարերի մատերիալիզմի զարգացման վրա։

Եվոլյուցիա կամ ռևոլյուցիա (*հեղափոխություն*)։ — *«...Շարժումը յերկակի ձև ունի — եվոլյուցիոն և հեղափոխական»* (Ստալին)։ *Եվոլյուցիոն ձևով տեղի յեն ունենում աննշան, թաքնված, անընդհատ, քանակական փոփոխությունները։ Իսկ վորակական փոփոխությունները կատարվում են հանկարծակի, թռիչքաձև, հեղափոխականորեն։ «...Իսկական պատմությունն իր մեջ* պարունակում է *այդ տարբեր տենդենցները, ինչպես վոր կյանքն ու զարգացումը բնության մեջ իրենց մեջ պարունակում են թե՛ դանդաղ եվոլյուցիան, թե՛ արագ թռիչքները, աստիճանականության ընդհատումները»* (Լենին)։ *Հետևաբար, զարգացումն իրենից ներկայացնում է թե՛ եվոլյուցիա, թե՛ ռևոլյուցիա (հեղափոխություն)։ Եվոլյուցիան հող է նախապատրաստում և տալիս հեղափոխությանը, իսկ հեղափոխությունը պսակում է եվոլյուցիային և նպաստում նրա հետագա աշխատանքին։ Ոպորտունիզմը հեղափոխական պայքարը փոխարինում է ռեֆորմների համար մղվող պայքարով։ «Իսկ հեղափոխականի համար, ընդհակառա-*

*կը, գլխավորը հեղափոխական աշխատանքն է, և ոչ թե ռեֆորմը,—նրա համար ռեֆորմը հեղափոխության կողմնակի արդյունքն է»* (Ստալին)։

★

# Զ

**Զարգացում** — *տես* Դիալեկտիկա, Էվոլյուցիա և ռեվոլյուցիա (հեղափոխություն):

**Զգայություն** — *մատերիայի ներգործության հետևանքը մեր զգայարանների վրա, «արտաքին գրգիռի էներգիայի փոխարկումը գիտակցության փաստի»* (Լենին): *Մեր զգայությունների բովանդակությունը նյութական աշխարհն է: «Զգայությունը օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկերն է»* (Լենին): *Զգայությունն արտաքին իրերի պատկերը, պատճենն է: Զգայությունները մեզ շրջապատող արտաքին աշխարհի մասին ունեցած մեր բոլոր գիտելիքների աղբյուրն են: Մեր զգայարանների, զգայությունների շնորհիվ մենք կապվում ենք արտաքին աշխարհի հետ, ճանաչում ենք այն և նրա մեջ կողմնորոշվում ենք՝ մեր գործողությունների համար: Բայց զգայությունն իմացության պրոցեսի միմիայն առաջին աստիճանն է: Մտածողությունը—իմացության բարձրագույն աստիճանը—զգայությունների տվյալները վերամշակում-դարձնում է պատկերացումներ, գաղափարներ, օրենքներ և այլն, վորոնք ավելի խորն են արտացոլում օբ-*

յնկալով աշխարհը և վորանց ճշտությունն ստուգվում է պրակտիկայով։

**Զգայությունների կոմպլեքս** — *Մախի և Ավենարիուսի իդեալիստական փիլիսոփայական ուսմունքի մեջ մի հասկացություն, վորի համաձայն բնության առարկաները ներկայացնում են միմիայն մեր զգայությունների—գույնի, ձևի, ծանրության, չափի և այլն—միակցությունները (կոմպլեքսներ)։ Իրի պատկերացումը վորպես զգայությունների կոմպլեքս, առանց նյութական հիմունքի, Մախն ու Ավենարիուսը վերցրել են սուբյեկտիվ իդեալիստ Բերկլիից։ Մատերիալիզմը զգայությունները համարում է արտաքին աշխարհի առարկաների արտացոլումներ, պատկերներ, վորոնք (առարկաները) գոյություն ունեն մարդու գիտակցությունից անկախ։*

★

# Ը

**Ընդհանուր** — *տե՛ս* Եզակին, հատուկը և ընդհանուրը:

**Ընդհատություն և անընդհատություն։** — *Բնության մեջ յեղած բոլոր մարմինները միևնույն ժամանակ և՛ անընդհատ են, վորովհետև մի միասնական ամբողջություն են կազմում, և՛ ընդհատ են (դիսկրետ են), վորովհետև բաղկացած են առանձին մանրագույն մասնիկներից (մոլեկուլներից, ատոմներից, էլեկտրոններից և այլն)։ Անընդհատությունն ու ընդհատությունն աններևակայելի յեն մեկն առանց մյուսի, ինչպես վոր ամբողջն աններևակայելի յե առանց մասի և մասն առանց ամբողջի։ Զարգացման յուրաքանչյուր պրոցես նույնպես հանդիսանում է անընդհատության և ընդհատության միասնություն։ Աստիճանական, աննշան քանակական փոփոխություններին (անընդհատություն) հաջորդում է վորակական թռիչքը, վորը փոխում է յերևույթը (աստիճանականության ընդհատում)։*

**«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»** — *Էնգելսի կլասիկ աշխատությունը,*

վոր նա գրել է 1884 թվին։ Հենվելով ամերիկյան ականավոր գիտնական Մորգանի «Նախնադարյան հասարակությունը» գրքի նյութի վրա, ինչպես նաև գիտության այլ նորագույն տվյալների վրա նախնադարյան հասարակության մասին, Էնգելսը մանրամասն կերպով հետազոտում է հասարակակարգի հիմնական պատմական գծերը, վոր նա ունեցել է հնում, այսպես կոչված վայրենության և բարբարոսության ժամանակաշրջաններում։ Սկզբում Էնգելսը ցույց է տալիս, թե ինչպես եյին փոփոխվում ամուսնության և ընտանիքի ձևերը՝ հասարակության տնտեսական առաջադիմության հետևանքով, վորն արտադրության աճման հետ եր կապված։ Այնուհետև Էնգելսը վերլուծում է նախնադարյան տոհմային հասարակակարգի քայքայումը յերեք ժողովուրդների—հույների, հռոմայեցիների և գերմանացիների—որինակով և յերևան է հանում այդ քայքայման տնտեսական պատճառները։ Տոհմային հասարակակարգի դարաշրջանում դեռ գոյություն չունեն վո՛չ մասնավոր սեփականություն, վո՛չ դասակարգեր, վո՛չ պետություն, բայց աշխատանքի արտադրողականության աճումը և աշխատանքի բաժանումը հասցնում են փոխանակության, մասնավոր սեփականության առաջացմանը, տոհմային հասարակակարգի քայքայմանը և դասակարգերի կազմվելուն։ Դասակարգային հակասությունների ծագումը կյանքի կոչեց պետությունը վորպես իշխող դասա-

կարգի շահերի պաշտպանության գործիք, վորպես մեքենա՝ շահագործվող, ճնշված դասակարգերին հպատակության մեջ պահելու համար։ Ենգելսի գիրքը հոյակապ ե իր թեորիական հարստությամբ և հսկայական նշանակություն ունեցավ բուրժուական թեորիաների դեմ մղվող պայքարում։ Նա հարված հասցրեց բոլոր և ամեն տեսակ բուրժուական թեորիաներին։ Նա ապացուցեց՝ 1) վոր մասնավոր սեփականությունը, դասակարգերն ու պետությունը միշտ չեն գոյություն ունեցել, այլ ծագել են տնտեսական զարգացման վորոշ աստիճանում․ 2) վոր շահագործող դասակարգերի պետությունը միշտ միմիայն ժողովրդի լայն մասսաների վրա բռնություն գործ դնելու և նրանց ճնշելու զենք ե․ 3) վոր «դասակարգերն այնպես անխուսափելիորեն կանհետանան, ինչպես անխուսափելիորեն նրանք ծագել են անցյալում։ Դասակարգերի անհետացմամբ անխուսափելիորեն կանհետանա նաև պետությունը» (Ենգելս)։ Այս ե Ենգելսի գրքի ընդհանուր, ամփոփիչ յեզրակացությունը։

★

**Թեզիս, անտիթեզիս, սինթեզիս** (*հունարեն՝ «դրույթ», «հակադրություն» և «համադրություն»*) — *Հեգելի տերմինները նրա* տրիադաներում (*տե՛ս*) *յերեք մոմենտները նշանակելու համար, վորոնց ձևով, նրա կարծիքով, զարգանում և համաշխարհային բանականությունը, «բացարձակ իդեան» (տե՛ս)։ Հեգելի տրիադաները յերբեմն խիստ արհեստական բնույթ են կրում, նրանք փաթաթվում են բնության վզին, տրիադային և հարմարեցվում ամեն ինչ աշխարհում (օրինակ՝ Հեգելի համար Աֆրիկան թեզիսն է, Ասիան՝ անտիթեզիսը, Յեվրոպան՝ սինթեզիսը)։*

**Թեիզմ** (*հունարեն «թեոս» — աստված բառից*) — *փիլիսոփայական-աստվածաբանական ուսմունք, վորը հիմնված է աստծու, վորպես բանական եյակի, գոյությունն ընդունելու վրա, վոր ստեղծել է աշխարհը և միջամտում է մարդկանց առօրյա կյանքին։ Թեիզմը շատ մոտիկ է սովորական աստվածաբանությանը, բայց նրանից տարբերվում է նրանով, վոր հրաժարվում է բացահայտ անհեթեթություններից (ինչպես են՝*

աշխարհը վեց օրում ստեղծելու, աստծու յերրորդության և այլ լեգենդաները)։

**Թեոլոգիա, կամ աստվածաբանություն** — կեղծ գիտություն, վոր ջանում է փիլիսոփայական փաստարկների ոգնությամբ հիմնավորել կրոնը։

**Թեորիա յեվ պրակտիկա.** — Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը գտնում է, վոր հասարակական պրակտիկան թեորիայի հիմքն է։ Այդ պատճառով «կյանքի, պրակտիկայի տեսակետը պետք է իմացության թեորիայի առաջին և հիմնական տեսակետը լինի» (ԼԵՆԻՆ)։ Գիտության տվյալները միշտ ստուգվում են պրակտիկայով, փորձով։ Հանդիսանալով փորձի, պրակտիկայի ընդհանրացումը՝ թեորիան մարդկանց հեռանկար է տալիս նրանց պրակտիկ գործունեյության մեջ։ Մարքսիստական-լենինյան թեորիան բոլոր յերկրների բանվորական շարժման փորձն է՝ վերցրած նրա ընդհանուր ձևով։ «Մարքսիստական-լենինյան թեորիայի ուժն այն է, վոր նա կուսակցությանը հնարավորություն է տալիս կողմնորոշվել իրադրության մեջ, հասկանալ շրջապատող դեպքերի ներքին կապակցությունը, նախատեսել դեպքերի ընթացքը և ճանաչել վո՛չ միայն այն, թե ինչպես և ինչ ուղղությամբ են զարգանում դեպքերը ներկայումս, այլև այն, թե ինչպես և ինչ ուղղությամբ են նրանք զարգանալու ապագայում» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Թեորիան առարկայացում է

*դառնում, յեթե այն չի կապակցվում հեղափոխական պրակտիկայի հետ, իսկ պրակտիկան կույր է դառնում, յեթե նա իր ուղին չի լուսավորում հեղափոխական թեորիայով: «...Թեորիան կարող է բանվորական շարժման մեծագույն ուժը դառնալ, յեթե այն կազմվում է անխզելի կապակցությամբ հեղափոխական պրակտիկայի հետ»* (Ստալին): *II Ինտերնացիոնալի օպորտունիստները խզում ստեղծեցին թեորիայի և պրակտիկայի միջև: Մարքսիզմի թեորիայից նրանք ամլացրին կենդանի հեղափոխական հոգին և թեորիան վերածեցին մասսաների կենդանի, հեղափոխական պայքարից կտրված խղճուկ դոգմաների, վորոնք հերքվում են հեղափոխական պայքարի պրակտիկայով: Թեորիայի և պրակտիկայի միասնությունն իր բարձրագույն արտահայտությունն է գտնում բոլշևիկյան կուսակցության գործունեության մեջ: Մարքսիզմ-լենինիզմը հեղափոխական թեորիայի և հեղափոխական պրակտիկայի իսկական միասնությունն է: «Տիրապետել մարքսիստական-լենինյան թեորիային— նշանակում է յուրացնել այդ թեորիայի* էությունը *և սովորել օգտագործել այդ թեորիան հեղափոխական շարժման պրակտիկ հարցերը լուծելիս՝ պրոլետարիատի դասակարգային պայքարի տարբեր պայմաններում»* (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց):

**Թռիչք** — *մի վորակի արագ և հանկարծական ան-*

ցումը մյուսին։ «Չնայած ամբողջ աստիճանականությանը, շարժումների մի ձևից մի ուրիշին անցնելը միշտ մնում է թռիչք, վճռական շրջադարձ» (Էնգելս)։ Թռիչքի համար պարտադիր է աննկատելի և աստիճանական քանակական փոփոխությունների վորոշ գումարի նախնական կուտակում։ Այսպես, ջուրը 100 աստիճան ջերմությունից պակաս տաքացնելու դեպքում՝ նրա վիճակը նկատելի կերպով չի փոխվում, բայց 100 աստիճանի հասնելով՝ ջուրն արագ կերպով գոլորշի յե դառնում. քանակը փոխվում է վորակի։ Սոցիալական կյանքում կատարված հեղափոխությունը նշանակում է թռիչք դեպի նոր հասարակական ձևեր։ Հեղափոխությունն անխուսափելի յե, յերբ հին հասարակության ընդերքում արտադրողական ուժերն այնքան են զարգացել, վոր հին արտադրական հարաբերությունների հետ անհամատեղելի յեն դառնում։ Հեղափոխությունից յերկյուղ կրելով՝ թռիչքաձև զարգացման որենքի դեմ են դուրս գալիս բոլոր ռեակցիոներները, ռեվիզիոնիստները, ոպորտունիստները, վորոնք ձգտում են պրոլետարական մասսաներին շեղել հեղափոխական ճանապարհից։

★

Ժ

**Ժամանակ յեվ տարածություն։** — *Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմն ուսուցանում է, որ աշխարհում ոչինչ չկա, բացի շարժվող մատերիայից, որը կարող է շարժվել միմիայն տարածության և ժամանակի մեջ։ Հետևաբար, տարածությունն ու ժամանակը ներկայացնում են մատերիայի գոյության օբյեկտիվ ձևերը։ Տարածությունն ու ժամանակն անբաժանելի յեն մատերիայից, իսկ մատերիան էլ անբաժանելի յե նրանցից։ Ի հակադրություն սուբյեկտիվ իդեալիզմի, որը ժամանակն ու տարածությունը համարում է միայն մարդկային մտքի արդասիքներ և դրանք անջատում է մատերիայից, մատերիալիզմը ընդունում է, որ ժամանակն ու տարածությունն առանց մատերիայի զուրկ են որևէ բովանդակությունից։ «...Մատերիայի գոյության յերկու ձևերն էլ առանց այդ մատերիայի ոչինչ են, միմիայն դատարկ պատկերացում, աբստրակցիա, որ գոյություն ունի միայն մեր գլխում»* (Էնգելս)։ *Տարածության և ժամանակի մասին յեղած բնագիտական պատկերացումներն ու հասկացողությունները փոխվում են, զարգանում։*

*Բայց անվիճելի է այն փաստը, որ բնությունը գոյություն ունի միմիայն ժամանակի և տարածության մեջ։ «...Ժամանակի և տարածության մեր զարգացող հասկացողություններն* արտացոլում են *օբյեկտիվ-ռեալ ժամանակն ու տարածությունը»* (Լենին)։

★

# Ի

**Իդեալիզմ** — *յերկու հիմնական փիլիսոփայական ուղղություններից մեկը, վորը մտածողության և կեցության հարաբերության հարցը լուծելիս, ի հակադրություն մատերիալիզմի, վորպես առաջնային ընդունում ե գիտակցությունը, վոգին, ժխտելով, վոր գիտակցությունը մատերիայի արդյունքն ե: Իդեալիզմը աշխարհը համարում ե «բացարձակ իդեայի», «համաշխարհային վոգու», «գիտակցության» մարմնացումը: Իդեալիզմը ընդունում ե, «վոր ռեալ կերպով գոյություն ունի միայն մեր գիտակցությունը, վոր նյութական աշխարհը, կեցությունը, բնությունը գոյություն ունի միայն մեր գիտակցության մեջ, մեր զգացողությունների, պատկերացումների, հասկացողությունների մեջ»* (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)*: Իդեալիստական ուղղությունը փիլիսոփայության մեջ յերկու հիմնական տարատեսակների յե բաժանվում: Սուբյեկտիվ իդեալիզմը հիմք ե ընդունում առանձին անհատի, սուբյեկտիվ զգացողությունը, պատկերացումը, գիտակցությունը: Ոբյեկտիվ իդեալիզմը հիմք ե ընդունում գիտակցությանն*

*ընդհանրացնա — համաշխարհային բանականությունը,*
*ունիվերսալ կամքը և այլն, վորոնք, ոբյեկտիվ իդեա-*
*լիստների կարծիքով, գոյություն ունեն ինքնուրույ-*
*նաբար, մարդուց անկախ: Իդեալիզմը սերտորեն կապ-*
*ված է կրոնի հետ և քողարկված կամ բացահայտ կեր-*
*պով տանում է դեպի աստծու գաղափարը: Մատնա-*
*նշելով, վոր իդեալիզմը տերտերականություն է, Լե-*
*նինը միաժամանակ ընդգծում է, վոր «փիլիսոփայա-*
*կան իդեալիզմը* («ավելի ճիշտ» *և* «բացի դրանից») *մի*
ճանապարհ է, *վոր մարդու անսահման բարդ* իմա-
ցության (*դիալեկտիկական*) *յ ե ր ա ն գ ն ե ր ի ց մ ե-*
*կի* միջոցով *տանում է դեպի տերտերականությունը»*
(Լենին): *Լենինը մերկացնում է իդեալիզմի թեորիա-*
*կան-իմացական արմատները: Բուն իմացության մեջ,*
*յերևույթների ընդհանրացման պրոցեսի մեջ հնարա-*
*վորություն կա, վոր գիտակցությունը կտրվի, հեռա-*
*նա իրականությունից, հնարավորություն կա, վոր*
*ընդհանուր հասկացողությունները վերածվեն (և այն*
*էլ վերածվեն աննկատելիորեն, առանց մարդու կողմից*
*գիտակցվելու) մատերիայից կտրված և աստվածացրած*
*աբսոլյուտի: Այդ հնարավորությունն իրացվում է վորոշ*
*սոցիալական պայմանների առկայության դեպքում:*
*Այդպիսի սոցիալական պայմաններ են հոգևոր աշխա-*
*տանքի բաժանումը նյութական աշխատանքից, դասա-*
*կարգերի և շահագործման յերևան գալը: Բնության*
*յերևույթների իդեալիստական բացատրությունը գար-*

դարձրել են, որպես կանոն, առանձին դասակարգերի իդեալները կամ այն դասակարգերի իդեալները, որոնք համաձայնել են կոմպրոմիս անել առանձին դասակարգերի հետ: Փիլիսոփայական իդեալիզմի հնագույն ներկայացուցիչները պյութագորականներն էին: Պյութագորականները ներկայացնում էին դեմոկրատիայի դեմ ակտիվ պայքար մղող հին հունական արիստոկրատիայի քաղաքական կազմակերպությունը, և նրանց ուսմունքների մեջ զարգացվում էր թվերի, որպես աշխարհի հիմքի, իդեալիստական ուսմունքը: Հին հունական իդեալիզմի ամենամեծ ներկայացուցիչը Պլատոնն էր (427—347 մինչև մեր թվակ.): Պլատոնը իսկական աշխարհ հայտարարեց իդեաների հատուկ, գերզգայական աշխարհը, իսկ ռեալ իրերի աշխարհը հայտարարեց ստվերների աշխարհ, իդեաների դժգույն արտացոլումների աշխարհ: Ֆեոդալական հասարակության մեջ տիրապետում էր իդեալիստական սխոլաստիկան, որը փիլիսոփայությունը աստվածաբանության աղախինը դարձրեց: Ֆեոդալիզմի քայքայման և բուրժուական հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանում առաջավոր երկրների (Անգլիա, Հոլանդիա) հեղափոխական բուրժուազիան առաջ է մղում մի ամբողջ շարք մատերիալիստ-փիլիսոփաներ (Բեկոն, Սպինոզա, Հոբս և ուրիշն.): Անգլիայում կապիտալիստական հարաբերությունները հաստատվելու դարաշրջանում

անգլիական փիլիսոփաների մատերիալիզմի նկատմամբ ռեակցիա հանդիսացավ Բերկլի յեպիսկոպոսի սուբյեկտիվ իդեալիզմը և Յումի ագնոստիցիզմը։ XVII դարի և XVIII դարի սկզբի գերմանական բուրժուազիան, վոր շահագրգռված եր կապիտալիստական հարաբերությունների զարգացմամբ և միևնույն ժամանակ սերտորեն կապված եր ֆեոդալիզմի հետ ու համաձայնում եր կոմպրոմիս անելու նրա հետ, առաջ ե մղում իդեալիստ-փիլիսոփա և գիտնական Լայբնիցին (1646—1716)։ XVIII դարում և XIX դարի առաջին կեսում Գերմանիայում ծավալվում ե իդեալիստական կլասիկական փիլիսոփայությունը (Կանտ, Ֆիխտե (1762—1814), Շելլինգ (1775—1854), Հեգել)։ Այդ փիլիսոփայությունն արտացոլում ե այն դարաշրջանի գերմանական բուրժուազիայի կոմպրոմիսականությունը—մի կողմից՝ նրա հեղափոխական յերազանքները, մյուս կողմից՝ բուրժուական հեղափոխություն կատարելու նրա անզորությունը—շնորհիվ Գերմանիայի տնտեսական հարաբերությունների անզարգացածության և նրա քաղաքական մասնատվածության։ Գերմանական կլասիկական իդեալիզմի ներկայացուցիչները վո՛չ միայն իրենց փիլիսոփայության մեջ տվան շատ արժեքավոր բաներ գիտության զարգացումից, այլ իդեալիստական ձևով արտահայտեցին մի շարք հանճարեղ մտքեր, վորոնք կանխագուշակեցին XIX դարի բնագիտության հայտնագործումները (Կանտի

բնափիլիսոփայությունը, Շելլինգի բնափիլիսոփայությունը)։ Գերմանական իդեալիզմի փիլիսոփայության ավարտումն եղավ օբյեկտիվ իդեալիստ Հեգելի փիլիսոփայությունը, Հեգելի, վորն իդեալիզմի բազայի վրա առաջին անգամ ամբողջ աշխարհը պատկերացրեց վորպես պրոցես, այսինքն՝ անընդհատ շարժման, փոփոխման և զարգացման մեջ, և փորձեց ուսումնասիրել այդ շարժման ու զարգացման փոխադարձ ներքին կապակցությունը։ «Այն միստիֆիկացիան, վոր կրեց դիալեկտիկան Հեգելի ձեռքում, բնավ չխանգարեց, վոր հենց Հեգելն առաջինը տա շարժման նրա ընդհանուր ձևերի սպառիչ և գիտակցական պատկերը» (Մարքս)։ Հեգելը վերջին ներկայացուցիչն էր այն իդեալիստական փիլիսոփայության, վորի մեջ, հակառակ իդեալիզմի, արժեքավոր, պրոգրեսիվ մոմենտներ կային։ Մարքսից ու Էնգելսից հետո, վորոնք ստեղծեցին դիալեկտիկական մատերիալիզմը—հեղափոխական պրոլետարիատի փիլիսոփայական աշխարհայացքն ու մեթոդը,—բուրժուական փիլիսոփայությունը այլասերվում է՝ անցյալի իդեալիստական սիստեմներից վերցնելով ամենառեակցիոն, հակագիտական և միստիկական կողմերը։ Առանձնապես ռեակցիոն բնույթ է ընդունում բուրժուական փիլիսոփայությունը իմպերիալիզմի դարաշրջանում։ Բուրժուական ռեակցիոն-իդեալիստական փիլիսոփայությունը ռևիզիոնիզմի և օպորտունիզմի դրոշակն է

դառնում։ Պաշտպանելով դասակարգերի համագործակցության գաղափարը, պայքարելով պրոլետարական հեղափոխության իդեայի դեմ, ռեվիզիոնիզմը մարքսիզմից ամլացնում է մատերիալիստական դիալեկտիկան և փորձում է Մարքսի ուսմունքը միացնել այս կամ այն իդեալիստական փիլիսոփայության հետ։ Միմիայն ՍՍՀՄ-ում, որտեղ տնտեսության սոցիալիստական սիստեմն անբաժան կերպով տիրող է դարձել, որտեղ վոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից, որտեղ վոչնչացվում է մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը,—միմիայն ՍՍՀՄ-ում հնարավոր է անխափան պրոցեսը արտադրության և գիտության զարգացման մեջ, տանջված են բոլոր պայմաններն ու նախադրյալները՝ իդեալիստական-կրոնական աշխարհայացքը վերջնականապես արմատախիլ անելու համար։ Հասարակական յերևույթների բացատրության մեջ բոլոր փիլիսոփաները մինչև Մարքսն ու Էնգելսը յելակետ եյին ընդունում իդեալիզմը, այն բանի ընդունումը, թե պատմությունը հանդում է իդեաների պրոցեսին և թե պատմության հիմնական շարժիչները հանդիսանում են կրթված մարդիկ, «հերոսները», վորոնք պատմությունը կերտում են առանց ժողովրդի։ Այս իդեալիստական դիրքերում եյին կանգնած ռուս նարոդնիկները (Լավրով, Միխայլովսկի), մինչև այժմ էլ այդ դիրքերում է կանգնած բուր-

ժուական գիտությունը։ Միմիայն մարքսիզմը ցույց տվեց հասարակության իսկական հիմքը, հայտնաբերելով, որ իդեաների հիմքում դրված են կյանքի նյութական պայմանները։ Մարքսիզմն առաջինն ստեղծեց հեղափոխականորեն մատերիալիստական աշխարհայացքը, որ մինչև վերջը թշնամի է իդեալիզմին։

Իդեոլոգիա — հասարակական գիտակցության ձև, որոշ հայացքների, իդեաների, հասկացողությունների, պատկերացումների միակցություն։ Իդեոլոգիայի ձևեր են հանդիսանում քաղաքական հայացքները, գիտությունը, բարոյախոսությունը, արվեստը, կրոնը և այլն։ Բոլոր իդեոլոգիաներն էլ հասարակական կեցության արտացոլումն են։ Դասակարգային հասարակության մեջ իդեոլոգիան էլ դասակարգային է։ Նա արտահայտում և պաշտպանում է պայքարող դասակարգերի շահերը։ Բուրժուական հասարակության մեջ «հարցը միմիայն այսպես է դրված—բուրժուակա՞ն, թե սոցիալիստական իդեոլոգիա։ Այստեղ միջին ճանապարհ չկա, որովհետև մարդկությունը ոչ մի «յերրորդ» իդեոլոգիա չի մշակել, և առհասարակ էլ դասակարգային հակասություններով պառակտված հասարակության մեջ չի էլ կարող յերբեք արտադասակարգային կամ վերդասակարգային իդեոլոգիա լինել» (Լենին)։ Իդեոլոգիան վիթխարի դեր է խաղում հասարակական կյանքում, հասարակության պատմության մեջ։ Ծագելով որպես հասարակության նյու-

թական կյանքի պայմանների և վորոշ դասակարգերի շահերի արտացոլում, իդեոլոգիան իր կողմից ակտիվ ներգործություն է անում հասարակության զարգացման վրա: Առաջավոր իդեոլոգիան ծառայում է հասարակության հեղափոխական ուժերի շահերին: Բանվոր դասակարգի իդեոլոգիան մարքսիզմ-լենինիզմն է: Մարքսիզմ-լենինիզմը կոմունիստական կուսակցության և բանվոր դասակարգի ամենամեծ իդեական ուժն է հասարակության հեղափոխական, սոցիալիստական վերափոխման գործում: Արդի բուրժուական իդեոլոգիան, ընդհակառակը, ռեակցիոն ուժ է: Նա ծառայում է բուրժուազիայի շահերին՝ բանվոր դասակարգի դեմ, սոցիալիզմի դեմ նրա մղած պայքարում: Հրաժարում գիտությունից, իդեալիզմ, տերտերականություն և խավարամոլություն, շովինիզմի և ռասիզմի քարոզ—այս բոլորն արդի բուրժուական և ֆաշիստական իդեոլոգիայի անկապտելի գծերն են: Բանվոր դասակարգի հաղթությունն ու սոցիալիզմի հաղթանակը վոչնչացնում են այն հողը, վոր սնում է բուրժուական իդեոլոգիային: Բուրժուական իդեոլոգիայի ազդեցությունը մարդկանց միջից վերացնելը գալիս է վո՛չ թե ինքն իրեն, ինքնահոսով, այլ նրա դեմ մղվող անողոք իդեական պայքարում:

**Իմացության թեորիա, իմացաբանություն**—*կամ* **գնոսեոլոգիա** *(տես)*:

**Իմացություն** — *տե՛ս* Գնոսեոլոգիա, Արտացոլման թեորիա:

**Ինդետերմինիզմ** — *տե՛ս* Դետերմինիզմ և ինդետերմինիզմ:

**Ինդուկցիա յեվ դեդուկցիա** — *Ինդուկցիա (մակածություն)—դատողության յեղանակ մասնավորից դեպի ընդհանուրը, փաստերից դեպի ընդհանրացումները: Դեդուկցիա (արտածություն)—դատողության յեղանակ ընդհանուրից դեպի մասնավորը, ընդհանուր դրույթներից դեպի մասնավոր յեզրակացությունները: Եմպիրիստ-փիլիսոփաները (Բեկոն, Ջ. Ս. Միլլ) բացառիկ նշանակություն եյին տալիս ինդուկցիային՝ ստորադասելով նրան դեդուկցիան: Ռացիոնալիստ-փիլիսոփաները (Դեկարտ, Սպինոզա, Լայբնից), ընդհակառակը, առաջին տեղը դնում եյին դեդուկցիան: Մատերիալիստական դիալեկտիկան ինդուկցիան և դեդուկցիան համարում է հետազոտության միմիայն հատուկ տեսակներ, վորոնք սակայն ինքնուրույն չեն, միմյանցից մեկուսացած չեն: Մեկն առանց մյուսի անկարելի յե: Ամեն մի գիտական դեդուկցիա հանդիսանում է նյութի նախնական ինդուկտիվ հետազոտության հետևանք և հիմնվում է այդ ուսումնասիրության վրա: Իր հերթին ինդուկցիան իսկապես գիտական է միայն այն ժամանակ, յերբ առանձին մասնակի յերևույթների ուսումնասիրությունը հիմնված է զարգացման ընդհանուր օրենքներն իմանալու վրա: Պետք*

է հնկատի ունենալ նրանց կապակցությունը միմյանց մեջ, նրանց փոխադարձաբար իրար լրացնելը» (նշ. գիրքը)։ Մարքսը «Կապիտալում» ամենահսկայական փաստական նյութ վերլուծեց և ընդհանրացումներ կատարեց կապիտալիզմի զարգացման ամբողջ ընթացքի մասին։ Այդ անելիս նա միաժամանակ ոգտվում էր թե՛ ինդուկցիայից, թե՛ դեդուկցիայից։

«Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» յեվ ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» — մարքսիզմ-լենինիզմի աչքի ընկնող յերկերից մեկը, որ գրել է Լենինը 1894 թ. գարնանն—ամռանը և հրատարակել է (հեկտոգրաֆով) նույն թվին յերեք պրակով։ Յերկրորդ պրակը կորել է։ Այդ յերկի մեջ «Լենինը մինչև վերջը մերկացրեց նարոդնիկների իսկական դեմքը, որպես «ժողովրդի» կեղծ «բարեկամների», որոնք իրականում ժողովրդի դեմ են գնում» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Նարոդնիկությունը հիմնական, գլխավոր իդեական խոչընդոտն էր Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական շարժման և մարքսիզմի տարածման ուղու վրա։ Այդ պատճառով մարքսիզմի հաղթության համար Ռուսաստանում՝ պետք էր մինչև վերջը ջախջախել նարոդնիկությունը, մերկացնել նարոդնիկական իդեոլոգիայի ռեակցիոն էությունը։ Այդ աշխատանքն սկսեց Պլեխանովը և նրա «Աշխատանքի ազատագրություն» խումբը։ Բայց Պլեխանովը շատ հեռու չեր նա–

նարոդնիկության իրական ջախջախումն ավարտելուց։ Լենինն այդ իրական ջախջախումը մինչև վերջը հասցրեց։ Նարոդնիկության դեմ մղած պայքարում Լենինը վո՛չ միայն պաշտպանեց մարքսիզմը և ջախջախեց նարոդնիկների՝ մարքսիստական ուսմունքն աղավաղելու վողորմելի փորձերը, այլև զարգացրեց այդ (մարքսիզմի) ուսմունքը, հարստացրեց դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի թեորիան։ Լենինը մարքսիզմը կիրառեց ռուսական իրականության կոնկրետ պայմանների վերաբերմամբ և լուսաբանեց ռուսական մարքսիստների կենսական խնդիրները։ Իր գրքում Լենինն առաջին անգամ առաջադրեց բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական դաշինքի իդեան՝ վորպես ցարիզմի, կալվածատերերի, բուրժուազիայի տիրապետության տապալման գլխավոր միջոց։ Լենինը ռուսական մարքսիստների հիմնական խնդիրն էր համարում՝ բաժան-բաժան մարքսիստական խմբակներից միասնական սոցիալիստական հեղափոխական կուսակցության կազմակերպումը։ «Այնուհետև Լենինը մատնանշում էր, վոր Ռուսաստանի հենց բանվոր դասակարգը, գյուղացիության հետ դաշինք կնքած, կտապալի ցարական ինքնակալությունը, վորից հետո ռուսական պրոլետարիատը, աշխատավոր և շահագործվող մասսաների հետ դաշինք կնքած, մյուս յերկրների պրոլետարիատի հետ կողք-կողքի, բացահայտ քաղաքական պայքարի ուղիղ ճանապար-

նով կընթանա դեպի հաղթական կոմունիստական հեղափոխությունը» (Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։

**Ինքնաշարժում** (самодвижение). — Ամբողջ աշխարհը գտնվում է մշտական շարժման և զարգացման մեջ։ Իդեալիստներն ու տերտերները ասում են, թե շարժման պատճառը բնության մեջ չի գտնվում, այլ նրանից դուրս, աստծու մեջ։ Դիալեկտիկական մատերիալիզմը, բացատրելով աշխարհը հենց իրենից աշխարհից, ասում է, վոր շարժման և զարգացման պատճառը վո՛չ թե աստծու մեջ է, այլ հենց աշխարհին հատուկ օրենքների մեջ։ Բնության և հասարակության մեջ շարժումը, զարգացումը տեղի յե ունենում առարկաներին և յերևույթներին հատուկ ներքին հակասությունների շնորհիվ։ Այդ պատճառով էլ առարկաների շարժումը, զարգացումը նրանց ինքնաշարժումն է, ինքնազարգացումը։ «Աշխարհի բոլոր պրոցեսների իմացության պայմանը նրանց «**ինքնաշարժման**» մեջ է, նրանց սպոնտան զարգացման մեջ, նրանց կենդանի կյանքի մեջ, նրանց իմացությունն է վորպես հակադրությունների միասնություն» (ԼԵՆԻՆ)։

**Իրավունք** — այն սահմանումների և օրենքների մշակված ամբողջականությունը, վորոնք պետության կողմից վորոշակի կերպով կարգավորում են մարդկանց հարաբերությունները (արտադրության միջոցների սեփականության, բաշխման, փոխանակության

հարաբերությունները)։ Իրավունքը տվյալ հասարակության մեջ իշխող դասակարգի կամքն է՝ բարձրացրած պետական օրենքի աստիճանի։ Մարքսն ու Էնգելսը «Կոմունիստական մանիֆեստում» բուրժուական իրավունքը բնորոշել են հետևյալ խոսքերով. «Ձեր իրավունքը լոկ ձեր դասակարգի կամքն է՝ բարձրացրած օրենքի աստիճանի, մի կամք, որի բովանդակությունը որոշվում է ձեր դասակարգի գոյության նյութական պայմաններով»։ Բուրժուական իրավունքի այս կլասիկ սահմանումը յելակետ է հանդիսանում ամեն տեսակ իրավունքի էության և բովանդակության ըմբռնման համար։ Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, որ իրավունքն ու իրավական հարաբերությունները ուրիշ բան չեն, բայց յեթե հասարակության կյանքի տնտեսական պայմանների արտացոլումը և չեն կարող յեզրակացվել ու ըմբռնվել «վո՛չ հենց իրենցից և վո՛չ էլ մարդկային հոգու այսպես կոչված ընդհանուր զարգացումից» (Մարքս)։ Իրավունքի բովանդակությունը որոշվում է հասարակական-տնտեսական հարաբերություններով, իշխող դասակարգի գոյության նյութական պայմաններով։ Խորհրդային սոցիալիստական իրավունքը խորհրդային ժողովրդի կամքն է՝ բարձրացրած օրենքի աստիճանի, մի կամք, որի բովանդակությունը որոշվում է այն խնդիրներով, որոնք կանգնած են բանվոր դասակարգի դիկտատուրայի առաջ — չա-

հագործողների ճնշումը, բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ, կոմունիզմի կառուցումը։ Խորհրդային սոցիալիստական իրավունքն ու որենսդրությունը հանդիսանում են գլխավոր միջոցներից մեկը բանվորների և գյուղացիների ձեռքում՝ բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության տնտեսական հիմքի հետագա ամրապնդման համար, սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիստական նվաճումները կապիտալիստական շրջապատումից և նրա գործակալությունից պաշտպանելու համար, հետագա հաղթական շարժման համար դեպի առաջ, դեպի բարձրագույն փուլը—կոմունիզմը։

**Իրերի առաջնային և յերկրորդային վորակները։** — Մինչմարքսյան ժամանակաշրջանի մի քանի մատերիալիստներ (որինակ՝ Լոկկը) իրերի առաջնային վորակներ կամ հատկություններ եյին անվանում տարածականությունը, շարժումը, ձևը, ծավալը և այլն, իսկ յերկրորդային վորակներ—գույնը, ձայնը, հոտը, համը և այլն։ Նրանք գտնում եյին, վոր իրերի առաջնային վորակներն օբյեկտիվ են, վորովհետև նրանք պահպանվում են առարկայի ամեն մի փոփոխության դեպքում, իսկ յերկրորդային վորակները սուբյեկտիվ են, վոր նրանք իբրև թե առարկայի մեջ մտցվում են ճանաչող սուբյեկտի կողմից։ Այս բաժանումը առիթ տվեց իդեալիստ Բերկլիին՝ սուբյեկտիվ համարելու

*ո՛չ միայն յերկրորդական որակները, այլ նաև առաջնայինները և, այդպիսով, բոլորովին ժխտելու նյութական իրերի օբյեկտիվ գոյությունը: Դիալեկտիկական մատերիալիզմը մերժում է որակների առաջնայինների և յերկրորդայինների բաժանումը, իրերի որակները հատուկ համարելով հենց իրեն, հետևաբար, օբյեկտիվ: Դիալեկտիկական մատերիալիզմը պնդում է, որ իրերի որակների՝ մարդկային գիտակցության կողմից արտացոլվելու ճշտությունն ստուգվում է պրակտիկայով, փորձով, մարդկային գիտության պատմությամբ:*

«Իրն ինքնին» չի «իրը մեզ համար»:—*Կանտի փիլիսոփայության մեջ «իրն ինքնին» հասկացությունը նշանակում է այն, ինչ որ գոյություն ունի գիտակցությունից անկախ, բայց բացարձակապես անիմանալի է և չի կարող դառնալ «իր մեզ համար», այսինքն՝ ճանաչվել. մենք չենք կարող վոչ մի հասկացողություն ունենալ այն մասին, թե ինչ են «ինքնին իրերը»: Դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքի համաձայն՝ անիմանալի «ինքնին իրեր» գոյություն չունեն: Կա միմիայն տարբերություն* արդեն *ճանաչվածի («իրը մեզ համար») և* դեռ *չճանաչվածի («իրն ինքնին») միջև: Իրն ինքնին նշանակում է իրն այն ձևով, ինչպես նա գոյություն ունի ինքն ըստ ինքյան, այսինքն՝ անկախ մարդկային գիտակցությունից: Իսկ*

յերբ ինքնին իրը ճանաչվում է մեր կողմից, նա դառնում է իր մեզ համար։ «Գործնականում յուրաքանչյուր մարդ միլիոնավոր անգամ դիտել է «ինքնին իրի» պարզ և անհերքելի փոխարկումը յերևույթի, «իրի մեզ համար»։ Հենց այդ փոխարկումն էլ իմացությունն է» (ԼԵՆԻՆ)։ Բնական կաուչուկը—բույսերի հյութը—ինքնին իր էր,- մինչև վոր քիմիան սովորեց ոգտագործել այդ կաուչուկն արդյունաբերության կարիքների համար, այդպիսով այն չճանաչված ինքնին իրից վերածելով իրի մեզ համար։ Գիտության և տեխնիկայի զարգացմամբ չճանաչված ինքնին իրերի թիվը քանի գնում, այնքան պակասում է։

★

# Լ

«Լենինիզմի հարցերի շուրջը» — ընկեր Ստալինի աշխատությունը. գրված է 1926 թվի հունվարին։ Այն ուղղված էր բոլշևիզմի թշնամիների—տրոցկիստական-զինովյևական բանդայի դեմ, մի բանդա, որը Տրոցկու և նրա արբանյակներ Կամենևի, Զինովյևի և Բուխարինի գլխավորությամբ փորձում էր պառակտել բոլշևիկյան կուսակցությունը, վարկաբեկել նրան անհավատությամբ դեպի սոցիալիզմի հաղթությունը ՍՍՀՄ-ում և ստեղծել մի ուրիշ կուսակցություն, կապիտալիստական ռեստավրացիայի կուսակցությունը։ Ընկեր Ստալինն իր յերկի մեջ մերկացնում է տրոցկիստների և զինովյևականների այն փորձերը, որոնց նպատակն էր լենինիզմը տրոցկիզմով նենգափոխել։ Ջախջախելով տրոցկիստական զրպարտությունը լենինիզմի ազգային սահմանափակվածության մասին և այն մասին, թե իբր լենինիզմի մեջ գլխավորը գյուղացիական հարցն է, ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ լենինիզմի մեջ գլխավորը պրոլետարիատի դիկտատուրայի հարցն է և որ լենինիզմը պրոլետարիատի միջազգային ուսմունքն է, «որը պիտանի յե ու պար-

տաղիր առանց բացառության բոլոր յերկրների, այդ թվում նաև կապիտալիստորեն զարգացած յերկրների համար» (Ստալին)։ Ընկեր Ստալինը մերկացնում է տրոցկիստական «պերմանենտ հեղափոխության թեորիայի» մենշևիկյան եյությունը և ապացուցում է, վոր Մարքսի ուսմունքն անընդհատ հեղափոխության մասին իր իսկական մարմնացումն ու հետագա զարգացումը գտավ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերաճելու լենինյան իդեայի մեջ։ Վերլուծելով պրոլետարական հեղափոխության բնորոշ գծերն ու խնդիրների խորությունը ի տարբերություն բուրժուական հեղափոխությունից, ընկեր Ստալինը բացահայտում է պրոլետարական դիկտատուրայի եյությունը վորպես պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունը, վորպես դասակարգային պայքարի շարունակությունը նոր ձևերով, վորպես պրոլետարիատի դասակարգային դաշինքի առանձին ձևը գյուղացիության և աշխատավորների մյուս վոչ-պրոլետարական շերտերի հետ։ Զարգացնելով լենինյան ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերի մասին, նրանց միասնության և հարաբերակցության մասին պրոլետարիատի դիկտատուրայի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում, ընկեր Ստալինը հատկապես ընդգծում է պրոլետարական դիկտատուրայի օրգաննե-

րի պահպանման ու ամրապնդման անհրաժեշտությունը կապիտալիստական շրջապատման և ինտերվենցիայի վտանգի պայմաններում։ Ընկեր Ստալինը մեծ ուշադրություն է նվիրում կոմունիստական կուսակցության և նրա ղեկավար դերի հարցին պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում և կոմունիզմի կառուցման մեջ, մերկացնում է տրոցկիստների փորձը՝ պրոլետարիատի դիկտատուրան նույնացնելու կուսակցության դիկտատուրայի հետ և ցույց է տալիս, որ կուսակցության ղեկավար դերի նույնացումը պրոլետարիատի դիկտատուրայի հետ՝ դասակարգի նենգափոխումն է կուսակցությամբ, ամենակոպիտ խեղաթյուրումն է առաջնորդի և դասակարգի միջև յեղած հարաբերակցության վերաբերյալ լենինյան ուսմունքի։ Մի յերկրում սոցիալիզմի հաղթության և ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթության համար պայքարելու հարցերը կազմում են «Լենինիզմի հարցերի շուրջը» աշխատության վերջին յերկու (VI և VII) գլուխների բովանդակությունը։ Այստեղ ընկեր Ստալինը մերկացնում է մեկ յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորության տրոցկիստական, ռեստավրատորական ժխտումը և զարգացնում է լենինյան ուսմունքը մեկ յերկրի ուժերով սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին։ Ընկեր Ստալինն ապացուցեց, որ սոցիալիզմի վերջնական հաղթությունը հնարավոր է միայն սոցիա-

տարական հեղափոխության հաղթության հետեւանքով բոլոր կամ գոնե մի շարք յերկրներում, լիակատար յերաշխիք ունենալով ինտերվենցիայի և ռեստավրացիայի դեմ: Պաշտպանելով և հիմնավորելով սոցիալիզմի կառուցման լենինյան թեորիան՝ ընկեր Ստալինը ջախջախեց տրոցկիստների լենինիզմին թշնամի դիրքերը—գյուղացիության դարդացումը սոցիալիստական ուղիով տանելու հնարավորության ժխտումը նրանց կողմից, պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթի ժխտումը, նեպի գնահատումը վորպես կապիտալիզմ և միայն վորպես նահանջ և այլն: Ընկեր Ստալինի «Լենինիզմի հարցերի շուրջը» աշխատությունը հսկայական դեր խաղաց տրոցկիզմի մերկացման և ջախջախման մեջ, նա կուսակցությանը սոցիալիզմի հաղթության համար նրա մղած պայքարում զինեց մարքսիստական-լենինյան թեորիայի հաստատ զենքով: Այս է մարքսիզմի-լենինիզմի այս յերկի մեծ թեորիական և քաղաքական նշանակությունը:

«Լենինիզմի հիմունքների մասին» — ընկեր Ստալինի գիրքը, վոր կազմված է Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանում կարդացված դասախոսություններից: Նվիրված է լենինիզմի թեորիական հիմնավորմանը: Լույս է տեսել 1924 թվին: Այդ գրքում ընկեր Ստալինը ցույց է տալիս այն առանձնահատուկն ու նորը, վոր Լենինը մտցրել է մարքսիզմի գանձարա-

ներ։ Լենինիզմը մարքսիզմի հետագա զարգացումն է՝ համապատասխան իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի պայմաններին։ Լենինիզմը ծագեց Ռուսաստանում, բայց նա ինտերնացիոնալ յերևույթ է, որն իր արմատներն ունի ամբողջ միջազգային զարգացման մեջ։ Ռուսաստանը դարձավ լենինիզմի օջախը, որովհետև նա հանդիսացավ իմպերիալիզմի բոլոր հակասությունների հանգուցակետը. Ռուսաստանը հեղափոխությամբ ավելի հղի յեր, քան որևէ մի այլ յերկիր. և այդ պատճառով Եվ միայն նա ի վիճակի յեր այդ հակասությունները հեղափոխական ճանապարհով լուծելու։ Սահմանելով լենինիզմի միջազգային բնույթը՝ ընկեր Ստալինն ասում է. «Լենինիզմը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանի մարքսիզմն է։ Ավելի ճշգրիտ՝ լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան ու տակտիկան է ընդհանրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան ու տակտիկան մասնավորապես»։ «Մեթոդ» և «Թեորիա» գլուխներում ընկեր Ստալինը, մերկացնելով II Ինտերնացիոնալի օպորտունիզմի մեթոդն ու թեորիական դոգմաները, տալիս է հեղափոխական մեթոդի և լենինիզմի թեորիայի էության ու նշանակության խոր բնութագիրը՝ պրոլետարիատի հեղափոխական պայքարի պրակտիկայի համար։ Ընկեր Ստալինը ցույց է տա-

լիս, վոր առանց II Ինտերնացիոնալի օպորտունիստական զորամասերը մերկացնելու և նրանց դեմ անողորմ պայքար մղելու,—զորամասեր, վորոնք նշանակում եյին հրաժարում կապիտալիզմը հեղափոխական ճանապարհով տապալելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար պայքարելուց,—չեր կարելի ստեղծագործորեն զարգացնել մարքսիզմը։ Հարկավոր եր վերականգնել և ստեղծագործորեն ավելի ևս զարգացնել հեղափոխական մարքսիզմի մեթոդը, նրա մատերիալիստական դիալեկտիկան, լիկվիդացիայի յենթարկել խզումը թեորիայի և պրակտիկայի միջև, ստեղծել իսկապես պրոլետարական կուսակցություն, նոր տիպի կուսակցություն, հեղափոխական թեորիայով զինված կուսակցություն։ Թեորիան առարկայազուրկ է, յեթե նա հեղափոխական պայքարի պրակտիկայի հետ կապված չե․ պրակտիկան կույր է, յեթե նա իր ճանապարհը հեղափոխական թեորիայով չի լուսավորում։ Գրքի հետագա գլուխներում ընկեր Ստալինը հետևողականորեն քննարկում և հիմնավորում է Լենինի ուսմունքի արմատական հարցերի ամբողջ միակցությունը։ «Պրոլետարիատի դիկտատուրա» գլուխը պարզաբանում է հետևյալ հարցերը—պրոլետարական դիկտատուրայի մասին իբրև սոցիալիստական հեղափոխության հիմնական բովանդակության մասին, պրոլետարական դիկտատուրայի պատմական խնդիրների մա-

ան, Խորհրդային իշխանության մասին վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի մասին։ Պրոլետարիատի դիկտատուրայի հարցը մարքսիզմի-լենինիզմի հիմնական հարցն է։ Ընկեր Ստալինը մեծ ուշադրություն և նվիրում գյուղացիական և ազգային հարցերի մշակմանը («Գյուղացիական հարցը» և «Ազգային հարցը» գլուխները), պարզաբանելով, վոր նրանք կազմում են պրոլետարական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի մի մասը և լենինիզմի կենտրոնական հարցերն են։ «Ստրատեգիա և տակտիկա» գլխում ընկեր Ստալինը տալիս է լենինիզմի հեղափոխական ստրատեգիայի և տակտիկայի եյության խոր ու ներդաշնակ շարադրանքը։ Ընկեր Ստալինի գրքում թեորիական հիմնավորում է պարզացում և դրվում լենինյան ուսմունքը կուսակցության մասին («Կուսակցություն» գլուխը) վորպես բանվոր դասակարգի առաջավոր, գիտակից, կազմակերպված ջոկատի մասին, վորպես պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևի մասին, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի գործիքի մասին։ Ընկեր Ստալինը թշնամիների, ոպորտունիստների դեմ կուսակցության մղած պայքարի վիթխարի փորձի հիման վրա ե՛լ ավելի յե զարգացնում լենինյան ուսմունքը կուսակցության միասնականության մասին, կուսակցության յերկաթե կարգապահու-

*թյան և ամբարձման մասին՝ խորթ, թշնամական, պրոլետարիատական տարրերից այն մաքրելու միջոցով։ Վերջին «Աշխատանքի վոճը» գլխում ընկեր Ստալինը ցույց է տալիս, վոր լենինիզմի թեորիական և գործնական դպրոցը, վոր մշակում է կուսակցական և պետական աշխատողի հատուկ տիպ, կուսակցական և պետական աշխատանքի հատուկ վոճ, բաղկացած է յերկու առանձնահատկություններից—ռուսական հեղափոխական թափի և ամերիկյան գործիմացության—միացումից։ Ընկեր Ստալինի «Լենինիզմի հիմունքների մասին» գիրքը հսկայական դեր խաղաց տրոցկիստների դեմ և բոլշևիզմի մյուս բոլոր թշնամիների, ժողովրդի թշնամիների դեմ կուսակցության մղած պայքարում։ «Տրոցկիզմի իդեական ջախջախման և լենինիզմի պաշտպանության գործում,—ասվում է «Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» մեջ,—լուրջ նշանակություն ունեցավ ընկեր Ստալինի թեորիական աշխատությունը «Լենինիզմի հիմունքների մասին»... Այդ բրոշյուրը լենինիզմի վարպետորեն կատարված շարադրանքն է և լուրջ թեորիական հիմնավորումն է։ Նա ամբողջ աշխարհում բոլշևիկներին զինեց այն ժամանակ և զինում է այժմ մարքսիստական-լենինյան թեորիայի հատու զենքով»։*

**Լոգիկա** *(տրամաբանություն)* — *տես* Ֆորմալ լոգիկա, Դիալեկտիկա։

**«Լուդվիգ Ֆոյերբախը յեվ գերմանական կլասիկ փի-**

լիսոփայության վախճանը» — *Էնգելսի աշխատությու-
նը, վոր առանձին գրքով լույս է տեսել* 1888 *թվին։
Այդ գրքում Էնգելսը տալիս է Հեգելի և Ֆոյերբախի
փիլիսոփայության խոր բնութագիրը, ցույց է տալիս
դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքային տար-
բերությունը մեխանիստական մատերիալիզմից և Հե-
գելի իդեալիստական դիալեկտիկայից։ Առաջին գըլ-
խում տրված է Հեգելի փիլիսոփայության փայլուն
բնութագիրը, բացահայտված է նրա դիալեկտիկական
մեթոդի և իդեալիստական սիստեմի միջև յեղած հիմ-
նական հակասությունը։ Յերկրորդ գլխում տրված է
փիլիսոփայության այն հիմնական հարցի ձևակերպու-
մը, վոր փիլիսոփաներին բաժանեց յերկու բանակի՝
իդեալիստների և մատերիալիստների։ Մատնանշելով
Ֆոյերբախի ծառայությունները վորպես մատերիալիս-
տի, Էնգելսը յերկրորդ և յերրորդ գլուխներում բա-
ցահայտում է Ֆոյերբախի մետաֆիզիկական, հայե-
ցողական, անգործուն մատերիալիզմի սահմանափա-
կությունը և հասարակության նրա ըմբռնման մեջ յե-
ղած կրոնա-բարոյական մակաշերտերը։ Չորրորդ գըլ-
խում ձևակերպված և փայլուն կերպով բացատրված
են* պատմական մատերիալիզմի *(տե՛ս) հիմնական
դրույթները։ Էնգելսի գիրքը մարքսիզմի փիլիսոփա-
յական մեծ աշխատություն է և դիալեկտիկական մա-
տերիալիզմի ուսումնասիրման անհրաժեշտ ձեռնարկ։*

★

# Կ

**ԿԱՆՏ** *Իմմանուիլ (1724—1804)*—գերմանական կլասիկ իդեալիզմի հիմնադիր։ «Կանտի փիլիսոփայության հիմնական գիծը մատերիալիզմի հաշտեցումն է իդեալիզմի հետ, կոմպրոմիսն է մեկի և մյուսի միջև» (ԼԵՆԻՆ)։ Մի կողմից՝ Կանտը ընդունում էր մեր գիտակցությունից դուրս դանվող ինչ-վոր մի առարկայի գոյությունը, վոր նա անվանում էր «ինքնին իր»։ Բայց մյուս կողմից՝ «ինքնին իրը», ըստ Կանտի, սկզբունքորեն անիմանալի յե, մեր իմացության վերաբերմամբ այնկողմային է («տ ր ա ն ս ց ե ն դ ե ն տ»)։ «Երբ Կանտը յենթադրում է, թե մեր պատկերացումներին համապատասխանում է մի ինչ-վոր բան մեզնից դուրս, ինչ-վոր մի ինքնին իր,—ապա Կանտն այստեղ մատերիալիստ է։ Երբ նա այդ ինքնին իրը անիմանալի յե հայտարարում,... Կանտը հանդես է գալիս իբրև իդեալիստ» (ԼԵՆԻՆ)։ «Ինքնին իրն» համարելով անիմանալի, Կանտը իմացության թեորիան կառուցում էր այնպիսի հիմքերի վրա, վորոնք նրան մոտեցնում են սուբյեկտիվ իդեալիզմին։ «Ինքնին իրի» հաղորդած զարկի ազդեցությամբ՝ մարդու զգայական ունակությունը,

ըստ Կանտի, առնչվում է ըմբռնումների մի քանի, վորը կարգավորվում է հայեցության սուբյեկտիվ ձևերի—տարածության և ժամանակի օգնությամբ: Այդպիսով, ստացվում է յերևույթը, կամ զգայականության առարկան: Այնուհետև գործում է դատողությունը, վորը նրան հատուկ սուբյեկտիվ, տրամաբանական կատեգորիաների օգնությամբ այդ զգայական առարկան (յերևույթը) հասկացողության է վերածում: Մարդկային խմացության բարձրագույն սֆերան բանականությունն է, վորը ընկալվում է դարձյալ սուբյեկտիվ իդեաներով—հոգու, վորպես սուբստանցի, աշխարհի, վորպես մեխանիկական ամբողջության· աստծու: Այդպիսով, Կանտը գտնում էր, վոր տարածությունը, ժամանակը, պատճառականությունը, բնության յերևույթները վո՛չ թե հենց իր՝ բնության հատկություններն են, այլ մարդկային խմացականության հատկությունները: Կանտն ընդունում էր դրանք մինչփորձային — «ապրիորիական»—և ամեն մի փորձի պայման—«տրանսցենդենտալ» (այստեղից՝ այն անունը, վոր Կանտը տալիս էր իր փիլիսոփայությանը,—«տրանսցենդենտալ իդեալիզմ»—իդեալիզմ, վո՛րն ընդունում է, թե գիտակցության ապրիորիական ձևերը նախորդում են փորձին և հանդիսանում են նրա պայմանները): Կանտն ասում էր, թե դատողությունն է օրենքներ թելադրում բնությանը: Բնության ամբողջ պատկերը, ինչպես վոր այն ներկա-

յանում է մարդկային իմացությանը, Կանտը համարում էր մտքի սուբյեկտիվ կառուցվածք: Ըստ Կանտի՝ բնության միասնությունն ստեղծվում է ո՛չ թե բնության նյութականությամբ, այլ իմացող սուբյեկտի—«Յեսի» միասնությամբ: Բանականության ամեն մի փորձը՝ դուրս գալու փորձի սահմաններից, ըստ Կանտի, բանականությանն անխուսափելիորեն անլուծելի հակասությունների յն հասցնում: Կանտը ճիշտ էր մատնանշում, որ բանականությունն անխուսափելիորեն հակասությունների մեջ է ընկնում, բայց հենց բուն հակասությունը նա դիտում էր լոկ իբրև մոլորություն, իլլյուզիա, և ոչ թե իբրև իրականության ռեալ հակասությունների արտացոլում: Ինչպես մատնանշում էր Կանտն ինքը, նրա իմացաբանության խնդիրը հանդիսանում էր բանականության իրավունքների այնպիսի սահմանափակումը, որի ժամանակ աստծուն տեղ մնար իմացության սահմաններից այն կողմը: Իր էթիկական ուսմունքի մեջ Կանտը բարոյականությունը պահպանելու համար անհրաժեշտ էր համարում ընդունել աստծու գոյությունը և հոգու անմահությունը: Կանտն առաջինն էր, որ XVIII դարում փորձ արեց բնությանը մոտենալ նրա զարգացման տեսակետից՝ հանդիսանալով արեգակնային համակարգության ծագման այսպես կոչված Կանտ–Լապլասյան հիպոթեզի հեղինակներից մեկը: Կանտի փիլիսոփայությունը գերմանական յերիտասարդ բուրժուազիայի իդեոլոգիան

եր, վորը կարիք ուներ ֆեոդալական դարաշրջանի փիլիսոփայական և իրավական հասկացողությունների քննադատության, բայց թույլ եր, կոմպրոմիս եր փնտրում արտոնյալների հետ, չեր կարողանում անատամ լիբերալիզմից դենը գնալ: Կանտի ուսմունքի լիբերալ բնույթը պայմանավորեց նրա հաջողությունը XIX դարի վերջին այսպես կոչված նեո-կանտականների մոտ: Կանտի գլխավոր յերկերն են «Всеобщая естественная история и теория неба», 1755 г., «Критика чистого разума», 1781 г., «Критика практического разума», 1788 г., «Критика способности суждения», 1790 г., «Пролегомены», 1783 г.

**Կաուզալություն** — *այլ կերպ՝* **պատճառականություն** *(տես)։*

**«Կապիտալ»** — *Կ. Մարքսի գլխավոր աշխատությունը, այն հանճարեղ անմահ յերկը, վոր լիակատար հեղաշրջում մտցրեց մարդկային հասարակության մասին յեղած հայացքների մեջ և տեղափոխեց դրանք գիտական ռելսերի վրա: ««Կապիտալը» մեր դարի ամենամեծ քաղաքա-տնտեսագիտական յերկն է»* (Լենին)։ *Մարքսը «Կապիտալն» անվանում եր իր կյանքի գործը: «Կապիտալի» վրա Մարքսն սկսել է աշխատել 40-ական թվականների կեսին և շարունակել է աշխատանքը մինչև իր մահը: «Կապիտալի» առաջին հատորը լույս տեսավ 1867 թվին: Հետևյալ հատորները լույս տեսան արդեն Մարքսի մահից հետո և տպագրության*

*Համար պատրաստվեցին ու հրատարակվեցին Էնգելսի կողմից—երկրորդ հատորը՝ 1885 թվին, երրորդը՝ 1894 թվին։ «Կապիտալի» I հատորի առաջին ռուսերեն թարգմանությունը, որ կատարել էր Դանիելսոնը, լույս տեսավ 1872 թվին։ «Կապիտալը» կապիտալիզմի տնտեսական զարգացման օրենքների վերլուծությունն է։ «Կապիտալի» նպատակը, Մարքսի ասելով, հանդիսանում է «արդի հասարակության տնտեսական զարգացման օրենքի բացահայտումը»։ Սկսելով իր վերլուծությունը ապրանքից, պարզ ապրանքային տնտեսությունից, Մարքսն այնուհետև ցույց է տալիս, թե ինչպես այդ տնտեսությունը, զարգացման ներքին, նրան հատուկ օրենքների հիման վրա, վերածվում է կապիտալիստական տնտեսության, կապիտալիզմ է ծնում։ Այնուհետև նա բացահայտում է վարձու բանվորների կապիտալիստական շահագործման էությունը, որոնք բուրժուական հասարակության ամբողջ հարստության իսկական ստեղծողներն են հանդիսանում։ Կապիտալիստական շահագործման այդ էությունը Մարքսը բացահայտում է հավելյալ արժեքի ուսմունքի մեջ։ Լենինն ասում էր, որ այդ ուսմունքը «Մարքսի տնտեսագիտական թեորիայի անկյունաքարն է»։ Մարքսը հանճարեղ կերպով բաց է անում կապիտալիստական էկոնոմիկայի բոլոր հակասությունները։ Նա ցույց է տալիս, որ կապիտալի կուտակման օրենքներն անխուսափելիորեն հասցնում են բանվոր*

դասակարգի բացարձակ և հարաբերական աղքատացմանը, վորին զուգընթաց աճում է հարստությունն ու պերճանքը մյուս բևեռում, բուրժուազիայի մոտ: Կապիտալիզմի զարգացման ընթացքի հետ միասին, արտադրողական ուժերի աճման հետ միասին ավելի ու ավելի ուժեղ կերպով է սկսում յերևան գալ կապիտալիզմի հիմնական հակասությունը—հակասությունը արտադրության հասարակական բնույթի և մի փոքրիկ խումբ կապիտալիստների կողմից ամբողջ հարըստությունը յուրացնելու մասնավոր բնույթի միջև: Այդ հակասությունն իր արտահայտությունն է գըտնում անարխիայի, կրիզիսների, գործազրկության և այլ յերևույթների մեջ: Բայց կապիտալիզմը միայն իր անխուսափելի կործանման պայմանները չի նախապատրաստում: Այդ պայմանները հանդիսանում են միաժամանակ նաև հեղափոխական բանվոր դասակարգի հաղթության պայմանները: Կապիտալիզմի ընդերքում ստեղծվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններ նոր, սոցիալիստական հասարակության համար—նյութական բազա (արդիական տեխնիկա, խոշոր արդյունաբերություն, տրանսպորտ և այլն) և հեղափոխական պրոլետարիատ՝ կապիտալիզմի գերեզմանափորը և նոր, սոցիալիստական հասարակության ստեղծիչը: Մարքսի «Կապիտալը» միայն տնտեսագիտական աշխատություն չէ: Նա նաև մեծագույն պատմական և փիլիսոփայական յերկ է: Նրա մեջ տրվում է Մարք-

սի պատմական մատերիալիզմի թեորիայի ծավալուն հիմնավորումը՝ ամենից առաջ այն կիրառելով վորոշ հասարակական-տնտեսական ֆորմացիայի—կապիտալիզմի բազմակողմանի հետազոտության համար: «Կապիտալը» նաև մատերիալիստական դիալեկտիկայի մշակման ու մարդկային հասարակության ուսումնասիրության վերաբերմամբ կիրառելու դեռ չգերազանցված մի օրինակ է: «...Բուրժուական հասարակության դիալեկտիկան Մարքսի մոտ դիալեկտիկայի լոկ մասնավոր դեպքն է» (ԼԽՑԻՑ): Ռեալ իրականությունը լիովին համապատասխան կերպով Մարքսը «Կապիտալի» մեջ արտադրության հանրային յեղանակը դիտում է վորպես ամբողջ հասարակական կյանքի հիմք, դիտում է այն վո՛չ թե վորպես հավիտենական ու անփոփոխ մի բան, այլ վորպես պատմականորեն առաջացած, զարգացող և անհրաժեշտորեն իր կործանման պայմանները նախապատրաստող մի բան: «Կապիտալը» իր մեջ միացնում է ամենախոր գիտականությունը ամենամեծ կուսակցական անհաշտության հետ: «Կապիտալի» մեջ Մարքսը վո՛չ թե լոկ բացատրում է կապիտալիստական իրականությունը, այլև մատնանշում է նրա հեղափոխական փոփոխման ուղիները: Մարքսի՝ քաղաքատնտեսությամբ զբաղվելը լիովին բղխում էր բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի պահանջներից: Մարքսն իր ամենառաջին կուսակցական պարտականությունն էր համարում պրոլետարիատին

*թեորիական զենք տալ կապիտալիզմի դեմ նրա մղած պայքարում։ Մարքսի «Կապիտալը» ունի «Քաղաքատնտեսության քննադատությունը» ենթավերնագիրը։ Այդ միանգամայն համապատասխանում է «Կապիտալի» թեորիական բովանդակությանը։ Կապիտալիզմի օրենքների հետազոտության հետ միաժամանակ նրա մեջ տրվում է նաև բուրժուական քաղաքատնտեսության գիտական քննադատությունը։ «Կապիտալի» մեջ գիտականորեն ապացուցված է կապիտալիզմի կրախի և կապիտալիզմը հեղափոխական յեղանակով սոցիալիստական հասարակությամբ փոխարինելու անհրաժեշտությունը։ «Կապիտալի» լույս տեսնելու մոմենտից և մինչև մեր օրերը բուրժուական գիտությունը «Կապիտալի» դեմ անհաշտ պայքար է մղում՝ զրպարտորեն աղավաղելով այն։ Կոմունիզմի թշնամի թեորիաների անողոք քննադատությունը և Մարքսի ուսմունքի, նրա անմահ ստեղծագործության՝ «Կապիտալի» իդեաների հետագա զարգացումն իրենց իսկական ստեղծագործական մարմնացումը գտան Լենինի և Ստալինի հանճարեղ աշխատություններում։*

**Կատեգորիաներ** — *հասկացողություններ, վորոնք արտահայտում են ռեալ աշխարհի ամենից ավելի էական կապակցություններն ու օրենքները։ Դիալեկտիկական մատերիալիզմի մեջ կատեգորիաներն ու հասկացողություններն են՝ մատերիան, շարժումը, տարածությունը, ժամանակը, անհրաժեշտությունը, պատճառա-*

*կանությունը, նյությունը, վորակը, քանակը, ձևը, բովանդակությունը և այլն. պատմական մատերիալիզմի մեջ՝ հասարակական-տնտեսական ֆորմացիան, արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերությունները, բազիսն ու վերնաշենքերը, իդեոլոգիան և այլն։ Բնության և պատմության իմացության պրոցեսը իրականության արտացոլման մի հասարակ մեխանիկական ակտ չէ մարդու ուղեղում։ Իմացությունը կատեգորիաների, հասկացողությունների, որենքների կազմավորման մի բարդ պրոցես է։ Սրանք մարդկային մտքի կամայական ստեղծագործություններ կամ մի ինչ-վոր արտաշխարհային «բացարձակ իդեայի» իրացման աստիճաններ չեն, ինչպես պնդում են իդեալիստները։ Հասկացողությունները, կատեգորիաները պրոցեսների և բնության յերևույթների ընդհանրացումներ են, վորոնք անկախ են մարդու գիտակցությունից։*

Կեցություն (бытие) — *փիլիսոփայական տերմին՝ օբյեկտիվ ռեալությունը,* մատերիան (*տե՛ս*) *անվանելու համար։*

Կոմունիզմ — *տե՛ս* Սոցիալիզմ և կոմունիզմ, Գիտական կոմունիզմ:

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» — *գիտական կոմունիզմի ծրագրային դոկումենտը, վոր գրել են Մարքսն ու Ենգելսը և լույս ընծայել* 1848 *թ. հեղափոխությունից քիչ առաջ։ «Կոմունիստական կու-*

սակցության մանիֆեստում» «Հանճարեղ պարզությամբ և ցայտունությամբ նկարագրված է նոր աշխարհայացքը, հետևողական մատերիալիզմը, որն ընդգրկում է նաև սոցիալական կյանքի բնագավառը, դիալեկտիկան իբրև ամենից ավելի բազմակողմանի և խոր ուսմունք զարգացման մասին, դասակարգային պայքարի և նոր, կոմունիստական հասարակության ստեղծող պրոլետարիատի համաշխարհային-պատմական հեղափոխական դերի թեորիան» (ԼԵՆԻՆ)։ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» բաղկացած է չորս գլխից. 1) բուրժուաներն ու պրոլետարները, 2) պրոլետարներն ու կոմունիստները, 3) սոցիալիստական և կոմունիստական գրականությունը, 4) կոմունիստների վերաբերմունքը դեպի զանազան ոպոզիցիոն կուսակցությունները։ Առաջին գլխում Մարքսն ու Էնգելսը, սահմանելով բոլոր անտագոնիստական մարդկային հասարակությունների զարգացման հիմնական օրենքը—դասակարգերի պայքարը, տալիս են ստրկատիրական հասարակությունը պատմականորեն ֆեոդալականով և ֆեոդալականը՝ կապիտալիստականով փոխարինվելու համառոտ տեսությունը։ Այնուհետև նրանք վերլուծում են կապիտալիզմի ներքին անհաշտելի հակասությունների շնորհիվ անխուսափելիորեն նրա խորտակվելու պատճառները և հիմնավորում են բանվոր դասակարգի վերջնական նպատակը—կոմունիզմը։ Բուրժուազիայի կործանումը և պրոլե-

տարիատի հաղթությունը,— գրում են Մարքսն ու Էնգելսը, «հավասարապես անխուսափելի են»: «Մանիֆեստի» յերկրորդ գլուխը հիմնականում նվիրված է կոմունիստական կուսակցության, վորպես բանվոր դասակարգի անքակտելի մասի և նրա առաջավոր ջոկատի, դերի պարզաբանմանը և կոմունիստական կուսակցության ծրագրի շարադրմանը: Արտադրության միջոցների մասնավոր սեփականության վոչնչացում և հասարակական սեփականության հաստատում, սեփականություն, վորի բազայի վրա բացվելու յե ամեն հնարավորություն անհատի ազատ զարգացման, կուլտուրայի և գիտության բարգավաճման համար,—ահա կոմունիստների պայքարի հիմնական ծրագրային նպատակը: Միմիայն կոմունիստական հեղափոխությունն արմատական հեղաշրջում առաջ կբերի հասարակական-տնտեսական հարաբերությունների մեջ, հասարակական կեցության և մարդկանց գիտակցության մեջ: «Բանվորական հեղափոխության մեջ առաջին քայլ հանդիսանում է,—գրում են Մարքսն ու Էնգելսը,—պրոլետարիատին իշխող դասակարգ դարձնելը»: Այդպիսով, «Մանիֆեստի» մեջ տրված է «պետության հարցում մարքսիզմի ամենաուշագրավ և ամենակարևոր իդեաններից մեկը, այն է՝ «պրոլետարիատի դիկտատուրայի» իդեայի» ձևակերպումը (ԼԵՆԻՆ): Յերրորդ գլխում տրված է զանազան վոչ-պրոլետարական սոցիալիստական հոսանքների խոր քննադատությունը, վորոնք

գոյություն են ունեցել մինչև «Մանիֆեստի» ստեղծումը և նրա ստեղծման շրջանում: «Մանիֆեստի» վերջին, չորրորդ գլուխը շարադրում է կոմունիստական կուսակցության ստրատեգիայի և տակտիկայի հիմունքները: «Մանիֆեստի» մեջ մատնանշվում է, վոր կոմունիստներն ամենուրեք օժանդակում են ամեն մի հեղափոխական շարժման, վորն ուղղված է գոյություն ունեցող հասարակական և քաղաքական կարգերի դեմ, ընդհուպ մինչև բուրժուազիայի հետ միասին պայքարը ֆեոդալիզմի դեմ: Բայց կոմունիստները վոչ մի րոպե չեն մոռանում հիմնական խնդիրը—բանվորների մեջ պրոլետարիատի և բուրժուազիայի միջև թշնամական հակադրության գոյություն ունենալու պարզ գիտակցության մշակումը: Ամենուրեք ձգտելով բոլոր յերկրների դեմոկրատական ուժերի միավորմանն ու համախմբմանը, կոմունիստները բացահայտ կերպով հայտարարում են, վոր նրանց նպատակներին կարելի յե հասնել միմիայն բռնի կերպով տապալելով ամբողջ մինչև այժմ գոյություն ունեցող հասարակարգը: «Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք» կոչի մեջ, վորով վերջանում է «Մանիֆեստը», հռչակվում է կոմունիստական շարժման ինտերնացիոնալ բնույթը: Սոցիալիզմի հաղթությունը ԽՍՀՄ-ում, վոր ձեռք է բերված Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, իր հետ բերեց այն իդեաների ամենամեծ հաղթանակը, վոր շարադրել են Մարքսն ու Էնգելսը

*անմահ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում», կոմունիստական հեղափոխության այդ յերգ յերգոցի մեջ:*

«Կոմունիստական մանիֆեստ» — *տե՛ս* «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»:

Կոնկրետ ճշմարտություն: — *Ճշմարտությունը, ըն-դում է մարքսիզմ-լենինիզմը, միշտ կոնկրետ է, վորովհետև ամեն ինչ կախված է պայմաններից, տեղից և ժամանակից: Մարքսիզմը ժխտում է աբստրակտ (վերացական) ճշմարտությունների գոյությունը, վորոնք իբր թե պիտանի յեն բոլոր ժամանակների համար, և յերևույթների բացատրության ժամանակ պահանջում է կոնկրետ պատմական մոտեցում: Այսպես, որինակ, ցարիզմի պայմաններում բուրժուական-դեմոկրատական հանրապետության պահանջը* 1905 *թվին Ռուսաստանում՝ հեղափոխական պահանջ եր, իսկ ԽՍՀՄ-ի պայմաններում նա անիմաստ է և հակահեղափոխական, վորովհետև բուրժուական հանրապետությունը Խորհրդային հանրապետության համեմատությամբ մի քայլ է դեպի հետ: Յուրաքանչյուր սահմանում, յեթե այն վերցվում է վերացականորեն, ամեն մի կապակցությունից ու հարաբերությունից դուրս, անբովանդակ և անիմաստ է դառնում: Այդպես են, որինակ, «հավասարության», «բարու», «դեմոկրատիայի» և այլ աբստրակտ հասկացողությունները: «Հավասարության» հասկացողությունը իմաստ է ստանում միմիայն*

այն դեպքում, յեթե այն դիտենք կոնկրետ կերպով. ո՞ւմ հավասարությունը՝ ո՞ւմ հետ, ինչո՞ւմ: Չկա նաև «ընդհանրապես դեմոկրատիա», այլ կա բուրժուական դեմոկրատիա և պրոլետարական, սոցիալիստական դեմոկրատիա: Աբստրակտ ճշմարտություն չկա, ուսուցանում է մարքսիզմը, ճշմարտությունը միշտ կոնկրետ է:

Կրոն — «հոգևոր ճնշման տեսակներից մեկը, որ միշտ և ամենուրեք ընկած է ժողովրդական մասսաների վրա, որոնց ճնշել է ուրիշների համար կատարած հավիտենական աշխատանքը, կարիքն ու միայնակությունը» (ԼԵՆԻՆ): Կրոնը—մարդկանց վրա իշխող բնական և հասարակական ուժերի խեղաթյուրված, ֆանտաստիկական արտացոլումն է նրանց գլուխներում: Կրոնի ծագումը նախնադարյան հասարակության մեջ կապված էր մարդու անզորության հետ բնության դեմ մղվող պայքարում: Նախնադարյան մարդը, չկարողանալով ճիշտ բացատրել բնության յերևույթները, նրանց մեջ տեսնում էր առանձին հոգևոր, բարի կամ չար ուժերի գործողություն: Արդի կրոնների արմատներն առավելապես դասակարգային են: Կրոնը աշխատավորներին սովորեցնում է հեզություն, ստորացում և հնազանդություն շահագործողների առաջ, յերկրի վրա կրած զրկանքների փոխարեն նրանց պարգև խոստանալով «այն աշխարհում»: Կրոնը միշտ յեղել է ճնշողների զենքը: Քարոզելով աստծու և հանդերձյալ

կյանքի հավատը՝ կրոնը մարդուն հեռացնում է բնության և հասարակության օրենքների ճանաչողությունից։ Այդ պատճառով էլ «ամեն մի կրոն գիտությանը հակադիր մի բան է» (Ստալին)։ Կրոնը կապիտալիզմի ամենից ավելի կենսունակ մնացուկն է մարդկանց գիտակցության մեջ։ Հակակրոնական պրոպագանդայի ազատությունը ԽՍՀՄ-ի աշխատավորներն օգտագործում են պայքարելու՝ կրոնական մնացուկների հաղթահարման, միակ գիտական մարքսիստական-լենինյան աշխարհայացքի պարզաբանման, գիտական իմացությունների պրոպագանդայի համար։

★

# Հ

**Հանգիստ** — *տես* Շարժում և հանգիստ:

**Հակադրություն** — *տես* Հակադրությունների միասնությունն ու պայքարը:

**Հակադրությունների միասնությունն ու պայքարը** — *մատերիալիստական դիալեկտիկայի էությունն ու կորիզն է: Ի հակադրություն մետաֆիզիկայի՝ դիալեկտիկան ելնում է այն բանից, որ բնության առարկաներին և երևույթներին հատուկ են* ներքին հակասություններ: *Բնության մեջ ամեն ինչ շարժվում է, փոփոխվում: Զարգացման աղբյուր հանդիսանում են ներքին հակասությունները: Յուրաքանչյուր իր իրենից ներկայացնում է հակադրությունների միասնություն: Ամեն ինչ ունի իր անցյալն ու ապագան, իր ընթացող-անցնողը և զարգացողը, իր բացասական և դրական կողմը: Այդ պատճառով էլ զարգացման պրոցեսը ստորինից դեպի բարձրագույնը ընթանում է առարկաներին, երևույթներին հատուկ հակասությունների դրսևորման կարգով, հակադիր տենդենցների պայքարի կարգով: Հակադրությունները բացառում են միմյանց և միևնույն ժամանակ կապված են իրար*

հետ։ «Հակասության մի կողմն աններևակայելի է առանց մյուսի, ինչպես վոր հնարավոր չէ ձեռքում ամբողջ խնձորը պահել՝ նախապես ուտելով նրա կեսը» (Լենին)։ Պրոլետարիատն ու բուրժուազիան արտադրության կապիտալիստական յեղանակի ծնունդ են։ Արտադրության այդ յեղանակի շրջանակներում նրանք կապված են միմյանց հետ, բայց դրա հետ մեկտեղ նրանք բախվում են իրար, վորովհետև պրոլետարիատն անհաշտ պայքար է մղում բուրժուազիայի դեմ։ Հակադրությունների միասնության ու պայքարի որենքից շատ կարևոր յեզրակացություններ են բըխում պրոլետարիատի կուսակցության քաղաքականության և տակտիկայի համար։ Յեթե զարգացումը տեղի յե ունենում հակասությունների պայքարի և նրանց հաղթահարման կարգով, «նշանակում է՝ կապիտալիստական կարգերի հակասությունները պետք է վո՛չ թե կոծկել, այլ բացահայտել ու կծիկը բաց անել, դասակարգային պայքարը վո՛չ թե մարել, այլ այն մինչև վերջը հասցնել։ Նշանակում է՝ քաղաքականության մեջ չսխալվելու համար պետք է անհաշտ դասակարգային պրոլետարական քաղաքականություն կիրառել» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ *Տե՛ս նաև* Անտագոնիզմ, Անտագոնիստական հակասություններ։

**-ակադրություն մտավոր յեվ ֆիզիկական աշխատանքի միջեվ** — առաջ է գալիս արտադրության միջոց-

ների մասնավոր սեփականության յերևան գալու հետ, աշխատանքի հասարակական բաժանման զարգացման և հասարակությունը դասակարգերի բաժանվելու հետ։ Այն հատուկ է բոլոր դասակարգային հասարակություններին—ստրկատիրականին, ֆեոդալականին, կապիտալիստականին։ Դասակարգային ճնշման պայմաններում աշխատավորները—ստրուկները, ճորտ գյուղացիները, բանվորները—դատապարտված եյին ծանր ֆիզիկական աշխատանքի, իսկ մարդկության կողմից դարերով կուտակված գիտությունն ու կուլտուրան իշխող դասակարգերի և նրանց սպասարկող ինտելիգենցիայի, մտավոր աշխատանքի մարդկանց սեփականությունն եյին։ Կապիտալիզմի ժամանակ, վորը խոշոր արդյունաբերության զարգացման հիման վրա արագորեն առաջ մղեց տեխնիկան, գիտությունը, կուլտուրան, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունն իր ամենասուր արտահայտությունը հասավ։ Տեխնիկայի կատարելագործման գործը, գիտությամբ, գրականությամբ, արվեստով զբաղվելը և այլն,—այդ առանձնահատուկ աշխատանք է, վոր պահանջում է հատուկ պատրաստություն և կյանքի հատուկ պայմաններ,—մի բան, վոր չունեն աշխատավորներն ու բանվորները և վորոնց բաժինը ուժասպառ անող ֆիզիկական աշխատանքն է։ Մեքենան, մարդկային աշխատանքի և գիտության հուժկու ստեղծագործությունը, կապիտալիզմի պայմաններում

ծառայում է վո՛չ թե բանվորի աշխատանքը հեշտացնելուն, այլ բանվորին ավելի ևս ստրկացնելուն, հսկայական թվով բանվորներ մեքենայի կցորդ դարձնելուն: Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը ուսուցանում են, վոր մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը կանհետանա միմիայն կոմունիզմի ժամանակ: Կոմունիստական հասարակության կառուցման կարևորագույն խնդիրներից մեկը ֆիզիկական և մտավոր աշխատանքի մարդկանց միջև յեղած տարբերության վոչնչացումն է: Այդ տարբերությունը հաղթահարելու սոցիալական և քաղաքական արմատական պայմաններն ստեղծվում են պրոլետարական հեղափոխության հաղթությամբ: Այդ պայմաններն են. 1) մարդու կողմից մարդուն շահագործելու վոչնչացումը, սոցիալիստական եկոնոմիկայի կառուցումը, շահագործող դասակարգերի վերացումը. 2) մասսաների քաղաքական ակտիվության չտեսնված վերելքը, պետության կառավարման գործի մեջ նրանց լայնորեն ներգրավելը. 3) ժողովրդական մասսաների գրագիտությանը, կուլտուրային, գիտությանը, տեխնիկային մասնակից դարձնելու հսկայական հնարավորությունները: Սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ-ում, նոր տեխնիկայի, ֆաբրիկաների, գործարանների աճումը, գյուղատնտեսությունը մեքենաներով հագեցնելը, աշխատավորների բարեկեցության աճումը, նրանց գրագիտության և կուլտուրականության անշեղ բար-

ձրացումը,—այս ամենը հիմք ծառայեց ստախանովյան շարժման ծագման համար։ Այդ շարժումը ցույց է տալիս այն ուղին, «վորով միայն կարելի յե ձեռք բերել աշխատանքի արտադրողականության այն բարձրագույն ցուցանիշները, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու և մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը վոչնչացնելու համար» (Ստալին)։ ՍՍՀՄ-ն թևակոխել է սոցիալիզմի կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիզմի կառուցմանն անցնելու ժամանակաշրջանը։ Այդ ժամանակաշրջանի կարևորագույն խնդիրներից մեկն էլ բանվոր դասակարգի կուլտուրական-տեխնիկական մակարդակի բարձրացնելն է մինչև ինժեներ-տեխնիկական աշխատողների մակարդակը։ Կոմունիստական հասարակության առաջին փուլում (սոցիալիզմի ժամանակ) «մտավոր աշխատանքի և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը շարունակում է գոյություն ունենալ» (Ստալին)։ Միմիայն յերկրորդ, բարձրագույն փուլի (կոմունիզմի) ժամանակ բանվոր դասակարգի կուլտուրական-տեխնիկական մակարդակը բավական կլինի, վորպեսզի «մտավոր աշխատանքի և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունն արդեն անհետանա» (Ստալին)։ «Այդ հսկայական խնդիրը, մտավոր աշխատանքի և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրության վոչնչացման խնդիրն իրականաց-

*նելու համար, ի հարկե, բավական չեն մեկ կամ յերկու հնգամյակներ։ Այդ խնդրի լիակատար լուծումը մի քանի տասնամյակներ կպահանջի, բայց մենք հաջող կերպով շարժվում ենք այդ ուղիով։ Յերրորդ հնգամյակի պլանը մեզ մի աստիճան ևս վեր է բարձրացնում այդ մեծ խնդրի լուծման գործում»* (Մոլոտով)։

**Հակադրությունը քաղաքի յեվ գյուղի միջև։** — *Աշխատանքի հասարակական բաժանման աճմանը զուգընթաց տեղի ունեցավ քաղաքի անջատումը գյուղից, պատմականորեն ստեղծվեցին խիստ հակադրություն նրանց միջև, գյուղի ծայրահեղ հետամնացությունը քաղաքից տնտեսական, քաղաքական և կուլտուրական տեսակետից։ Այդ հակադրությունն առանձնապես մեծացավ կապիտալիզմի ժամանակ։ «...Քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրությունը գյուղի տնտեսական և կուլտուրական հետամնացության ամենախոր հիմքերից մեկն է... Համկոմկուսը այդ հակադրությունը վոչնչացնելու մեջ է տեսնում կոմունիստական շինարարության արմատական խնդիրներից մեկը»* (Համ. Կ(բ)Կ ծրագիրը)։ *Մարքսն ու Ենգելսն առաջին անգամ գիտականորեն ապացուցեցին, վոր այդ խնդիրը կլուծվի միմիայն կոմունիզմի ժամանակ։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթությունը բոլոր անհրաժեշտ պայմաններն ստեղծեց այդ ամենադժվար խնդրի հաջող լուծման համար։ Ցարական*

Ռուսաստանում գյուղացիական տնտեսությունների 65%-ը չքավոր էին, արտադրության հիմնական գործիքը արորն էր: Գյուղը աղքատության, հետամնացության և անկուլտուրականության մեջ քարշ էր տալիս իր գոյությունը: Երկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը հնարավորություն տվին արմատապես փոխելու գյուղի դրությունը ԽՍՀՄ-ում: «...Մանր անհատական գյուղացիական տնտեսությունների ովկիանոսի փոխարեն՝ իրենց թույլ տեխնիկայով և կուլակի բռնությամբ, մենք այժմ ունենք աշխարհի ամենախոշոր մեքենայացված, նոր տեխնիկայով զինված արտադրություն՝ կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների համապարփակ սիստեմի ձևով» (Ստալին): Սոցիալիստական սեփականությունն անբաժանորեն տիրապետող դարձավ գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսական հիմնական աշխատանքները կատարվում են բարդ մեքենաներով: Հողագործական աշխատանքը դառնում է արդյունաբերական աշխատանքի տարատեսակը: Գյուղերում կան հարյուր հազարավոր վորակյալ տրակտորիստներ, կոմբայնավարներ, մեքենավարներ: Հազարավոր խորհտնտեսություններն ու ՄՏԿ-ները բարձր, սոցիալիստական կուլտուրա մտցրին գյուղը: Կառուցված են հազարավոր կիլոմետր նոր ճանապարհներ. էլեկտրականությունը հաստատուն կերպով մտել է գյուղի կենցաղի մեջ. հեռախոսը, հեռագիրը, ռադիոն

*գյուղը կապել են մնացած աշխարհի հետ։ Կառուցված է ակումբների, խրճիթ-ընթերցարանների, խրճիթ-լաբորատորիաների, կինոթատրոնների, գրադարանների ցանց։ Քաղաքի և գյուղի միջև յեղած յերբեմնի հակադրությունն արդեն հիմքից խախտված է ՍՍՀՄ-ում։ Նրանց միջև դեռ գոյություն ունեցող տարբերությունները վերջնականապես կվոչնչացվեն կոմունիզմի կառուցմամբ։*

**Հակասություն** — *տես* Հակադրությունների միասնությունն ու պայքարը։

**Հասարակական կեցությունն ու հասարակական գիտակցությունը։** — *Դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից կեցությունն առաջնային է, գիտակցությունը՝ յերկրորդային. Նա մատերիայի, բնության արտացոլումն է մարդու ուղեղում, վորը նույն բնության զարգացման բարձրագույն արդյունքն է։ Պատմական մատերիալիզմը նույն ձևով է վճռում հասարակական կեցության հարաբերության հարցը դեպի հասարակական գիտակցությունը։ Հասարակական կեցությունը՝ նյութական բարիքների—սննդի, հագուստի, բնակարանի և այլն—արտադրության յեղանակը՝ առաջնային է, վորոշում է հասարակական գիտակցությունը, հասարակության հոգևոր կյանքը։ Լենինն այդ մասին հետևյալն է ասում։ «Ճիշտ այնպես, ինչպես վոր մարդու իմացությունը արտացոլում է նրանից անկախ գոյություն ունեցող բնությունը, այսինքն՝ զարգացող*

մատերիան, այդպես էլ մարդու հասարակական իմացությունը (այսինքն՝ փիլիսոփայական, կրոնական, քաղաքական և այլ զանազան հայացքներն ու ուսմունքները) արտացոլում է հասարակության տնտեսակարգը»: Նախքան Մարքսը տիրապետող էր պատմության իդեալիստական ըմբռնումը (տե՛ս): Հասարակական գիտակցության (իդեաների, թեորիաների, մարդկանց համոզմունքների) մեջ կամ «բացարձակ իդեայի», աստծու և այլ բաների մեջ իդեալիստները տեսնում էին հասարակական զարգացման հիմքը, շարժիչ ուժը: Մարքսը դիալեկտիկական մատերիալիզմը տարածեց հասարակական յերևույթների բնագավառի վրա, հայտնաբերեց, վոր հասարակական կեցությունը, նյութական բարիքների արտադրության յեղանակն է վորոշում հասարակական գիտակցությունը: Դա ամենամեծ հայտնագործումն էր, վոր հասարակական գիտությունն իսկական գիտության փոխարկեց: Դրա հետ միասին մարքսիզմը ցույց տվեց առաջավոր հասարակական իդեաների մեծագույն բարեփոխիչ, մոբիլիզացիայի յենթարկող և կազմակերպող դերը հասարակության զարգացման մեջ:

**Հասարակական հարաբերություններ** — զանազան հարաբերություններ մարդկանց միջև, վորոնք հաստատվում են նրանց համատեղ գործունեության պրոցեսում: Հասարակական հարաբերությունները բաժանվում են նյութական և իդեոլոգիական հարաբերու-

թյունների։ Վերջինները հանդիսանում են լոկ վերնաշենք առաջինների վրա։ Նյութական բարիքների արտադրությունը մարդկային հասարակության գոյության և զարգացման հիմքն է կազմում։ Այդ պատճառով բոլոր հասարակական հարաբերություններից կարևորագույնները հանդիսանում են արտադրական, տնտեսական հարաբերությունները։ Արտադրական հարաբերություններն են վորոշում բոլոր մյուս հասարակական հարաբերությունների—քաղաքական, բարոյական և այլ հարաբերությունների բնույթը։ Բոլոր հասարակական հարաբերությունների՝ արտադրական հարաբերություններից վորպես վորոշողներից կախված լինելու ըմբռնումն առաջին անգամ թույլ ավեց յուրաքանչյուր հասարակակարգ բացատրել իբրև մի միասնական ամբողջություն։

**Հասարակական-տնտեսական ֆորմացիա** — արտադրության պատմականորեն վորոշ յեղանակ, մարդկանց հասարակական կացութաձև։ Նյութական բարիքների արտադրության պրոցեսում մարդիկ միանում են՝ միասին արտադրական գործունեության համար։ «Արտադրական հարաբերությունները իրենց միակցված ամբողջությամբ կազմում են այն, ինչ վոր անվանում են հասարակական հարաբերություններ, հասարակություն, և այն էլ կազմում են մի այնպիսի հասարակություն, վոր գտնվում է պատմական զարգացման վորոշ աստիճանի վրա, հասարակություն,

վոր յուրահատուկ բնորոշ բնույթ ունի» (Մարքս)։ Նախնադարյան-համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական, կոմունիստական հասարակակարգերը կազմում են հասարակական-տնտեսական ֆորմացիաներ, մարդկային հասարակության զարգացման առաջադիմական աստիճաններ։ Տնտեսական հիմքի վրա յուրաքանչյուր հասարակության մեջ կազմվում է վերնաշենքերի մի բարդ սիստեմ—վորոշ քաղաքական հասարակակարգ՝ պետություն, ինչպես նաև հասարակական գիտակցության համապատասխան ձևեր՝ կրոն, գիտություն, արվեստ, բարոյականություն և այլն։ Յուրաքանչյուր հասարակական-տնտեսական ֆորմացիա ունի իր ծագման, զարգացման և կործանման հատուկ պատմական օրենքները։ Հասարակության մի ձևի փոխանցումը մյուսին կատարվում է վո՛չ թե պատահականորեն, այլ խիստ օրինաչափ կերպով, հին հասարակության ընդերքում յեղած հակասությունների զարգացման շնորհիվ, վորոնք նրան կործանման են հասցնում և մի նոր, ավելի առաջադիմական հասարակակարգի համար հիմք են ստեղծում։ Դասակարգային հասարակության մեջ մեկ հասարակական-տնտեսական ֆորմացիայի փոխանցումը մյուսին իրագործվում է դասակարգային պայքարով՝ իշխող և ճնշված դասակարգերի միջև, իշխող դասակարգերի հեղափոխական տապալմամբ՝ ճնշված դասակարգի կողմից։ Այսպես, բանվոր դասակարգի պայ-

քարը կապիտալիստների դեմ հասցնում է կապիտալիստական հասարակակարգի վոչնչացմանը և սոցիալիստականի ստեղծմանը։

**Հասարակության արտադրողական ուժեր** — արտադրության գործիքներ, վորոնց ոգնությամբ արտադրվում են նյութական բարիքները, մարդիկ, վորոնք շարժման մեջ են դնում արտադրության գործիքները և իրագործում են նյութական բարիքների արտադրությունը՝ շնորհիվ վորոշ փորձի և աշխատանքի ունակության։ Արտադրողական ուժերը, այսինքն՝ արտադրության միջոցները (գործիքները, մեքենաները, պլիտորները, հումքը և այլն), մարդու, աշխատավորի բանվորական ուժը հանդիսանում են միշտ աշխատանքի, նյութական արտադրության միանգամայն անհրաժեշտ տարրերը։ Արտադրողական ուժերի զարգացման պատմական մակարդակից, արտադրության գործիքների կատարելությունից և մարդկանց արտադրական փորձից ու աշխատանքի հմուտ լինելուց է կախված նաև հասարակական աշխատանքի արտադրողականությունը, մարդու տիրապետության աստիճանը բնության վերաբերմամբ։ Այստեղից՝ հասկանալի յե արտադրողական ուժերի և նրանց աճման նշանակությունը հասարակության համար։ Յուրաքանչյուր պատմական մոմենտում հասարակության կյանքը կախված է այն արտադրողական ուժերից, վորոնք գտնվում են նրա տրամադրության տակ։ Վայրե-

նաև գոյությունը ճիշտ նույնպես աներևակայելի յե առանց նրա աղեղի ու նետերի, քարե կացնի և այլն, ինչպես վոր արդի կապիտալիզմի գոյությունն աներևակայելի յե առանց մեքենաների, ինչպես նաև առանց բանվորների, վորոնք հասարակության հիմնական արտադրողական ուժն են կազմում։ Արտադրողական ուժերի զարգացումը, ամենից առաջ արտադրության գործիքների զարգացումը կազմում է արտադրության յեղանակների (տե՛ս) փոփոխության ու զարգացման հիմքը։ Իսկ արտադրության յեղանակների փոփոխությունը հասցնում է ամբողջ հասարակակարգի փոփոխությանը։ Որինակ, անցումը արհեստային–մանուֆակտուրային արտադրությունից դեպի մեքենական արդյունաբերությունը պայմանավորեց արմատական փոփոխությունները հասարակակարգի մեջ, պայմանավորեց անցումը ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ։ Արտադրողական ուժերի զարգացումը տարբեր հասարակություններում տարբեր կերպով է տեղի ունենում։ Կապիտալիզմի ժամանակ այդ զարգացումն իրագործվում է խորապես հակասական ճանապարհով, արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր–կապիտալիստական յեղանակի միջև գոյություն ունեցող անտագոնիզմի հետևանքով։ Սոցիալիստական հասարակության մեջ, ԽՍՀՄ–ում, արտադրողական ուժերը զարգանում են ըստ պլանի, նկատի ունենալով հասարակական հարստության ավելացման, աշխատա-

վորների նյութական և կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, ՍՍՀՄ-ի անկախության ամրապնդման և նրա պաշտպանունակության ուժեղացման շահերը։

**Հասարակության նյութական կյանքի պայմանները։**— Հասարակության նյութական կյանքի պայմանների մեջ մտնում են՝ 1) հասարակությանը շրջապատող բնությունը, աշխարհագրական միջավայրը. 2) ազգաբնակչությունն ու նրա խտությունը յերկրում կամ հասարակության մեջ. 3) արտադրությունը, վորի օգնությամբ մարդիկ ստեղծում են իրենց կյանքի համար հարկավոր նյութական բարիքները։ Հասարակությունը չի կարող բնական պայմաններից դուրս ապրել, առանց օգտագործելու բնության ուժերն ու բարիքները։ Ճիշտ այդպես էլ վոչ մի հասարակություն չի կարելի յերեվակայել առանց բնակչության վորոշ խտության։ Բայց վո՛չ բնական պայմանները, վո՛չ էլ ազգաբնակչությունը այն գլխավոր նյութական պայմանները չեն, վորոնցից կախված է հասարակակարգի բնույթը, նրա զարգացումը, մի հասարակակարգից մյուսին անցնելը։ Բնական պայմանների հասարակության վրա ազդելու աստիճանը, ինչպես և բնակչության խտությունը կախված են նյութական արտադրության մակարդակից։ Այն հիմնական ուժը, վոր վորոշում է հասարակության զարգացումը, նրա անցումը մի հասարակակարգից մյուսին, նյութական արտադրությունն է,

հասարակության արտադրողական ուժերի *զարգացումը* (*տե՛ս*)։

**Հասարակության տնտեսական կառուցվածքը** — *հասարակության սոցիալական, դասակարգային կառուցվածքը, նյութական արտադրողական ուժերի զարգացման փուլին համապատասխանող արտադրական հարաբերությունների միակցությունը։ Հասարակության մի ձևը (հասարակական-տնտեսական ֆորմացիան) տարբերվում է մյուսից ամենից առաջ իր տնտեսական կառուցվածքով, այդ ձևի մեջ իշխող արտադրական հարաբերությունների տիպով։ Այսպես, կապիտալիստական հասարակարգի համար բնորոշ է այնպիսի արտադրական հարաբերությունների տիրապետությունը, վորոնք հիմնված են արտադրության միջոցների կապիտալիստական մասնավոր սեփականության և վարձու բանվորների աշխատանքի շահագործման վրա։ Սոցիալիստական հասարակության արտադրական հարաբերությունները—դրանք արտադրության միջոցների հանրային սեփականության հարաբերությունները և շահագործումից ազատ մարդկանց համագործակցության և փոխադարձ օգնության հարաբերություններն են։*

**Հասարակություն** — *տե՛ս* Հասարակական-տնտեսական ֆորմացիա, Արտադրական հարաբերությունների տիպերը։

**Հասկացողություն** (понятие) — *մարդկային մտա-*

ծողության ձև, որով մենք արտահայտում ենք իրերի ընդհանուր հատկանիշները: Ֆորմալ լոգիկան հասկացողությունը դիտում է ֆորմալ կերպով, իրականության հետ ունեցած կապակցությունից դուրս: Մատերիալիստական դիալեկտիկան, ընդհակառակը, հասկացողությունը չի խզում իրականությունից, այլ ելակետ է ընդունում այն, որ ճիշտ և ոչ թե անհեթեթ հասկացողություններն են արտացոլում իրականությունը և ընդհանրացնում այդ իրականության նյութական, ամենից ավելի կարևոր հատկանիշները:

**Հավասարակշռություն** — *տե՛ս* Շարժում և հանգիստ:

**Հատուկը** — *տե՛ս* Եզակին, հատուկը և ընդհանուրը:

**Հարաբերական ճշմարտություն** — *Աշխարհի և նրա օրենքների իմացության պրոցեսը նույնքան անվերջ է, ինչպես անվերջ է բնության և հասարակության զարգացումը: Մեր գիտելիքները նրանց զարգացման յուրաքանչյուր տվյալ աստիճանի ժամանակ հարաբերաբար ճիշտ են՝ ավելի ու ավելի խորանալով և ճշգրտվելով գիտության զարգացմանը զուգընթաց: Այսպես, ատոմն անբաժանելի էր համարվում մինչև XX դարի սկիզբը, երբ ապացուցվեց, որ նա իր հերթին բաղկացած է էլեկտրոններից: Մատերիայի կազմության էլեկտրոնային թեորիան հանդիսանում է մատերիայի մասին մեր ունեցած գիտելիքների խորացումն ու ընդլայնումը: Բայց այն էլ, ինչ որ այժմ գիտությանը*

հայտնի չէ մատերիայի կազմության վերաբերմամբ, վերջին և վերջնական ճշմարտությունը չէ։ «...Դիալեկտիկական մատերիալիզմը պնդում է մարդու առաջադիմող գիտության կողմից բնությունը ճանաչելու այդ բոլոր ուղենիշների ժամանակավոր, հարաբերական, մոտավոր բնույթը։ Էլեկտրոնը նույնպես անսպառելի է, ինչպես և ատոմը, բնությունն անվերջ է» (ԼԵՆԻՆ)։ Հաստատելով մեր իմացության ճշմարտությունների հարաբերական բնույթը, դիալեկտիկական մատերիալիզմը միևնույն ժամանակ գտնում է, որ յուրաքանչյուր հարաբերական ճշմարտություն նշանակում է բացարձակ ճշմարտությանը մոտենալ, որ գիտական իմացության յուրաքանչյուր քայլ բովանդակում է բացարձակ, այն է՝ լիակատար ճշմարտության տարրեր։ Անանցանելի սահման չկա հարաբերական և բացարձակ ճշմարտության միջև։ Հարաբերական ճշմարտությունների միակցված ամբողջականությունն իրենց զարգացման մեջ տալիս է բացարձակ ճշմարտություն։ «Գիտության զարգացման յուրաքանչյուր աստիճանը՝ նոր հատիկներ է ավելացնում բացարձակ ճշմարտության այդ գումարին, բայց յուրաքանչյուր գիտական դրույթի ճշմարտության սահմանները հարաբերական են» (ԼԵՆԻՆ)։

Հեգել Գեորգ-Վիլհելմ-Ֆրիդրիխ (1770—1831)— գերմանական մեծ փիլիսոփա-իդեալիստ և դիալեկտիկ։ Հեգելի իդեալիզմի սխեմի համաձայն՝ աշխարհի

հիմքը հանդիսանում է մինչև բնության և մարդու յերևան գալը գոյություն ունեցած ինչ-որ մի օբյեկտիվ «բացարձակ իդեա»։ Իր բնությամբ «բացարձակ իդեան» գործունյա սկզբունք է, սակայն նրա գործունեությունը կարող է արտահայտվել միմիայն մտածողության մեջ, ինքնիմացության մեջ։ Իդեայի գործունեությունը, ինքնիմացությունը զարկ տվողը նրա դիալեկտիկական բնությունն է։ «Բացարձակ իդեան» ինքնին հակասական է, նա շարժվում է և փոփոխվում, ժխտում է ինքն իրեն և փոխվում է իր հակադրությանը։ Իր դիալեկտիկական ինքնազարգացման պրոցեսում «բացարձակ իդեան» յերեք հիմնական ետապ է անցնում։ «Բացարձակ իդեայի» զարգացման առաջին ետապը տրամաբանական է, յերբ «բացարձակ իդեան» գործում է դեռ իր «նախաշխարհային», «նախաբնութենական» կեցության մեջ, «զուտ մտածողության տարերքի մեջ»։ Այդ աստիճանում «բացարձակ իդեան» հանդես է գալիս իբրև տրամաբանական հասկացողությունների-կատեգորիաների սիստեմ, իբրև լոգիկայի սիստեմ։ Յերկրորդ ետապում «բացարձակ իդեան» փոխարկվում է բնության, վորը հանդիսանում է «բացարձակ իդեայի այլակեցությունը»։ Ըստ Հեգելի՝ բնությունը չի զարգանում ժամանակի մեջ, այլ լոկ հավիտենապես բազմազանվում է (разнообразится) տարածության մեջ։ Իդեայի ինքնազարգացման բարձրագույն աստիճանը հանդիսանում է «բացարձակ վոգին»։ Այս յեր-

բորդ. եռապում «բացարձակ իդեան» ժխտում է բնությունը և վերադառնում ինքն իրեն, զարգացումը նորից տեղի է ունենում մտածողության, բայց արդեն մարդկային մտածողության բնագավառում։ Այս եռապին է վերագրում Հեգելը անհատական գիտակցության աստիճանը, հասարակական գիտակցության աստիճանը և բարձրագույն աստիճանը, երբ իդեան կրոնի, արվեստի և փիլիսոփայության ձևով հասնում է իր ինքնիմացության վախճանին։ Հեգելը փիլիսոփայությունը հայտարարում է «բացարձակ գիտություն», իսկ իր փիլիսոփայությունը համարում է իդեայի ինքնազարգացման վերջնական աստիճանը։ Այս է Հեգելի իդեալիստական փիլիսոփայական սիստեմը։ Հեգելի իդեալիստական փիլիսոփայության մեջ արժեքավորը այդ փիլիսոփայությունը համակող դիալեկտիկական մեթոդն էր—այն ուսմունքը, թե իդեան զարգանում է դիալեկտիկական հակասությունների հիման վրա, թե զարգացման ժամանակ տեղի է ունենում քանակական փոփոխությունների փոխանցումը որակական փոփոխությունների, թե ճշմարտությունը կոնկրետ է, թե մարդկային հասարակության զարգացման պրոցեսը կատարվում է օրինաչափ կերպով, և ոչ թե անհատների քմահաճույքի ուժով։ Սակայն հեգելյան դիալեկտիկան անջատված չէ նրա իդեալիստական սիստեմից, այլ սերտորեն կապված է նրա հետ։ Դրանից հեգելյան փիլիսոփայության մեջ առաջ էր գալիս խորը, այդ

փիլիսոփայությունը պառակտող հակասություն մեթոդի և սիստեմի միջև։ Դիալեկտիկական մեթոդն ասում էր, թե իմացության զարգացման պրոցեսն անվերջ է, իսկ իդեալիստական սիստեմը հասցնում էր այն բանին, որ Հեգելն իր փիլիսոփայությունը հայտարարեց ամեն մի զարգացման վերջ և վերջնական, մի անգամ ընդմիշտ ավարտված ճշմարտություն։ Դիալեկտիկական մեթոդն ասում էր, թե ամեն ինչ զարգանում է դիալեկտիկորեն, իսկ սիստեմը բնությունը պատկերացնում էր իբրև դիալեկտիկայի ժխտում։ Հեգելը XIX դ. սկզբի գերմանական բուրժուազիայի իդեոլոգն էր, բուրժուազիա, որը իր առաջ դրված խնդիրներով առաջադիմական էր, բայց վախկոտ էր և անհետևողական, տատանվող։ Զգալի չափով այս պատճառով էր, որ հանճարեղ դիալեկտիկ Հեգելը յերկչոտությամբ սողում էր պրուսական ֆեոդալական միապետության առաջ և այն հայտարարում էր մարդկային հասարակության զարգացման վերջին և բարձրագույն նպատակը, հակառակ իր ամբողջ դիալեկտիկայի։ Հեգելյան դիալեկտիկան իդեալիզմի հետ ունեցած իր կապի հետևանքով զգալի չափով աղճատված է, այլանդակված, պատված է իդեալիստական կեղևով, «հեգելյականությամբ»։ Մարքսն ու Էնգելսը, երբ նրանք ստեղծում էին իրենց փիլիսոփայական ուսմունքը— դիալեկտիկական մատերիալիզմը, չէին կարող հեգելյան դիալեկտիկան վերցնել այնպես, ինչպես այն կար-

իրեն Հեգելի մոտ, այլ վերամշակեցին այն, գլխի վրայից այն շուռ տվին—կանգնեցրին վոտքի վրա։ «Ընդունելով իրենց դիալեկտիկական մեթոդը՝ Մարքսն ու Ենգելսը սովորաբար մատնանշում են Հեգելին վորպես մի փիլիսոփայի, վորը ձևակերպել է դիալեկտիկայի հիմնական գծերը։ Սակայն այդ չի նշանակում, թե Մարքսի ու Ենգելսի դիալեկտիկան նույնական է Հեգելի դիալեկտիկայի հետ։ Իրականում Մարքսն ու Ենգելսը Հեգելի դիալեկտիկայից վերցրել են միայն նրա «ռացիոնալ հատիկը», դեն գցելով հեգելյան իդեալիստական կեղևը և ե՛լ ավելի զարգացնելով դիալեկտիկան՝ նրան արդիական գիտական տեսք տալու համար։ «Իմ դիալեկտիկական մեթոդը,—ասում է Մարքսը,—իր հիմքով վո՛չ միայն տարբեր է հեգելյան դիալեկտիկական մեթոդից, այլև նրա ուղղակի հակադրությունն է։ Հեգելի համար մտածողության պրոցեսը, վոր նա իդեայի անվան տակ դարձնում է նույնիսկ ինքնուրույն սուբյեկտ, դեմիուրգն է (արարիչը) իրականի, վորը լոկ նրա արտաքին արտահայտությունն է։ Ինձ համար, ընդհակառակը, իդեալականը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մարդկային գլխի մեջ փոխադրված և նրա մեջ կերպափոխված նյութականը (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Հեգելի գլխավոր յերկերն են՝ «Феноменология духа», 1807 г., «Наука логики», 1812—1816 г. г., «Лекции по истории философии», 1833—

1836 г. г., «Энциклопедия философских наук» («Ма-
лая логика», «Философия природы», «Философия ду-
ха»), 1817 г., «Философия права», 1821 г., «Филосо-
фия истории», 1837 г., «Эстетика», 1836—1838 г. г.

**Հելմհոլց** *Հերման (1821 — 1894) — գերմանական
հռչակավոր ֆիզիկոս և ֆիզիոլոգ։* «О сохранении
силы» (1847 г.) *գրքում ձևակերպեց Մայերի* 1842
*թվին հայտնագործած էներգիայի պահպանման օրեն-
քը։ Հելմհոլցի փիլիսոփայական համոզմունքներն ան-
հետևողական են. Նա տատանվում էր մատերիալիզմի
և կանտականության միջև։ Քննադատելով Կանտին
նրա իդեալիզմի և սուբյեկտիվիզմի համար՝ Հելմհոլ-
ցը ժխտում էր ինքնին իրերը ճանաչելու հնարավորու-
թյունը, մեր զգայությունները համարելով նշաններ,
սիմվոլներ, բայց ոչ թե իրերի պատկերում։ Էնգելսն
ու Լենինը սուր կերպով քննադատել են Հելմհոլցի
փիլիսոփայական սխալները։*

**Հելվեցիուս** *Կլոդ-Ադրիան (1715—1771)* — XVIII *դ.
ֆրանսիական փիլիսոփա-մատերիալիստ։ Հելվեցիուսը
ելակետ էր ընդունում անգլիական փիլիսոփա Լոկկի
ուսմունքն այն մասին, թե մարդու իդեաների ու
պատկերացումների աղբյուրը զգայական փորձն է։
Զարգացնելով իմացության մատերիալիստական թեո-
րիան՝ Հելվեցիուսն իրեն նպատակ էր դնում այդ ըստ
էության մատերիալիստական սկզբունքը գործադրել*

գլխավորապես հասարակական կյանքը բացատրելու համար։ Նա գտնում էր, վոր մարդն իրեն շրջապատող միջավայրի արդյունքն է և վոր մարդու բնավորությունն ինչ-վոր ի ծնե տրված բան չէ, այլ վորոշվում է փորձով, արտաքին միջավայրով։ Այս էր Հելվեցիուսի հասարակական ուսմունքի մատերիալիստական յելակետը։ Սակայն այնուհետև նա պնդում էր, թե միջավայրն ստեղծվում է հասարակության մեջ գոյություն ունեցող որենսդրությամբ։ Իսկ որենսդրությունը վորոշվում է հասարակության մեջ տիրապետող իշխաններով։ Մարդկային հասարակության այդպիսի բացատրությունը, վորի վերջնական յեզրակացությունն էր «կարծիքներն են կառավարում աշխարհը» դրույթը, մատերիալիստական բացատրություն չէ։ Հասարակության վերաբերյալ ուսմունքի մեջ Հելվեցիուսը վերջին հաշվով կանգնած էր իդեալիզմի դիրքերի վրա։ Հելվեցիուսի այն հայացքը, թե միջավայրը, քաղաքական հիմնարկները վճռական ազդեցություն են գործում մարդու բնավորության կազմավորման վրա, մեծ հեղափոխական նշանակություն ուներ։ «Յեթե մարդու բնավորությունը ստեղծվում է հանգամանքների շնորհիվ, ապա ուրեմն պետք է հանգամանքները մարդկային դարձնել» (Մարքս)։ Այստեղից բղխում էր ֆեոդալական հարաբերությունները փոփոխելու անհրաժեշտության պահանջը։ Մարքսը մատնանշում է, վոր Հելվեցիուսի այդ հայացքները մեծ

ազդեցություն են գործել XIX դ. սկզբի ուտոպիական սոցիալիզմի վրա։ Հելվեցիուսի գլխավոր երկերը՝— «Об уме» 1758 г., և «О человеке» 1773 г., թարգմանված են ռուսերեն։

Հեղափոխություն — կարևորագույն հանգույց հասարակական զարգացման մեջ, արմատական հեղաշրջում հասարակության և պետության կյանքում, երբ տապալվում է իր դարն անցրած, հին հասարակակարգը և նոր հասարակական կարգ է հաստատվում։ Հեղափոխությունն ավարտում է էվոլյուցիայի վորոշ պրոցեսը, հին հասարակության ընդերքում նոր հարաբերությունների աստիճանական ծագման պրոցեսը։ «Իրենց զարգացման վորոշ աստիճանի վրա,—ասում է Մարքսը,—հասարակության նյութական արտադրողական ուժերը հակասության մեջ են մտնում գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների հետ, կամ—վոր դրա միայն իրավաբանական արտահայտությունն է — սեփականության հարաբերությունների հետ, վորոնց ներսում նրանք մինչև այժմ զարգանում էին։ Արտադրողական ուժերի զարգացման ձևեր լինելուց՝ այդ հարաբերությունները դառնում են նրանց կապանքները։ Այն ժամանակ վրա յե հասնում սոցիալական հեղափոխության եպոխան»։ Հեղափոխությունները վոչնչացնում են այդ հակասությունը, հին արտադրական հարաբերությունների կապանքներից ազատում են նախկին հասարակության ընդերքում հասու-

նացած նոր արտադրողական ուժերը։ Հեղափոխության մեջ կենտրոնացվում է մեկ հասարակական-տնտեսական ֆորմացիայի փոխարինումը մյուսով։ Ամեն մի հեղափոխության հիմնական հարցը քաղաքական իշխանության հարցն է։ Իշխանության անցումը հասարակության զարգացումը կասեցնող իշխող ռեակցիոն դասակարգի ձեռքից հեղափոխական դասակարգի ձեռքը տեղի յե ունենում սուր դասակարգային պայքարի միջոցով, քաղաքացիական պատերազմի միջոցով։ Հասարակական հեղափոխություններն ավտոմատիկ կերպով, իրենք իրենց չեն կատարվում։ «Նոր արտադրողական ուժերը հասունանալուց հետո գոյություն ունեցող արտադրական հարաբերությունները և նրանց կրողները՝ տիրող դասակարգերը դառնում են այն «անհաղթահարելի» արգելքը, վորը ճանապարհից կարելի յե հեռացնել նոր դասակարգերի գիտակցական գործունեության միջոցով, այդ դասակարգերի բռնի գործողությունների միջոցով, հեղափոխության միջոցով։ Այստեղ առանձնապես ցայտուն կերպով հանդես է գալիս հսկայական դերը նոր հասարակական իդեաների, նոր քաղաքական հիմնարկների, նոր քաղաքական իշխանության, վորոնք կոչված են ուժով վերացնելու հին արտադրական հարաբերությունները» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Հեղափոխությունները, Մարքսի ասելով, պատմության լոկոմոտիվներն են։ Նրանք նոր դարաշրջաններ են բաց

տնում մարդկության պատմության մեջ։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը կապիտալիզմի կործանման դարաշրջանի սկիզբը դրեց։ Սոցիալիստական հեղափոխությունն ամենամեծն է պատմությանը հայտնի հեղափոխությունների մեջ, վորովհետև նա ամենախոր փոփոխություններն է կատարում ժողովուրդների կյանքում։ Մինչդեռ բոլոր նախընթաց հեղափոխությունները հասցնում էին ճնշված դասակարգերի շահագործման ձևերի փոփոխությանը միայն, սոցիալիստական հեղափոխությունը հասցնում է դասակարգերի լիակատար վոչնչացմանն ու մարդու կողմից մարդու շահագործման վոչնչացմանը։ Սոցիալիզմի հաղթությունը, շահագործող դասակարգերի և շահագործման վոչնչացումը ԽՍՀՄ-ում պրոլետարական հեղափոխության այդ համաշխարհային-պատմական խնդրի պրակտիկ մարմնացումն է կյանքում։

**Հերակլիտ** Եփեսացի (մոտ 544—484 մեր թվակ. առաջ)—հին հունական փիլիսոփա-մատերիալիստ և դիալեկտիկ։ Նրա յերկից մեզ հասած հատվածներում տրված է «դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների շատ լավ շարադրանքը» (Լենին)։ Հերակլիտն ուսուցանում էր, թե «աշխարհը, միակը ամենից, չի ստեղծված աստվածներից վոչ մեկի և մարդկանցից վոչ մեկի կողմից, այլ յեղել է, է՛ և կլինի վորպես մի հավերժ կենդանի հուր, վոր որինաչափորեն բոցավառվում է և որինաչափորեն հանգչում»։ Ըստ Հե-

րակլիտի՝ բոլոր իրերի հիմքում գտնվում է մատե-րիական նախահիմքը—հուրը։ Աշխարհը գտնվում է հավիտենական հոսանքի մեջ. «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ շարունակ փոփոխվում», «չի կարելի յերկու անգամ միևնույն գետը մտնել»։ Զարգացումը տեղի յե ունենում հակադիր ուժերի պայքարի միջոցով։ Իրերի բոլոր փոփոխությունները յենթակա յեն ամե-նախիստ որինաչափության, վոր Հերակլիտը անվա-նում էր լոգոս, վորը նշանակում է՝ բանականություն, որենք։ Լոգոսը ներհատուկ է բուն նյութական սուբ-ստանցիային—հրին. ըստ Հերակլիտի՝ նա հենց բնու-թյան որենքն է։

Հիերոգլիֆների քնարը — մի թեորիա, վորի հա-մաձայն՝ մարդու զգայությունները ու պատկերացում-ները աշխարհի պայմանական նշաններն են (հիերո-գլիֆները) միայն։ Հիերոգլիֆային թեորիայի կողմ-նակիցները ժխտում են, վոր մեր գիտակցությունն իբրև թե ոբյեկտիվ աշխարհի առարկաների և իրերի արտա-ցոլումը չէ։ Դրանով նրանք փորձում են խախտել աշ-խարհի իմացության հնարավորության հավատը։ «Պատկերացումն անհրաժեշտաբար և անխուսափելիո-րեն յենթադրում է այն բանի ոբյեկտիվ գոյությու-նը, ինչ վոր «պատկերացվում է»։ «Պայմանական նշան», սիմվոլ, հիերոգլիֆ՝ հասկացողություններ են, վորոնք ագնոստիցիզմի միանգամայն անպետք տարր են մտցնում» (ԼԵՆԻՆ)։ Պատկերացումը յերբեք չի կա-

րող լինելին համընկնել այն առարկայի հետ, վորը պատկերացվում է, բայց այդ ռեալ գոյություն ունեցող առարկայի ճիշտ պատկերացումն է, և վոչ թե պայմանական նշան։ Հիերոգլիֆների թեորիան պաշտպանում եյին մի շարք բնախույզներ։ Այդ թեորիային մի ժամանակ կողմնակից եր նաև Պլեխանովը։ Դիալեկտիկական մատերիալիզմը հիերոգլիֆների թեորիային հակադրում է **արտացոլման թեորիան** (տե՛ս)։

**Հիլոզոիզմ** (հունարեն «հյուլե»—մատերիա և «զոե»—կյանք)—մի ուսմունք է, ըստ վորի՝ կյանքը և, հետևաբար, զգայունակությունը հատուկ են բնության մեջ յեղած բոլոր իրերին։ Հիլոզոիստներ եյին առաջին հունական մատերիալիստները, մի քանի ֆրանսական մատերիալիստներ (Ռոբինե) և ուրիշները։ Այդ ուսմունքը սխալ է, վորովհետև զգայությունն ու մտածողությունը միայն բարձր զարգացած մատերիայի հատկություններ են։

**Հնարավորություն յեվ իրականություն** — Հնարավորությունն այն է, ինչ վոր դեռ իրականություն չէ և վորը կարող է վորոշ պայմանների առկայության դեպքում իրականանալ։ Իրականությունը—արդեն կենսագործված հնարավորությունն է։ Հարկավոր է ձևական, դատարկ հնարավորությունը տարբերել ռեալ հնարավորությունից։ Ձևական հնարավորության տեսակետից «ամեն ինչ հնարավոր է»․ հնարավոր է, վոր այսոր լուսինն ընկնի յերկրի վրա և այլն։ Այդ տեսա-

կեան անտեսում է ռեալ պայմանների առկայությունը այս կամ այն հնարավորության համար։ Ի տարբերություն ձևական հնարավորությունից՝ իրական հնարավորությունն այնպիսի հնարավորություն է նշանակում, որը օբյեկտիվ պատճառներ ունի, որը որոշ պայմանների դեպքում անհրաժեշտաբար իրականացվում է, այսինքն՝ իրականության է վերածվում։ Անհրաժեշտ է խստորեն տարբերել հնարավորությունն ու իրականությունը։ Խորհրդային հասարակակարգը սոցիալիստական հասարակություն կառուցելու իրական հնարավորություն է ստեղծում։ Բայց այդ հնարավորությունը հարկավոր է իրականություն դարձնել։ Հնարավորությունը իրականություն դարձնելու համար անհրաժեշտ պայմանների մեջ կարևորագույն դեր է խաղում նպատակահարմարորեն ուղղված գործունեությունը։ «Հնարավորությունն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ են ամբողջ մի շարք պայմաններ, որոնց թվում կուսակցության գիծը և այդ գծի ճիշտ կիրառումը յերբեք էլ վերջին դերը չեն խաղում» (Ստալին)։ Կուսակցության ճիշտ քաղաքականության շնորհիվ՝ մեր յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորությունը վերածվել է իրականության։

**Հոլբախ** *Պոլ-Անրի (1723—1789)*—ֆրանսական փիլիսոփա մատերիալիստ, XVIII դ. հեղափոխական բուրժուազիայի խոշորագույն իդեոլոգը։ Հոլբախն ըն-

դունում էր մատերիայի գոյությունն անկախ մարդու գիտակցությունից, մատերիան համարում էր հավիտենական և անստեղծելի։ Մատերիան նա համարում էր ատոմներից բաղկացած։ Մատերիային հատուկ է ներքին շարժումը, վոր առաջ է գալիս մասնիկների մեխանիկական շարժումների և բախումների շնորհիվ։ Հոլբախն ընդունում էր միայն մեխանիկական շարժումը, ժխտելով ինքնակամ շարժումը։ Հոգին, գիտակցությունը նա համարում էր հատուկ ձևով կազմակերպված մատերիայի արտահայտություն։ Հոլբախն աթեիստ էր։ Կրոնը նա համարում էր մարդու տգիտության և հետամնացության արդյունք։ Մարդկային հասարակությանը նվիրված իր յերկերում Հոլբախը զարգացնում էր այն իդեան, թե մարդը ղեկավարվում է շահերով։ Մարդու շահերի ուղղությունը վորոշում է միջավայրը։ Միջավայրն ստեղծվում է օրենսդրությամբ։ Իսկ օրենսդիրը ղեկավարվում է կարծիքներով։ Այսպիսով Հոլբախը գալիս էր իդեալիստական յեզրակացության այն մասին, թե «աշխարհը կառավարում են կարծիքները»։ Ընդունելով ֆեոդալական հասարակակարգը վոչնչացնելու անհրաժեշտությունը՝ Հոլբախն առաջադրում էր «բնական հասարակակարգին» վերադառնալու իդեան, վորն իրականում կապիտալիստական հասարակարգ դուրս յեկավ։ Հոլբախի գլխավոր աշխատություններն են՝ «Система природы», 1770 г., «Социальная система», 1773 г.

«Естественная политика», 1773 г., «Разоблаченное христианство», 1761 г., «Здравый смысль», 1772 г.:

**Հումանիզմ** (*լատիներեն «հումանուս» — մարդկային*)—*ծագել է XIV—XVI դարերում իբրև բարձրացող բուրժուազիայի աշխարհայացք, բուրժուազիայի, վորը պայքարում եր մարդկային անձնավորության ու գիտությունը ֆեոդալիզմի և յեկեղեցու կապանքներից ազատելու համար, մարդուն և նրա բանականությանը հավատալու համար։ Վաղ բուրժուական հումանիզմի ականավոր ներկայացուցիչներն եյին Իտալիայում՝ Պետրարկան, Բոկաչչոն և ուրիշները, Գերմանիայում՝ Երազմ Ռոտերդամցին և ուրիշները։ Բուրժուական հումանիզմն իր ծաղկմանը հասավ XVIII դարում, լուսավորության դարաշրջանում։ Իշխանության հասնելով՝ բուրժուազիան հրաժարվեց հումանիստական իդեալներից և սկսեց ճնշել ազատ մտքի ամեն մի արտահայտություն։ Կապիտալիստական հասարակակարգի պայմաններում անհնարին է իսկական հումանիզմի գոյությունը։ «...Իսկական համամարդկային, պրոլետարական հումանիզմը Մարքսի—Լենինի—Ստալինի հումանիզմն է, վորի նպատակն է բոլոր ռասաների և ազգությունների աշխատավոր ժողովրդի լիակատար ազատագրումը կապիտալի յերկաթե ճիրաններից»* (Գորկի)։ *Այդ իսկական սոցիալիստական հումանիզմը գոյություն ունի միմիայն ՍՍՀՄ-ում։*

# Ձ

**Ձեվ յեվ բովանդակություն։** — *Ամեն ինչ բնության մեջ, հասարակության մեջ և մտածողության մեջ ունի իր բովանդակությունն ու իր ձևը։ Արտադրողական ուժերն իբրև բովանդակություն գոյություն ունեն արտադրական հարաբերությունների վորոշ ձևի հետ միասնաբար։ Ձևի և բովանդակության միասնության մեջ վորոշողը հանդիսանում է բովանդակությունը։ «Կոլտնտեսությունը* տնտեսական *կազմակերպության սոցիալիստական ձևն է այնպես, ինչպես վոր խորհուրդները հանդիսանում են* քաղաքական *կազմակերպության սոցիալիստական ձևը։ Ինչպես կոլտնտեսությունները, այնպես էլ խորհուրդները հանդիսանում են մեր հեղափոխության մեծագույն նվաճումը, բանվոր դասակարգի մեծագույն նվաճումը։ Բայց կոլտնտեսություններն ու խորհուրդները ներկայացնում են կազմակերպության լոկ* ձևը, *ճիշտ է՝ կազմակերպության սոցիալիստական ձևը, բայց այնուամենայնիվ* ձևը։ *Ամեն ինչ նրանից է կախված, թե ինչպիսի* բովանդակություն *կլցվի նրա մեջ»* (Ստալին)։ *Երբ բովանդակությունը, զարգանալով, հակասության մեջ է*

մտնում ձևի հետ, ապա նա դեն է նետում վերջինս։ Այդպես, կապիտալիստական հասարակության արտադրողական ուժերի զարգացումը սուր կոնֆլիկտի մեջ է մտնում արտադրական հարաբերությունների հետ, որոնք արգելակ են դարձել արտադրողական ուժերի զարգացման համար։ Պրոլետարական հեղափոխությունը լուծում է այդ հակասությունը հին արտադրական հարաբերությունները վոչնչացնելու միջոցով։ Նոր արտադրական հարաբերությունները, ծագելով նոր արտադրողական ուժերի հիման վրա, իրենց հերթին հսկայական ազդեցություն են գործում նրանց հետագա զարգացման վրա։ Որինակ, սոցիալիստական արտադրական հարաբերություններն անսահման լայն հնարավորություններ են ընձեռում արտադրողական ուժերի զարգացման համար։ Բովանդակության և ձևի դիալեկտիկան Լենինը հակիրճ կերպով արտահայտել է այսպես. «Բովանդակության պայքարը ձևի դեմ և ընդհակառակը։ Ձևը դեն նետելը, բովանդակության վերափոխումը»։

★

# Ճ

***Ճանաչողություն*** — *տես* Գնոսեոլոգիա, Արտացոլման թեորիա։

***Ճշմարտություն*** — *տես* Բացարձակ ճշմարտություն, Օբյեկտիվ ճշմարտություն, Հարաբերական ճշմարտություն, Կոնկրետ ճշմարտություն։

★

# Մ

**Մախ** *Էռնստ* (1838—1916) — ավստրիական ֆիզիկոս և փիլիսոփա-իդեալիստ: Մախի սուբյեկտիվ փիլիսոփայությունը շարադրված է նրա «Анализ ощущений», 1886 г. և «Познание и заблуждение», 1905 г. երկերում: Նրանց մեջ Մախը իրերը դիտում է որպես «փորձի տարրերի կոմպլեքսներ», որոնք զուրկ են նյութական հիմքից, իսկ մատերիան—որպես յերևույթների մի «ֆիզիկական շարք», որոնք ածանցված են առաջնային հոգեկան շարքից: Մախն ինքը, որպես ֆիզիկոս, ջանաց իդեալիստական փիլիսոփայական ուսմունք զարգացնել մասամբ բուրժուական գիտնականներին հատուկ՝ ֆիզիկայի նորագույն գյուտերից ճիշտ յեզրակացություններ անելու անկարողության ազդեցությամբ, մասամբ էլ դասակարգային պատճառների շնորհիվ—դեպի սոցիալիզմն ու բանվոր դասակարգը տածած բուրժուական ատելության պատճառով: Իր մասնագիտական ֆիզիկական հետազոտությունների մեջ Մախը յերբեմն, հակառակ իր փիլիսոփայական իդեալիզմին, կանգնում եր մատերիալիզմի դիրքերում: Մախիզմի փիլիսոփայությունը

մեծ հաջողություն ունեցավ Ֆ. Ադլերի և Օ. Բաուերի տիպի արևմտաեվրոպական «մարքսիստների» մեջ, իսկ Ռուսաստանում—«կուսակցական ինտելիգենտների մի մասի մեջ, որոնք իրենց մարքսիստ էին համարում, բայց յերբեք ամուր չէին կանգնում մարքսիզմի դիրքերում» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց), ինչպես են՝ Բոգդանովը, Լունաչարսկին, Յուշկևիչը, Վալենտինովը և ուրիշները: Մախի ուսմունքի մանրամասն շարադրանքն ու ջախջախիչ քննադատությունը պարունակում է Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» (տե՛ս) գրքը:

**Մախայսկիզմ** — թշնամական, ռեակցիոն վերաբերմունք դեպի ինտելիգենցիան, առանձնապես դեպի մարքսիստական, սոցիալիստական ինտելիգենցիան: Այդ անարխիական, հակապրոլետարական վերաբերմունքը դեպի սոցիալիստական ինտելիգենցիան իր անունն ստացել է Մախայսկու անունից: 1898 թվին լույս տեսած իր «Умственный рабочий» գրքում Մախայսկին պնդում էր, թե ինտելիգենցիան շահագործող, մակաբուծական դասակարգ է, որ աշխատանքի իր գործիքներով (գիտելիքներով) շահագործում է բանվոր դասակարգին: Ինտելիգենցիան, ըստ Մախայսկու, թշնամի յե պրոլետարիատին բոլոր պայմաններում. իսկ մարքսիստական ինտելիգենցիան, որ ձգտում է սոցիալիստական գիտակցություն մտցնել բանվոր դասակարգի մեջ, Մախայսկու կարծիքով,

պրոլետարիատի գլխավոր թշնամին է: Մախաևշչինան ռևիզիոնիզմի տարատեսակն եր: Այն ուղղված եր սոցիալիզմի դեմ, բանվոր դասակարգի քաղաքական պայքարի և պրոլետարական հեղափոխության դեմ: Մախաևականը՝ ինտելիգենցիայի դեմ ուղղված ջարդարարական ագիտացիան, վոր սերտորեն հարակցվում եր սևհարյուրակայնության հետ, խորթ և թշնամի եր առաջավոր բանվորներին և նրանց կողմից պաշտպանություն չգտավ: Պրոլետարիատի կուսակցությունը միշտ անողոք պայքար է մղել մախաևշչինայի դեմ և այժմ էլ պայքար է մղում նրա՝ ամեն տեսակ մնացուկների դեմ, վորոնք արտահայտվում են մեր խորհրդային, աշխատավոր, ժողովրդից յելած ինտելիգենցիայի նկատմամբ:

**Մախիզմ** — *տես* Էմպիրիոկրիտիցիզմ:

**Մատերիա** — *Աշխարհն իր բնությամբ նյութական է. բնության մեջ յեղած յերևույթների նկատվող բազմազանությունը ներկայացնում է շարժվող մատերիայի տարբեր ձևերը: Դիալեկտիկական մատերիալիզմը տարբերում է մատերիայի փիլիսոփայական և ֆիզիկական հասկացողությունները: Ֆիզիկական հասկացողությունը վորոշվում է մեր գիտական իմացություններով մատերիայի կազմության և հատկությունների մասին. նա չի կարող չփոխվել մատերիայի կազմության մասին յեղած գիտական իմացությունների զարգացմանը զուգընթաց: Այսպես, XIX դ. վեր-*

ջում և XX դ. սկզբում, գիտության նոր հաջողությունների հետևանքով, մեր գիտելիքները մատերիայի կառուցվածքի մասին փոփոխություններ կրեցին, հարստացան նոր գյուտերով (ռադիոակտիվություն, էլեկտրոնների թեորիա և այլն)։ Մատերիայի փիլիսոփայական հասկացողությունը, որը սերտորեն կապված է ֆիզիկականի հետ, այնպիսի սահմանում է տալիս, որն արտահայտում է մատերիայի օբյեկտիվ գոյությունը մարդու գիտակցությունից դուրս։ «Մատերիան,—գրում էր Լենինը,—մի փիլիսոփայական կատեգորիա է այն օբյեկտիվ ռեալությունը նշանակելու համար, որը տրված է մարդուն նրա զգայությունների մեջ, որն ընդօրինակվում, լուսանկարվում, արտացոլվում է մեր զգայությունների կողմից՝ գոյություն ունենալով նրանցից անկախ»։ Մատերիան ունի մի շարք էական հատկություններ, որոնցից ամենագլխավորը շարժումն է։ Մատերիան գոյություն ունի տարածության և ժամանակի մեջ, որոնք մատերիայի կեցության ձևերն են, որ անխզելիորեն կապված են մատերիայի հետ։

**Մատերիա յեվ զգայություն։**— *Մատերիալիզմը մատերիան համարում է առաջնային, իսկ գիտակցությունը, զգայությունը՝ յերկրորդային, ածանցական։ Սուբյեկտիվ իդեալիզմն առաջնային է համարում զգայությունը և մարմինները դիտում է որպես* զգայությունների կոմպլեքսներ (*տե՛ս*)։ *Մետաֆիզիկական մատե-*

րիալիզմը ճիշտ կերպով պնդում էր, որ մատերիայից դուրս չկա զգայություն և մտածողություն, բայց սխալ կերպով ենթադրում էր, թե դրանք հատուկ են ամբողջ մատերիային և թե այդ տեսակետից օրգանական և անօրգանական մատերիայի միջև եղած տարբերությունը զուտ քանակական է, միմիայն զգացողականության, գիտակցականության աստիճանի մեջ է: Դիալեկտիկական մատերիալիզմը պնդում է, որ անցումը մատերիայից դեպի զգայությունը որակական թռիչք է հանդիսանում: Պարզորեն արտահայտված ձևով զգայությունը կապված է միմիայն օրգանական մատերիայի հետ, իսկ անօրգանական մատերիայի մեջ կան միմիայն նախադրյալներն այն բանի, որպեսզի մատերիան, զարգանալով, զգալու և մտածելու ընդունակություն ձեռք բերի: «...«Մատերիայի բուն շենքի հիմքում» կարելի է միմիայն զգայությանը նման ընդունակության գոյությունը ենթադրել» (ԼԵՆԻՆ):

**Մատերիալիզմ** — *փիլիսոփայության երկու գլխավոր ուղղություններից մեկը, որ միակ ճիշտ պատասխանն է տալիս փիլիսոփայության հիմնական հարցին՝ մտածողության հարաբերության մասին դեպի կեցությունը: Ի հակադրություն իդեալիզմի՝ մատերիալիզմն առաջնայինն ընդունում է մատերիան, իսկ երկրորդայինը՝ գիտակցությունը, մտածողությունը: Մատերիալիզմի բարձրագույն ձևը մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմն է, որը հաղթահարում է*

նախկին մատերիալիստական ուսմունքների բոլոր թերություններն ու թույլ կողմերը։ Մատերիալիզմն իր զարգացման մեջ հենվել է գիտության, մասնավորապես բնագիտության վրա։ Փիլիսոփայության ամբողջ պատմության մեջ, որպես կանոն, փիլիսոփայական մատերիալիզմը յեղել է առաջավոր հասարակական դասակարգերի աշխարհայացքը, վորոնք պայքարում եյին առաջադիմության համար, շահագրգռված եյին գիտությունների զարգացումով։ Մատերիալիզմը ծնունդ առավ հին Հունաստանի դաղութ Ցոնիայում VII դ. վերջին և VI դ. սկզբին մեր թվականությունից առաջ, հին-հունական քաղաք-պետությունների գոյացման, նրանց մեջ արհեստների և առևտրի ուժգին զարգացման դարաշրջանում։ Առաջին հին-հունական մտածողների մատերիալիստական աշխարհայացքը սերտորեն կապված է գիտության առաջին քայլերի հետ։ Հին-հունական փիլիսոփաները (VI դ. մեր թվակ. առաջ), այսպես կոչված յոնիական փիլիսոփայության ներկայացուցիչները (Թալես, Անաքսիմանդր, Անաքսիմենես, Հերակլիտ) զարգացնում եյին տարերային-մատերիալիստական և նաիվ-դիալեկտիկական աշխարհայացք։ «Մատերիալիստական աշխարհայացքը հունական փիլիսոփաների մոտ սկզբում ինչ-որ ինքնըստինքյան հասկանալի մի բան եր» (Ենգելս)։ Նրանց փիլիսոփայության հիմնական պրոբլեմը նախասկզբի, նախանյութի պրոբլեմն եր։ Թալեսը բոլոր իրերի նա-

սկիզբը համարում եր ջուրը, Անաքսիմանդրը—անորոշ մատերիան՝ ապեյրոնը, Անաքսիմենեսը—օդը, Հերակլիտը—հուրը։ Էնգելսը, բնորոշելով յոնիացիների փիլիսոփայությունը, գրում եր. «...Այստեղ մեր առաջ է ամբողջությամբ նախասկզբնական տարերային մատերիալիզմը, վորն իր ծագման ժամանակ բնականաբար ինքն ըստինքյան հասկանալի յե համարում միասնությունը բնության յերևույթների անսահման բազմազանության մեջ և այն փնտրում է ինչ-վոր վորոշակի մարմնավոր, ինչ-վոր առանձնահատուկ բանի մեջ, ինչպես Թալեսը՝ ջրի մեջ»։ Իբրև աշխարհի հիմք ընդունելով զանազան նյութական սկզբունքներ, յոնիացիները աշխարհը դիտում եյին վորպես մի կապակցված ամբողջություն, իբրև այդ նախանյութերի փոփոխման և փոխակերպման անվերջ պրոցես։ Նրանք բոլորն էլ բնիկ դիալեկտիկներ եյին, աշխարհում յեղած յերևույթների ընդհանուր կապակցությունը նրանց մոտ անմիջական հայեցության հետևանքն եր։ Այդ նաիվ, բայց ըստ եյության ճիշտ հայացքն աշխարհի մասին բոլորից ավելի ցայտուն կերպով արտահայտել է Հերակլիտը (մոտ 544—484 թ. թ. մեր թվականությունից առաջ)։ Մատերիալիզմի հետագա զարգացումը կապված է գլխավորապես Անաքսագորասի (մոտ 500—428 մինչև մեր թվակ.), Եմպեդոկլեսի (մոտ 485—425 մեր թվակ. առաջ) և առանձնապես Դեմոկրիտի (460—370 մինչև մեր թվակ.), Եպիկուրի

(342—270 մինչև մեր թվակ.) և Լուկրեցիուսի (99—55 մինչև մեր թվակ.) անունների հետ։ Դեմոկրիտը, Եպիկուրը և Լուկրեցիուսը հին աշխարհի ատոմիստական մատերիալիզմի ներկայացուցիչներն եյին։ Վորպես ամեն ինչի հիմունք նրանք վերցնում եյին ատոմը—անբաժանելի, անթափանց մանրագույն նյութական մասնիկներ, վորոնք շարժվում են անսահման դատարկության մեջ։ Ձևով տարբեր այդ մասնիկների զուգորդումներից, նրանց կարծիքով, կազմվում է բնության յերևույթների ամբողջ բազմազանությունը։ Գոյություն ունեն անսահման քանակությամբ աշխարհներ։ Նրանք առաջացել են ատոմների մրրիկաձև (вихреобразный) շարժումից։ Վորոշ աշխարհներ ծագում են, մյուսները վոչնչանում են։ Դեմոկրիտի, Եպիկուրի և Լուկրեցիուսի ատոմիստական մատերիալիզմն ուղղված եր. աշխարհի ճակատագրի մեջ աստվածների միջամտության իդեայի դեմ և առհասարակ կրոնական սնահավատությունների դեմ։ Նրանք գտնում եյին, վոր հոգին նյութական է, բաղկացած է ամենաթեթև ատոմներից, և ժխտում եյին հոգու անմահությունը։ Միջին դարերում տիրապետում եյին իդեալիզմն ու սխոլաստիկան։ Փիլիսոփայությունը դարձրին աստվածաբանության աղախինը։ Սխոլաստիկայի մեջ վորոշ մատերիալիստական տենդենցներ յերևան յեկան նոմինալիստների մոտ (Դունս Սկոտուս, Վ. Օկկամ)։ Նոմինալիստները պնդում եյին, թե ընդհանուր գաղա-

փարները գոյություն չունեն իրերից առաջ, ինչպես ուսուցանում էյին ծայրահեղ ռեալիստները, այլ ընդհակի կոնկրետ իրերի անվանումներ են միայն: Գիտությունների զարգացումը և մատերիալիզմի վերածնությունը կապված է ֆեոդալական հասարակության քայքայման և արտադրության նոր, կապիտալիստական յեղանակի ձևավորման հետ: XV դ. վերջի և XVI դ. սկզբի մեծ աշխարհագրական գյուտերը (Ամերիկայի, Հնդկաստանի ծովային ճանապարհի գյուտը, շուրջերկրային ճանապարհորդությունները) ապացուցեցին յերկրի ձևի գնդակերպությունը: Կոպերնիկոսը (1473—1543) ժխտեց յեկեղեցու կողմից պաշտպանվող պատկերացումը անշարժ յերկրի մասին, վորը գտնըվում է տիեզերքի կենտրոնում, և զարգացրեց աշխարհի հելիոցենտրիկ սիստեմը, խորտակիչ հարված հասցնելով միջնադարի յեկեղեցական աշխարհայացքին: Կեպլերի (1571—1630) և Գալիլեյի (1564—1642) աշխատությունները հաստատեցին աշխարհի հելիոցենտրիկ սիստեմն իբրև միակ գիտականը, չնայած այդ ուսմունքի վրա յեկեղեցու կողմից դրված արգելքին և նրա պաշտպաններին անողոք կերպով պատժելուն: Նոր մատերիալիստական փիլիսոփայությունը, վոր ընդհանրացնում է գիտական մտքի նվաճումները, պայքար է մղում սխոլաստիկայի դեմ, յեկեղեցական հեղինակությունների դեմ, դիմում է փորձին իբրև իսկական ուսուցչի և բնության՝ իբրև փիլիսոփայու-

թյան խակական սրյնկտեին: Նոր ժամանակի մատերիալիզմի նախահայրն էր անգլիական փիլիսոփա Ֆր. Բեկոնը (1561—1626): Բեկոնը հանդես յեկավ սխոլաստիկայի դեմ, ի պաշտպանություն փորձառական գիտության. նա մեր գիտելիքների աղբյուր էր համարում զգայությունները, փորձը: Բեկոնի մատերիալիզմը, թեև մեխանիստական տենդենցներ էր պարունակում իր մեջ, սակայն դեռ միակողմանի—մեխանիկական բնույթ չընդունեց: Հոբսի (1588—1679) մոտ, վոր բեկոնյան մատերիալիզմի սիստեմատիզատորն է, մատերիալիզմը ցայտունորեն արտահայտված մեխանիկական բնույթ ընդունեց: «Զգայականությունը կորցնում է իր վառ գույները և վեր է ածվում յերկրաչափի աբստրակտ զգայականության: Ֆիզիկական շարժումը զոհ է բերվում մեխանիկական, կամ մաթեմատիկական շարժմանը» (Մարքս): Մեխանիստական մատերիալիզմ է զարգացնում իր ֆիզիկայի մեջ ֆրանսական փիլիսոփա Դեկարտը (1596—1650), իր մետաֆիզիկայի մեջ մնալով իդեալիզմի դիրքերի վրա: Փիլիսոփա Գասսենդին (1592—1655) վերակենդանացնում է Եպիկուրի ատոմիստական մատերիալիզմը և պայքարում է Դեկարտի իդեալիստական մետաֆիզիկայի դեմ: Հոլլանդական մեծ փիլիսոփա Սպինոզան (1632—1677) հաղթահարում է Դեկարտի դուալիզմը: Սպինոզան հիմք է ընդունում միասնական սուբստանցը—բնությունը: Տարածությունը և մտածողությունը նա դիտում է վոր-

պես այդ միասնական սուբստանցի անհրաժեշտ և անկապտելի հատկությունները (ատրիբուտներ)։ Աշխարհի միասնությունն ըմբռնելու և աշխարհն հենց իրենով բացատրելու ձգտումը Սպինոզայի մոտ իր արտահայտությունը գտավ այն ուսմունքի մեջ, թե սուբստանցն ինքն իր պատճառն է։ Չնայած մի ամբողջ շարք թույլ կողմերին ու թերություններին, Սպինոզայի փիլիսոփայությունն այն ժամանակվա գիտությունների հոյակապ սինթեզն է ներկայացնում։ Լոկկի (1632—1704) փիլիսոփայությունը, որ ազատ չէր իդեալիզմից և ագնոստիցիզմից, բայց զարգացնում էր մատերիալիստական այն դրույթը, թե արտաքին աշխարհից զգայարանների միջոցով ստացված ըմբռնումները իմացության աղբյուր են հանդիսանում, ազդեցություն գործեց XVIII դ. ֆրանսիական մատերիալիստների իմացության թեորիայի վրա։ Ֆրանսիական մատերիալիզմը (Լամետրի (1709—1751), Հոլբախ (1723—1789), Դիդրո (1713—1784), Հելվեցիուս (1715—1771) և ուրիշները), որ ընդհանրացրեց XVII և XVIII դ. դ. բնագիտության հաջողությունները և հանդիսացավ 1789 թվի ֆրանսիական հեղափոխության նախօրեին հեղափոխական բուրժուազիայի պայքարի թեորիական զենքը ֆեոդալական իդեոլոգիայի դեմ, առանձնապես մարտական և պրոգրեսիվ բնույթ էր կրում։ Ֆրանսիական մատերիալիստները հանդես էին գալիս որպես գիտական առաջադիմության մարտիկներ, ընդդեմ կրոնական խ-

վարմոլության, ընդդեմ XVII դ. իդեալիստական մետաֆիզիկայի: Սակայն, ֆրանսական մատերիալիզմը դուրս չեր գալիս մետաֆիզիկական մատերիալիզմի շրջանակներից, շարժման մեխանիկական ըմբռնման շրջանակներից: Հասարակական յերևույթների բացատրության մեջ ֆրանսական մատերիալիստներն իդեալիստներ եյին: Մինչմարքսյան մատերիալիզմի վերջին խոշոր ներկայացուցիչը գերմանական փիլիսոփա Լ. Ֆոյերբախն եր (1804—1872): Պայքարելով Հեգելի իդեալիզմի դեմ՝ Ֆոյերբախը պնդում եր, վոր բնությունը գոյություն ունի գիտակցությունից անկախ, վոր մարդը բնության արդյունքն ե: Սակայն Ֆոյերբախը մարդուն դիտում եր աբստրակտ կերպով, միայն իբրև մարդ ընդհանրապես, բայց վոչ թե իբրև կոնկրետ հասարակական մարդ, վոր փոփոխում ե իրեն շրջապատող աշխարհը: Չհասկանալով հասարակական պրակտիկայի նշանակությունը՝ Ֆոյերբախը մնաց հայեցական մատերիալիզմի դիրքերի վրա, իսկ հասարակական յերևույթների բացատրության մեջ մնաց իդեալիստ: Ֆոյերբախը հանդես յեկավ կրոնի խիստ քննադատությամբ: Սակայն նա ի վիճակի չեր բաց անելու կրոնի սոցիալական արմատները և հանդեց նոր կրոն հաստատելուն—սրտի կրոնը, սիրո կրոնը: Դեն գցելով Հեգելի իդեալիզմը՝ նա դեն գցեց նաև նրա դիալեկտիկան և մնաց մետաֆիզիկական մատերիալիզմի դիրքերի վրա: Միմիայն Մարքսն ու Ենգելսը—

*միակ հետևողական–հեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի իդեոլոգները,—վերամշակելով արժեքավոր այն ամենը, ինչ վոր տվել եր նախորդ գիտական և փիլիսոփայական միտքը, ստեղծեցին մատերիալիզմի բարձրագույն ձևը—դիալեկտիկական մատերիալիզմը։ Մարքսն ու Էնգելսն առաջին անգամ մատերիալիզմը տարածեցին հասարակության ճանաչողության վրա, ստեղծելով պատմական մատերիալիզմը։ Մարքսից ու Էնգելսից հետո բուրժուական փիլիսոփաներն ու գիտնականները յերբեմն փորձում եյին հարություն տալ մատերիալիզմի նախկին ձևերին, տալով նրանց պարզեցրած և վուլգար բնույթ (վուլգար մատերիալիստներ եյին Բյուխները, Ֆոխտը, Մոլեշոտը, վորոնք հանդես յեկան Գերմանիայում* XIX *դ.* 50—60-*ական թվականներին)։ Մարքսն ու Էնգելսը պայքարում եյին այդպիսի տափակ, վուլգար մատերիալիզմի դեմ։ Լենինի և Ստալինի աշխատություններում ավելի ևս զարգացրած դիալեկտիկական մատերիալիզմը հանդիսանում է բոլշևիկյան կուսակցության փիլիսոփայական աշխարհայացքը։*

**Մատերիալիզմ պատմական** — *տես* Պատմական մատերիալիզմ:

**Մատերիալիզմ վուլգար** — *տես* Վուլգար մատերիալիզմ:

**«Մատերիալիզմ յեվ եմպիրիոկրիտիցիզմ»** — *Լենինի հանճարեղ յերկը, վորի լույս տեսնելը նոր դարաշրջան*

կազմեց դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայության զարգացման մեջ։ Այդ գիրքը հանդիսացավ մարքսիստական նոր տիպի կուսակցության թեորիական նախապատրաստությունը։ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը Լենինը գրել է 1908 թ., լույս է տեսել 1909 թ. մայիսին։ Լենինի կողմից այդ փիլիսոփայական աշխատությունն ստեղծվելու անմիջական առիթ հանդիսացավ ռուսական մախիստների մերկացման անհրաժեշտությունը, վորոնք ռեակցիայի տարիներին հանդես յեկան մարքսիստական փիլիսոփայության դեմ մարքսիզմը «պաշտպանելու» դրոշակի տակ։ Սակայն Լենինի աշխատությունը շատ ավելի հեռու անցավ այդ խնդրի շրջանակներից։ Լենինը վո՛չ միայն մերկացրեց մախիստների յերկերեսանի բնույթը, այլև պաշտպանեց ու զարգացրեց նոր տիպի կուսակցության թեորիական հիմունքները և հանճարեղ կերպով ընդհանրացրեց եյական այն բոլորը, վոր ձեռք եր բերվել հեղափոխական փորձով ու գիտությամբ Ենգելսից մինչև Լենինն ընկած ամբողջ պատմական ժամանակաշրջանում։ Լենինը մերկացրեց էմպիրիոկրիտիկների ուսմունքի ռեակցիոն բնույթը և ցույց տվեց, վոր նրանք հարություն են տալիս հին իդեալիստական խլամին—յեպիսկոպոս Բերկլիի ուսմունքին և Յումի ու Կանտի ագնոստիցիզմին, գլորվում են դեպի տերտերականությունը, դեպի կրոնի պաշտպանությունը։ Լենինը հետևողականորեն զարգացրեց մարքսիզմի տեսա-

*կետը, որպես միակ ճիշտ և գիտական տվյալների վրա հիմնված տեսակետ։ Պաշտպանելով մարքսիզմը՝ Լենինը զարգացրեց արտացոլման թեորիան, ցույց տալով, որ դիալեկտիկական մատերիալիզմի իմացաբանության հիմքում դրված է օբյեկտիվ աշխարհի ընդունումը, ինչպես և մարդկային ուղեղում նրա արտացոլման ընդունումը։ Բացառիկ նշանակություն ունի հինգերորդ գլուխը, որի մեջ Լենինը տվել է բնագիտության մեջ կատարված նորագույն հեղափոխության վերլուծությունը, բազմակողմանիորեն բացահայտել է բուրժուական գիտության ճգնաժամի պատճառները և ապացուցել է, որ միմիայն դիալեկտիկական մատերիալիզմի օգնությամբ կարելի յե հաղթահարել բնագիտության մեջ առաջացած ճգնաժամը։ Գրքում լուսաբանված են բոլշևիկյան կուսակցության մեթոդոլոգիայի և աշխարհայացքի բոլոր հիմնական հարցերը։ Նա սկզբից մինչև վերջը տոգորված է խոր սկզբունքայնությամբ, բոլշևիկյան կուսակցականությամբ և մարտնչող անհաշտությամբ դեպի հեղափոխական մարքսիզմից կատարվող ամեն մի շեղում։*

**Մատերիայի փիլիսոփայական ըմբռնումը**—*տես* Մատերիա։

**Մատերիայի ֆիզիկական, կամ բնա-գիտական, ըմբռնում**—*տես* Մատերիա։

**Մարդկանց արտադրական հարաբերությունները** — *այն փոխադարձ հարաբերությունները, որոնք հա-*

տատվում են մարդկանց միջև նյութական բարիքների արտադրության պրոցեսում: Նյութական բարիքներ մարդիկ կարող են արտադրել ո՛չ թե առանձին-առանձին, ո՛չ թե մեկուսացած, այլ համատեղ, միմյան վորոշ կերպով միանալով՝ միատեղ գործունեության և այդ գործունեության արդյունքները փոխադարձաբար միմյանց հետ փոխանակելու համար: Արտադրությունը միշտ և բոլոր պայմաններում հասարակական արտադրություն է: Արտադրական հարաբերությունների տիպերը (տե՛ս) տարբեր են: Արտադրական հարաբերությունների մեջ հիմնականը — դա հարաբերությունն է դեպի արտադրության միջոցները, այսինքն թե՝ արտադրության միջոցները ում տիրակալության և տրամադրության տակ են գտնվում: Այս է վորոշում հասարակական կյանքի ամբողջ կառուցվածքը: Դասակարգային, անտագոնիստական հասարակության մեջ արտադրական հարաբերություններն արտահայտվում են դասակարգերի միջև յեղած հարաբերություններով, տիրապետության և յենթարկման հարաբերություններով: Սոցիալիզմի ժամանակ, արտադրության միջոցների հասարակական սեփականության տիրապետության ժամանակ, արտադրական հարաբերությունները շահագործումից ազատ մարդկանց համագործակցության և փոխադարձ օգնության հարաբերություններ են: Մարդկանց արտադրական հարաբերությունների փոփոխությունը տեղի յե ունե-

նում՝ արտադրողական ուժերի փոփոխությունից և զարգացումից կախված։ Բայց արտադրական հարաբերությունները արտադրողական ուժերի զարգացման պասսիվ հետևանքը չեն։ Զարգանալով վերջիններից կախված՝ նրանք իրենց հերթին ներգործում են արտադրողական ուժերի վրա, արագացնելով կամ դանդաղեցնելով այդ զարգացումը։ Արտադրության միջոցների մասնավոր կապիտալիստական սեփականությունը արդի բուրժուական հասարակության մեջ անհաշտելի հակասության մեջ է գտնվում արտադրության պրոցեսի հասարակական բնույթի հետ։ Կապիտալիզմի արտադրական հարաբերություններն արգելակում են հասարակության արտադրողական ուժերի զարգացումը։ Կապիտալիզմի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև յեղած հակասությունը սոցիալական հեղափոխության տնտեսական հիմքն է հանդիսանում։ Արտադրական հարաբերությունների արտադրողական ուժերին լրիվ համապատասխանելու օրինակ է հանդիսանում ԽՍՀՄ-ն, վորտեղ արտադրության միջոցների հասարակական սեփականությունը լրիվ համապատասխանում է արտադրության պրոցեսի հասարակական բնույթին և վորտեղ սոցիալիստական արտադրական հարաբերությունները արտադրողական ուժերի զարգացման հզոր աղբյուր են հանդիսանում։

**Մարքսիզմի աղբյուրները** — *տես* Մարքսիզմի թեորիական աղբյուրները:

**Մարքսիզմի թեորիական աղբյուրները:** — *Մարքսիզմի աղբյուրներն են՝ գերմանական կլասիկ փիլիսոփայությունը (Հեգել և Ֆոյերբախ), անգլիական քաղաքատնտեսությունը (Ա. Սմիթ, Ռիկարդո) և ուտոպիական սոցիալիզմը (Սեն-Սիմոն, Ֆուրյե, Օուեն): Գերմանական կլասիկ փիլիսոփայության ամենամեծ նվաճումը հեգելյան դիալեկտիկան էր: Բայց Հեգելի դիալեկտիկան իդեալիստական էր: Որպեսզի կարելի լիներ այն իսկական գիտական մեթոդի վերածել, պետք էր մատերիալիստականորեն վերամշակել այն: «Իմ դիալեկտիկական մեթոդը,—ասում է Մարքսը,—իր հիմքում ո՛չ միայն տարբեր է հեգելյան մեթոդից, այլև նրա ուղղակի հակադրությունն է: Հեգելի համար մտածողության պրոցեսը, որ նա իդեայի անվան տակ նույնիսկ ինքնուրույն սուբյեկտ է դարձնում, իրականի դեմիուրգն (արարիչն) է, իսկ իրականը նրա արտաքին արտահայտությունն է միայն: Ինձ համար, ընդհակառակը, իդեալականը ոչ այլ ինչ է, յեթե ոչ մարդկային գլխի մեջ փոխադրված և նրանում փոխակերպված նյութականը»: Մարքսի ու Էնգելսի մատերիալիստական դիալեկտիկայի մեջ ընդհանրացված էր դրական, առաջադիմական այն ամենը, ինչ որ ստեղծել էր գիտությունը մինչև Մարքսը: Ֆոյերբախի կարևոր*

ծառայությունն էր Հեգելի իդեալիզմի մատերիալիստական քննադատությունը։ Բայց Ֆոյերբախը, մատերիալիստ լինելով բնության երևույթների բացատրության մեջ, իդեալիստ մնաց հասարակության ըմբռնման մեջ։ Մարքսն ու Էնգելսը փիլիսոփայական մատերիալիզմը հետևողականորեն տարածեցին նաև հասարակական երևույթների բացատրության վրա։ «...Իդեալիզմն արտաքսվեց իր վերջին ապաստարանից, պատմության բնագավառից, պատմության ըմբռնումն այժմ մատերիալիստական դարձավ» (Էնգելս)։ Անգլիական քաղաքատնտեսությունը արժեքի աշխատանքային թեորիայի սկիզբը դրեց։ Բայց Սմիթի ու Ռիկարդոյի ուժերից վեր յեղավ ըմբռնել ապրանքային-կապիտալիստական տնտեսության պատմական առանձնահատկությունը, վարձու աշխատանքի շահագործումն իբրև հավելյալ արժեքի աղբյուր։ Սմիթն ու Ռիկարդոն կապիտալիստական կարգերի վրա նայում էին իբրև հավիտենական և բնական հասարակակարգի վրա։ Կապիտալիզմի՝ վորպես պատմականորեն վորոշ հասարակական-տնտեսական կարգի զարգացման որենքները հայտնագործեց միմիայն Մարքսը։ Մարքսը բացահայտեց, վոր կապիտալիստական շահագործման հիմքը հավելյալ արժեքն է։ «Հավելյալ արժեքի ուսմունքը Մարքսի տնտեսագիտական թեորիայի անկյունաքարն է» (Լենին)։ Ստեղծելով հավելյալ արժեքի թե-

*որի՝ Մարքսը ցույց տվեց, որ կապիտալիզմը հիմնվում է վարձու աշխատանքի շահագործման վրա և իր զարգացման ընթացքում անխուսափելիորեն կործանման է հանգելու: Մարքսիզմի չորրորդ աղբյուրը ուտոպիական սոցիալիզմն է: Ուտոպիական սոցիալիզմը սուր և համարձակ կերպով քննադատում էր կապիտալիզմի հակասությունները, նրան հակադրելով սոցիալիզմի՝ որպես ամենից ավելի կատարյալ հասարակակարգի՝ իդեան: Բայց ուտոպիստներն իրենց պատմական սահմանափակության շնորհիվ չէին կարողանում բացատրել վարձու ստրկության էությունը կապիտալիզմի ժամանակ, կապիտալիզմի զարգացման օրենքները և պրոլետարիատի նշանակությունը որպես սոցիալիզմ ստեղծողի: Մարքսն ու Ենգելսը սոցիալիզմի մասին յեղած յերազանքները դարձրին գիտություն, գիտական սոցիալիզմ, մատնանշելով, որ պատմության շարժիչ ուժը դասակարգային պայքարն է: Մարքսն ապացուցեց, որ սոցիալիզմին անցնելու միակ ուղին պրոլետարիատի հեղափոխական շարժման ուղին է, պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի ուղին:*

**Մարքսիզմի իմացության թեորիան, իմացաբանությունը** — *տես* Արտացոլման թեորիա:

**Մարքսիզմ-լենինիզմ** — *պրոլետարիատի ազատագրական շարժման թեորիան, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան և տակտիկան, կոմունիստական*

*հասարակության կառուցման թեորիան: «Փիլիսոփայության պատմությունը և սոցիալական գիտության պատմությունը լիակատար պարզությամբ ցույց են տալիս, որ մարքսիզմի մեջ չկա համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեծ ճանապարհից* մի կողմ *ծագած «աղանդավորության» նման մի բան՝ ինքն իր մեջ ամփոփված, քարացած ինչ-որ ուսմունքի իմաստով: Ընդհակառակը, Մարքսի ամբողջ հանճարեղությունը հենց այն է, որ նա տվեց այն հարցերի պատասխանը, որ մարդկության առաջավոր միտքն արդեն դրել էր: Նրա ուսմունքն առաջ եկավ որպես փիլիսոփայության, քաղաքատնտեսության և սոցիալիզմի մեծագույն ներկայացուցիչների ուսմունքի ուղղակի և անմիջական* շարունակություն» (ԼԵՆԻՆ)*: Մարքսիզմի փիլիսոփայությունը — դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը կազմում են կոմունիզմի թեորիական հիմքը, մարքսիստական կուսակցության թեորիական հիմքը: Վճռականորեն պաշտպանելով փիլիսոփայական մատերիալիզմն այն աղավաղելու բոլոր փորձերից, պայքարելով փիլիսոփայական իդեալիզմի զանազան ձևերի դեմ, Մարքսն ու Էնգելսը կանգ չառան* XVIII *դ. մատերիալիզմի վրա, այլ առաջ մղեցին փիլիսոփայությունը, այն հարստացնելով գերմանական կլասիկ փիլիսոփայության, առանձնապես Հեգելի սիստեմի նվաճումներով, որն իր հերթին հասցրեց Ֆոյերբախի մատերիալիզ-*

*մին: Այդ նվաճումներից կարևորագույնը* դիալեկտիկան *է: Մարքսիզմի հոգին մատերիալիստական* դիալեկտիկան *է, «զարգացման ուսմունքն՝ իր ամենից ավելի լրիվ, խորը և միակողմանիությունից ազատ ձևով, մարդկային գիտության հարաբերականության ուսմունքը, վորովհետև գիտությունը մեզ պատկերացում է տալիս հավերժապես զարգացող մատերիայի մասին»* (Լենին): *«Խորացնելով և զարգացնելով փիլիսոփայական մատերիալիզմը, Մարքսն այն հասցրեց մինչև վերջը, բնության նրա ճանաչողությունը տարածեց* մարդկային հասարակության *ճանաչողության վրա: Գիտական մտքի մեծագույն նվաճումը հանդիսացավ Մարքսի* պատմական մատերիալիզմը: *Պատմության և քաղաքականության վերաբերյալ հայացքներում մինչև այդ իշխող քաոսն ու կամայականությանը փոխարինեց զարմանալի ամբողջական և ներդաշնակ գիտական թեորիան, վորը ցույց է տալիս, թե ինչպես հասարակական կյանքի մի ձևից, արտադրողական ուժերի աճման հետևանքով, զարգանում է մի ուրիշը, ավելի բարձրը,—ճորտատիրությունից, օրինակ, զարգանում է կապիտալիզմը»* (Լենին): *Վորպես հակակշիռ իդեալիստական թեորիաների, վորոնք հասարակության զարգացման հիմք ընդունում են իդեաները, բանականությունը, Մարքսն ապացուցեց, վոր տնտեսակարգը, արտադրության նյութական պայմանները, և վոչ թե իդեաներն են այն հիմքը,*

վորի վրա բարձրանում են քաղաքական և այլ վերնաշենքերը, վոր անտագոնիստական դասակարգերի բաժանված հասարակությունների մեջ զարգացման շարժիչ ուժը դասակարգային պայքարն է։ Մարքսի գլխավոր աշխատությունը—«Կապիտալը» նվիրված է կապիտալիստական հասարակության տնտեսակարգի ուսումնասիրմանը։ Իրերի հարաբերությունների հետևը (ապրանքների փոխանակություն) Մարքսը բացահայտեց և ցույց տվեց մարդկանց միջև յեղած իսկական հարաբերությունները։ Իր հավելյալ արժեքի թեորիայի մեջ Մարքսը բացահայտեց կապիտալիստների դասակարգի հարստության աղբյուրը։ «Հավելյալ արժեքի ուսմունքը Մարքսի տնտեսագիտական թեորիայի անկյունաքարն է» (Լենին)։ Հետազոտելով արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացման օրենքները՝ Մարքսը հիմնավորեց նրա կործանման և կոմունիզմի հաղթության անխուսափելիությունը։ Ֆեոդալական հասարակակարգին փոխարինելու յեկած կապիտալիզմն ավելի պրոգրեսիվ հասարակակարգ եր։ Բայց աշխատավորների շահագործման և ճնշման մի ձևը փոխարինվեց մյուսով։ Իբրև կապիտալիստական ճնշման արտացոլում և բողոք նրա դեմ՝ սկսեցին ծագել զանազան սոցիալիստական ուսմունքներ։ Բայց սկզբնական սոցիալիզմը ուտոպիական սոցիալիզմ եր. նա խիստ քննադատում, դատապարտում եր կապիտալիստական կարգերը, յերազում եր ավելի լավ հասա-

րակարգի մասին, վորտեղ շահագործում չի լինի, բայց իսկական յելք ցույց տալ նա չկարողացավ: Մարքսն ու Էնգելսն էին, վոր առաջին անգամ սոցիալիզմը յերազանքից գիտության վերածեցին: Նրանք պարզաբանեցին բանվոր դասակարգի համաշխարհային-պատմական դերը՝ վորպես կապիտալիզմի գերեզմանափորի, վորպես սոցիալիստական հասարակության ստեղծողի: Մարքսիզմի մեջ գլխավորը պրոլետարիատի դիկտատուրայի ուսմունքն է: Մարքսը գրում էր, վոր «կապիտալիստական և կոմունիստական հասարակության միջև ընկած է առաջինը հեղափոխականորեն յերկրորդին վերածելու ժամանակաշրջանը», վոր «այդ ժամանակաշրջանի պետությունը չի կարող լինել վոչ այլ ինչ, յեթե վոչ պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա»: Մարքսիզմը բանվոր դասակարգին զինեց հեղափոխական թեորիայով բուրժուազիայի դեմ նրա մղած պայքարում, մինչև այդ տարերայնորեն զարգացող բանվորական շարժմանը սոցիալիստական ուղղություն տվեց: Մասսաների վրա մարքսիստական իդեաների ազդեցության հենց առաջին իսկ արտահայտումների ժամանակ «հին Յեվրոպայի բոլոր ուժերը միավորվեցին» մարքսիզմի դեմ «սրբազան հալածանք» սկսելու համար: Բուրժուազիան պայքարում էր և պայքարում է մարքսիզմի դեմ վոչ միայն բռնությամբ: «Պատմության դիալեկտիկան այնպես է, վոր մարք-

սիզմի թեորիական հաղթությունը նրա թշնամիներին հարկադրում է վերազգեստավորվել որպես մարքսիստներ։ Ներքուստ փտած լիբերալիզմը փորձում է իրեն վերակենդանացնել որպես սոցիալիստական օպորտունիզմ» (ԼԵՆԻՆ)։ «Օպորտունիզմը միշտ մարքսիստական թեորիայի և նրա առանձին դրույթների ու եզրակացությունների ուղղակի ժխտում չի նշանակում։ Օպորտունիզմը յերևան է գալիս յերբեմն մարքսիզմի արդեն հնացած առանձին դրույթներից կառչելու և նրանք դոգմաների վերածելու փորձերի մեջ, որպեսզի դրանով իսկ կասեցնի մարքսիզմի հետագա զարգացումը,—հետևաբար,—կասեցնի նաև պրոլետարիատի հեղափոխական շարժման զարգացումը» (Համ. Կ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Մարքսիզմը ստեղծագործական գիտություն է։ Մարքսիզմի հիմնադիրներն իրենց թեորիան միշտ դիտում էին որպես հեղափոխական թեորիա, որպես գործողության ուղեցույց։ Էնգելսի մահից հետո ամենամեծ թեորետիկ Լենինը, իսկ Լենինի մահից հետո—Ստալինըն ու Լենինի մյուս աշակերտները միակ մարքսիստներն էին, որոնք ո՛չ միայն անողոքաբար մերկացրին բոլոր յերանգների օպորտունիստներին և պաշտպանեցին մարքսիզմը խեղաթյուրումից, այլև վիթխարի չափով առաջ մղեցին մարքսիստական թեորիան, այն հարստացրին նոր փորձով, պրոլետարիատի դասակարգային պայքարի նոր պայմաններում։ Նրանք

պրակտիկ կերպով, գործով ցույց տվին ստեղծագործական մարքսիզմի ամենազորությունը։ Մարքսիզմ-լենինիզմը բանվոր դասակարգի միասնական, անքակտելի, ամբողջական գիտական աշխարհայացքն է։ Մարքսն ու Էնգելսն աշխատում ու պայքարում էյին դեռևս վերընթաց գծով զարգացող արդյունաբերական կապիտալիզմի ժամանակաշրջանում, հեղափոխության համար պրոլետարիատի նախապատրաստվելու ժամանակաշրջանում։ Լենինն ու Ստալինը, Մարքսի ու Էնգելսի հանճարեղ աշակերտները, հանդես յեկան իմպերիալիզմի ժամանակաշրջանում, փտող կապիտալիզմի ժամանակաշրջանում, պրոլետարական հեղափոխությունների ժամանակաշրջանում, այն ժամանակաշրջանում, յերբ պրոլետարական հեղափոխությունն արդեն հաղթել է մի յերկրում և բաց է արել պրոլետարական դեմոկրատիայի դարաշրջանը, Խորհուրդների դարաշրջանը, սոցիալիզմի կառուցման դարաշրջանը։ «Ահա ինչու լենինիզմը հանդիսանում է մարքսիզմի հետագա զարգացումը» (Ստալին)։ Լենինիզմը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն է։ «...Վոչ մի «նոր սկզբունք» Լենինը չի «ավելացրել» մարքսիզմին, ինչպես վոր Լենինը չի վերացրել նաև մարքսիզմի «հին» սկզբունքներից վոչ մեկը» (Ստալին)։ Ամբողջությամբ և լիովին հենվելով մարքսիզմի սկզբունքների վրա՝ Լենինը զարգացրեց մարքսիզմը նոր պայ-

մաններին, կապիտալիզմի նոր փուլին համապատասխան։ Ընկեր Ստալինն ամերիկյան առաջին բանվորական պատգամավորության հետ ունեցած զրույցում ցույց տվեց այն նորը, ինչ վոր մտցրել է Լենինը մարքսիզմի գանձարանը։ Նախ և առաջ՝ նա մշակեց իմպերիալիզմի՝ վորպես կապիտալիզմի նոր փուլի հարցը։ «Լենինի մատուցած ծառայությունը և, հետևապես, Լենինի մոտ նորն այստեղ այն է, վոր նա, հենվելով «Կապիտալի» հիմնական դրույթների վրա, տվեց իմպերիալիզմի՝ վորպես կապիտալիզմի վերջին փուլի հիմնավորված մարքսիստական անալիզը, բաց անելով նրա խոցերն ու նրա անխուսափելի կործանման պայմանները։ Այս անալիզի բազայի վրա ծագեց Լենինի հայտնի դրույթն այն մասին, վոր իմպերիալիզմի պայմաններում հնարավոր է սոցիալիզմի հաղթությունն առանձին, ջոկ վերցրած կապիտալիստական յերկրներում» (Ստալին)։ Այնուհետև, Լենինը զարգացրեց մարքսյան իդեան պրոլետարիատի դիկտատուրայի մասին, հայտնագործելով Խորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև. Լենինը պրոլետարիատի դիկտատուրան բնորոշեց վորպես դաշինքի հատուկ ձև վոչ-պրոլետարական դասակարգերի (գյուղացիության և այլն) չահագործվող մասսաների հետ, նա ցույց տվեց, վոր պրոլետարական դիկտատուրան դեմոկրատիայի ա մ ե ն ա բ ա ր ձ ր տիպն է դասակարգային հասարա-

կության պայմաններում։ Լենինիզմի մեջ գլխավորը պրոլետարիատի դիկտատուրան է, վորը լենինիզմի ուսմունքը դարձնում է «բոլոր յերկրների պրոլետարների ինտերնացիոնալ ուսմունքը, վորը պիտանի և պարտադիր է առանց բացառության բոլոր յերկրների համար, այդ թվում նաև կապիտալիստորեն զարգացած յերկրների համար» (Ստալին)։ Լենինը նոր պայմաններում, կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու ժամանակաշրջանում, կապիտալիստական պետություններով շրջապատված յերկրում նոր ձևով դրեց սոցիալիզմի հաղթող կառուցման ձևերի և յեղանակների հարցը։ Լենինը հիմնավորեց սոցիալիստական հասարակության կառուցելու հնարավորությունը կապիտալիստական պետություններով շրջապատված պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում այն պայմանով, վոր յերկիրը չի խեղդվի ռազմական ինտերվենցիայի կողմից։ Լենինը ցույց տվեց սոցիալիզմի կառուցման կոնկրետ ձևերն ու ուղիները, ապացուցելով, վոր մեզանում կա այն բոլորը, ինչ անհրաժեշտ է սոցիալիզմի հաղթության համար։ Այնուհետև, Լենինը զարգացրեց պրոլետարիատի հեգեմոնիայի մարքսյան իդեան. Նա այդ իդեան ծավալեց–դարձրեց «պրոլետարիատի հեգեմոնիայի մի ներդաշնակ սիստեմ, քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաներին պրոլետարիատի կողմից ղեկավարվելու մի ներդաշնակ սիստեմ վո՛չ միայն ցարիզմն ու կապիտալիզմը տապալելու գործում, այլև

սոցիալիստական շինարարության գործում պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ» (Ստալին)։ Հենվելով ազգային-գաղութային հարցի վերաբերյալ մարքսյան իդեաների վրա՝ Լենինը զարգացրեց դրանք նոր դարաշրջանին համապատասխան, ի մի հավաքեց և տվեց իմպերիալիզմի դարաշրջանի ազգային-գաղութային հեղափոխությունների վերաբերյալ հայացքների մի ներդաշնակ սիստեմ։ Լենինը ցույց տվեց, որ ազգային-գաղութային հարցի լուծումն անքակտելիորեն կապված է իմպերիալիզմի տապալման հետ, «ազգային-գաղութային հարցը միջազգային պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասը հայտարարեց» (Ստալին)։ Լենինը ռուսական և ամբողջ միջազգային բանվոր դասակարգին տվեց մի ներդաշնակ ուսմունք կուսակցության մասին, այդ կուսակցության ծրագրային, քաղաքական, տակտիկական և կազմակերպական հիմունքների մասին—նոր տիպի կուսակցության, որը արմատապես տարբերվում է II Ինտերնացիոնալի կուսակցություններից, որոնք ամբողջովին վարակված են օպորտունիզմով։ Մարքսի—Էնգելսի—Լենինի թեորիան իր հետագա զարգացումն ստացավ Ստալինի աշխատություններում։ Ստալինը ո՛չ միայն անողոքաբար մերկացրեց թշնամիներին, ո՛չ միայն թշնամիներից պաշտպանեց մեր կուսակցության միասնությունը, միաձուլությունը և մաքրությունը, այլև զարգացրեց

ու առաջ տարավ Լենինի ուսմունքը կուսակցության մասին։ Լենինի ուսմունքի հիման վրա ընկեր Ստալինն ավելի ևս զարգացրեց սկզբնապես միքանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորության թեորիան, ինչպես և իմպերիալիզմի պայմաններում բոլոր յերկրներում միաժամանակ սոցիալիզմի հաղթելու անհնարինության թեորիան, ավելի ևս զարգացրեց Լենինի մեծ իդեաները յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին։ Ընկեր Ստալինը մշակեց գյուղը սոցիալիստական վերափոխման յենթարկելու ուղիների և համատարած կոլեկտիվացման բազայի վրա կուլակության վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու հարցը։ Ընկեր Ստալինը մշակեց և ավելի ևս զարգացրեց Մարքսի—Էնգելսի—Լենինի ուսմունքը սոցիալիզմի ժամանակվա, կապիտալիստական շրջապատման պայմաններում գտնվող պետության մասին։ Նա զինեց կուսակցությանն ու Խորհրդային Միության ժողովրդին նոր պայմաններում մղվող դասակարգային պայքարի օրենքների գիտությամբ, ցույց տվեց պրոլետարական պետության դերը կոմունիզմի նվաճումները պաշտպանելու գործում։ Ընկեր Ստալինն ավելի ևս զարգացրեց Մարքսի—Էնգելսի—Լենինի ուսմունքը սոցիալիզմի և կոմունիզմի մասին։ Նա ցույց տվեց, վոր ստախանովյան շարժումը նախապատրաստում է սոցիալիզմից

կոմունիզմին անցնելու պայմանները։ Ստալինի ղեկավարությամբ գիտական կոմունիզմի հիմնական դրույթներն արդեն իրականացած են ՍՍՀՄ-ում գործնականապես և ֆիքսացիայի յեն յենթարկված աշխարհի առաջին սոցիալիստական պետության՝ ՍՍՀՄ Սահմանադրության մեջ։ Ստալինյան Սահմանադրության մեջ ընդհանրացված է ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակության կառուցելու հսկայական փորձը։ Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու դժվարագույն պրոբլեմները, քաղաքի և գյուղի միջև յեղած, ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև յեղած հակադրության վերացման պրոբլեմները, վորոնք Մարքսի, Էնգելսի և Լենինի կողմից նշված եյին ընդհանուր գծերով, մշակվել են ընկեր Ստալինի կողմից և նրա ղեկավարությամբ գործնականապես լուծվում են։ Ընկեր Ստալինն ուսուցանում է, վոր սոցիալիզմի ժամանակաշրջանում պատմական խնդիրների կենտրոնական օղակն այն խնդիրն է, վոր խորհրդային ինտելիգենցիայի կադրերը տիրապետեն մարքս-լենինյան թեորիային։ Իսկ մարքսիզմ-լենինիզմին տիրապետել՝ նշանակում է սովորել տարբերել նրա տառը նրա եյությունից, յուրացնել նրա եյությունը, սովորել օգտվել նրանից դասակարգային պայքարի տարբեր պայմաններում, կարողանալ հարստացնել, զարգացնել ու առաջ շարժել այն՝ պատմական նոր իրադրության և նոր խնդիրներին համապատասխան կերպով։

*Մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու հզոր զենք է հանդիսանում ընկեր Ստալինի անձնական մասնակցությամբ մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեի ստեղծած «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը»:*

**Մարքսիստական դիալեկտիկական մեթոդը** — *բնորոշվում է հետևյալ հիմնական գծերով. 1) Դիալեկտիկական մեթոդը բնությունը դիտում է իբրև մի միասնական, կապակցված ամբողջություն, որտեղ առարկաներն ու յերևույթները կախված են միմյանցից, պայմանավորում են միմյանց. ամեն ինչ կապակցության և փոխադարձ ներգործության մեջ է գտնվում—այսպես է դիալեկտիկայի պնդումը: 2) Դիալեկտիկական մեթոդը բնությունը դիտում է իբրև անընդհատ փոփոխման և նորոգման վիճակում գտնվող, որտեղ միշտ մի ինչ-որ բան ծագում է ու զարգանում, մի ինչ-որ բան քայքայվում է և իր դարն անցկացնում. ամեն ինչ շարժման և փոփոխության մեջ է գտնվում—ուսուցանում է դիալեկտիկան: 3) Դիալեկտիկան բնության զարգացումը դիտում է իբրև մի պրոցես, որի մեջ աննկատելի և աստիճանական քանակական փոփոխությունների կուտակման հետևանքով տեղի յեն ունենում թռիչքաձև անցում դեպի արմատական, որակական փոփոխությունները. քանակը փոխվում է որակի—այս է դիալեկ-*

տիկական մեթոդի հիմնական դրույթներից մեկը։ Ըստ դիալեկտիկայի՝ զարգացումն անցածի հասարակ կրկնությունը չէ, այլ առաջընթաց շարժում և ստորին աստիճանից դեպի ավելի բարձրը։ 4) Դիալեկտիկայի ելակետն այն է, որ բնության առարկաներին ու երևույթներին հատուկ են ներքին հակասություններ, որ ամեն ինչ ունի իր բացասական և դրական կողմը, իր ժամանակին անցկացնող և զարգացող կողմը և որ իր ժամանակին անցկացնողի և զարգացողի միջև եղած պայքարն է կազմում զարգացման պրոցեսի, քանակական փոփոխությունները որակական փոփոխությունների վերածվելու պրոցեսի ներքին բովանդակությունը. Հակասությունը դեպի առաջ է տանում—սա էլ դիալեկտիկայի կարևորագույն դրույթներից մեկը։ Դիալեկտիկայի այս դրույթները բնության զարգացման մասին վերաբերում են նաև հասարակության զարգացմանը։ Յուրաքանչյուր տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիա (ստրկատիրական հասարակակարգ, ֆեոդալիզմ, կապիտալիզմ, սոցիալիզմ) մի միասնական ամբողջություն է ներկայացնում, որտեղ առանձին կողմերն ու երևույթները (նյութական բարիքների արտադրության եղանակը, քաղաքական կառուցվածքը, կյանքի հոգևոր պրոցեսները) իրար հետ կապակցված են իբրև մի ամբողջություն, փոխադարձ ներգործության մեջ են գտնվում։ Հասարակական իդեա-

ները, քաղաքական հիմնարկությունները, իրենց արմատներն ունենալով հասարակության կյանքի նյութական պայմանների մեջ, հասարակական կեցության վրա փոխադարձ ներգործություն են անում, ընդվորում այդ փոխներգործության հիմքը կազմում է նյութական բարիքների արտադրության յեղանակը: Այն փաստը, վոր հասարակության պատմության մեջ միքանի հասարակական-տնտեսական ֆորմացիաներ փոխարինվել են մյուսներով, վկայում է այն մասին, վոր հասարակական կյանքում ևս տեղի յե ունենում շարժում, փոփոխություն, հինի կործանում և նորի ծագում: Մեկ հասարակական-տնտեսական ֆորմացիայի փոխարինվելը մյուսով՝ թռիչքաձև, հեղափոխական անցումն է մի վորակական վիճակից մի այլ վորակական վիճակի, վորպես հետևանք քանակական փոփոխությունների կուտակման: Այդպես, պրոլետարիատի ուժերի աստիճանական կուտակումը (նրա քանակության, կազմակերպվածության, նրա դասակարգային ինքնագիտակցության աճումը, բոլոր աշխատավորների և շահագործվողների հետ նրա ունեցած կապերի աճումը) սոցիալիստական հեղափոխության հաղթության հետևանքով հասցնում է այն բանին, վոր պրոլետարիատը ճնշված և շահագործվող դասակարգից, վորպիսին նա հանդիսանում է կապիտալիզմի ժամանակ, դառնում է իշխող և հասարակության զարգացումը դեպի կոմունիզմ ուղղող դա-

սակարգ։ Իսկ յուրաքանչյուր նոր պատմական ֆորմացիա ավելի պրոգրեսիվ, ավելի բարձր աստիճան է ներկայացնում նրան նախորդող հասարակական ֆորմացիայի վերաբերմամբ. կապիտալիզմն ավելի բարձր կացութաձև է, քան ֆեոդալիզմը. սոցիալիզմը կապիտալիզմի համեմատությամբ անչափ ավելի բարձր աստիճան է ներկայացնում։ Մի հասարակական-տնտեսական ֆորմացիայից դեպի մյուսն ընթացող զարգացման այս պրոցեսի ներքին բովանդակությունը բոլոր դասակարգային ֆորմացիաներում տեղի ունեցող պայքարն է դասակարգերի միջև, վոր արտահայտում է ներքին հակասությունն արտադրության բուն յեղանակի մեջ—արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև։ Այսպիսով, հասարակության պատմությունը և բնության պատմությունը վկայում են այն մասին, վոր աշխարհում ամեն ինչ կատարվում է դիալեկտիկորեն։ Մարքսիստական դիալեկտիկան ուսուցանում է ճիշտ մոտեցում բնության և հասարակության յերևույթներին, հանդիսանում է աշխարհի ուսումնասիրության և իմացության գիտական մեթոդը և ծառայում է վորպես գործողության ուղեցույց։ Մարքսիստական դիալեկտիկական մեթոդի կարևորագույն պահանջն է՝ ձեռք բերված ճշմարտությունների ստուգումը պրակտիկայում, մարդկանց պրակտիկ գործունեության հետ կապված բոլոր փոփոխությունների հաշվառումը։

*Մարքսիստական դիալեկտիկայի դրույթներից բխում են մի շարք կարևորագույն ղեկավար սկզբունքներ քաղաքականության և տակտիկայի մեջ, վորոնց միշտ հետևել է և հետևում է Լենինի—Ստալինի կուսակցությունը: Մարքս—լենինյան դիալեկտիկան ուսուցանում է, վոր ճիշտ քաղաքականություն վարելու համար պետք է կողմնորոշվել դեպի հասարակության այն խավերը, վորոնք զարգանում են և ապագա ունեն, պետք է դեպի առաջ նայել և վոչ թե դեպի հետ, հեղափոխական լինել և վոչ թե ռեֆորմիստ, անհաշտ դասակարգային պրոլետարական քաղաքականություն կիրառել: Լենինն ու Ստալինը դիալեկտիկան և դիալեկտիկական մեթոդն անվանում են մարքսիզմի հոգին: Լենինի ու Ստալինի ամբողջ թեորիական գործունեությունը Մարքսի ու Ենգելսի դիալեկտիկական մեթոդի հետագա մանրամասն մշակումն ու կոնկրետացումն է:*

**Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմ** — *մատերիալիզմի բարձրագույն ձևը: Հին մատերիալիզմը մեխանիկական մատերիալիզմ եր. շարժման ամենապարզ, մեխանիկական ձևի որենքները նա տարածում եր բնության և հասարակության բոլոր յերևույթների վրա: Մարքսիստական մատերիալիզմը հենվում է նյութական շարժման բոլոր ձևերն ուսումնասիրող բոլոր գիտությունների նվաճումների վրա: Հին մատերիալիզմը մետաֆիզիկական մատերիալիզմ*

*էր, այսինքն՝ նա դիտում էր աշխարհը հանգստի ու անփոփոխության վիճակում։ Մարքսիստական մատերիալիզմը դիալեկտիկական մատերիալիզմ է, վորովհետև նա բնությունն ու հասարակությունը դիտում է նրանց անընդհատ զարգացման և վերանորոգման մեջ։ Հին մատերիալիզմը չէր կարողանում մատերիալիստորեն բացատրել հասարակական յերևույթները։ Մարքսիստական մատերիալիզմն առաջին անգամ դիալեկտիկական մատերիալիզմի դրույթները կիրառեց հասարակության բացատրության համար և հիմնավորեց պատմության մատերիալիստական ըմբռնումը։ Հին մատերիալիզմը հայեցողական մատերիալիզմ էր, վորովհետև նա չէր հասկանում մարդկային պրակտիկ գործունեության փոխակերպիչ դերը։ Հին մատերիալիստները «մարդու էությունը» հասկանում էյին աբստրակտ կերպով, և վոչ թե վորպես «բոլոր հասարակական հարաբերությունների» (կոնկրետ-պատմականորեն վորոշված) «միակցություն» և այդ պատճառով էլ միայն աշխարհը «բացատրում էյին» այն ժամանակ, յերբ խնդիրը վերաբերում է նրա «փոփոխմանը», այսինքն՝ չէյին հասկանում «հեղափոխական պրակտիկ գործունեության» նշանակությունը* (Լենին)։ *Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմն աշխարհի իմացության և վերափոխման մի հզոր գործիք է։ Մարքսիստական մատերիալիզմը մինչև վերջը թշնամի յե իդեալիզմին, կրոնին, տերտերա-*

կանության։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի հիմնական գծերն են. 1) աշխարհի նյութականության ընդունումը, այն բանի ընդունումը, վոր աշխարհը զարգանում է մատերիայի շարժման օրենքներով. 2) մատերիայի առաջնայնության ու օբյեկտիվ ռեալության և գիտակցության յերկրորդայնության ընդունումը. 3) նյութական աշխարհի և նրա օրինաչափությունների իմանալիության ընդունումը, գիտական իմացությունների օբյեկտիվ ճշմարտականության ըմբռնումը։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը յելնում է այն բանից, վոր աշխարհն իր բնությամբ նյութական է, վոր աշխարհում յերևվույթները շարժվող մատերիայի զանազան ձևերն են ներկայացնում։ Մարքսիստական մատերիալիզմն ապացուցում է, վոր բնության բոլոր բազմազան մարմինները—ատոմի ամենամանր մասնիկներից մինչև հսկայական մոլորակները, ամենամանր բակտերիաներից մինչև բարձրագույն կենդանիները, մինչև մարդը—հանդիսանում են մատերիա զանազան ձևով և նրա զարգացման տարբեր աստիճաններում։ Ի հակադրություն իդեալիզմի, վորն ընդունում է աշխարհի ստեղծումն աստծու (կամ «բացարձակ իդեայի» «համաշխարհային վոգու», գիտակցության) կողմից, մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմն յելնում է այն բանից, վոր մատերիան գոյություն ունի հավիտենապես, վոչ վոքի կողմից ստեղծված չէ, վոր աշ-

*խարհը զարգանում է մատերիայի օրենքներով և վոչ մի «համաշխարհային վոգու» կարիք չի զգում։ Ի հակադրություն իդեալիզմի, վորը պնդում է, թե ռեալ կերպով գոյություն ունի միմիայն մեր գիտակցությունը, թե նյութական աշխարհը, կեցությունը, բնությունը գոյություն ունեն միմիայն մեր գիտակցության մեջ, մեր զգայություններում, հասկացողություններում, մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը ելնում է այն բանից, վոր մատերիան, բնությունը, կեցությունը ներկայացնում են օբյեկտիվ ռեալություն, վորը գոյություն ունի գիտակցությունից դուրս և նրանից անկախ, վոր մատերիան առաջնային է, իսկ գիտակցությունը՝ երկրորդային, ածանցական է, վորովհետև նա մատերիայի արտացոլումն է, վոր մտածողությունը իր զարգացման մեջ կատարելության բարձր աստիճանին հասած մատերիայի արդյունքն է, ուղեղի արդյունքն է։ Մարքսիստական մատերիալիզմը, լիովին համաձայն բնագիտության հետ, իբրև առաջնային տվյալ է ընդունում մատերիան, երկրորդային համարելով զգայությունը, գիտակցությունը։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը հետևողականորեն վճռում է փիլիսոփայության հիմնական հարցի նաև մյուս կողմը—մեր մտածողությունն ընդունա՞կ է արդյոք ճանաչելու իրական աշխարհը։ Ի հակադրություն իդեալիզմի, վորն առարկում է աշխարհի և նրա*

օրինաչափությունների իմացության հնարավորության դեմ, չի հավատում մեր գիտելիքների ստույգ լինելուն, մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը յելնում է այն բանից, որ աշխարհն ու նրա օրինաչափությունները միանգամայն իմանալի յեն։ Մարքսիստական մատերիալիզմը ասում է, որ մարդկային պրակտիկան վճռական ապացույց է մեր գիտելիքների ճշմարտականության, որ աշխարհում անիմանալի իրեր չկան, այլ կան միայն դեռևս չճանաչված իրեր, որոնք կբացահայտվեն և կճանաչվեն գիտության ու պրակտիկայի ուժերով։ Հսկայական նշանակություն ունի մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի դրույթների կիրառումը հասարակության պատմության և պրոլետարիատի կուսակցության պրակտիկ գործունեության վերաբերմամբ։ «Մարքսիզմ-լենինիզմի ուժն ու կենսականությունն այն է, որ նա իր պրակտիկ գործունեության մեջ հենվում է հենց հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջի վրա, յերբեք չկտրվելով հասարակության ռեալ կյանքից» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Պրոլետարիատի մարքսիստական կուսակցության պրակտիկ գործունեությունը հիմնվում է ո՛չ թե «բանականության», «ընդհանուր բարոյախոսության» և այլ պահանջների վրա, այլ հասարակական զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության վրա։ «Մարքսի փի-

լիտիկայությունն ավարտուն փիլիսոփայական մատերիալիզմն է, վորը մարդկությանը, իսկ առանձնապես բանվոր դասակարգին, իմացության մեծ զենքեր ընձեռեց» (ԼԵՆԻՆ)։

**Մեթոդոլոգիա** — ա) ուսմունք մեթոդի մասին. բ) հետազոտման այն յեղանակների, մեթոդների միակցությունը, վորոնք գործադրվում են վորևէ գիտության մեջ։

**Մեխանիկական (կամ մեխանիստական) մատերիալիզմ** — մատերիալիստական փիլիսոփայության զարգացման աստիճաններից մեկը։ Մեխանիկական մատերիալիզմը փորձում է բնության բոլոր յերևույթները բացատրել մեխանիկայի օրենքների ոգնությամբ և բնության բոլոր վորակապես բազմազան պրոցեսներն ու յերևույթները (քիմիական, բիոլոգիական, հոգեկան և այլն) հանգեցնել մեխանիկական պրոցեսների և յերևույթների։ Շարժումը նա դիտում է վո՛չ թե վորպես փոփոխություն ընդհանրապես, այլ վորպես մարմինների մեխանիկական տեղափոխություն տարածության մեջ, վորը (տեղափոխությունը) արտաքին ներգործության—մարմինը մարմնին զարկելու հետևանք է։ Մեխանիկական մատերիալիզմը ժխտում է առարկաների ինքնաշարժումը, նրանց վորակական փոփոխությունը, զարգացման թռիչքաձևությունը, ցածրից դեպի բարձրն ընթացող զարգացումը։ Մեխանիկական մատերիալիզմի սաղմեր կային

*դեռ Դեմոկրիտի փիլիսոփայության մեջ։ Մեխանիկական մատերիալիզմի ծաղկումն ընկնում է* XVII—XVIII *դ. դ. (Հոբբս, Դեկարտը ֆիզիկայի մեջ, Սպինոզա,* XVIII *դ. անգլիական և ֆրանսական մատերիալիստները)։ Մեխանիկական մատերիալիստների թվին էր պատկանում նաև Ֆոյերբախը։ Մեխանիկական մատերիալիզմն իր ժամանակին* (XVII *և* XVIII *դարերում) մատերիալիստական փիլիսոփայության զարգացման մի անհրաժեշտ և պրոգրեսիվ աստիճանն էր։ Մատերիալիզմի այդ ձևը պայմանավորված էր նրանով, որ այն ժամանակները բոլոր գիտություններից զարգացման համեմատաբար բարձր մակարդակի էին հասել միայն մեխանիկան և մաթեմատիկան։ Այն բանից հետո, երբ Մարքսն ու Էնգելսը ստեղծեցին դիալեկտիկական մատերիալիզմի ժամանակակից ուսմունքը, մեխանիկական մատերիալիզմը վերջնականապես հնացավ։ Մարքսը, Էնգելսը, Լենինն ու Ստալինն ամենավճռական պայքար էին մղում մեխանիկական մատերիալիստների դեմ։ ԽՍՀՄ-ում մի քանի տարի սրանից առաջ մեխանիստների մի խմբիկ (Ակսելրոդ, Տիմիրյազև, Վարյաշ և ուրիշները) փորձ արեց դիալեկտիկական մատերիալիզմը ռևիզիայի ենթարկել մեխանիկական տեսակետից։ Այդ խմբիկը ո՛չ միայն պարզացնելով աղավաղում էր գիտությունը և պայքար մղում մարքսիստական դիալեկտիկայի դեմ, այլև մի շարք հարցերում (առանձնապես իմացության թեո-*

րիայի մեջ—Հիերոգլիֆների թեորիայի պաշտպանություն) հարակցվում էր իդեալիզմին։ Կուսակցության ղեկավարությամբ այդ խմբիկը մերկացվեց որպես հակամարքսիստական։ Մեխանիստական մատերիալիզմի «սյուներից» մեկը ֆաշիստական լրտեսների կազմակերպիչ, կապիտալիստական ռեստավրացիայի ջեռանդուն պաշտպան Բուխարինն էր։

**Մեխանիստներ** — մեխանիկական մատերիալիզմի (տես) հետևորդներ, կողմնակիցներ։

**Մենշևիկող իդեալիզմ** — մարքսիզմի հակամարքսիստական, հակահեղափոխական իդեալիստական խեղաթյուրում Դեբորինի խմբի և ուրիշների կողմից, մի խումբ, որ պայքար էր մղում բոլշևիկյան կուսակցության գծի դեմ փիլիսոփայության մեջ և հարություն էր տալիս II Ինտերնացիոնալի ամենավնասակար դոգմային—թեորիայի խզմանը պրակտիկայից։ Մենշևիկող իդեալիստները ժխտում էին լենինիզմը որպես մարքսիզմի հետագա ստեղծագործական զարգացում, լենինյան էտապը մարքսիզմի փիլիսոփայության զարգացման մեջ, մարքսիստական-լենինյան ուսմունքը գիտության և փիլիսոփայության կուսակցականության մասին, փորձում էին մարքսիստական-լենինյան մատերիալիստական դիալեկտիկան նենգափոխել Հեգելի իդեալիստական դիալեկտիկայով։ Կուսակցության գծի դեմ մղած պայքարում մենշևիկող իդեալիստներից շատերը դարձան ժողովրդի ուղղակի թըշ-

նամիներ, ֆաշիզմի գործակալներ, հակախորհրդային տրոցկիստական-բուխարինյան բանդաների մասնակիցներ։ Կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ մերկացրեց և ջախջախեց մենշևիկող իդեալիստներին վորպես թշնամիների գործակալության փիլիսոփայական ֆրոնտում։

**Մետաֆիզիկա** (հունարեն՝ «այն, ինչ ֆիզիկայից հետո յե») — բնության յերևույթներին մոտենալու մեթոդ, բնությունն ուսումնասիրելու յեղանակ, վոր ուղղակի հակադիր է դիալեկտիկային։ Մետաֆիզիկական մեթոդը պատմականորեն պայմանավորված մի աստիճան էր մարդկային մտածողության զարգացման մեջ։ Բնության ճանաչումն իր առանձին մասերին, բնության մեջ յեղած տարբեր յերևույթների և առարկաների բաժանումը վորոշ դասակարգումների խիստ կարևոր մի պայման էր այն հսկայական հաջողությունների համար, վոր ձեռք բերեց բնագիտությունը XV—XVIII դարերի ժամանակաշրջանում։ Բայց ուսումնասիրության այդ յեղանակը մեր մեջ սովորություն թողեց առարկաներն ու յերևույթները դիտել նրանց կապակցությունից դուրս, զարգացումից և փոփոխությունից դուրս։ «Մետաֆիզիկի համար իրերն ու նրանց մտային արտացոլումները, այսինքն՝ գաղափարները, առանձին, անփոփոխ, քարացած, միանգամ ընդմիշտ տրված առարկաներ են, վորոնք հետազոտման յենթակա յեն մեկը մյուսից հետո և մեկը

մյուսից անկախ» (Էնգելս)։ Մետաֆիզիկները բնության մեջ տեսնում էին առարկաների, յերևույթների պատահական կուտակում, որոնք անկախ և մեկուսացված են միմյանցից։ Բնությունը նրանք դիտում էին հանգստի և անշարժության, կանգառման և անփոփոխելիության վիճակում։ Մետաֆիզիկները զարգացման պրոցեսը համարում էին քանակական աճման պարզ պրոցես, որտեղ քանակական փոփոխությունները դեպի որակական փոփոխություններ չեն տանում։ Մետաֆիզիկների տեսակետից՝ իրերն իրենց մեջ ներքին հակասություններ չեն բովանդակում, զարգացման աղբյուր հանդիսանում է արտաքին հակադիր ուժերի ընդհարումը։ Մարքսի ու Էնգելսի դիալեկտիկական մատերիալիզմի ստեղծումով և գիտական բնագիտության զարգացմամբ մետաֆիզիկական աշխարհայացքը մատնվեց կատարյալ կրախի։ Բայց մետաֆիզիկայից շարունակում էին և շարունակում են կառչել ամեն տեսակ ռեակցիոներներ, որոնք անհույս կերպով ձգտում են պաշտպանել հինը, հետ դարձնել պատմության անիվը։ Բուրժուական թեորետիկները չեն հոգնում «ապացուցել» կապիտալիզմի հավիտենականությունը։ «... Նա (բուրժուական գիտությունը) դիտում է կապիտալիստական հասարակարգը ո՛չ թե որպես զարգացման պատմականորեն անցողիկ աստիճան, այլ, ընդհակառակը, որպես հասարակական արտադրության բացարձակ, վերջնա-

կան ձև» (Մարքս)։ Բուրժուական թեորետիկները մարդկային հասարակության զարգացման պատմությունը մետաֆիզիկորեն դիտում են վորպես կապիտալիզմի անփոփոխ ձևերի կրկնություն։ Մետաֆիզիկայի դիրքերում եյին կանգնած ռուս նարոդնիկները, վորոնք ժխտում եյին համայնքի քայքայումը, արդյունաբերական պրոլետարիատի աճումը։ Մետաֆիզիկայի դիրքերում են կանգնած II Ինտերնացիոնալի ռևիզիոնիստներն ու օպորտունիստները, վորոնք ժխտում են դասակարգային հակասությունների անհաշտելիությունը, ապացուցում են, թե անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ պետք է տեղի ունենա առանց ցնցումների, «կապիտալիզմը սոցիալիզմի մեջ խաղաղորեն ներաճելու» միջոցով, առանց պրոլետարական հեղափոխության։ Փիլիսոփայության պատմության մեջ մետաֆիզիկա ասելով հասկանում եյին փիլիսոփայության այն մասը, վոր ուսուցանում եր փորձի սահմաններից դուրս գտնվող յերևույթների մասին (աստծու, հոգու, կամքի ազատության մասին և այլն)։

**Միխայլովսկի** Ն. Կ. *(1842—1904)* — սոցիոլոգ և հրապարակախոս, լիբերալ նարոդնիկության թեորետիկը։ «Отечественные Записки» և «Русское богатство» ժուռնալների խմբագիր։ Միխայլովսկին կատաղի պայքար եր մղում մարքսիզմի դեմ, հանդիսանալով մարքսիզմի ամենակատաղի թշնամին։ Վորպես

սոցիոլոգիայի սուբյեկտիվ մեթոդի (*տե՛ս*) *յեռանդուն պաշտպան, Միխայլովսկին ապացուցում էր, վոր հասարակությունն իրենից մի «ամբոխ» է ներկայացնում՝ միակերպ, գորշ, առօրյա պատկերացումներով։ «Հերոսական անհատը» կազմակերպում է «ամբոխին», նրա մեջ ժամանակավոր կապ է մտցնում, հրապուրելով դեպի պայքար։ Միխայլովսկու թեորիան «հերոսների» և «ամբոխի» մասին վորպես հիմնավորում էր ծառայում տեռորիզմի նարոդնիկական տակտիկայի համար։ Նարոդնիկների այդ տակտիկայի և նրանց ռեակցիոն-իդեալիստական թեորիաների դեմ անողոք պայքար էյին մղում Լենինը և Պլեխանովը (Լենինն իր հռչակավոր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» գրքում և այլ աշխատություններում, Պլեխանովն իր «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը» գրքում)։ Միխայլովսկու հիմնական աշխատություններն են՝* «Что такое прогресс?», 1869 г., «Герой и толпа», 1882 г.

**Միջնադարյան ռեալիզմ** — *տե՛ս* Ռեալիզմ միջնադարյան։

**Մոնիզմ** *(հունարեն «մոնոս»—մեկ բառից)—փիլիսոփայական ուսմունք, վորն է հակադրություն* դուալիզմի (*տե՛ս*), *վորպես հիմք ընդունում է միմիայն մեկ սկզբունք։ Գոյություն ունի ինչպես մատերիալիստական, այնպես էլ իդեալիստական մոնիզմ,*

*Մատերիալիստներն աշխարհի նախասկիզբը համարում են մատերիան վորպես երևույթների միակ հիմքը։ Իդեալիստ-մոնիստները բոլոր երևույթների միասնական սկզբունքը համարում են ոգին (ըստ Հեգելի՝ «բացարձակ իդեա» կամ աստված)։ Իսկական մոնիստական փիլիսոփայությունը միմիայն դիալեկտիկական մատերիալիզմն է։*

**Մորալ, բարոյականություն** — *մարդկանց համակեցության, վարք ու բարքի կանոններ, նորմաներ, հասարակական գիտակցության ձևերից մեկը։ Իդեալիստները գտնում են, վոր մորալը միանգամայն անկախ է մարդկության կյանքի նյութական պայմաններից։ Մարքսիզմ-լենինիզմը բարոյականության և նրա պահանջների ըմբռնման մեջ ելնում է վո՛չ թե ընդհանուր և վերացական սահմանումներից, այլ կոնկրետ պատմական պայմաններից։ Հասարակական կառուցվածքի ձևի փոխվելով՝ փոխվում է նաև մորալը։ Այսպես, բուրժուական հասարակակարգի հաղթությամբ ֆեոդալների մորալն իր տեղը զիջում է բուրժուական մորալին։ «... Ամբողջ գործը հանգում է հասարակական կազմակերպության յերկու ձևերի փոխհաջորդմանը. հողին ամրացված ճորտ գյուղացիների հավելյալ աշխատանքի յուրացման սիստեմը ստեղծեց ճորտական բարոյականություն։ «Ուրիշի հաշվին», փողատիրոջ համար աշխատող «ազատ աշխատանքի» սիստեմը—ստեղծեց նրա փոխարեն բուր-*

ժուական բարոյականություն» (ԼԵՆԻՆ)։ Պրոլետարական հեղափոխության հաղթությունը բերեց նոր մորալի — կոմունիստական հասարակության մորալի հաղթությունը։ Մեր բարոյականությունն ստորադրված է պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերին։ Կոմունիստական մորալի տեսակետից բարոյական է միմիայն այն, ինչ որ նպաստում է հին աշխարհի, շահագործման և աղքատության վոչնչացմանը, ինչ որ ամրապնդում է նոր, սոցիալիստական հասարակակարգը։ «Կոմունիստական բարոյականության հիմքում դրված է պայքարը կոմունիզմի ամրապնդման և ավարտման համար» (ԼԵՆԻՆ)։

★

# 3

**Եզակին, հատուկը և ընդհանուրը։** — Բնության մեջ կան եզակի երևույթներ, որոնք միավորվում խմբեր են կազմում, որոնք իրենց հատուկ օրենքներն ունեն, իսկ այդ խմբերը ենթարկվում են արդեն ընդհանուր նշանակություն ունեցող օրենքների։ Այդպիսով, բնության մեջ եզակին, հատուկը և ընդհանուրը փոխադարձաբար կապված են միմյանց հետ։ «Առանձինը գոյություն չունի այլ կերպ, քան այն կապակցության մեջ, որ տանում է դեպի ընդհանուրը։ Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով» (Լենին)։ Իմացությունն արտացոլում է այդ օբյեկտիվ կապակցությունը։ «... Ամեն մի ռեալ, սպառիչ իմացության էությունը միայն այն է, որ մենք մեր մտքում եզակին հանում ենք նրա եզակիությունից և այն դարձնում ենք հատուկ, իսկ այս վերջինից էլ՝ ընդհանրական» (Էնգելս)։ Օրինակ, այն դրույթը, թե շփումը ջերմություն է առաջացնում, եզակիության դատողություն կլինի, որովհետև այստեղ նշվում է եզակի փաստը։ Այն դրույթը, թե մեխանիկական

*շարժումը փոխվում է ջերմության, առանձնահատկության դատողություն կլինի, վորովհետև այստեղ նշվում է շարժման հատուկ, մեխանիկական ձևը, վորը շփման շնորհիվ փոխվում է շարժման այլ, առանձնահատուկ ձևի—ջերմության: Յեվ, վերջապես, այն դրույթը, թե շարժման ամեն մի ձև ընդունակ է և պետք է վերածվի շարժման ամեն մի այլ ձևի, կլինի ընդհանրականության դատողություն:*

**Երկրորդային վորակներ** — *տե՛ս* Առաջնային և յերկրորդային վորակներ:

**Երևույթների ընդհանուր կապը, փոխներգործությունը** — *Բնության ու հասարակության առարկաների և յերևույթների փոխադարձ կապը, փոխադարձ ներգործությունն ընդհանուր բնույթ ունի: Այդ պատճառով մարքսիստական դիալեկտիկան պնդում է, վոր բնության և հասարակության մեջ վոչ մի յերևույթ չի կարող հասկացվել, յեթե այն վերցնենք շրջապատող յերևույթների կապակցությունից դուրս: Որինակ, արեգակնային համակարգությունը մի միասնական ամբողջություն է, և նրա բոլոր մասերը փոխադարձ կապակցության և փոխներգործության մեջ են գտնվում: Փոխադարձ կապակցություն կա կենդանիների և նրանց շրջապատող աշխարհագրական պայմանների միջև: Մարդկային հասարակության մեջ նույնպես բոլոր կողմերը գտնվում են ամենասերտ փոխադարձ կապակցության և փո-*

խաղարծ պայմանավորվածության մեջ։ Յուրաքանչյուր հասարակակարգ և յուրաքանչյուր հասարակական շարժում պատմության մեջ պետք է քննարկել այն պայմանների տեսակետից, վորոնք առաջացրել են այդ հասարակակարգը և վորոնց հետ նա կապված է։ Այսպես, օրինակ, ստրկատիրական կարգերը մեր օրերում անհեթեթություն են, իսկ նախնադարյան-համայնական քայքայվող հասարակակարգի պայմաններում այն մի օրինաչափ յերևույթ եր, վորովհետև նախնադարյան-համայնական հասարակակարգի համեմատությամբ նշանակում եր մի քայլ դեպի առաջ։ Փոխներգործության գոյությունը յերևույթների միջև՝ չի նշանակում, թե բոլոր պատճառներն ու հետևանքները հավասարապես կարևոր են. դիալեկտիկական մեթոդը պահանջում է գտնել յերևույթների փոխներգործության հիմունքները, սահմանել այն վճռական, արմատական պատճառները, վորոնք պայմանավորել են այս կամ այն յերևույթը։

**Յում Դավիդ** (1711—1776) — անգլիական բուրժուական փիլիսոփա, պատմաբան և տնտեսագետ։ Փիլիսոփայության մեջ Յումը ագնոստիկ է։ Այն հարցը, թե արդյոք գոյություն ունի՞ օբյեկտիվ ռեալություն թե վոչ, Յումն անլուծելի յե համարում։ Նա պնդում է, վոր մենք վո՛չ միայն չգիտենք, թե ինչպես են իրերն ինքն ըստ ինքյան, այլ նույնիսկ

չգիտենք՝ գոյություն ունե՞ն նրանք արդյոք։ «Յումը վոչինչ չի ուզում գիտենալ «ինքնին իրի» մասին. բուն իսկ միտքը նրա մասին նա փիլիսոփայորեն անթույլատրելի յե համարում» (ԼԵՆԻՆ)։ Այս է Յումի ավելի հետևողական ագնոստիցիզմի տարբերությունը կանտականից, վորն ընդունում է ինքնին իրի գոյությունը։ Պատճառական կապակցությունը Յումի համար վո՛չ թե բնության որենք է, այլ սովորություն, վոր մշակվել է յերևույթների հերթափոխության դիտումից և հիմք չունի վո՛չ բուն իսկ բնության մեջ, վո՛չ ել մինչև անգամ մարդկային պատկերացումների մեջ։ Ժխտելով իրերի նյութական հիմքը և պատճառականությունը՝ Յումը գալիս է այն յեզրակացության, վոր մարդկային գիտակցության մեջ միմիայն հոգեկան ըմբռնումների մի հոսանք կա և գիտությունը հանգում է միմիայն այդ հոսանքի պարզ նկարագրմանը՝ առանց վորևե որենք ըմբռնելու հնարավորության։ Յումի ագնոստիցիզմն ու սուբյեկտիվիզմը հերքվում են մարդու պրակտիկայով։ Ազդելով բնության վրա և այն փոփոխելով՝ մարդն ապացուցում է աշխարհի օբյեկտիվությունը, նրա ճանաչելիությունը։ Յումի փիլիսոփայությունը մեծ ազդեցություն գործեց Կանտի վրա, ինչպես նաև մախիզմի վրա։ Յումի փայլուն քննադատությունը տրված է Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքում։ Յումի հիմնական փիլիսոփայական աշխատություններն են՝

«Трактат о человеческой природе», 1739—1740 г. г. և «Исследование человеческого разумения», 1748 г.

**Յումիզմ** — *անգլիական փիլիսոփա* Յումի *(տես) և նրա հետևորդների ուսմունքը։*

★

# Ն

**Նաիվ ռեալիզմ** — *տարերային-մատերիալիստական աշխարհըմբռնում, որ հատուկ է յուրաքանչյուր մարդու։ Յուրաքանչյուր նորմալ մտածող մարդ, յեթե նա գժանոցում չի յեղել կամ իդեալիստ-փիլիսոփաների մոտ ուսման մտած, գիտակցում է, որ բոլոր առարկաները գոյություն ունեն մարդկային գիտակցությունից անկախ։ Այսպիսով, Նաիվ ռեալիզմի եյությունն այն տարերային, մեծ մասամբ չգիտակցված վստահությունն է, թե աշխարհն իր բնությամբ նյութական է։ Սակայն նաիվ ռեալիզմը դեռ գիտական-մատերիալիստական աշխարհայացք չէ։ Իդեալիստական սոփեստաբանությունը հեշտությամբ կարող է շփոթության մեջ գցել տարերային, նաիվ մատերիալիստին։ Դիալեկտիկական մատերիալիզմը մատերիալիստական աշխարհըմբռնումը բարձրացնում է գիտության բարձրագույն նվաճումների վրա հենվող ամենախորը և ամենահետևողական փիլիսոփայական ուսմունքի մակարդակին։ Նաիվ ռեալիզմի մեր ըմբռնումը տարբեր է այն ըմբռնումից, որ տարածում եյին իդեալիստները—Բերկլին և մա-*

*խիստները։ Նրանք պնդում էին, թե նաիվ ռեալիզմը մի աշխարհայացք է, ըստ որի՝ մարդը գործ ունի միմիայն իր զգայությունների հետ և նրա համար միևնույնն է՝ արդյոք իրերն իսկապես կա՞ն, թե նրանք չկան։ Լենինը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքում ապացուցել է, որ դա նաիվ ռեալիզմի խեղաթյուրումն է, իսկ նաիվ ռեալիզմն այն տարերային վստահությունն է, թե բնությունը գոյություն ունի գիտակցությունից դուրս և նրանից անկախ։ Տե՛ս* **Տարերային մատերիալիզմ**։

**Նատուրփիլիսոփայություն** — *բնության փիլիսոփայություն։*

**Նյութական բարիքների արտադրության եղանակ** — *մարդկանց գոյության համար, հասարակության ապրելու և զարգանալու համար անհրաժեշտ կենսամիջոցների (սննդի, հագուստի, բնակարանի, արտադրության գործիքների և այլն) հայթայթման եղանակ։ Արտադրության եղանակի մի կողմը կազմում են* **հասարակության արտադրողական ուժերը** (*տե՛ս*)։ *Նրանց մեջ արտահայտվում է մարդու հարաբերությունը դեպի բնության այն առարկաներն ու ուժերը, որոնք օգտագործվում են կենսականորեն-անհրաժեշտ նյութական բարիքներ ստեղծելու համար։ Մյուս կողմը* **մարդկանց արտադրական հարաբերություններն են** (*տե՛ս*), *մարդկանց միջև եղած հարա-*

*բերությունները նյութական արտադրության պրոցեսում, հարաբերություններ, վորոնք պատասխանում են այն հարցին, թե ում տիրապետության ներքո յեն գտնվում արտադրության միջոցները։ Յուրաքանչյուր պատմականորեն վորոշ արտադրության յեղանակ (նախնադարյան-համայնական, ստրկատիրական, ֆեոդալական և այլն) արտադրողական ուժերի և նրանց համապատասխանող արտադրական հարաբերությունների միասնությունն է։ Արտադրության յեղանակը գտնվում է մարդկանց հասարակակարգի հիմքում և վորոշում է նրա բնույթը։ Արտադրության յուրաքանչյուր նոր յեղանակ մի նոր, բարձրագույն աստիճան է նշանակում մարդկության պատմության մեջ։ «Այդ նշանակում է, վոր հասարակության զարգացման պատմությունն ամենից առաջ արտադրության զարգացման պատմությունն է, արտադրության յեղանակների պատմությունն է, վորոնք փոխհաջորդում են միմյանց դարերի ընթացքում, արտադրողական ուժերի և մարդկանց արտադրական հարաբերությունների զարգացման պատմություն է»* (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։

**ՆՅՈՒՏՈՆ** *Իսահակ (1642—1727) — անգլիական մեծ ֆիզիկոս, աստղաբաշխ և մաթեմատիկոս, արդի մեխանիկայի հիմնադիրը։ Հայտնագործեց տիեզերական ձգողականության որենքը և մշակեց յերկնային մարմինների շարժման թեորիան։ Նյուտոնն է կառուցել*

առաջին հայելավոր հեռադիտակը։ Առաջին անգամ նա է տվել գույների գիտական թեորիան։ Նա արևի լույսը տարրալուծեց գունավոր սպեկտրի և գտնում էր, որ լույսը բաղկացած է լույսի աղբյուրից ճառագայթվող մանրագույն մասնիկներից։ Տարածությունը, ըստ Նյուտոնի, գոյություն ունի մատերիայից անկախ և, դատարկ արկղի նման, լցվում է նրանով։ Նյուտոնը գտնում էր, թե իբր աստված է տվել մոլորակների արևի շուրջը պտտվելու առաջին զարկը։ Նյուտոնի այս և ուրիշ իդեալիստական սխալները և նրա աշխարհհայացքի մետաֆիզիկական բնույթը սուր քննադատության յենթարկվեցին Էնգելսի կողմից։ Էնգելսի ասելով՝ Նյուտոնն իրենով ավարտում է մեխանիկական և մետաֆիզիկական ժամանակաշրջանը բնագիտության մեջ։ Հսկայական էր Նյուտոնի ազդեցությունը փիլիսոփայության վրա, մասնավորապես XVIII դարի ֆրանսական մատերիալիզմի հայացքների վրա։ Ներկայումս մի շարք գիտական հայտնագործումներ ֆիզիկայի բնագավառում, մասնավորապես Այնշտայնի հարաբերականության թեորիան, հանգեցրին Նյուտոնի ֆիզիկայի մի շարք դրույթների վերանայման։ Նյուտոնի գլխավոր աշխատություններն են՝ «Математические начала натуральной философии», 1687 г. և «Оптика», 1704 г.

**Նոմինալիզմ** *(լատիներեն «նոմինա» — անուններ բառից)*—ուղղություն միջնադարյան սխոլաստիկական

փիլիսոփայության մեջ, որը պնդում էր, թե ռեալ կերպով գոյություն ունեն միմիայն առանձին իրերն իրենց անհատական հատկություններով, իսկ ընդհանուր հասկացությունները, որ ստեղծում է մեր մտածողությունն այդ իրերի մասին, ո՛չ միայն գոյություն չունեն իրերից անկախ, այլև չեն արտացոլում նրանց հատկություններն ու որակը: Նոմինալիստներն առաջադրում էին հետևյալ թեզիսները. «իրերը գոյություն ունեն նախքան ընդհանուր հասկացությունները» և «ընդհանուր հասկացությունները անուններ են»: Նոմինալիզմի ուժեղ կողմն այն էր, որ նա ընդունում էր առարկայի առաջնայնությունը և հասկացության յերկրորդայնությունը: Դա մատերիալիստական գիծ էր: Յեվ այդ պատճառով էլ Մարքսն ու Ենգելսը նոմինալիզմը համարում էին «մատերիալիզմի առաջին արտահայտությունը» միջին դարերում: Սակայն նոմինալիզմը չէր ըմբռնում, որ ընդհանուր հասկացություններն արտացոլում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրերի ռեալ հատկությունները և որ յեզակի իրերը բաժանված չեն ընդհանուրից, այլ բովանդակում են այն իրենց մեջ: Ականավորագույն նոմինալիստներն էին՝ Ռոսցելինը, Դունս Սկոտուսը, Վիլհելմ Օկկամը:

★

# Շ

**Շարժում եվ հանգիստ** — *Շարժումը մատերիայի գոյության հիմնական ձևերից մեկն է։ «Մատերիան առանց շարժման նույնքան աներևակայելի յե, ինչպես և շարժումն առանց մատերիայի»* (Էնգելս)։ *Գոյություն ունեն մատերիայի շարժման տարբեր ձևեր, որինակ՝ մեխանիկական շարժում, ջերմություն, լույս, ելեկտրականություն, կյանք և, վերջապես, բարձրագույն ձևը—գիտակցություն։ Նրանք բոլորը գտնվում են միասնության մեջ, փոխադարձ կապակցության մեջ և վորոշ պայմաններում մեկը փոխվում է մյուսին, շարժման մի ձևը փոխարկվում է մյուս ձևին։ Մարքսիստական դիալեկտիկան, ընդհանրացնելով շարժման բոլոր ձևերը, վոր բնության մեջ գոյություն ունեն, շարժում ասելով հասկանում է* փոփոխությունն ընդհանրապես: *Շարժման մեխանիստական հասկացողությունը, վորն ամեն մի շարժում հանգեցնում է տարածության մեջ մարմնի կատարած տեղափոխության, միակողմանի յե, պարզացնում և աղավաղում է շարժման ձևերի իրական բազմազանությունը բնության մեջ։ Շարժման մեխանիստական հասկացողությունը*

յենթադրում է արտաքին զարկի գոյությունը։ Այդ բանը տանում է դեպի իդեալիստական յեզրակացումներ։ Մարքսիստական դիալեկտիկան հիմնական շեշտը դնում է շարժման, ինքնաշարժման ներքին աղբյուրն ընդունելու վրա։ Հանգիստը, հավասարակշռությունը շարժման լոկ մի մոմենտն է։ Բնության մեջ գոյություն չունի բացարձակ, հավերժական հանգիստ։ Օրինակ, գնացքը շարժվում է տվյալ վայրի բոլոր առարկաների համեմատությամբ, վորոնք հանգստի մեջ են։ Բայց այդ առարկաներն իրենք էլ բացարձակ հանգստի մեջ չեն գտնվում։ Նրանց մեջ տեղի յե ունենում անընդհատ շարժում, փոփոխություն՝ արտաքին և ներքին պատճառների ազդեցությամբ։ Բացի դրանից, նրանք յերկրագնդի հետ միասին պտտվում են արևի շուրջը։ Այդպիսով, հանգիստը միևնույն ժամանակ շարժում է։ Շարժումն ու հանգիստը հարաբերակից են։ «Առանձին շարժումը հավասարակշռության է ձգտում, ընդհանուր շարժումը կրկին խախտում է հավասարակշռությունը» (Էնգելս)։

# Ո

**Օբյեկտ** — *տե՛ս* Սուբյեկտ և օբյեկտ:

**Օբյեկտիվ** — *ի հակադրություն սուբյեկտիվի՝ նշանակում է մարդկային գիտակցությունից դուրս և նրանից անկախ գոյություն ունեցողը, ինչպես նաև օբյեկտիվ աշխարհի ճիշտ արտացոլումը մարդու մտածողության մեջ:*

**Օբյեկտիվ իդեալիզմ** — Իդեալիզմի *(տե՛ս) հիմնական տարատեսակներից մեկը:*

**Օբյեկտիվ ճշմարտություն** — *Մարքսիզմն օբյեկտիվ ճշմարտություն է համարում մեր պատկերացումների այնպիսի բովանդակությունը, որը ճիշտ է արտացոլում բնությունը, օբյեկտիվ աշխարհը: Օրինակ, բնագիտության այն պնդումը, թե երկիրը գոյություն է ունեցել մարդկությունից առաջ, օբյեկտիվ ճշմարտություն է: Իդեալիստները, որոնք ժխտում են օբյեկտիվ աշխարհը, որը գոյություն ունի գիտակցությունից դուրս և նրանից անկախ, օբյեկտիվ ճշմարտություն չեն ընդունում: Ի հակակշիռ իդեալիզմի՝ դիալեկտիկական մատերիալիզմը պնդում է, որ պրակտիկայում ստուգված մեր գիտելիքները*

տույց գիտելիքներ են, որոնք օբյեկտիվ ճշմարտությունների նշանակություն ունեն։

**Օբյեկտիվիզմ բուրժուական** — *պատմական պրոցեսի անհրաժեշտության և օրինաչափության այնպիսի բացատրություն, որն արդարացնում և փառաբանում է կապիտալիստական հասարակարգը։ Այդպես, Պ. Ստրուվեն, «լեգալ մարքսիզմի» ներկայացուցիչներից մեկը, քննադատելով նարոդնիկներին, որոնք չէին հասկանում կապիտալիզմի զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունը* XIX *դ. Ռուսաստանում, քարոզում էր հրաժարումն կապիտալիզմի դեմ պայքար մղելուց այն հիման վրա, որ կապիտալիզմը զարգանում է օբյեկտիվ անհրաժեշտությամբ։ Նա ժխտում էր կապիտալիզմի անհաշտելի հակասությունները, որոնք անխուսափելիորեն պրոլետարական հեղափոխության են հասցնում։ Վորպես հակակշիռ բուրժուական օբյեկտիվիզմին՝ մարքսիզմ-լենինիզմն ապացուցում է, որ կապիտալիզմը ծագել է պատմական անհրաժեշտությամբ, բայց նույնպես պատմականորեն անհրաժեշտ է նրա կործանումը հեղափոխական բռնի տապալման միջոցով։ Օբյեկտիվության մարքսիստական ըմբռնումը պարունակում է իր մեջ կուսակցականություն, պարտավորեցնելով պատմական դեպքերը գնահատել հեղափոխական պրոլետարիատի տեսակետից։*

**Օրինաչափություն, օրենք։** — *«Աշխարհը մատերիա-*

յի օրինաչափ շարժումն է, և մեր իմացությունը, ըմ-
նելով բնության բարձրագույն պրոդուկտը, ի վիճակի
յե միմիայն արտացոլելու այդ օրինաչափությունը»
(ԼԵՆԻՆ): Դիալեկտիկական մատերիալիզմը պնդում է,
վոր բնությունն առարկաների, յերևույթների մեջ ինչ-
վոր պատահական կուտակում չէ, այլ վոր բնության
մեջ գոյություն ունի օբյեկտիվ օրինաչափություն,
պատճառականություն, անհրաժեշտություն: Սուբ-
յեկտիվիզմի և ագնոստիցիզմի կողմնակիցները փիլի-
սոփայության մեջ (Յում, Կանտ, Մախ) ժխտում են
օրենքի և օրինաչափության օբյեկտիվությունը,
սխալ կերպով պնդելով, թե իբր «մարդն է բնությա-
նը օրենք տալիս», թե իբր մարդկային գիտակցու-
թյունն է, վոր, նրանց կարծիքով, յերևույթների քաո-
սային աշխարհում օրինաչափություն է մտցնում:
Իսկ իրականում իմացությունը բնության և հասարա-
կության յերևույթների մեջ հայտնագործում է աշ-
խարհի օբյեկտիվ օրենքները, նրա օբյեկտիվ ներքին
կապակցությունը: Օրենքն արտահայտում է իրակա-
նության ամենից ավելի ընդհանուր, ամենից ավելի
էական կողմերն ու կապակցությունները, և այդ պատ-
ճառով էլ օրենքն ավելի խոր ու ավելի լրիվ կերպով
է արտահայտում օբյեկտիվ աշխարհի պատկերը: Իս-
կական գիտական իմացությունն օբյեկտիվ աշխարհի
օրենքների հայտնագործումն է: Հենվելով օրենքների
իմացության վրա՝ մարդիկ ակտիվ կերպով ներգոր-

*ծում են բնության վրա և հասարակական զարգացման ընթացքի վրա։ Տիրապետելով մարքսիզմ-լենինիզմի թեորիային՝ մենք ձեռք ենք բերում բնության զարգացման ամենից ավելի ընդհանուր օրենքների և հասարակական զարգացման օրենքների գիտական ծանոթությունը։*

**Ուտոպիական սոցիալիզմ**—*սոցիալիստական ուսմունքներ, վորոնք, ի տարբերություն Մարքսի գիտական սոցիալիզմի թեորիայից, կառուցում էին հասարակության վերակառուցման լայն և համապարփակ պլաններ՝ հասարակության իրական կյանքից ու դասակարգային պայքարից կտրված։ XIX դ. սկզբին մեծ սոցիալիստ-ուտոպիստներ էին Սեն-Սիմոնը, Շառլ Ֆուրյեն և Ռոբերտ Օուենը։ Ուտոպիական սոցիալիզմը ծագեց այն ժամանակ, յերբ պրոլետարիատի դասակարգային պայքարը դեռ բավականաչափ զարգացած չէր։ Այդ պատճառով էլ՝ սոցիալիստական քարոզն անխուսափելիորեն ընդունում էր ուտոպիական, այսինքն՝ յերազային, անիրական բնույթ։ Ուտոպիական սոցիալիզմը խոր և ցայտուն կերպով քննադատում էր կապիտալիզմի հակասությունները, համոզում էր, վոր անհրաժեշտ է այն փոխարինել սոցիալիզմով, կանխատեսում էր քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրության, մասնավոր սեփականության վոչնչացումը և այլն։ Սակայն նա չէր կարողանում վո՛չ պարզաբանել կապիտալիզմի ժամանակվա վար-*

ձու ստրկության եյությունը, վո՛չ հայտնագործել կապիտալիզմի զարգացման որենքները, վո՛չ էլ գտնել այն հասարակական ուժը, վորն ընդունակ ե նոր հասարակության ստեղծիչը դառնալու» (Լենին): Ուտոպիստները պրոլետարիատի մեջ տեսնում եյին միայն ճնշված մասսա, վորին հարկավոր ե կարեկցել և ոգնել, և վոչ թե այն մեծ պատմական ուժը, վորը միակն ե, վոր կարող ե իր պայքարով ապահովել սոցիալիստական իդեալների կենսագործումը: Միմիայն Մարքսն ու Ենգելսը սոցիալիզմն ուտոպիայից գիտության վերածեցին: Նրանք պարզաբանեցին, վոր սոցիալիզմը վո՛չ թե յերազողների, ուտոպիստների հնարանքն ե, այլ կապիտալիստական հասարակության և պրոլետարիատի դասակարգային պայքարի զարգացման անհրաժեշտ արդյունքը, պրոլետարիատի, վորի պատմական խնդիրն ե կապիտալիզմի վոչնչացումը և սոցիալիզմի կառուցումը:

# Չ

**ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻ Ն. Գ.** *(1828—1889)* — *«ռուս մեծ հեգելական և մատերիալիստ»* (Լենին), *բազմակողմանի գիտնական, գրող, գրական քննադատ, սոցիալիստ-ուտոպիստ, 60-ական թվականների հեղափոխական-դեմոկրատական շարժման առաջնորդ և իդեական վոգեշնչող, ռուս ականավորագույն հեղափոխական լուսավորիչ։ Չերնիշևսկին անց էր կացնում «գյուղացիական հեղափոխության իդեան, մասսաների պայքարի իդեան՝ հանուն բոլոր հին իշխանությունների տապալման»* (Լենին)։ *Փիլիսոփայության մեջ Չերնիշևսկին մատերիալիստ էր, Ֆոյերբախի հետևողը և զարգացնում էր այսպես կոչված անտրոպոլոգիական մատերիալիզմը, այսինքն՝ յելնում էր ռեալ, ֆիզիկական մարդուց, բայց մարդուց վորպես կենսաբանական եյակից, և վոչ թե հասարակական, պատմական մարդուց։ Չերնիշևսկու առավելությունը Ֆոյերբախի համեմատությամբ այն էր, վոր նա ըմբռնում էր Հեգելյան դիալեկտիկայի նշանակությունը։ Չերնիշևսկին հմտորեն կիրառում էր դիալեկտիկական մեթոդն իր սոցիալիստական հայացքները հիմնա-*

վորելու համար։ Մոտենալով դիալեկտիկական մատերիալիզմին՝ Չերնիշևսկին չկարողացավ դիալեկտիկական մատերիալիստ դառնալ՝ հասարակության նյութական հիմքը չհասկանալու պատճառով։ Այստեղ արտահայտություն գտան այն ժամանակվա ռուսական կյանքի պայմանների հետամնացությունն ու Չերնիշևսկու անծանոթությունը մարքսիզմի իդեաներին։ Ցարական կառավարությունը դաժան դատաստան տեսավ Չերնիշևսկու գլխին։ Նա դատապարտվեց մահապատժի, վոր փոխարինվեց տաժանակրությամբ և բանտով, վորտեղ նա անց կացրեց 20 տարի։ Նրա կարևորագույն փիլիսոփայական աշխատություններն են՝ «Антропологический принцип в философии», 1860 г., «Эстетические отношения искусства к действительности», 1855 г., «Критика философских предубеждений против общинного владения», 1858 г., «Очерки гоголевского периода русской литературы», 1856 г.

★

# Պ

**Պանթեիզմ** (*հունարեն «պան»—ամեն և «թեոս»—աստված բառերից)—փիլիսոփայական ուսմունք, որի համաձայն աստվածությունն իբրև անանձն հոգևոր սկզբունք գտնվում է ո՛չ թե բնությունից դուրս, այլ հենց նրա մեջ, լցված է բնության իրերի մեջ՝ պայմանավորելով նրանց շարժումն ու զարգացումը։ Պանթեիզմը* XVI—XVII *դարերի փիլիսոփայության պատմության մեջ (օրինակ, Ջորդանո Բրունոյի մոտ) դրական դեր է կատարել և նախադուռն է ծառայել աթեիզմի և մատերիալիզմի համար։*

**Պատահականություն** — *տե՛ս* Անհրաժեշտություն և պատահականություն:

**Պատճառականություն** — *օբյեկտիվ աշխարհի երևույթների ընդհանուր փոխադարձ կախվածության ձևերից մեկը։ Պատճառն ու հետևանքը «լոկ համաշխարհային փոխադարձ կախվածության, կապակցության (ունիվերսալ), դեպքերի փոխադարձ հարակցության մոմենտներն են, լոկ օղակներ են մատերիայի զարգացման շղթայի մեջ»* (Լենին)։ *Աշխարհում չկան առանց պատճառի երևույթներ։ Բնության ամեն մի*

յերևույթ ունի իր բնական, նյութական պատճառը։ Պատճառն ու հետևանքը փոխադարձ ներգործության մեջ են գտնվում։ Պատճառն առաջ է բերում հետևանք, բայց հետևանքն էլ պասիվ չէ, այն ներգործում է իր պատճառի վրա։ Այդպես, կապիտալիզմի դեմ պրոլետարիատի մղած պայքարի պրակտիկան մարքսիստական-լենինյան հեղափոխական թեորիայի ծագման կարևորագույն պատճառն է, բայց վերջինս իր հերթին հուժկու լծակ է դառնում կապիտալիզմի տապալման և սոցիալիստական հասարակության կառուցման գործում։ Ընդհանուր փոխներգործության մեջ պատճառն ու հետևանքն իրենց տեղերը փոխում են։ Այն, ինչ վոր տվյալ կապակցության մեջ հետևանք է, կարող է մի ուրիշ կապակցության մեջ պատճառ դառնալ, և ընդհակառակը։ Պատճառի և հետևանքի միջև գոյություն ունի ներքին որինաչափ կապակցություն։ Պատճառի և հետևանքի միջև յեղած փոխներգործությունը չի կարելի դիտել այն կոնկրետ իրադրությունից անջատ, վորի մեջ տեղի յե ունենում այդ փոխներգործությունը։ Այսպես, սոցիալիստական սիստեմի պայմաններում տեխնիկայի զարգացումը հանդիսանում է աշխատավորների բարեկեցության աճման պատճառներից մեկը։ Իսկ կապիտալիստական յերկրներում տեխնիկայի զարգացումը վո՛չ միայն չի նպաստում շահագործվողների կյանքը բարելավելուն, այլ հանդիսանում է գործազրկության և

աղքատության անման պատճառներից մեկը։ Իդեալիստական փիլիսոփայությունը (օրինակ՝ կանտականությունը) ժխտում է պատճառականության օբյեկտիվ գոյությունը, պատճառականությունը դիտում է իբրև սուբյեկտիվ կատեգորիա, իբրև մի բան, որ քանականությունն է մտցնում բնության մեջ։ Արդի ռեակցիոն բուրժուական փիլիսոփայության շատ ներկայացուցիչներ, ժխտելով յերևույթների միջև յեղած պատճառական կապը, ջանում են պատճառականության տեղը դնել այսպես կոչված ֆունկցիոնալ կախվածությունը, այսինքն՝ ընդունում են յերևույթների վորոշ հաջորդականությունը, բայց չեն ուզում ընդունել պատճառականության օբյեկտիվությունը։ Ժխտելով պատճառականության օբյեկտիվ բնույթը՝ բուրժուական փիլիսոփայությունն ամեն կերպ պաշտպանում է ռեակցիոն, հակագիտական, տերտերական, վախճանաբանական (տելեոլոգիական) այն ուսմունքը, ըստ վորի՝ զարգացումը ինչ-վոր մի ներքին նպատակի կենսագործումն է, վորպիսի նպատակն իբր թե հատուկ է հենց իրեն առարկային կամ յերևույթին։

**Պատմական մատերիալիզմ**, կամ պատմության մատերիալիստական ըմբռնում — մարքսիզմի-լենինիզմի ուսմունքը մարդկային հասարակության զարգացման օրենքների մասին։ Պատմական մատերիալիզմը դիալեկտիկական մատերիալիզմի դրույթների հետևողական տարածումն է հասարակական յե-

րևույթների ուսումնասիրության վրա։ Մինչև Մարքսը գիտության մեջ իշխում էր պատմության իդեալիստական ըմբռնումը։ Պատմական մատերիալիզմի թեորիայի ստեղծումը կապված է այն մեծագույն հայտնագործության հետ, որ արեց Մարքսը պատմության և պատմական դեպքերի մեկնաբանության մեջ։ «Այնպես, ինչպես Դարվինը հայտնագործեց օրգանական աշխարհի զարգացման օրենքը, Մարքսն էլ հայտնագործեց մարդկային պատմության զարգացման օրենքը — այն՝ մինչև վերջին ժամանակներն իդեոլոգիական մակաշերտերի տակ թաղնված հասարակ փաստը, որ մարդիկ պետք է ուտեն, խմեն, բնակարան ունենան և հագնվեն, նախքան ի վիճակի կլինեն զբաղվելու քաղաքականությամբ, գիտությամբ, արվեստով, կրոնով և այլն. որ, հետևաբար, գոյության անմիջական նյութական միջոցների արտադրությունը և հենց դրանով ժողովրդի կամ դարաշրջանի տնտեսական զարգացման յուրաքանչյուր տվյալ աստիճանը կազմում է այն հիմքը, որից զարգանում են պետական հիմնարկությունները, իրավական հայացքները, արվեստը և նույնիսկ տվյալ մարդկանց կրոնական պատկերացումները, ուստի և նրանք պետք է բացատրվեն այդ հիմքից ելնելով—և ոչ թե ընդհակառակը, ինչպես այդ արվում էր մինչև այժմ» (Էնգելս)։ Պատմական մատերիալիզմը մարդու գոյության համար անհրաժեշտ նյութական բարիքների

*արտադրության յեղանակների զարգացման մեջ տեսնում ե այն գլխավոր ուժը, վորը վորոշում ե մարդկանց ամբողջ հասարակական կյանքը և պայմանավորում ե մեկ հասարակարգի անցումը մյուսին։ Վոչ մի հասարակություն չի կարող գոյություն ունենալ՝ առանց նյութական բարիքներ արտադրելու։ Աշխատանքի գործիքների, տեխնիկայի ոգնությամբ մարդն արտադրության պրոցեսում ներգործում ե բնության վրա և ձեռք ե բերում կյանքի համար հարկավոր առարկաները։ Հասարակության պրոգրեսը կախված ե նյութական արտադրության կատարելությունից, զարգացումից։ Մարդկային հասարակության պատմությունն սկսվում ե այն ժամանակվանից, յերբ մարդը բարձրացավ մինչև գործիքներ բանեցնելը և դարձավ «գործիքներ շինող կենդանի»։ Հասարակության արտադրողական ուժերի զարգացման մեջ իր արտահայտությունն ե գտնում մարդու տիրապետության աճումը բնության վերաբերմամբ։ Իսկ արտադրողական ուժերի զարգացման հետ փոխվում ե նյութական արտադրության նաև յերկրորդ անհրաժեշտ կողմը—մարդկանց փոխհարաբերությունները, վորոնց մեջ նրանք մտնում են արտադրության պրոցեսում, այն ե՝ արտադրական հարաբերությունները, փոխվում են սոցիալ-տնտեսական կարգերը։* Հասարակական-տնտեսական ֆորմացիաների *(տե՛ս)* *փոխհաջորդումը պատմության մեջ—նախնադարյան-*

համայնական հասարակարգ, ստրկատիրական, ֆեոդալական, բուրժուական, սոցիալիստական հասարակարգ—ամենից առաջ մի տեսակի արտադրական հարաբերությունների փոխհաջորդումն է մյուսով, ավելի պրոգրեսիվով: Այդ փոխհաջորդումը հասարակության արտադրողական ուժերի զարգացման միշտ անհրաժեշտ, օրինաչափ հետևանքն է: Այն նոր արտադրական հարաբերությունների, տնտեսական կարգերի հաստատումը, որոնք անհրաժեշտորեն կյանքի յեն կոչվում արտադրողական ուժերի զարգացմամբ, սովորաբար տեղի յե ունենում հին արտադրական հարաբերությունների հեղափոխական տապալման միջոցով: Հետևաբար, Մարքսի պատմական մատերիալիզմի թեորիայի ամենամեծ ծառայությունն այն է, որ նա ամենից առաջ ուշադրություն դարձրեց նյութական արտադրության որոշակի պայմանների վրա, հասարակության կյանքի տնտեսական օրենքների վրա, որոնք մարդկանց ամբողջ պատմական գործունեության բազան են հանդիսանում: Շնորհիվ Մարքսի թեորիայի՝ պատմության և քաղաքականության վերաբերյալ հայացքների մեջ մինչև այժմ իշխող քաոսին ու կամայականությանը փոխհաջորդեց զարմանալի ամբողջական ու ներդաշնակ մի գիտական թեորիա, որը ցույց և տալիս, թե ինչպես հասարակական կյանքի մի կացութաձևից, արտադրողական ուժերի զարգացման հետևանքով, զարգանում է մի

ուրիշը, ավելի բարձրը,—որինակ՝ ճորտատիրությունից անցում և կապիտալիզմը» (ԼԵՆԻՆ)։ Ամբողջ կյանքի և հասարակության զարգացման իսկական հիմքը նյութական արտադրության մեջ հայտնաբերելը թույլ տվեց առաջին անգամ հասկանալ ժողովրդական մասսաների, աշխատավորների մեծ ստեղծագործական դերը պատմության մեջ։ Հասարակական զարգացման պատմությունն առաջին անգամ ըմբռնվեց իբրև «հենց նյութական բարիքներն արտադրողների պատմություն, արտադրական պրոցեսի հիմնական ուժերը հանդիսացող և հասարակության գոյության համար անհրաժեշտ նյութական բարիքների արտադրությունն իրականացնող աշխատավոր մասսաների պատմություն։ Նշանակում է, պատմական գիտությունը, յեթե նա ուզում է իսկական գիտություն լինել, այլևս չի կարող հասարակական զարգացման պատմությունը վերածել թագավորների ու զորավարների գործողությունների, պետությունների «նվաճողների» և «ենթակալողների» գործողությունների, այլ պետք է, ամենից առաջ, զբաղվի նյութական բարիքներն արտադրողների պատմությամբ, աշխատավոր մասսաների պատմությամբ, ժողովուրդների պատմությամբ» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Նայած արտադրության գոյություն ունեցող յեղանակին, հասարակության նյութական կեցությանը՝ կազմավորվում է ամբողջ հասարակակարգի, քաղաքական

*հիմնարկությունների, մարդկանց մտածելակերպի, նրանց հայացքների, իդեաների, թեորիաների նաև վորոշ պատմական բնույթը։ Հասարակական կեցությունն է վորոշում հասարակական գիտակցությունը։ Չի կարելի ճիշտ հասկանալ քաղաքական հիմնարկությունների, իդեաների, թեորիաների էյությունը, յեթե մոռանանք նրանց ծագման նյութական հիմքը—հասարակության կյանքի տնտեսաձևը։ Չի կարելի հասկանալ, թե ինչու մի դարաշրջանում առաջանում են մի տեսակ հիմնարկություններ և իդեաներ, իսկ մի ուրիշ դարաշրջանում՝ այլ հիմնարկություններ և իդեաներ, յեթե յելակետ ընդունենք հենց դրանք և վոչ թե արտադրության յեղանակը։ Որինակ, շահագործողական պետության (ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական) ձևերը միշտ կախված են յեղել հասարակությունն ըստ դասակարգերի՝ ստրկատերերի և ստրուկների, կալվածատերերի և ճորտերի, բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգերի բաժանված լինելուց։ Հասարակական գիտակցության ձևերը (քաղաքական հայացքներ, գիտություն, կրոն և այլն) նույնպես միշտ կախված են վերջին հաշվով մարդկանց միջև տիրապետող արտադրական հարաբերություններից և արմատապես փոխվում են արտադրության յեղանակի, տնտեսական կարգերի մեջ փոխակերպություն մտնելու հետ։ Բացատրելով քաղաքական հիմնարկություն-*

ների, իդեաների, թեորիաների ծագումն ու կախումն արտադրության յեղանակից, պատմական մատերիալիզմի թեորիան բնավ չի ժխտում նրանց լուրջ նշանակությունը հասարակության կյանքում: Պատմական մատերիալիզմը դրանով արմատապես տարբերվում է տնտեսական մատերիալիզմից (տե՛ս): Մի անգամ առաջանալով՝ հասարակական և քաղաքական հիմնարկությունները ու իդեաները իրենք են ուժ դառնում, վորոնք ներգործում են իրենց ծնող պայմանների վրա: Նրանք կա՛մ կասեցնում են հասարակական զարգացումը, յերբև ռեակցիոն ուժեր, վորոնք ծառայում են հասարակության հետամնաց խավերին ու դասակարգերին, կա՛մ առաջ են շարժում այդ զարգացումը, ծառայելով առաջավոր, հեղափոխական դասակարգերին: Հետևողական մատերիալիզմն ու հիստորիզմը սերտորեն՝ և անքակտելի կերպով. միացած են պատմական մատերիալիզմի թեորիայի մեջ: Հենց այդ պատճառով էլ պատմական մատերիալիզմի թեորիայի հայտնագործումով հասարակական գիտությունն առաջին անգամ դարձավ իսկական գիտություն մարդկային հասարակության զարգացման որենքների մասին:

**Պատմության իդեալիստական ըմբռնումը** — հասարակական զարգացման այնպիսի ըմբռնում, վորը պատմական դեպքերի հիմնական պատճառը տեսնում է իդեաների, թեորիաների, «վոգու» մեջ և այլն:

Մինչև Մարքսը պատմության ըմբռնման մեջ իդեալիզմը տիրող ուղղություն եր։ Մինչև իսկ մատերիալիստները մինչև Մարքսը չեյին կարողանում իրենց մատերիալիզմը տարածել հասարակական յերևույթների բնագավառի վրա և վերջիններիս բացատրության մեջ մնում եյին իդեալիզմի դիրքերում։ Այսպես՝ XVIII դարի ֆրանսական մատերիալիստները գալիս եյին այն յեզրակացության, թե հասարակության կյանքը վորոշում են իդեաները («կարծիքներն են կառավարում աշխարհը»)։ Պատմական իրադրությունները ֆրանսական մատերիալիստները դիտում եյին վորպես յերջանիկ կամ դժբախտ պատահականությունների զուգադիպության հետևանք, և վոչ թե վորպես հետևանք հասարակության օրինաչափ զարգացման, վորի հիմքում դրված ե մարդկանց կյանքի նյութական պայմանների փոփոխությունը։ Պատմության ըմբռնման մեջ իդեալիզմն ավարտուն և ցայտուն կերպով արտահայտված ձև գտավ Հեգելի փիլիսոփայության մեջ։ Հեգելի տեսակետով՝ հասարակության պատմությունը մարդկային կուլտուրայի զարգացման և կատարելագործման օրինաչափ պրոցեսն ե։ Բայց օրինաչափության հիմքը և հասարակության զարգացման աղբյուրը պարունակվում են վո՛չ թե հենց հասարակության մեջ, այլ միստիկական «աբսոլյուտ իդեայի» մեջ։ «Աբսոլյուտ իդեան»—ահա այն ստեղծագործական սկզբունքը, վոր կառավարում

*է ժողովուրդների, պետությունների կյանքը, առաջ է շարժում հասարակությանը: Պատմության ըմբռնման մեջ իդեալիստներ էյին սոցիալիստ-ուտոպիստները, թեև նրանք, ինչպես, օրինակ, Սեն-Սիմոնը, արտահայտել են նաև առանձին հանճարեղ կռահումներ այն մասին, վոր արդյունաբերությունը և տեխնիկան հսկայական նշանակություն ունեն հասարակության կյանքի համար: Պատմական զարգացումն իդեալիստորեն էյին հասկանում նաև նարոդնիկները, էսերները, անարխիստները: Նարոդնիկներն, ինչպես հայտնի յե, գտնում էյին, վոր պատմությունը կերտում են «հերոսները», աչքի ընկնող մարդիկ: Նարոդնիկներն իրենց գործունեյությունը կառուցում էյին համայնապարփակ, կյանքից կտրված «իդեալական» պլանների հիման վրա, և վոչ թե հասարակության նյութական կյանքի պայմանների ու պահանջմունքների գիտական ըմբռնման հիման վրա: Առաջին անգամ Մարքսը ցույց տվեց, վոր նյութական արտադրության զարգացումը հասարակական զարգացման հիմքն է: Այդ պատճառով էլ՝ մարքսիստական-լենինյան կուսակցության քաղաքականությունն իբրև գիտական քաղաքականություն, յելակետ է ընդունում հասարակության նյութական կյանքի կոնկրետ պայմաններն ու պահանջմունքները և դասակարգերի պայքարը:*

**Պատմության մատերիալիստական ըմբռնումը** — *տես* Պատմական մատերիալիզմ:

«Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը» — *Պլեխանովի երկը, որ լույս է տեսել 1895 թվին Ն. Բելտով կեղծանունով: Այդ գրքով է «դաստիարակվել ռուս մարքսիստների ամբողջ մի սերունդ»* (ԼԵՆԻՆ)։ *Նրա մեջ մարքսիստական փիլիսոփայության շարադրանքին զուգընթաց տրված է նարոդնիկների սուբյեկտիվ հայացքների խոր քննադատությունը: Մինչմարքսյան փիլիսոփայության և սոցիոլոգիայի անալիզին նվիրված է չորս գլուխ, որոնց մեջ Պլեխանովը քննադատաբար գնահատում է XVIII դարի ֆրանսական մատերիալիստներին, ռեստավրացիայի ժամանակների ֆրանսական բուրժուական պատմաբաններին, սոցիալիստ-ուտոպիստներին, գերմանական իդեալիստական փիլիսոփայության ներկայացուցիչների (Հեգել) հայացքները: Պլեխանովը ցույց է տալիս, որ միմիայն Մարքսն ու Ենգելսն են ստեղծել մինչև վերջը հետևողական մատերիալիստական փիլիսոփայություն, որ միմիայն Մարքսն է ստեղծել իսկական գիտությունը հասարակության մասին՝ բաց անելով նրա զարգացման նյութական հիմքը: Այդ նույն աշխատության մեջ Պլեխանովը տալիս է «հերոսների» և «ամբոխի» մասին նարոդնիկական սուբյեկտիվ թեորիայի փայլուն քննադատությունը և շարադրում է մարքսիստական հայացքներն անհատի դերի մասին պատմության մեջ և հասարակական զարգացման օրինաչափության մասին:*

**Պետություն**—*տնտեսապես իշխող դասակարգի քաղաքական կազմակերպությունը, վորի նպատակն է պաշտպանել գոյություն ունեցող տնտեսակարգը և ճնշել մյուս դասակարգերի դիմադրությունը։ Պետությունը «մի մեքենա յե՝ մի դասակարգի տիրապետությունը մյուսի վրա պահպանելու համար»* (Լենին), *«մեքենա իշխող դասակարգի ձեռքում՝ իր դասակարգային հակառակորդների դիմադրությունը ճնշելու համար»* (Ստալին)։ *Պետությունը ծագեց հասարակությունը շահագործողների և շահագործվողների դասակարգերի բաժանվելու հետ՝ իբրև դասակարգային անհաշտելի հակասությունների արդյունք։ Պատմության մեջ գոյություն է ունեցել շահագործողների պետության յերեք հիմնական տիպ*—ստրկատիրական, ֆեոդալական և բուրժուական։ *Շահագործողների քաղաքական տիրապետության ձևերը կարող են տարբեր լինել։ Այդպես, բուրժուազիայի քաղաքական տիրապետության ձևերն են՝ բուրժուական միապետությունը, դեմոկրատական հանրապետությունը, ֆաշիստական դիկտատուրան։ Այդ ձևերի դասակարգային եյությունը մեկ է—կապիտալի դիկտատուրան։ Բուրժուական պետության նույնիսկ ամենաառաջավոր քաղաքական ձևը—դեմոկրատական հանրապետությունը պառլամենտով և ընդհանուր ընտրական իրավունքի ֆորմալ ճանաչումով հանդերձ՝ կապիտալի տիրապետության գործիք է մնում։ «Կապիտալի ուժն ամեն ինչ է,*

բարյան ամեն ինչ է, իսկ պառլամենտը, ընտրությունները,—դրանք մարիոնետներ, տիկնիկներ են» (Լենին)։ Սոցիալիստական հեղափոխության հետևանքով պրոլետարիատը վոչնչացնում է բուրժուական պետությունը և ստեղծում է պետության սկզբունքորեն նոր տիպ—պրոլետարիատի դիկտատուրա (տե՛ս)։ Անցումը դեպի նոր հասարակակարգը կատարվում է շահագործողների—բնակչության չնչին փոքրամասնության—տիրապետության բռնի, հեղափոխական տապալման միջոցով։ Պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրն է՝ վոչնչացնել մարդու շահագործումը մարդու կողմից, վերացնել դասակարգերը, կենսագործել կոմունիզմի կառուցումը։ «Մենք ավելի ևս առաջ ենք գնում, դեպի կոմունիզմը։ Արդյոք պետությունը մեզ մոտ կպահպանվի՞ նաև կոմունիզմի ժամանակաշրջանում։ Այո՛, կպահպանվի, յեթե լիկվիդացիայի չենթարկվի կապիտալիստական շրջապատումը, յեթե չվոչնչացվի ռազմական հարձակումների վտանգը դրսից... Վո՛չ, չի պահպանվի և կմահանա, յեթե կապիտալիստական շրջապատումը լիկվիդացիայի յենթարկվի, յեթե այն փոխարինվի սոցիալիստական շրջապատումով» (Ստալին)։

**«Պետություն յեվ հեղափոխություն»** — Վ. Ի. Լենինի հանճարեղ յերկը, վոր նա գրել է 1917 թվի օգոստոսեպտեմբերին։ «Պետություն և հեղափոխություն» աշխատությունը մի նոր էտապ է ներկայացնում պե-

տության մասին յեղած մարքսիստական ուսմունքի զարգացման մեջ և միևնույն ժամանակ հեղափոխական պրոլետարիատի պրակտիկ գործողությունների մարտական ծրագիր ե հանդիսանում։ Գրքի I գլխում Լենինը ցույց ե տալիս, որ պետությունը ծագել ե հասարակական զարգացման որոշ աստիճանում որպես դասակարգային հակասությունների անհաշտելիության արդյունք։ Պետությունը մի դասակարգի բռնության որգանն ե մյուսի վերաբերմամբ։ Առաջ դոյություն ունեցած բոլոր պետությունները փոքրամասնության—շահագործողների բռնության որգաններ եյին մեծամասնության—շահագործվողների վերաբերմամբ։ Արդի բուրժուական-դեմոկրատական հանրապետությունները նույնպես շահագործող-կապիտալիստների տիրապետության ձև են հանդիսանում ճնշված բնակչության մեծամասնության վերաբերմամբ։ Լենինը ցույց ե տալիս, թե եսերներն ու մենշևիկներն ինչպես եյին աղավաղում մարքսիզմը, պնդելով, թե պետությունը դասակարգերի հաշտեցման որգան ե, և ինչպես եր ավելի նրբորեն կեղծում մարքսիզմը Կաուցկին, որը ժխտում եր բուրժուական պետական մեքենան պրոլետարիատի կողմից վոչնչացնելու անհրաժեշտությունը։ II, III և IV գլուխներում Լենինը ցույց ե տալիս, թե ինչպես Մարքսն ու Ենգելսն ընդհանրացնելով 1848—1851 թ. թ. հեղափոխության և հատկապես 1871 թ. Փարիզի Կոմունայի փորձը, այն

յեզրակացությանն են գալիս, որ պրոլետարիատը, հաստատելով իր դիկտատուրան, որը նրան անհրաժեշտ է՝ շահագործողների դիմադրությունը ճնշելու և սոցիալիզմ կառուցելու համար, պետք է ոչնչացնի, փշրի հին բուրժուական պետական մեքենան։ Լենինը ցույց է տալիս, որ Մարքսի ու Էնգելսի ուսմունքի մեջ գլխավորը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի ուսմունքը և որ հենց այդ ուսմունքն էր, որ մարքսիզմից ամլացվում էր մարքսիզմի թշնամիների կողմից։ Լենինը բազմիցս ընդգծում է, որ բուրժուական պետությունը չի մահանում, ինչպես քարոզում էյին օպորտունիստները, այլ ոչնչացվում է պրոլետարական հեղափոխության կողմից, իսկ հետագայում մահանում է պրոլետարական պետությունը։ V գլխում Լենինը վերլուծում է պրոլետարական պետության մահացման տնտեսական հիմունքները։ Մերկացնելով բուրժուական դեմոկրատիայի ամբողջ կեղծիքը, բուրժուազիայի, որի նպատակն է խաբել և ստրկացնել մասսաներին, Լենինը բացատրում է, որ պրոլետարիատի դիկտատուրան պատմության մեջ առաջին անգամ տալիս է իսկական դեմոկրատիա ժողովրդի համար, արտահայտում է հսկայական մեծամասնության շահերը։ Պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրն է ոչնչացնել դասակարգերը, կոմունիստական հասարակություն կառուցել։ Բնորոշելով կոմունիզմի առաջին փուլը՝

սոցիալիզմը, Լենինը մատնանշում է, վոր այդ փուլի հիմնական սկզբունքն է՝ «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»։ Կոմունիզմի բարձրագույն փուլի ժամանակ, յերբ արտադրողական ուժերի հսկայական զարգացման հետևանքով արդյունքների լիակատար առատություն կստեղծվի, արդյունքները կբաշխվեն հետևյալ սկզբունքով. «յուրաքանչյուրն ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ կարիքների»։ Լենինի աշխատության յեզրափակիչ մասը տալիս է պետության հարցի վերաբերմամբ անարխիզմի հայացքների և մարքսիզմի օպորտունիստական խեղաթյուրումների վոչնչացնող քննադատությունը։ Քննության առնելով Պլեխանովի բանավեճն անարխիստների հետ՝ Լենինն ընդգծում է, վոր Պլեխանովը լռության է տվել ամենահրատապը, քաղաքականորեն ամենաեյականը անարխիզմի դեմ մղվող պայքարում—անարխիստների վերաբերմունքը դեպի պետությունը։ Անարխիստական թեորիան ընդհանրապես պետության անհապաղ վոչնչացման մասին (այդ թվում նաև պետության բուխարինյան «պայթեցման թեորիան») հակահեղափոխական թեորիա յե, վորովհետև ուղղված է պրոլետարիատի դիկտատուրայի դեմ։ Վերլուծելով Կաուցկու կողմից մարքսիզմին դավաճանելու պատմությունը, Լենինը ցույց է տալիս, վոր նրա մոտ սիստեմատիկ թեքում դեպի օպորտունիզմը յերևան

եր գալիս հատկապես պետության հարցում: Կաուցկու այդ օպորտունիստական տատանումներն ավարտվեցին նրանով, որ նա անցավ օպորտունիզմի դիրքերը, լրիվին հրաժարվեց պրոլետարական հեղափոխությունից, բուրժուական պետական մեքենան խորտակելու իդեայից: Լենինն այն յեզրակացությանն է հանգում, որ II Ինտերնացիոնալն իր պաշտոնական ներկայացուցիչների ճնշող մեծամասնությամբ հանգել է օպորտունիզմին: «Իսկ մենք,—գրում եր Լենինը,—կանջատվենք օպորտունիստներից և ամբողջ գիտակից պրոլետարիատը մեզ հետ կլինի... Բուրժուազիային տապալելու համար, բուրժուական պառլամենտարիզմը խորտակելու համար մղվող պայքարում, կոմունայի տիպի դեմոկրատական հանրապետություն կամ Բանվորների ու Զինվորների Դեպուտատների Խորհուրդների հանրապետություն հաստատելու համար, պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի համար մղվող պայքարում»: Այդ աշխատության մեջ Լենինն ապացուցեց, որ բանվոր դասակարգի քաղաքական իշխանության պետական ձևը, այսինքն՝ պրոլետարիատի դիկտատուրայի ձևը, հանդիսանում է խորհուրդների իշխանությունը, և ոչ թե պառլամենտական տիպի հանրապետությունը, ինչպես մինչև այդ կարծում եյին մարքսիստները:

**Պլատոն** (427—347 մինչև մեր թվակ.)—հին հունական փիլիսոփա, օբյեկտիվ իդեալիստ, ստրկատի-

րական արիստոկրատիայի իդեոլոգ։ Պլատոնը ստեղծողն է օբյեկտիվ իդեալիզմի փիլիսոփայական սիստեմի, ըստ որի գոյության յենթակա իրերի (վոչ իսկական) աշխարհի կողքին գոյություն ունի բանականությամբ հասանելի իդեաների հատուկ (իսկական) աշխարհը. օրինակ, բացի ռեալ ձիերից, ըստ Պլատոնի, գոյություն ունի «ձիությունը», բացի սեղաններից—«սեղանությունը» և այլն։ Ըստ Պլատոնի՝ իրերը իդեաների լոկ ստվերներն են։ Իդեաները հավիտենական են, իսկ իրերը՝ անցողական։ Յեթե իրերը ըմբռնվում են յեզակի պատկերացումներով, ապա իդեաները մարդու կողմից ճանաչվում են ընդհանուր բնույթի գաղափարներով։ Այդպիսով, իրերի եյության իսկական ճանաչումը կատարվում է վո՛չ թե զգայություններով, այլ միմիայն բանականությամբ, գաղափարներով։ Պլատոնի իդեալիստական փիլիսոփայությունը մեծ դեր խաղաց քրիստոնեյության այն ուսմունքի մշակման գործում, վոր վերաբերում է հոգու անմահությանը և մարմնի, այսինքն՝ մատերիայի մեղանչականությանը։

**Պլեխանով** Գ. Վ. *(1856—1918)*—ռուս խոշորագույն մարքսիստներից մեկը։ Սկզբում Պլեխանովը նարոդնիկ եր։ Եմիգրացիայում (1880 թ.) Պլեխանովն իր կապերը խզեց նարոդնիկության հետ և 1883 թվին արտասահմանում կազմակերպեց ռուսական առաջին մարքսիստական խումբը՝ «Աշխատանքի ազա-

ազատություն» խումբը: Խմբի մասնակիցները ռուսերեն թարգմանեցին Մարքսի ու Էնգելսի մի շարք աշխատությունները, տպագրեցին դրանք արտասահմանում և գաղտնի տարածում էին Ռուսաստանում: Պլեխանովի փիլիսոփայական աշխատությունները, որոնք վերաբերում են այդ ժամանակաշրջանին, մեծ օգուտ բերին դիալեկտիկական մատերիալիզմի պաշտպանության և հիմնավորման գործին: Առանձնապես մեծ է Պլեխանովի ծառայությունն այն պայքարում, որ նա մղեց հանուն փիլիսոփայական մատերիալիզմի, ընդդեմ իդեալիզմի, ընդդեմ մարքսիզմը կանտականության հետ միացնելու բազմաթիվ փորձերի: Իր աշխատություններով Պլեխանովը վճռական հարված հասցրեց նարոդնիկությանը, որի վերջնական իդեական ջախջախումն իրագործեց Լենինը: Պլեխանովը սուր կերպով քննադատում էր Բեռնշտայնի ռևիզիոնիզմը: «20 տարվա ընթացքում, 1883—1903, նա տվեց բազմաթիվ հիանալի երկեր, հատկապես օպորտունիստների, մախիստների, նարոդնիկների դեմ» (ԼԵՆԻՆ): ՌՍԴԲԿ II համագումարից հետո Պլեխանովը հարեց մենշևիկներին: Պլեխանովի փիլիսոփայական աշխատությունները Լենինը գնահատել է որպես «լավագույնը մարքսիզմի ամբողջ միջազգային գրականության մեջ»: Սակայն Պլեխանովի փիլիսոփայական աշխատություններում կան նաև խոշորագույն թերություններ, որ քննադատել է Լենինն իր մի

շարք աշխատություններում։ Օրինակ, Պլեխանովը խոշոր սխալ թույլ տվեց հիերոգլիֆների թեորիայի (տե՛ս) հարցում, իմացաբանությունն անջատում էր դիալեկտիկայից, չհասկանալով, վոր հենց դիալեկտիկան է մարքսիզմի իմացաբանությունը, վորոշակի տարբերություն չէր դնում փորձի մատերիալիստական և իդեալիստական ըմբռնման միջև, սողանցք թողնելով իդեալիզմի համար, և թույլ էր տալիս միքանի ուրիշ լուրջ փիլիսոփայական սխալներ։ Պլեխանովի կարևորագույն աշխատություններն են՝ «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» 1883 թ., «Մեր տարաձայնությունները» 1885 թ., «Պատմության նկատմամբ մոնիստական աշխարհհայացքի զարգացման մասին» 1895 թ., «Անհատի դերի հարցի մասին պատմության մեջ» 1898 թ., «Очерки по истории материализма» 1896 г., «Պատմության մատերիալիստական ըմբռնման մասին» 1897 թ.։

**Պոզիտիվիզմ** (լատիներեն «պոզիտիվուս» — դրական բառից)—ամենից ավելի տարածված իդեալիստական հոսանքներից մեկն արդի բուրժուական փիլիսոփայության մեջ։ Պոզիտիվիզմն իր ծառայությունը նրա մեջ է տեսնում, վոր նա հենվում է վո՛չ թե վերացական յեզրակացությունների վրա, այլ բացառապես պոզիտիվ, դրական փաստերի վրա։ Բացի դրանից, պոզիտիվիզմը պնդում է, թե նա վեր է կանգնած ինչպես մատերիալիզմից, այնպես էլ իդեալիզ-

մեջ, չհանդիսանալով ո՛չ մեկը և ո՛չ մյուսը: Սակայն իրոք պոզիտիվիզմն իդեալիստական մետաֆիզիկայի ամենաժամկերեսային և վուլգար տարատեսակներից մեկն է: Պոզիտիվիզմի բնորոշ գիծը փորձի և գիտության դերի պարզեցրած իդեալիստական ըմբռնումն է. պոզիտիվիզմը փորձն ըմբռնում է որպես սուբյեկտիվ զգայությունների կամ պատկերացումների միակցություն, իսկ գիտության դերը հանգեցնում է միմիայն փաստերի նկարագրությանը (և ոչ թե բացատրությանը): Պոզիտիվիզմի նախահայրը համարվում է XIX դ. ֆրանսիական փիլիսոփա Օգյուստ Կոնտը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին իրենց պոզիտիվիստ էին համարում այն բոլոր փիլիսոփաները, որոնք ջանում էին տեղավորվել մատերիալիզմի և իդեալիզմի միջև, «հաղթահարել» նրանց հակադրությունը: Մարքսիզմի կլասիկները մեծ արհամարհանքով էին վերաբերվում այդ ռեակցիոն փիլիսոփայական հոսանքին: Այսպես, օրինակ, Մարքսը 1866 թվի հուլիսի 7-ին Էնգելսին ուղղած իր նամակում գրում էր, որ Կոնտը «Հեգելի համեմատությամբ...խղճուկ տպավորություն է թողնում»: «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ Լենինը տալիս է պոզիտիվիզմի ջախջախիչ քննադատությունը. նա պոզիտիվիստներին անվանում է այլասերված շաղակրատներ, որոնք իրենց փիլիսոփա յեն կոչում, իսկ նրանց փաստարկման մեթոդը անվանում է «հա-

մատուցած բուրժուական շառլատանություն»: Մարքսիզմի մեխանիստական ռևիզիայի ներկայացուցիչները ԽՍՀՄ-ում պոզիտիվիստորեն էին դնում փիլիսոփայության հարցը, այն հանդեցնելով «բնագիտության վերջին յեզրակացությունների» դերին կամ պաշտպանելով «դուրս նետել փիլիսոփայությունը» պոզիտիվիստական լոզունգը: Հակառակ պոզիտիվիզմի՝ կոնկրետ գիտությունների զարգացումը վո՛չ միայն չի վերացնում փիլիսոփայության անհրաժեշտությունը, այլ այդ զարգացումը հենց հնարավոր ե միմիայն վորոշ փիլիսոփայական ուսմունքի—դիալեկտիկական մատերիալիզմի բազայի վրա:

**Պրագմատիզմ** (հունարեն «պրագմա» — գործողություն բառից)—ռեակցիոն, իդեալիստական ուղղություն արդի բուրժուական փիլիսոփայության մեջ, վոր ժխտում ե ճշմարտության օբյեկտիվությունը և պնդում ե, թե գիտական թեորիայի արժեքը վորոշվում ե վո՛չ թե նրանով, թե նա ինչ չափով ե ճիշտ արտացոլում իրականությունը, այլ բացառապես այն ոգուտով կամ շահով, վոր այդ թեորիան տալիս ե այս կամ այն կոնկրետ դեպքում: Յելնելով այս նախադրյալից՝ պրագմատիզմը կրոնի «ճշմարտությունները» (որինակ, Հիսուսի անապական հղության, աստծու գոյության, դժոխքի, դրախտի և այլն առասպելները) ավելի պակաս ոգուտ չի համարում, քան գիտության ճշմարտությունները: Դրա հետ

*միասին պրագմատիզմը հրաժարվում է մաթեմատիկական և բնագիտական թեորիաները բնության օբյեկտիվ օրենքների ճիշտ արտացոլումը համարել. Նա տեսնում է նրանցում լոկ սուբյեկտիվ, գիտնականների կողմից քմահաճորեն կազմված հիպոթեզներ, վորոնք նրանց հնարավորություն են տալիս ավելի կամ պակաս հարմարությամբ լուծել այս կամ այն պրակտիկ խնդիրները: Պրագմատիզմի ռեակցիոն էությունը միանգամայն ակներև է: Վորպես փիլիսոփայական ուսմունք պրագմատիզմը կազմավորվեց* XIX *դ. վերջին և ամենից ավելի տարածվեց Ամերիկայում և Անգլիայում, վորտեղ պրագմատիզմի ներկայացուցիչներ հանդիսացան Ջեմսը, Դյուին և ուրիշները:*

**Պրակտիկա** — *տես* Թեորիա և պրակտիկա:

**Պրոլետարիատի դիկտատուրա** — *կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցման ժամանակաշրջանի պետությունը: Ընկեր Ստալինը պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերի—խնդիրների բովանդակության հետևյալ բնութագիրն է տվել.* «1) *Պրոլետարիատի իշխանության օգտագործում շահագործողներին ճնշելու համար, յերկրի պաշտպանության համար, ուրիշ յերկրների պրոլետարների հետ կապերն ամրապնդելու համար, հեղափոխության զարգացման ու հաղթության համար բոլոր յերկրներում:* 2) *Պրոլետարիատի իշխանության օգտագործումը աշխատա-*

վոր և չահագործվող մասսաներին բուրժուազիայից վերջնականապես կտրելու համար, պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ ամրացնելու համար, այդ մասսաներին սոցիալիստական շինարարության գործին ներգրավելու համար, այդ մասսաներին պրոլետարիատի կողմից պետականորեն ղեկավարելու համար: 3) Պրոլետարիատի իշխանության օգտագործում սոցիալիզմը կազմակերպելու համար, դասակարգերը վոչնչացնելու համար, առանց դասակարգերի հասարակության, առանց պետության հասարակության անցնելու համար... Միայն այդ բոլոր յերեք կողմերը, միասին վերցրած, մեզ տալիս են պրոլետարիատի դիկտատուրայի լրիվ և ամբողջացած հասկացողությունը» (Ստալին): Իր կազմակերպական և քաղաքական խնդիրները պրակտիկ կերպով կենսագործելիս պրոլետարիատի դիկտատուրան հենվում է աշխատավորների մասսայական կազմակերպությունների, պրոֆմիությունների, կոոպերացիայի, յերիտասարդության միության վրա և այլն: Պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևը հանդիսանում են Խորհուրդները, ամենից ավելի դեմոկրատական կազմակերպությունները, վորոնք ապահովում են բուն մասսաների մասնակցությունը պետության կառավարման մեջ: Պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում հիմնական ղեկավար ուժ հանդիսանում է բանվոր դասակարգի քաղաքական ավանգարդը—կո-

*մոնիստական կուսակցությունը։ Պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական շինարարության զարգացման հետ միասին զարգանում ու ամրապնդվում է նաև պրոլետարիատի դիկտատուրան։ ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրության մեջ իրենց օրենսդրական արտահայտությունը գտան խորհրդային ժողովրդի համաշխարհային-պատմական հաղթությունները—սոցիալիստական հասարակության կառուցումը, շահագործող դասակարգերի վոչնչացումը, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի դիկտատուրայի սոցիալական բազայի հետագա ընդլայնումն ու ամրացումը։ Մեր սոցիալիստական պետությունն իր զարգացման մեջ Հոկտեմբերյան հեղափոխությունից սկսած յերկու գլխավոր փուլ է անցել։ Առաջին փուլում—Հոկտեմբերյան հեղափոխության սկզբից մինչև շահագործող դասակարգերի լիկվիդացիայի մոմենտը—հիմնական խնդիրն եր՝ ճնշել տապալված դասակարգերի դիմադրությունը, կազմակերպել յերկրի պաշտպանությունը ինտերվենտների հարձակումից, վերականգնել արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, պայմաններ նախապատրաստել կապիտալիստական տարրերի լիկվիդացիայի համար։ Դրան համապատասխան՝ Խորհրդային պետությունը յերկու ֆունկցիա յեր իրականացնում—տապալված դասակարգերի ճնշումը յերկրի ներսում և յերկրի պաշտպանությունը դրսից յեկող հարձակումից։ Յերկրորդ փուլում—կապիտա-*

լիստական տարրերի լիկվիդացիայի մոմենտից մինչև Ստալինյան Սահմանադրության ընդունելը—Խորհրդային պետության հիմնական խնդիրն է՝ յերկրում սոցիալիստական տնտեսություն կազմակերպել, կապիտալիստական տարրերի վերջին մնացորդների լիկվիդացիան, կատարելապես ժամանակակից բանակի կազմակերպելը, կուլտուրական հեղափոխություն կազմակերպելը։ Հենց դրանով էլ փոխվեցին սոցիալիստական պետության ֆունկցիաները։ Անհետացավ յերկրի ներսում ռազմական միջոցներով ճնշելու ֆունկցիան, հանդես յեկավ սոցիալիստական սեփականությունը գողերից և ժողովրդական բարիքը հափշտակողներից պաշտպանելու ֆունկցիան, ամբողջովին պահպանվեց դրսից յեկող հարձակումից յերկիրը ռազմական միջոցներով պաշտպանելու ֆունկցիան, պահպանվեց և զարգանում է տնտեսական-կազմակերպչական և կուլտուր-կրթական աշխատանքի ֆունկցիան։ «Այժմ մեր պետության հիմնական խընդիրը յերկրի ներսում խաղաղ տնտեսական-կազմակերպչական և կուլտուր-կրթական աշխատանքն է։ Ինչ վերաբերում է մեր բանակին, պատժիչ մարմիններին և հետախուզությանը, ապա նրանք իրենց սուր ծայրով ուղղված են արդեն ո՛չ թե դեպի յերկրի ներսը, այլ նրանից դեպի դուրս, արտաքին թշնամիների դեմ։ Ինչպես տեսնում եք, մենք այժմ ունենք բոլորովին նոր, սոցիալիստական պետություն, վոր

*պատմության մեջ դեռ չի տեսնված և իր ձևով ու ֆունկցիաներով զգալի չափով տարբերվում է առաջին փուլի սոցիալիստական պետությունից»* (Ստալին):

# Ռ

**Ռասա** — մարդկանց բիոլոգիական խումբ, որ կազմվել է մարդկության զարգացման վաղ աստիճաններում: Մի շարք հատկանիշներով—մաշկի գույնով, մազերի ձևով ու գույնով, դիմագծերով, մարմնի կառուցվածքով և այլն—տարբերում են յերեք հիմնական ռասա. սև (նեգրեր)—մուգ գույնի մաշկ և խուճուճ մազեր. դեղին (չինացիներ, ճապոնացիներ, մոնղոլներ, բուրյատներ և այլն)—դեղնավուն մաշկ և ուղիղ, սև մազեր. սպիտակ—բաց գույնի մաշկ և այս կամ այն գույնի մազեր: Մարդկության պատմության մեջ տեղի յե ունեցել և տեղի յե ունենում ռասաների խառնում, վորն այդ հատկանիշները պայմանական և անհաստատ է դարձնում: Թույլատրելի չե ռասայի հետ շփոթել ժողովուրդը և ազգը, վորոնք սոցիալական յերևույթ են, հասարակության յերկարատև պատմական զարգացման հետևանք: «Ազգը՝ դա պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրությունն է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և պսիխիկական կերտվածքի, վորն արտահայտվում է կուլտուրայի ընդհանրության մեջ: Ընդսմին՝

ըստինքյան հասկանալի է, որ ազգը, ինչպես և ամեն մի պատմական երևույթ, ենթակա է փոփոխման օրենքին, ունի իր պատմությունը, սկիզբն ու վերջը» (Ստալին): Ռասսայական «թեորիան», որ քարոզում են ֆաշիստները և որը մարդկանց բաժանում է իշխելու կոչված «բարձրադասյին» ռասսաների և հպատակվելու դատապարտված «ստորին» ռասսաների, «նույնքան հեռու է գիտությունից, ինչպես երկինքը երկրից» (Ստալին)։ Այդ «թեորիայով» են արդարացնում ֆաշիստներն իրենց ռեակցիոն քաղաքականությունը և իրենց մարդատյացությունը։ Մարքսիզմը բոլոր ռասսաները հավասարարժեք է համարում։ Սոցիալիզմի հաղթությունը ԽՍՀՄ-ում անհերքելիորեն ապացուցեց, որ բոլոր ազգերն ու ժողովուրդները, անկախ ռասսայական հատկանիշներից, ազատվելով շահագործումից, իսկ դրա հետ միասին նաև փոխադարձ թշնամությունից, հավասարապես ընդունակ են յուրացնելու և առաջ շարժելու առաջավոր կուլտուրան։

**Ռացիոնալիզմ** *(լատիներեն «ռացիո»—բանականություն բառից)—ուղղություն իմացաբանության մեջ, որ իսկական գիտության միակ աղբյուրն ընդունում է բանականությունը, ի հակադրություն էմպիրիզմի, որը ճշմարտության ճանաչողության միակ աղբյուրը համարում է զգացողությունը։ Դիալեկտիկական մատերիալիզմը հաղթահարեց ռացիոնա-*

լիզմի և էմպիրիզմի միակողմանիությունները, գիտականորեն վճռեց իմացության զգայական և տրամաբանական մոմենտների հարցը, դիտելով դրանք օրգանական կապակցությա՛ և միասնության մեջ: Զգայական փորձը հանդիսանում է իմացության ելակետային մոմենտը, իսկ տրամաբանական հասկացողությունները, այսինքն՝ ռացիոնալ մոմենտը, զգայական տվյալների վերամշակումն է մարդկանց գլուխներում: Ռացիոնալիզմի ականավորագույն ներկայացուցիչներն էին՝ Դեկարտը, Սպինոզան, Լայբնիցը:

**Ռեալիզմ միջնադարյան** — *ուղղություն միջնադարյան սխոլաստիկայի մեջ, որ պնդում էր, թե ընդհանուր գաղափարները («ունիվերսալիաները») ռեալ և օբյեկտիվ գոյություն ունեն և նախորդում են նյութական իրերի գոյությանը: Ռեալիստներն առաջադրում էին յերկու դրույթ.* 1) *«Ունիվերսալիաները գոյություն ունեն իրերից առաջ» և* 2) *«Ունիվերսալիաները ռեալություններ են»: Այդպիսով, միջնադարյան ռեալիզմը կանգնած էր հին հունական փիլիսոփա Պլատոնի իդեալիստական դիրքի վրա, որ ուսուցանում էր, թե ռեալ է միայն իդեաների այնկողմային աշխարհը, իսկ յերկրային իրականությունը իդեաների աշխարհի միմիայն դժգույն պատճենն է: Միջնադարյան ռեալիզմը կաթոլիկության փիլիսոփայական բազան էր: Ռեալիզմի ականավորագույն ներկայացուցիչներն էին՝ Անսելմ Քենտերբերեցին և Վիլ-*

*Հեյմ Շամպոյեցին։ Ռեալիզմի դեմ համառ պայքար են մղում սխոլաստիկայի մեջ յեղած նոմինալիստական ուղղության ներկայացուցիչները (տե՛ս* Նոմինալիզմ)։

**Ռելյատիվիզմ** *(լատիներեն ռելյատիվուս—հարաբերական բառից)—ուսմունք մարդկային իմացության սուբյեկտիվության, հարաբերականության և պայմանականության մասին։ Ընդունելով մեր գիտության հարաբերականությունը՝ ռելյատիվիզմը ժխտում է իմացության օբյեկտիվությունը, գտնում է, որ մեր գիտելիքների մեջ չեն արտացոլվում օբյեկտիվ աշխարհի հատկությունները։ «Ռելյատիվիզմը, որպես իմացաբանության հիմք, ո՛չ միայն ընդունում է մեր գիտելիքների հարաբերականությունը, այլև ժխտում որևէ օբյեկտիվ, մարդկությունից անկախ գոյություն ունեցող չափանիշի կամ մոդելի, որին մոտենում է մեր հարաբերական իմացությունը»* (Լենին)։ *Երբ գիտությունն ապացուցեց, որ մեր գիտելիքները մատերիայի կազմության մասին հարաբերական են, մոտավոր չափով են ճիշտ և որ ատոմը տարրալուծվում է էլեկտրոնների, որը նույնպես մատերիայի վերաբերյալ մեր գիտելիքների սահմանը չէ, ռելյատիվիստ—ֆիզիկոսներն սկսեցին ժխտել ատոմի և մատերիայի ռեալությունը։ Պնդելով մեր գիտելիքների բացարձակ հարաբերականությունը, այսինքն՝ նրանց լիակատար պայմանականությունը, սուբյեկտի-*

վությունը, կամայական լինելը, ռելատիվիզմն հենց դրանով դեպի սուբյեկտիվ իդեալիզմն է տանում։ Դիալեկտիկական մատերիալիզմը, ընդունելով իմացության հարաբերականությունը, գտնում է, որ նա հարաբերական է մեր ձեռք բերած գիտելիքների լրիվության իմաստով միայն, բայց նա ունի օբյեկտիվ ճշմարտության (տե՛ս) նշանակություն, հանդիսանալով ինչպես գոյություն ունեցող աշխարհի արտացոլումը։

**Ռևիզիոնիզմ փիլիսոփայական**—մարքսիզմին թշնամական հոսանք, որ սկզբնապես հանդես է եկել 90-ական թվականների վերջին դիալեկտիկական մատերիալիզմի դեմ՝ մարքսիզմի փիլիսոփայական հիմունքը «վերանայելու» և «ուղղելու» դրոշակի տակ։ Ռևիզիոնիզմի նախահայրը՝ համարվում է Ն. Բեռնշտայնը (տե՛ս)։ Դիալեկտիկան, այսինքն՝ ներքին հակասությունների և թռիչքների հիման վրա կատարվող զարգացման ուսմունքը, ռևիզիոնիստները փոխարինեցին վուլգար էվոլյուցիոնիզմով, որ շարժումը դիտում է որպես աճման պարզ պրոցես, որպես դանդաղ և աստիճանական զարգացում։ Դրանից ելնելով՝ նրանք ժխտում էին պրոլետարիատի դիկտատուրան, նրան հակադրելով «կապիտալիզմի խաղաղ ներաճումը սոցիալիզմի մեջ». պրոպագանդա էին անում համագործակցություն բուրժուազիայի հետ, դասակարգային շահերի ներդաշնակության ուսմունքը

և այլն։ Բեռնշտայնի և ուրիշների կանտական ռևիզիոնիզմից անմիջապես հետո յերևան յեկան մախիստական տիպի ռևիզիոնիստները՝ Ֆրից Ադլերը Ավստրիայում, Բոգդանովը, Լունաչարսկին, Յուշկևիչը և ուրիշները Ռուսաստանում։ Ռևիզիոնիստ-մախիստները ջանում եյին դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը նենգափոխել մախիստական ռեակցիոն փիլիսոփայությամբ։ Փիլիսոփայության բնագավառում տիպիկ ռևիզիոնիստներ եյին Կաուցկին և II Ինտերնացիոնալի մյուս թեորետիկները։ Նրանց փիլիսոփայական ռևիզիոնիզմը նրանց քաղաքական օպորտունիզմի և պրոլետարական հեղափոխության գործին դավաճանելու հիմնավորումն եր։ Միայն Լենինն ու Ստալինը հանդես յեկան մարքսիզմի փիլիսոփայական և գիտական-պատմական հիմքերի ռևիզիայի դեմ, պաշտպանեցին այդ հիմքերը։ ԽՍՀՄ-ի պայմաններում փիլիսոփայության մեջ հակամարքսիստական, ռևիզիոնիստական հոսանքներ եյին մեխանիկական մատերիալիզմը (տե՛ս) և մենշևիկող իդեալիզմը (տե՛ս)։

★

# Ս

**Սենսուալիզմ** (լատիներեն «սենսուս» — զգայություն բառից) — փիլիսոփայական ուսմունք, որը իմացության աղբյուր է համարում զգայությունները։ Լենինը պարզաբանել է, որ զգայություններից ելնելով կարելի յե գնալ իդեալիզմի գծով և մատերիալիզմի գծով։ Սենսուալիստ-մատերիալիստները (Լոկկ, Հոլբախ, Հելվեցիուս, Ֆոյերբախ) գտնում են, որ զգայություններն առաջ են գալիս արտաքին աշխարհի առարկաների՝ մեր զգայարանների վրա ներգործելուց։ Սենսուալիստ-իդեալիստները (Բերկլի, Յում, Մախ, Ավենարիուս, Բոգդանով) պնդում են, թե մեր զգայությունները լոկ սուբյեկտիվ ապրումներ են և չեն կարող արտացոլել օբյեկտիվ արտաքին աշխարհը, որովհետև վերջինս, նրանց տեսակետով, գոյություն չունի։ Դիալեկտիկական մատերիալիզմը կանգնած է մատերիալիստական սենսուալիզմի հողի վրա։

**Սեփականությունը** — մարքսիզմի-լենինիզմի ուսմունքի համաձայն՝ որոշվում է արտադրության ձևերով, հետևաբար, պատմական բնույթ ունի։ Ի հա-

կադրություն բուրժուական գիտնականների, վորոնք պաշտպանում են մասնավոր սեփականության սկզբունքի անփոփոխելիությունը, մարքսիզմ-լենինիզմն ապացուցում է, վոր մասնավոր սեփականությունը ծագել է միմիայն հասարակական զարգացման վորոշ աստիճանում: «Համկ(բ)Կ պատմության համառոտ դասընթացում» ցույց է տրվում սեփականության ձևերի փոփոխությունը հասարակության զարգացման յուրաքանչյուր նոր պատմական աստիճանում: Նախնադարյան-համայնական հասարակակարգի ժամանակ արտադրական հարաբերությունների հիմքն արտադրության միջոցների հանրային սեփականությունն է: Ստրկատիրական հասարակակարգի ժամանակ արտադրական հարաբերությունների հիմքն է հանդիսանում այն, վոր ստրկատիրոջ սեփականությունն են արտադրության միջոցները, ինչպես նաև արտադրության համար աշխատողը—ստրուկը, վորին ստրկատերը կարող է վաճառել, գնել, սպանել ինչպես անասունի: Ֆեոդալական հասարակակարգի ժամանակ արտադրական հարաբերությունների հիմք է հանդիսանում ֆեոդալի սեփականությունն արտադրության միջոցների վերաբերմամբ և վոչ-լրիվ սեփականությունն արտադրության համար աշխատողի—ճորտի վերաբերմամբ, վորին ֆեոդալն արդեն չի կարող սպանել, բայց կարող է վաճառել, գնել: Ֆեոդալական սեփականության կողքին գոյություն ունի գյուղացու և

արհեստավորի անհատական սեփականությունն արտադրության գործիքների, իր մասնավոր տնտեսության վերաբերմամբ, սեփականություն, որ հիմնված է անձնական աշխատանքի վրա։ Կապիտալիստական հասարակակարգի ժամանակ արտադրական հարաբերությունների հիմք է հանդիսանում արտադրության միջոցների կապիտալիստական սեփականությունը, ըստ որում բացակայում է սեփականությունն արտադրության համար աշխատողների—վարձու բանվորների վերաբերմամբ, որոնց կապիտալիստը չի կարող ո՛չ սպանել, ո՛չ վաճառել, որովհետև նրանք ազատ են անձնական կախումից, բայց զրկված են արտադրության միջոցներից և, որպեսզի քաղցից չմեռնեն, հարկադրված են իրենց բանվորական ուժը ծախել կապիտալիստին և շահագործման ծանր լուծը կրել։ Սոցիալիստական հասարակակարգի ժամանակ, որն իրականացված է առայժմ միայն ԽՍՀՄ-ում, արտադրական հարաբերությունների հիմք է հանդիսանում արտադրության միջոցների հանրային սեփականությունը։ Այստեղ արդեն չկան ո՛չ շահագործողներ, ո՛չ շահագործվողներ։ Սոցիալիստական սեփականության հաղթությունը ԽՍՀՄ-ում իր օրենսդրական արտահայտությունը գտավ Ստալինյան Սահմանադրության մեջ։ Արտադրության գործիքների ու միջոցների հանրային սեփականությունը—պետական և

*կոոպերատիվ-կոլտնտեսային—սոցիալիստական հասարակակարգի սրբազան և անձեռնմխելի հիմքն է:*

**Սինթեզիս** — *տե՛ս* Թեզիս, անտիթեզիս, սինթեզիս:

**Սխոլաստիկա** *(լատիներեն «սխոլա» — դպրոց բառից): — Ամբողջ միջնադարյան փիլիսոփայության համար այսպիսի անուն հաստատվեց շնորհիվ այն հանգամանքի, որ նա մասնատված էր բազմաթիվ դպրոցների և ուղղությունների, որոնք թշնամություն էին անում միմյանց հետ, ինչպես նաև փիլիսոփայելու այն առանձին բնույթի շնորհիվ, որ հատուկ էր միջնադարյան փիլիսոփայությանը: Վերջինս ամբողջովին գտնվում էր եկեղեցական դոգմատիկայի ծառայության մեջ, «աստվածաբանության աղախինն էր» և այդ պատճառով էլ չէր հետազոտում բնությունն ու շրջապատող իրականությունը, այլ ջանում էր եկեղեցու ընդհանուր դոգմաներից կոնկրետ եզրակացություններ և մարդու վարք ու բարքի կանոններ հանել: Այստեղից՝ «սխոլաստիկա» են կոչվում ամեն մի՝ կյանքից կտրված, անպտուղ փիլիսոփայում, տառակերություն, տիրացուականություն, լոկ գաղափարներով ու եզրակացություններով գործառում՝ առանց փաստերին ու պրակտիկային դիմելու: Սխոլաստիկայի մեջ ամենագլխավոր ուղղություններն էին* ռեալիզմը *(տե՛ս) (Անսելմ Քենտերբերեցի, Թոմաս Աքվինացի) և* նոմինալիզմը *(տե՛ս) (Դունս Սկոտուս, Վիլհելմ Օկկամ): Վաղ բուրժուա-*

*կան փիլիսոփայությունը աճեց—զարգացավ սխոլաստիկայի դեմ մղած պայքարում։*

**Սկզբունքային կոորդինացիա** — *տես* Ավենարիուս։

**Սոլիպսիզմ** (*լատիներեն «սոլուս»—մեկ, «իպսե»—յես ինքս բառերից)—փիլիսոփայական տեսակետ, վորի համաձայն գոյություն ունեմ միայն յես մենակ կամ միայն իմ գիտակցությունը, իսկ ամբողջ մնացած աշխարհը, այդ թվում նաև բոլոր մարդիկ, փաստորեն գոյություն չունի, այլ իմ գիտակցության, յերևակայության ստեղծածն ե։ Ամեն մի սուբյեկտիվ իդեալիստ անխուսափելիորեն սոլիպսիզմի կհանդի, վորովհետև պնդելով, թե աշխարհն իմ զգայությունն ե կամ պատկերացումը, նա պետք ե ընդունի, վոր մյուս մարդիկ ել իմ զգայություններ են և վոր ռեալ կերպով գոյություն ունեմ միայն ու միմիայն յես։ Սոլիպսիզմի անհեթեթությունն ակներև ե և հերքվում ե գիտությամբ ու փորձով։*

**Սոցիալ-դարվինիզմ** — դարվինիզմի *(տես)* — *կենդանիների և բույսերի աշխարհում տեղի ունեցող գոյության կռվի որենք, վոր հայտնագործել ե Դարվինը—սխալ փոխադրումը հասարակական հարաբերությունների բնագավառը, դասակարգային պայքարի բնագավառը։ Սոցիալ-դարվինիստները պնդում են, թե իշխող շահագործող դասակարգերը իբր թե կազմված են ամենից ավելի ընդունակ մարդկանցից, գոյության կռվում հաղթողներից։ Այդ տեսակ «թեորիան» բուր-*

*ժուազիան, հատկապես ֆաշիստները, օգտագործում են արդարացնելու համար զավթողական իմպերիալիստական պատերազմները, գաղութային ժողովուրդների շահագործումը, ռասայական ատելության հրահրումը, մարդկանց սոցիալական անհավասարությունը կապիտալիստական հասարակության մեջ։ Սոցիալ-դարվինիզմը վոչ մի ընդհանուր բան չունի գիտության հետ։ Մարքսիզմը համարում է սխալ և «անկարելի՝ կենդանական հասարակության օրենքների պարզ փոխադրումը մարդկային հասարակության մեջ»* (Ենգելս)։ *Մարդկային հասարակության զարգացման հիմքում դրված են զարգացման նրան հատուկ սոցիալական օրենքները, նյութական արտադրության զարգացման օրենքները, վորոնք խորապես տարբեր են օրգանական աշխարհի զարգացման բիոլոգիական օրենքներից։*

**«Սոցիալիզմի զարգացումն ուտոպիայից դեպի գիտություն»** — *Ենգելսի աշխատությունը, վոր լույս է տեսել առանձին հրատարակությամբ* 1880 *թվին։ Ենգելսն այն կազմեց «Անտի Դյուրինգի» յերեք գլուխներից («Ներածության» առաջին գլխից և «Սոցիալիզմ» բաժնի յերկու առաջին գլուխներից) Ֆրանսիայում հրատարակելու համար։ Այդ աշխատության մեջ Ենգելսը ցույց է տալիս, թե ինչպես մարքսիզմը, լինելով մարդկային մտքի լավագույն նվաճումների իդեական շարունակությունը, վերածվեց իր նա-*

*ծողների ուսմունքները և գիտական հեղափոխական աշխարհայացք ստեղծեց։ Փայլուն կերպով ցույց տալով անցյալ հասարակական ուսմունքների և ամենից առաջ ուտոպիական սոցիալիզմի թերությունները՝ Ենգելսը բացատրում է, թե ինչպես պատմական մատերիալիզմի թեորիան և հավելյալ արժեքի թեորիան ստեղծելով՝ Մարքսը սոցիալիզմն ուտոպիական յերազանքներից գիտություն, գիտական սոցիալիզմի վերածեց։ Այս է Ենգելսի աշխատության հիմնական իդեան և բովանդակությունը։ «Աշխատանքի ազատագրություն» խումբն արտասահմանում տպագրեց Ենգելսի այդ գիրքը, վոր թարգմանված եր ռուսերեն, և գաղտնի տարածում եր Ռուսաստանում։ Բուն Ռուսաստանում գիրքը լույս տեսավ* 1902 *թվին Գ. Վ. Պլեխանովի առաջաբանով։*

**Սոցիալիզմ յեվ կոմունիզմ** — *կոմունիստական հասարակության զարգացման յերկու փուլերը, աստիճանները։ Սոցիալիզմը կոմունիստական հասարակության առաջին, ստորին աստիճանն է։ Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը վերացված է, հասարակության տնտեսական հիմքը կազմում է տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը։ Շահագործող դասակարգերը վերացված են, վոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից։ Սոցիալիստական հասարակությունը*

*ԽՍՀՄ-ում կազմված է քաղաքի և գյուղի աշխատավորներից—բանվոր դասակարգից, գյուղացիությունից և ինտելիգենցիայից։ Նրանց միջև եղած դասակարգային տարբերությունները աստիճանաբար ջնջվում են։ Հասարակության տնտեսական կյանքը վորոշվում և ուղղություն է ստանում պետական ժողովրդատնտեսական պլանով։ Բոլոր աշխատավորների համար ապահովված է աշխատանքի, հանգստի և կրթության իրավունքը։ Աշխատանքը յուրաքանչյուրի պարտականությունն ու պատվի գործն է։ Սոցիալիզմի սկզբունքն է՝ «ով չի աշխատում, նա չի ուտում»։ Յուրաքանչյուրն աշխատում է ըստ իր ընդունակությունների և ստանում է ըստ իր աշխատանքի։ Սոցիալիստական հասարակությունն ապահովում է աշխատանքի արտադրողականության, տեխնիկայի, գիտության, կուլտուրայի անընդհատ զարգացում, վորն ստեղծում է բոլոր պայմանները՝ աստիճանաբար կոմունիզմի բարձրագույն փուլին անցնելու համար։ Յերկրորդ, բարձրագույն փուլի ժամանակ մարդկանց միջև վոչ մի դասակարգային տարբերություն չի լինի, լիկվիդացիայի կենթարկվեն կապիտալիզմի բոլոր մնացուկները մարդկանց գիտակցության մեջ, վերջնականապես կվերացվի քաղաքի և գյուղի միջև եղած հակադրությունը և մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրությունը։ Կոմունիզմի բարձրագույն փուլին անցնելու վճռական պայմանն աշխատանքի արտադրո-*

ղականության այնպիսի մակարդակի հասնելն է, վորը թույլ կտա կենսագործելու կոմունիզմի հիմնական սկզբունքը—«յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա կարիքների»։ Ներկայումս, յերբ մեզ մոտ հիմնականում կառուցված է սոցիալիստական հասարակությունը, «...ԽՍՀՄ-ն թևակոխել է զարգացման նոր ժամանակաշրջան, սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիստական հասարակությանն անցնելու ժամանակաշրջանը» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։

**Սոցիալիստ-ուտոպիստներ** — *տես* Ուտոպիական սոցիալիզմ։

**Սոցիոլոգիա** *(գիտություն հասարակության մասին)*։ — *Նախքան Մարքսը զանազան փորձեր են յեղել թեորիապես հիմնավորելու սոցիոլոգիան։ Մասնավորապես, սոցիոլոգիան վորպես հասարակության վերաբերյալ համապարփակ գիտություն հիմնավորելու փորձերի թվին են պատկանում* XIX *դ. բուրժուական գիտնականների՝ Օգյուստ Կոնտի և Սպենսերի փորձերը։ Հենց «սոցիոլոգիա» բառն էլ կազմել է Կոնտը։ Կոնտը սոցիոլոգիան բաժանում է սոցիալական ստատիկայի, վորն ուսումնասիրում է հասարակական օրգանիզմը հանգստի վիճակում և սոցիալական դինամիկայի, վորն այն ուսումնասիրում է շարժման վի-*

ճակում: Ամբողջ սոցիալական մեխանիզմը հանգչում է իդեաների վրա, հասարակական զարգացմանն ուղղություն է տալիս մարդկային հոգին: Կոնտին հարում է Սպենսերը. նա սոցիոլոգիայի այսպես կոչված օրգանական ուղղության ներկայացուցիչն է: Այդ ուղղությունը ձգտում է մեկնաբանել հասարակության կյանքը և նրա կառուցվածքը օրգանիզմի անալոգիայով: Այն մասերը, որոնց բաժանվում է հասարակությունը, համեմատվում են՝ կենդանական օրգանիզմի ֆունկցիաների հետ. այսպես, հողագործությունն ու արդյունաբերությունը կատարում են սննդառության ֆունկցիաները, առևտուրը՝ արյան շրջանառության և այլն: Բուրժուական գիտնականներն ստեղծել են նաև բազմաթիվ ուրիշ համապարփակ սոցիոլոգիական թեորիաներ, բայց նրանք բոլորն էլ միանգամայն սնանկ են: Նրանց բոլորին հատուկ է դատել վերացականորեն և սկսել, ինչպես մատնանշել է Լենինը, ո՛չ թե սկզբից, այլ վերջից: Իսկական գիտությունն սկսվում է ո՛չ թե այն հարցից, թե ինչ է հասարակությունն ընդհանրապես, այլ պատմականորեն որոշ հասարակության կոնկրետ երևույթների ուսումնասիրությունից: Այդ խնդիրն իրագործեց Մարքսը: Մանրամասնորեն ուսումնասիրելով հասարակության ձևերից մեկը, կապիտալիստականը, նա ցույց տվեց, որ հասարակության զարգացումը որոշվում է ո՛չ թե իդեաներով, այլ արտադրական

հարաբերություններով, այսինքն՝ այն հարաբերություններով, որոնց մեջ են մտնում մարդիկ միմյանց հետ նյութական արտադրության պրոցեսում։ Այդպիսով, նա ապացուցեց իդեաների ընթացքի կախումն իրերի ընթացքից։ Նա հասարակության զարգացումը բացատրեց մատերիալիստականորեն։ «...Այդ հիպոթեզն առաջին անգամ սոցիոլոգիան գիտության աստիճանին բարձրացրեց» (ԼԵՆԻՆ)։ Դրանով չբավարարվելով՝ նա ցույց տվեց, թե ինչպիսի կառուցվածք է ընդունում հասարակությունը՝ նայած արտադրական հարաբերություններին, այսինքն՝ ինչ դասակարգեր, ինչպիսի պետական հասարակակարգ և իդեաների ինչպիսի կարգ է աճում նրանց հիման վրա։ Նա «ամենուրեք և շարունակ հետազոտում էր այդ արտադրական հարաբերություններին համապատասխան վերնաշենքերը, կմախքին մարմին էր հագցնում և արյունով լցնում» (ԼԵՆԻՆ)։ Ի հակադրություն Կոնտի և Սպենսերի սոցիոլոգիայի այդպիսի ամեն տեսակ աբստրակտ թեորիաների, որոնք ջնջում են պատմության տարբեր ժամանակաշրջանների բնորոշ գծերը, Մարքսը ցույց տվեց, որ «յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան իր սեփական օրենքներն ունի» (ԼԵՆԻՆ)։ Նա ցույց տվեց, որ հասարակությունը գիտականորեն հետազոտելու խնդիրն է՝ «պարզել այն հատուկ (պատմական) օրենքները, որոնք կարգավորում են տվյալ հասարակական օրգա-

նիզմի ծագումը, գոյությունը, զարգացումն ու մահը և նրա փոխարինումը մի ուրիշ, ավելի բարձր օրգանիզմով» (ԼԵՆԻՆ)։ Մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը մարդկային հասարակության զարգացման օրենքների մասին, պատմական մատերիալիզմի (տե՛ս) թեորիան իր ամբողջ էությամբ հեղափոխական-մատերիալիստական և խիստ պատմական գիտություն է։

ՍՈՖԻՍՏԻԿԱ — վեճի կամ ապացուցումների մեջ սխալ փաստարկների գործադրությունը, արտաքին, ձևական ճշտությամբ քողարկված ամեն տեսակ հնարամտությունների, այսպես կոչված սոփեստության դիմելը։ Սոփիստիկայի ամենաբնորոշ գիծը «դեպքերի արտաքին նմանությունը դուրս քաշելն է՝ դեպքերի կապակցությունից դուրս» (ԼԵՆԻՆ)։ Այսպես, օրինակ, Պլեխանովը համաշխարհային առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ իր սոցիալ-պատրիոտիզմն արդարացնում էր սոփեստական պրիո-մով. նա իմպերիալիստական պատերազմը հրամցնում էր ազգային-ազատագրական պատերազմի տեղ և փորձում էր, այդպիսով, Մարքսի ասույթները ի պաշտպանություն ազգային-ազատագրական պատերազմի՝ գործադրել իմպերիալիստական պատերազմի վերաբերմամբ։ Կառչելով «դեպքերի արտաքին նմանությունից»՝ սոփեստը ձգտում է երևույթների մի կատեգորիայի հատկությունները կամ օրինաչափու-

թյունները կիրառել բոլորովին ուրիշ յերևույթների վերաբերմամբ։

**Սուբյեկտ յեվ ոբյեկտ։** — *Փիլիսոփայության մեջ սուբյեկտ ասելով հասկացվում ե մի նյութ, վորն ոժտված ե գիտակցությամբ ու կամքով, ճանաչում ու գործում ե սեփական նպատակներին համապատասխան։ Սուբյեկտին հակադրվում ե ո բ յ ե կ տ ը վորպես արտաքին առարկա, վորի վրա ուղղվում ե սուբյեկտի գիտակցությունն ու գործունեությունը։ Իդեալիստական փիլիսոփայությունն ասում ե. «Ոբյեկտ չկա առանց սուբյեկտի», այսինքն՝ արտաքին աշխարհը գիտակցությունից դուրս և նրանից անկախ գոյություն չունի։ Դիալեկտիկական մատերիալիզմն, ընդհակառակը, պնդում ե, վոր «ոբյեկտը գոյություն ունի սուբյեկտից անկախ», հետևաբար, առանց նյութական կեցության վոչ մի գիտակցություն չկա և չի կարող լինել։ Միևնույն ժամանակ դիալեկտիկական մատերիալիզմն ընդունում ե, վոր սուբյեկտը պասիվ կերպով չի դիտում ոբյեկտիվ աշխարհը, այլ ներգործում ե նրա վրա և, փոփոխելով այն, դրա հետ միասին փոփոխում ե ինքն իրեն։ Դիալեկտիկական մատերիալիզմը սահմանում ե սուբյեկտի և ոբյեկտի փոխադարձ կապ և փոխադարձ ներգործություն, ընդունելով ոբյեկտի առաջնությունը։*

**Սուբյեկտիվ իդեալիզմ** — Իդեալիզմի *(տես) հիմնական տարատեսակներից մեկը։*

**Սուբյեկտիվ մեթոդ սոցիոլոգիայի մեջ** — *իդեալիստական մոտեցում հասարակությանն ըմբռնելուն, վորի ներկայացուցիչներն ու պրոպագանդիստներն էյին Ռուսաստանում նարոդնիկներ Պ. Լ. Լավրովը և Ն. Կ. Միխայլովսկին։ Նրանց հայացքների համաձայն՝ հասարակության զարգացումը վորոշում են վո՛չ թե նյութական արտադրության զարգացման օրենքները, այլ աչքի ընկնող անհատների, «հերոսների» գիտակցությունը, իդեաներն ու ցանկությունները։ «... Նարոդնիկները սխալ և վնասակար հայացք ունեյին մարդկության պատմության ամբողջ ընթացքի վերաբերմամբ։ Նրանք չգիտեյին և չէյին հասկանում հասարակության տնտեսական և քաղաքական զարգացման օրենքները։ Այդ տեսակետից նրանք բոլորովին հետամնաց մարդիկ էյին։ Նրանց կարծիքով՝ պատմությունը կերտում են վո՛չ թե դասակարգերը և վո՛չ թե դասակարգերի պայքարը, այլ միայն առանձին աչքի ընկնող անհատները—«հերոսները», վորոնց հետևից կուրորեն գնում են մասսան, «ամբոխը», ժողովուրդը, դասակարգերը»* (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ *Պատմության այդպիսի ըմբռնումը նարոդնիկներին հասցրեց անհատական տեռորի գործելակերպին։ Անհատի (սուբյեկտի) և նրա իդեաների մեջ տեսնել հասարակության զարգացման գլխավոր շարժիչ ուժը՝ նշանակում է հասարակագիտության մեջ կանգնել սուբյեկտիվ իդեալիս-*

*տական մեթոդի տեսակետի վրա։ «... Հռչակավոր «սուբյեկտիվ մեթոդը սոցիոլոգիայի մեջ» ոչինչ չի արտահայտում, բացի լավ ցանկությունից և վատ ըմբռնումից»* (Լենին)։

**Սուբստանցիա** *(հիմք, էություն)—մինչմարքսյան փիլիսոփայության մեջ գոյություն ունեցող ամեն ինչի* անփոփոխ *հիմքը՝ ի հակադրություն եզակի իրերի փոփոխական հատկությունների, այդ հատկությունների անփոփոխ հենարանը։ Մատերիալիստներն այդպիսի սուբստանցիա էին համարում մատերիան։ Իդեալիստների համար սուբստանցիա է հանդիսանում ոգին, աստված, իդեան։ Դեկարտը յերկու ինքնուրույն սուբստանցիա յեր ընդունում—հոգին ու մարմինը։ Հոբբսը, Լոկկը, Կոնդիլյակը գտնում էին, որ իրը հանգում է զգայական հատկությունների և այդ պատճառով նրա մեջ ոչ մի թաղնված սուբստանցիա չի կարող լինել։ Նրանք ընդհանրապես ժխտում էին սուբստանցիաների գոյության անհրաժեշտությունը։ Ագնոստիկները (Յում, Կանտ) իրերի սուբստանցիան անճանաչելի էին համարում։ Դիալեկտիկական մատերիալիզմը ժխտում է իրերի անփոփոխ սուբստանցիաները, և «սուբստանցիա» գաղափարը նրա մոտ համընկնում է «մատերիա» գաղափարի հետ։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի տեսակետից սուբստանցիա, այսինքն՝ աշխարհի էությունը, հիմքերի հիմքը մատերիան է։*

**Սպինոզա** *Բարուխ (Բենեդիկտ) (1632—1677)*— *հոլլանդական ականավոր փիլիսոփա—մատերիալիստ: Սպինոզան ժխտում էր աստծուն որպես բնության արարիչ, գտնելով, որ բնությունն ինքն աստված է: Բնությունն աստված անվանելով՝ Սպինոզան հենց դրանով ասում էր, որ բնությունն ինքն իր պատճառն է, որ նա ինքն իր մեջ պարունակում է ինչպես իր, այնպես էլ բոլոր իրերի գոյության պատճառը: Ի տարբերություն Դեկարտի* դուալիզմից *(տե՛ս)՝ Սպինոզան ստեղծեց մոնիստական սիստեմ, որի մեջ մտածողությունն ու տարածությունը հայտարարվում են միասնական սուբստանցիայի—բնության ատրիբուտները (էական հատկանիշները): Սպինոզան շարժումն ըմբռնում էր որպես մարմնի մեխանիկական տեղափոխություն տարածության մեջ և այն չէր համարում սուբստանցիայի ատրիբուտ, այլ այն վերագրում էր միայն յեզակի իրերի: Դրանից Սպինոզայի փիլիսոփայության մեջ ստացվեց այն, որ փոխվում են միմիայն առանձին իրերը, իսկ բնությունն ամբողջությամբ առած միշտ անփոփոխ է մնում: Իմացաբանության մեջ Սպինոզան Դեկարտի ռացիոնալիզմի շարունակողն էր և գտնում էր, որ ճշմարիտ իմացությունը ձեռք է բերում ինքը բանականությունը, առանց զգայարանների օգնության: Սպինոզային յերբեմն սխալ կերպով* պանթեիստ *(տե՛ս) են համարում, իսկ իրոք նա աթեիստ էր և խիստ կերպով քննադա-*

տում էր կրոնը, որի համար 1656 թվին նզովվեց ու արտաքսվեց հրեական համայնքից։ Քաղաքական հայացքներով Սպինոզան բուրժուական դեմոկրատիայի կողմնակից էր։ Սպինոզայի մատերիալիզմը մեծ ազդեցություն գործեց XVIII դ. ֆրանսական մատերիալիստների և գերմանական լուսավորության վրա։ Նրա հիմնական աշխատություններն են՝ «Этика» 1675 г., «Трактат об усовершенствовании разума», մոտ 1662 г., «Богословско-политический трактат», 1670 г., «Переписка», 1677 г.

**Սպոնտանեություն, սպոնտան զարգացում**— *ինքնուրույն, ինքնակամ շարժում*, **ինքնաշարժում** (*տե՛ս*)։

★

# Վ

**Վուլգար մատերիալիզմ** — փիլիսոփայական հոսանք, որ ծագել է Գերմանիայում XIX դարի 50—60-ական թվականներին բժիշկների և բնագետների մեջ։ Այս հոսանքի ականավորագույն ներկայացուցիչներ Բյուխներին, Ֆոգտին և Մոլեշոտտին Էնգելսն անվանում էր «էժան մատերիալիզմի տարածողներ» (разносчики) և վուլգար մատերիալիզմի «թափառաշրջիկ քարոզիչներ»։ Ընդունելով մատերիան որպես միակ ռեալ բանը և պաշտպանելով աթեիզմը՝ վուլգար մատերիալիստները մոլորվում էին պնդելով այն հայացքը, թե իբր ուղեղը ճիշտ այնպես է միտք արտադրում, ինչպես լյարդը արտադրում է լեղի, այսինքն՝ մտածողությունը բացատրում էին վուլգար-մատերիալիստորեն։ Այդպիսի տեսակետը մի հետընթաց քայլ էր ո՛չ միայն դիալեկտիկական մատերիալիզմի համեմատությամբ, այլև XVIII դ. ֆրանսիական մատերիալիզմի համեմատությամբ։ Վուլգար մատերիալիզմի համար բնորոշ է դիալեկտիկայի բացարձակ անտեսումը, բնության շարժման օրենքների վերա-

բերյալ՝ իր ժամանակի համար հնացած մեխանիկական հայացքի պաշտպանությունը և իդեալիզմը հասարակությունն ըմբռնելու մեջ։

# Տ

**XVIII դ. Ֆրանսիական մատերիալիզմը** — *տես* Մատերիալիզմ:

**Տարածություն** — *տես* Ժամանակ և տարածություն:

**Տարերային մատերիալիզմ** — *սովորական, անգիտակցական մատերիալիստական հայացք բնության վրա: Փիլիսոփայության պատմության մեջ տարերային մատերիալիստներ էին հին-հունական մատերիալիստները: Նույնպիսի հայացքի յն հետևում մարդկանց մեծամասնությունն իր պրակտիկ գործունեություններում: Բնագետների մեծ մասը, յեթե նրանք փիլիսոփայության մեջ նույնիսկ ժխտում են մատերիալիզմը, իրենց գիտական հետազոտություններում տարերայնորեն կանգնած են մատերիալիզմի դիրքերում, բայց անհետևողական, վեհերոտ, թերավարտ մատերիալիզմի (բնապատմական մատերիալիզմ): ««Նաիվ ռեալիստների» (այսինքն՝ ամբողջ մարդկության) այն համոզմունքը, վոր մեր զգայությունները ոբյեկտիվորեն ռեալ արտաքին աշխարհի պատկերներն են, բազմաթիվ բնագետների անխախտ կերպով աճող և ամրապնդվող համոզմունքն է»* (Լենին):

**Տելեոլոգիա** (հունարեն «տելոս» – նպատակ, և «լոգոս—ուսմունք բառերից)—իդեալիստական ուսմունք, ըստ վորի՝ ամեն ինչ բնության մեջ նպատակահարմար է: Տելեոլոգիայի կողմնակիցներից վոմանք գտնում են, վոր ամեն ինչ աշխարհում տրված այնպես է ստեղծել, վոր մեկ իրը մյուսի համար ծառայում է իբրև միջոց: Ենգելսը ծաղրում էր տելեոլոգների այն հայացքը, վորի համաձայն՝ «կատուներն ստեղծված են, վորպեսզի ուտեն մկներին, մկները—վորպեսզի ուտվեն կատուների կողմից, և ամբողջ բնությունը՝ վորպեսզի ապացուցի արարչի իմաստությունը»: Տելեոլոգիայի մյուս պաշտպանները (Արիստոտել, Հեգել) պնդում են, վոր որգանիզմների կառուցման հիմքում դրված է ներքին նպատակը (հոգի), վորը կանխորոշում է բույսերի և կենդանիների զարգացման ուղղությունը, և վոր այդ նպատակն աստված է դրել: Դիալեկտիկական մատերիալիզմն ուսուցանում է, վոր նպատակադրումով բնորոշվում է միմիայն մարդու գործունեությունը: Ընդվորում մարդու գործունեությունը վորոշվում է նրա գոյության ոբյեկտիվ պայմաններով և ամենից առաջ հասարակության կյանքի նյութական պայմաններով: Իսկ որգանիզմների աշխարհում նկատվող նպատակահարմարությունն որգանիզմների կառուցվածքի և կենսագործունեության մեջ՝ բնական ընտրության արդյունքն է: Տե՛ս Դարվինիզմ:

**Տնտեսական բազիս** — *արտադրության յեղանակ, վոր գտնվում ե այս կամ այն հասարակակարգի հիմքում: Հասարակության տնտեսական բազիսը վորոշում ե բոլոր հասարակական վերնաշենքերը—պետությունը, քաղաքական հիմնարկությունները, իդեաները, թեորիաները: Հասարակության տնտեսական բազիսի փոփոխությամբ միշտ «ավելի կամ պակաս արագությամբ հեղաշրջում ե տեղի ունենում ամբողջ վիթխարի վերնաշենքի մեջ»* (Մարքս):

**Տնտեսական մատերիալիզմ** (экономический материализм) — *պատմության միակողմանի, վուլգար ըմբռնում, վորը գտնում ե, թե հասարակական զարգացման միակ ուժն եկոնոմիկան ե: Տնտեսական մատերիալիզմը մերժում ե քաղաքականության և քաղաքական հիմնարկությունների, իդեաների, թեորիաների ակտիվ նշանակությունը պատմական պրոցեսում: Տնտեսական մատերիալիզմի կողմնակիցներն եյին՝ Արևմուտքում—Ե. Բերնշտայնը, իսկ Ռուսաստանում—«լեգալ մարքսիստները», «եկոնոմիստները», մենշևիկները, Մ. Ն. Պոկրովսկին: Եկոնոմիստները փորձում եյին իրենց վուլգար մատերիալիզմը հրամցնել պատմության մարքսիստական ըմբռնման տեղ: Իրոք պատմական մատերիալիզմն արմատապես տարբերվում ե տնտեսական մատերիալիզմից: Նյութական արտադրության մեջ տեսնելով հասարակության զարգացման դըլխավոր շարժիչ ուժը և քաղաքական հիմնարկություն-*

ների, իդեաների, թեորիաների ծագումը բացատրելով հասարակության նյութական կյանքի պայմաններով, պատմական մատերիալիզմը միևնույն ժամանակ ընդգծում և քաղաքական հիմնարկությունների, իդեաների, թեորիաների հսկայական նշանակությունը պատմական զարգացման մեջ: Առանց պրոլետարիատի դիկտատուրայի անկարելի կլիներ սոցիալիստական հասարակություն կառուցել, առանց մարքսիզմի-լենինիզմի հեղափոխական թեորիայի, առանց նրա կազմակերպող, մոբիլիզացիայի յենթարկող և փոխակերպող դերի աներևակայելի կլիներ ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի համաշխարհային-պատմական հաղթությունը:

**Տրանսֆորմիզմ** (նույնն է, ինչ վոր էվոլյուցիոն ուսմունքը)—ուսմունք կենդանի էակների փոփոխության մասին, ուսմունք այն մասին, վոր արդի բուսական և կենդանական տեսակներն առաջ են յեկել յերկարատև բնապատմական պրոցեսի հետևանքով սակավաթիվ տեսակներից, վորոնք առաջ գոյություն են ունեցել և ժամանակակից տեսակներից տարբեր են յեղել: Տրանսֆորմիզմն ուղղված է կենդանի էակների անփոփոխության, բնության մեջ զարգացման բացակայության մասին յեղած մետաֆիզիկական պատկերացումների դեմ: Տրանսֆորմիզմն իր հիմնավորումը գտավ Չ. Դարվինի ուսմունքի մեջ:

**Տրիադա** — յեռամիասնություն, յեռաստիճանակա-

*նություն։ Զարգացման ամեն մի պրոցես, ըստ Հեգելի, անցնում է յերեք աստիճան։ Առաջին աստիճանը՝ թեզիսը ժխտվում է յերկրորդ աստիճանով՝ անտիթեզիսով, յերկրորդ աստիճանը դարձյալ ժխտվում է յերրորդով։ Վերջինը կոչվում է սինթեզիս (միացում, համադրություն), վորովհետև նա վո՛չ միայն ժխտում է նախորդ աստիճանը, այլև իր մեջ նոր ձևով միացնում է զարգացման նախորդ յերկու աստիճանների գծերը։ Հեգելի մոտ տրիադան մի սխեմա յե, վորին արհեստականորեն հարմարեցվում է իրականությունը։ «Ըստ Հեգելի՝ իդեայի զարգացումը, տրիադայի դիալեկտիկական օրենքների համաձայն, իրենով վորոշում է իրականության զարգացումը»* (ԼԵՆԻՆ)*։ Դյուրինգն ու Միխայլովսկին փորձում եյին մարքսիզմին վերագրել հեգելյան տրիադան։ Նրանք պնդում եյին, վոր սոցիալիզմի գալստյան անխուսափելիությունը Մարքսն ապացուցում եր, ղեկավարվելով վո՛չ թե հասարակական զարգացման օրենքների փաստական հետազոտությամբ, այլ տրիադայով, այն կանխակալ մտքով, թե քանի վոր կապիտալիստական մասնավոր սեփականությունը հանրային սեփականության ամենածայրահեղ բացասումն ու հակադրությունն է, ուստի հանրային սոցիալիստական սեփականությունն անհրաժեշտաբար պետք է վոչնչացնի կապիտալիստականը։ Իրոք Մարքսը սոցիալիզմի անխուսափելիությունը հիմնավորում եր*

*կապիտալիզմի ժամանակ տիրող տնտեսական հակասությունների օբյեկտիվ ուսումնասիրության միջոցով։ Մարքսիստական դիալեկտիկան պահանջում է միշտ կյանքն ուսումնասիրել իր ամբողջ լրիվությամբ, հակասություններով, անցումներով, այն արհեստականորեն չհարմարեցնել արտաքին սխեմաներին։ Հեգելյան տրիադայի մեջ կա մի «ռացիոնալ հատիկ», որը պահպանում է* բացասման բացասումի *(տե՛ս) դիալեկտիկական օրենքը։ Այդ «ռացիոնալ հատիկն» այն է, որ հեգելյան տրիադան արտահայտում է զարգացում, անցումն ստորինից դեպի բարձրագույնը, որի ժամանակ բարձրագույն աստիճանը պահպանում է ստորին աստիճանների դրական գծերը։ Իսկ ինչ վերաբերում է «յեռամիասնությանը», ապա այն դիալեկտիկայի արտաքին մակերեսային կողմն է։*

## Ф

**«Փիլիսոփայական տետրակներ»** («Философские тетради») — *փիլիսոփայության վերաբերյալ Լենինի տետրակները, վորոնք տպագրված են* IX *և* XII *Լենինյան ժողովածուներում։ Լենինի «Փիլիսոփայական տետրակները» խոշորագույն փիլիսոփաների (Արիստոտելի, Հեգելի, Ֆոյերբախի և ուրիշն.) յերկերի կոնսպեկտներն են։ «Փիլիսոփայական տետրակները» վերաբերում են* 1914—1916 *թ. թ. ժամանակաշրջանին։ Տետրակների կենտրոնական թեման դիալեկտիկայի հարցն է։ Առանձին նշանակություն ունեն Հեգելի* «Наука о логике» *գրքի լենինյան կոնսպեկտները, վորոնք հեգելյան դիալեկտիկայի մատերիալիստական վերամշակման կլասիկ որինակ են հանդիսանում։ «Փիլիսոփայական տետրակների» մեջ հսկայական հետաքրքրություն է ներկայացնում «Դիալեկտիկայի հարցի շուրջը» լենինյան հատվածը։ Այդ հատվածում Լենինը սեղմ ձևով լուսաբանել է մարքսիստական դիալեկտիկայի հիմնական դրույթները։*

**Փիլիսոփայության բարձրագույն հարցը** — *տես* **Փիլիսոփայության հիմնական հարցը**։

**Փիլիսոփայության հիմնական հարցը** — այն հարցն է, թե մտածողությունն ինչպես է հարաբերում կեցությանը, վոգին՝ բնությանը։ Ենգելսը նշում է, վոր փիլիսոփաները բաժանվել են յերկու բանակի — իդեալիստների և մատերիալիստների — նայած թե ինչն են նրանք առաջնային համարել — կեցությու՞նը, թե գիտակցությունը։ Իդեալիստական փիլիսոփայության բոլոր ներկայացուցիչներն առաջնային են համարում գիտակցությունը, իդեան, վոգին։ Իսկ մատերիալիստները, ընդհակառակը, առաջնային են համարում բնությունը, մատերիան, իսկ գիտակցությունը համարում են բնության հատկությունը, մատերիայից ածանցված, յերկրորդային։ Փիլիսոփայության հիմնական հարցը մի յերկրորդ կողմ էլ ունի — ի վիճակի՞ յենք մենք արդյոք ճանաչելու շրջապատող աշխարհը։ Փիլիսոփաների մեծամասնությունը գտնում է, վոր կարելի յե ճանաչել շրջապատող աշխարհը, բայց կան փիլիսոփա-ագնոստիկներ, վորոնք ժխտում են աշխարհը ճանաչելու հնարավորությունը։ Դիալեկտիկական մատերիալիզմը հերքում է ագնոստիցիզմը։ Մեր զգայությունները, պատկերացումները, հասկացողությունները օբյեկտիվ աշխարհի պատճեններն են, արտացոլումը։ Պրակտիկան չափանիշ է ծառայում մեր իմացության ճշմարտականության կամ անճշմարտականության։ «Այն մոմենտին, յերբ վորևե իրի մեր կողմից ըմբռնված հատկությունների համեմատ մենք

*այն օգտագործում ենք մեզ համար,—հենց այդ մոմենտին մենք անսխալ փորձության ենք յենթարկում մեր զգայական ըմբռնումների ճիշտ կամ սխալ լինելը»* (Ենգելս): *Միմիայն դիալեկտիկական մատերիալիզմն է, որ տալիս է փիլիսոփայության հիմնական հարցի մինչև վերջը հետևողական լուծումը:*

**Փիլիսոփայություն** *(հունարեն «ֆիլո»— սեր և «սոֆոս» — իմաստություն բառերից) — դիալեկտիկական մատերիալիզմի մեջ գիտություն բնության, մարդկային հասարակության և մտածողության ամենից ավելի ընդհանուր օրենքների մասին: Փիլիսոփայության հիմնական հարցն այն հարցն է, թե կեցությունն ինչպես է հարաբերում մտածողությանը: Այդ հարցի լուծման համեմատ՝ բոլոր փիլիսոփայական ուղղությունները յերկու բանակի յեն բաժանվում—մատերիալիստական (տե՛ս* Մատերիալիզմ) *և իդեալիստական (տե՛ս* Իդեալիզմ): *Դեռ հնագույն ժամանակներում փիլիսոփայությունը գոյություն ուներ Չինաստանում և Հնդկաստանում: Յեվրոպայում այն ծագեց* VI *դ. մեր թվակ. առաջ Հունաստանում, որտեղ փայլուն զարգացման հասավ: Միջին դարերում փիլիսոփայությունն իբրև ինքնուրույն գիտություն գոյություն չուներ, նա աստվածաբանության մի մասն էր: Բուրժուական գիտության զարգացման սկզբնավորության հետ,* XVII—XVIII *դարերում ծագում է բուրժուական կլասիկ փիլիսոփայությունը (այսպես կոչ-*

վան՝ նոր փիլիսոփայությունը)։ Գերմանական կլասիկ իդեալիզմից (Կանտ, Հեգել—XVIII դ. վերջը, XIX դ. սկիզբը) հետո բուրժուական փիլիսոփայությունն սկսում է այլասերվել—դառնալ գիտական նշանակությունից զուրկ միշուրահավաք, թունդ-ռեակցիոն իդեալիստական սիստեմներ։ Միակ գիտական և առաջադիմական փիլիսոփայությունը Մարքսի ու Էնգելսի ժամանակներից հանդիսանում է դիալեկտիկական մատերիալիզմը—պրոլետարիատի փիլիսոփայությունը։ Երկար ժամանակաշրջանի ընթացքում, առանձին գիտությունների անզարգացածության հետևանքով, փիլիսոփայությունը հանդես էր գալիս յուրատեսակ «գիտությունների գիտության» դերում, վոր իր մեջ բովանդակում էր մարդկային գիտության բոլոր ճյուղերը։ Դրան վերջ դրեց բնագիտության և հասարակական գիտությունների զարգացումը XIX դ. կեսերին, վորոնք բաժանվեցին փիլիսոփայությունից։ Դիալեկտիկական մատերիալիզմի մեջ փիլիսոփայությունը հանդես է գալիս վորպես գիտություն իրականության ամենից ավելի ընդհանուր որենքների մասին։ Մարքսիստական դիալեկտիկական մեթոդը տալիս է բնությունն ուսումնասիրելու, ճանաչելու յեղանակը։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը տալիս է բնության և նրա որենքների մատերիալիստական մեկնաբանությունը։ Պատմական մատերիալիզմի թեորիան դիալեկտիկական մատերիա-

յիզմի կիրառումն է մարդկային հասարակության յերևույթների վերաբերմամբ։ Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը կոմունիզմի թեորիական, փիլիսոփայական հիմունքն է, մարքսիստական-լենինյան թեորիայի անկապտելի բաղկացուցիչ մասը։

**Փորձ։** — *Փորձ ասելով սովորաբար հասկանում են էքսպերիմենտը—մեր գիտելիքների ստուգումը յերևույթները դիտելով լաբորատորիայում կամ օբյեկտիվ իրականության մեջ։ Փորձը փիլիսոփայության մեջ մեկնաբանվում է մատերիալիստականորեն և իդեալիստականորեն։ Դիալեկտիկական մատերիալիզմի համար փորձը նախադրում է օբյեկտիվ նյութական աշխարհի առկայություն, վոր գոյություն ունի մարդու գիտակցությունից անկախ։ Փորձն ստեղծվում է հասարակական մարդու և արտաքին աշխարհի փոխներգործության պրոցեսում, պրակտիկ գործունեության պրոցեսում, վորպիսի գործունեության մեջ մարդը փոխում է բնությունն ու ինքն իրեն։ Իդեալիստների (օրինակ՝ մախիստների) կարծիքով, մենք փորձի մեջ գործ ունենք վո՛չ թե նյութական առարկաների և յերևույթների հետ, այլ լոկ մեր զգայությունների, մեր սեփական ապրումների հետ։ Օրինակ՝ կրոնական զգացմունքը նրանք համարում են աստծու գոյության «փորձառական» ապացույց։*

★

Ք

**Քանակի անցումը վորակի։**—*Մարքսիստական դիալեկտիկան զարգացումը դիտում է իբրև անցում աննշան և թաքնված քանակական փոփոխություններից դեպի արմատական, բացահայտ փոփոխություններ—վորակական փոփոխություններ։ Վորակական փոփոխությունները գալիս են հանկարծակի, թռիչքաձև, ինչպես, օրինակ, ջուրը գոլորշի դառնալիս։ Ամեն մի հեղափոխական հեղաշրջում հասարակության մի վիճակից դեպի մյուսը թռիչք գործելու ցայտուն օրինակ է տալիս։ Խորհրդային իշխանության շրջադարձը 1929 թվին կուլակության սահմանափակման և արտամղման քաղաքականությունից դեպի նրա՝ վորպես դասակարգի վերացման քաղաքականությունը նշանակում էր «ամենախորը հեղափոխական հեղաշրջում, թռիչք հասարակության հին վորակական վիճակից դեպի մի նոր վորակական վիճակ, վոր իր հետևանքներով համազոր էր 1917 թվի Հոկտեմբերի հեղափոխական հեղաշրջմանը»։* (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ *Մետաֆիզիկան զարգացումը դիտում է վորպես քանակական աճման պարզ*

պրոցես, որտեղ քանակական փոփոխությունները չեն տանում դեպի որակական փոփոխություններ, որտեղ հինը իր տեղը չի զիջում նորին։ Իսկ դիալեկտիկան զարգացումը դիտում է ո՛չ թե իբրև շրջանաձև շարժում, ո՛չ թե անցածի պարզ կրկնություն, այլ իբրև վերընթաց գծով կատարվող շարժում։ Քանակը որակի անցնելու դիալեկտիկական օրենքից կարևորագույն յեզրակացություններ են բխում պրոլետարիատի կուսակցության պրակտիկ գործունեության համար։ Յեթե զարգացումը յերևույթների որակական թռիչքաձև փոփոխության բնույթ ունի, ապա և՛ անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, և՛ բանվոր դասակարգի ազատագրումը կապիտալիստական ճնշումից նույնպես կարող է իրագործվել ո՛չ թե դանդաղ փոփոխությունների (ռեֆորմների) միջոցով, այլ կապիտալիստական հասարակակարգի միմիայն որակական փոփոխության (հեղափոխության) միջոցով «...Քաղաքականության մեջ չսխալվելու համար հարկավոր է հեղափոխական լինել, այլ ոչ թե ռեֆորմիստ» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Նոր որակը նոր քանակ է ստեղծում։ Ո՛չ միայն քանակն է անցնում որակի, այլև որակն և անցնում քանակի։ Այդպես, օրինակ, կոլտնտեսությունը, որը նոր որակ է անհատական տնտեսության համեմատությամբ, աշխատանքի անհամեմատ ավելի բարձր արտադրողականություն է

*ստեղծում։ «... Գյուղացին այժմ հնարավորություն ունի, կոլտնտեսությունների մեջ միավորվելու շնորհիվ, շատ ավելի արտադրել, քան թե առաջ, նույնքան աշխատանք ծախսելով»* (Ստալին)։

**Քանակ յեվ վորակ** — *տես* Քանակի անցումը վորակի։

★

# Ֆ

**Ֆակտորների թեորիա** — *տարածված բուրժուական թեորիա, վորի համաձայն հասարակական զարգացումը հասարակական կյանքի զանազան կողմերի ու պայմանների (աշխարհագրական միջավայր, քաղաքականություն, գիտություն, բարոյականություն և այլն) փոխադարձ ներգործության արդյունքն է: Այդ կողմերից յուրաքանչյուրը դիտվում է վորպես հասարակական զարգացման ինքնուրույն և մյուսներից առանձնացած ֆակտոր (ուժ): Սովորաբար ֆակտորների թեորիաները միշտ դուրս են յեկել եկլեկտիկական, ամեն ինչ բացատրելով հասարակական յերևույթներից վոմանց մյուսների վրա ունեցած փոխադարձ ազդեցության վոչինչ չասող . մատնանշումով· եկոնոմիկան ազդում է քաղաքականության վրա, քաղաքականությունն, իր հերթին, եկոնոմիկայի վրա և այլն: Նյութական արտադրության մեջ հայտնագործելով հասարակության կյանքն ու զարգացումը վորոշող հիմունքը՝ մարքսիզմն առաջին անգամ ապացուցեց, վոր հասարակական կյանքի բոլոր կողմերը (քաղաքական կարգերը, հասարակական գիտակցության ձևե-*

րը—գիտությունը, բարոյականությունը և այլն) կախված են նյութական արտադրության զարգացումից և փոփոխվում են արտադրության յեղանակների փոփոխվելով։ Այս բնավ չի նշանակում, թե մարքսիզմը ժխտում է քաղաքական հիմնարկությունների, իդեաների և այլն լուրջ նշանակությունը պատմական պրոցեսում։ Մարքսիզմը հասարակությունն ըմբռնում է իբրև մի միասնական ամբողջություն իր կողմերի ամբողջ հարստությամբ և փոխազդեցությամբ։ Բայց հասարակության զարգացումն ամբողջությամբ առած, ինչպես նաև հասարակական կյանքի յուրաքանչյուր առանձին բնագավառի զարգացումը, վերջին հաշվով վորոշվում է նյութական արտադրության զարգացմամբ։

**Ֆատալիզմ** (լատիներեն «ֆատում»—ճակատագիր, բախտ բառից)—իդեալիստական ուսմունք, վորի համաձայն՝ պատմական զարգացումը կանխորոշվում է մի անծանոթ ուժի, ինչ-վոր ճակատագրի, բախտի կողմից։ Ֆատալիզմը ժխտում է անհատի, կուսակցությունների, դասակարգերի ակտիվ ստեղծագործական դերը պատմության մեջ, գտնելով, վոր մարդը չի կարող միջամտել հասարակության զարգացմանը, պատմական դեպքերին։ Մարդը միայն կույր խաղալիք է պատմության անողոք օրենքների ձեռքին։ Ֆատալիզմը ռեակցիոն ուսմունք է, վորովհետև նա քարոզում է պասսիվություն, անգործունեություն,

ինքնահոս և ժխտում է հեղափոխական պայքարը։ Մարքսիզմի–լենինիզմի ուսմունքը հասարակական զարգացման օրինաչափության մասին, անհատի, դասակարգերի, կուսակցության դերի մասին այդ զարգացման մեջ՝ հակադրվում է ինչպես ֆատալիզմին, այնպես էլ սուբյեկտիվիզմին, որն ամբողջ հասարակական զարգացումը հանգեցնում է «հերոսների», մեծ անձնավորությունների գործողությանը։ Մարքսիզմի–լենինիզմի ուսմունքն այն մասին, որ հասարակական զարգացման մեջ կա պատմական անհրաժեշտություն, բնավ չի նվազեցնում անհատի դերը պատմության մեջ։ Մարքսիզմ–լենինիզմը ելնում է այն բանից, որ մարդիկ իրենք են կերտում պատմությունը, բայց որ նրանց գործունեությունը պայմանավորվում ու որոշվում է հասարակության կյանքի նյութական պահանջմունքներով։

**Ֆետիշիզմ** — *անանձին իրերի և առարկաների (ֆետիշների) աստվածացումը. նրանց խորհրդավոր, գերբնական ուժ վերագրելը, ուժ, որ անմատչելի յե մարդկային ըմբռնմանը։ Կրոնական զարգացման ստորին, առաջին աստիճանում ֆետիշը (կուռքը) հավատացյալների յերկրպագության առարկան եր։ Սակայն ամեն մի կրոնի էլ այսպես թե այնպես խորթ չե ֆետիշիզմը—իրերի կույր աստվածացումը։ Կապիտալիզմի ժամանակ ապրանքին, · փողին և կապիտալին՝ որպես նյութական առարկաների՝ վերագրվում են*

այնպիսի հատկություններ (օրինակ՝ փոխանակվելու և կապիտալիստի համար շահույթ ստեղծելու հատկությունը), որոնք իրականության մեջ նրանց բնական հատկությունները չեն, այլ կապիտալիստական արտադրական հարաբերությունների արտահայտություն են։ Կապիտալիզմի ժամանակ «անձերի հարաբերությունը դրսևորվում է··· որպես իրերի հարաբերություն» (Էնգելս)։ Դրանով ստեղծվում է ապրանքային ֆետիշիզմը, որն անհետանում է սոցիալիզմի ժամանակ։

**Ֆիդեիզմ** (լատիներեն «ֆիդես» — հավատ բառից)—ուսմունք, որ գիտության տեղը դնում է հավատը կամ ընդհանրապես որոշ նշանակություն է հատկացնում հավատին։ Լենինը փիլիսոփայական իդեալիզմն անվանում է «ավելի կամ պակաս չափով թուլացրած, ջրիկացրած ֆիդեիզմ», այսինքն՝ տերտերականություն։

**Ֆոյերբախ** Լուդվիգ (1804—1872) — խոշորագույն մատերիալիստներից մեկը, որը հռչակել ու պաշտպանում էր մատերիալիզմն ու աթեիզմը Գերմանիայում XIX դարի 30—40-ական թվականներին։ Նա մեծ ազդեցություն գործեց մարքսիզմի հիմնադիրների վրա։ Ֆոյերբախը մետաֆիզիկական մատերիալիստ էր։ Հրաժարվելով հեգելյան իդեալիզմից՝ նա դեն գցեց նաև հեգելյան դիալեկտիկան, չկարողացավ նրանից ջոկել «ռացիոնալ հատիկը»։ Ֆոյերբախը մնաց

իդեալիստ հասարակական յերևույթների ըմբռնման ընդդավառում։ Չանտեսելով հասարակության նյութական հիմքը՝ նա մարդկության զարգացման դարաշրջանները տարբերում եր բացառապես գիտակցության ձևերով, իրար հաջորդող կրոններով։ Առաջադրելով քրիստոնեյությունից ազատ նոր հասարակության ստեղծման խնդիրը՝ Ֆոյերբախը կրոնի աստիճանին բարձրացրեց սերը մարդկանց միջև, գտնելով, վոր նա յե կազմում հասարակության հիմքը։ Ֆոյերբախը չեր հասկանում հեղափոխական-պրակտիկ գործունեյության նշանակությունը, չեր հասկանում դիալեկտիկական փոխազդեցությունը մարդու և բնության միջև և հենց մարդու փոփոխությունը արտադրության պրոցեսում։ Ահա թե ինչու թեև Ֆոյերբախի մատերիալիզմն ազդեցություն ել գործեց Մարքսի ու Ենգելսի վրա նրանց փիլիսոփայական հայացքների ձևավորման շրջանում, այնուամենայնիվ «այդ չի նշանակում; թե Մարքսի ու Ենգելսի մատերիալիզմը նույնական է Ֆոյերբախի մատերիալիզմին։ Իրոք Մարքսն ու Ենգելսը Ֆոյերբախի մատերիալիզմից վերցրին նրա «հիմնական հատիկը», շարունակելով զարգացնել և դարձնելով այն մատերիալիզմի գիտական-փիլիսոփայական թեորիա և դեն գցելով նրա իդեալիստական և կրոնական եթիկական արտաքին շերտերը» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց)։ Ֆոյերբախը հեղափոխական-դեմոկրատական բուր-

*ժուազիայի իդեոլոգն էր: Նրա հիմնական աշխատությունններն են՝* «К критике гегелевской философии», 1839 г., «Сущность христианства», 1841 г., «Предварительные тезисы к реформе философии», 1842 г., «Основы философии будущего», 1843 г.

**Ֆորմալ լոգիկա** — *ուսմունք մարդկային մտածողության օրենքների մասին, վոր այդ օրենքների ուսումնասիրությունն անջատում է բնությունից: Այդ լոգիկային հետաքրքրում է վո՛չ թե նյութական ճշմարտությունը (բնության յերևույթների ճիշտ արտացոլումը մտածողության մեջ), այլ ֆորմալ ճըշմարտությունը (լոգիկայի կանոններին համապատասխան լինելը): Այստեղից՝ «ֆորմալ լոգիկա» անունը: Ֆորմալ լոգիկան մեծ նշանակություն է վերագրում մարդկային դատողությունների, յեզրակացությունների տարբեր ձևերի ուսումնասիրությանը, հետաքրքրվելով միմիայն նրանով, թե տվյալ դատողությունը կամ յեզրակացությունը կառուցվա՞ծ է արդյոք լոգիկայի կանոններին համապատասխան, թե վոչ: Ֆորմալ լոգիկան մետաֆիզիկական մեթոդի հիմքն է: Դիալեկտիկան—մատերիալիստական լոգիկան—յելնում է նրանից, վոր թե՛ մտածողության բովանդակությունը, թե՛ լոգիկայի կանոնները, օրենքները պետք է համաձայնեցվեն մատերիայի, բնության հետ, նրա օրենքների հետ: Ֆորմալ լոգիկայի օրենքները հակադիր են դիալեկտիկական լոգիկայի օրենք-*

ները: Ֆորմալ լոգիկայի առաջին օրենքն արտահայտվում է «Ա-ն Ա է» ֆորմուլայի օգնությամբ, որը նշանակում է՝ ամեն մի իր և ամեն մի հասկացողություն միշտ հավասար են իրենք իրենց: Այս օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր յերևույթ ինչ-որ մի անփոփոխ ու քարացած բան է: Մատերիալիստական դիալեկտիկան ցույց է տալիս իրերի վերաբերմամբ այդպիսի հայացքի անհիմն լինելը: Նրա համար ամեն մի իր թե՛ նույնական է և թե՛ ոչ-նույնական. ինքն իրեն, որովհետև ամեն մի իր գտնվում է փոփոխման, զարգացման պրոցեսում: «Բույսը, կենդանին, յուրաքանչյուր բջիջ իր կյանքի յուրաքանչյուր վայրկյանում նույնական են իրենք իրենց և միևնույն ժամանակ իրենք իրենցից տարբերվում են շնորհիվ նյութերի յուրացման ու արտաթորման, շնորհիվ բջիջների շնչառության, կազմվելուն և մեռնելուն... Բայց արդեն անօրգանական բնության մեջ նույնականությունը, որպես այդպիսին, իրականում գոյություն չունի» (Էնգելս): Ֆորմալ լոգիկայի յերկրորդ օրենքը—հակասության օրենքն ասում է. «Ա-ն չի կարող միաժամանակ Ա և ոչ-Ա լինել», այսինքն՝ դարձյալ այն պնդումը, թե իրը միշտ միայն մի նույնական հատկություն ունի և չի կարող հակադիր, միմյանց փոխադարձաբար բացառող հատկություններ ունենալ: Ֆորմալ լոգիկայի այդ օրենքն էլ մետաֆիզիկական բնույթ ունի, որչափով հաշվի չի առնում,

վոր ամեն մի զարգացում հակասություն է յենթադրում։ «Ամեն մի կոնկրետ իր, ամեն մի կոնկրետ բան տարբեր և հաճախ հակասական հարաբերությունների մեջ է լինում մնացած բոլորի հետ... լինում է հենց ինքը և մի ուրիշը» (ԼԵՆԻՆ)։ Այդպիսով, հակասությունն ամեն մի յերևույթի և մտածողության ռեալ հիմքն է։ Ֆորմալ լոգիկայի յերրորդ որենքը — բացառված յերրորդի որենքն ասում է. «Վորևէ բան կա՛մ Ա է, կա՛մ վոչ-Ա, յերրորդն անկարելի յե»։ Այս որենքի «կամ-կամ» ֆորմուլան այն ձևով, ինչպես տալիս է ֆորմալ լոգիկան, մետաֆիզիկական, աբստրակտ, անբովանդակ է։ Դիալեկտիկան չի ժխտում, վոր յուրաքանչյուր դեպքի և յերևույթի մասին կարելի յե և պետք է «կամ-կամ» ասել։ Ընկեր Ստալինն ասում եր. «Մենք առաջավոր յերկրներից 50—100 տարով հետ ենք մնացել։ Մենք այդ տարածությունը պետք է անցնենք մի տասը տարում։ Կա՛մ մենք կանենք այդ, կա՛մ մեզ կտրորեն»։ Այդ տեսակետից դիալեկտիկական մեթոդի տարբերությունը ֆորմալ-լոգիկականից այն է, վոր նա մերժում է յերևույթների անփոփոխությունը և դրանք դիտում է զարգացման մեջ, փոփոխության մեջ, վորպես հակասական յերևույթներ։ Այդ պատճառով՝ այս կամ այն հարցի ճիշտ լուծումը միշտ բխում է կոնկրետ պայմանների հաշվառումից, իրականության զարգացման

*հաշվառումից։ Իսկ ֆորմալ լոգիկայի հիմքն առարկաների անփոփոխության ընդունումն է, նրանց ներքին հակասությունների ժխտումը։*

**Ֆորմալ լոգիկայի օրենքները**—*տես* Ֆորմալ լոգիկա։

★

Պատասխանատու խմբագիր՝ Տ. Ալեքսանյան
Թարգմանեց՝ Ցե. Տ.-Մինասյան
Համեմատութ. և ստիլիստ. աշխ. կատարել են
Վ. Փորեյան և Ա. Խոնդկարյան
Տեխն. խմբագիր՝ Ս. Խաչատրյան
Սրբագրիչ՝ Վ. Ջիդեչյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ցե. Տ.-Մինասյան

---

Գլավլիտի լիազոր Ե—1071, Հրատ. № 766
Պատվեր № 264, տիրաժ 20·000
Թղթի չափսը 72×105 1/16 (22·400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
20 1/4 տպ. մամուլ, 10 1/8 տպ. թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 7/XII 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 26/I 1940 թ.
Գինը 3 ռ., կազմը 2 ռ.

---

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65:

Бук. № 1411
книги Ц. / р. —

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0035914